ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ, ԱՐՀԵՍՏԵՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՈՒՐԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
204

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
204

ԵՐԵՎԱՆ – 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 422

Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս *Ա.Ա. Մելքոնյան*

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր *Ա.Մ. Հակոբյան*,
պ.գ.թ., դոցենտ *Հ.Կ. Սուքիասյան*

Հարությունյան Հասմիկ Մալխասի

Հ 422 Երևանի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առևտուրը / Հ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020.- 241 էջ:

Աշխատությունում արխիվային վավերագրերի, վիճակագրական տվյալների, մամուլի և գիտական գրականության հիման վրա քննարկվում են Երևանի նահանգի վարչաժողովրդագրական նկարագրին, տնտեսական կյանքին վերաբերող խնդիրները:

Նախատեսված է Հայաստանի նոր ժամանակների պատմությամբ զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-95-4

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Վերջին դասնամյակներին հայ պատմագիտությունը լուրջ հաջողություններ է արձանագրել Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրների ուսումնասիրության բնագավառում: Լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, որոնք լույս են սփռում ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր նահանգների ու գավառների պատմաժողովրդագրական պատկերի վրա և ունեն ոչ միայն գիտական, այլ նաև ճանաչողական ու քաղաքական մեծ նշանակություն: Այդ հետազոտությունները կարևոր են հատկապես թուրք-ադրբեջանական կեղծարարության դեմ պայքարի տեսանկյունից:

Այդ իմաստով հույժ արդիական է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանի սույն աշխատությունը՝ նվիրված Երևանի նահանգի պատմաժողովրդագրական հիմնահարցերին: Գաղտնիք չէ, որ այսօր Ադրբեջանի իշխող վարչակարգը, գործի դնելով ահռելի ֆինանսական միջոցներ, պետական մակարդակով կեղծում է ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների՝ Սյունիքի, Վայքի, Տավուշի, ինչպես և Այրարատ աշխարհի պատմությունը: Ադրբեջանական կեղծարարությունը հասել է այնտեղ, որ անգամ մայրաքաղաք Երևանը ներկայացվում է որպես ադրբեջանական քաղաք, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ աղվանական-ադրբեջանական հոգևոր-եկեղեցական կենտրոն:

Արցախի 1918–1921 թթ. պատմության վերաբերյալ հայերեն և անգլերեն լեզուներով ծանրակշիռ աշխատությունների հրատարակումից հետո ներկա հեղինակությամբ Հանրագիտարանը շարունակեց ադրբեջանական կեղծարարության բացահայտումները:

Մենագրության մեջ հեղինակը հանգամանորեն անդրադառնում է 1828 թ. Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելուց հետո ռուսական իշխանությունների վարած վարչատարածքային վերափոխումների քաղաքականությանը, 1849–1850 թթ. Երևանի նահանգի ձևավորման գործընթացին:

Գիտաքաղաքական նշանակությամբ առանձնանում է աշխատության երկրորդ գլուխը, որն ամբողջապես նվիրված է նահանգի ժողովրդագրական պատկերի վերլուծությանը: Հարությունյանը հարուստ աղբյուրագիտական նյութի քննությամբ ներկայացնում է ուսումնասիրվող նահանգի բնակչության տեղաբաշխումը, տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական դրդապատճառները, ազգային, սեռատարիքային կազմը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Հատուկ ուշադրություն է հատկացվում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպան քաղաքականության հետևանքով դեպի Երևանի նահանգ արևմտահայ զանգվածների տեղաշարժի հարցերին:

Աշխատության երրորդ գլուխը ներկայացնում է նահանգի տնտեսական կյանքը՝ արհեստները, առևտուրը, արդյունագործությունը, Արևելյան Հայաստանում ազգակ շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացը և այլն:

Ավաղ, փորձառու պատմաբանին, մեր երկրի իսկական հայրենասեր քաղաքացուն և թանկագին գործընկերոջը բախտ չվիճակվեց տեսնել սույն աշխատության հրատարակությունը: Դաժան մահը կտրեց նրա կյանքի թելը՝ անավարտ թողնելով

Հանրագրությունը՝ ինստիտուտի գիտական անձնակազմն իր համեստ ներդրումն է ունենում գիտնական-գործընկերոջ մտքի արգասիք՝ Երևանի նահանգի պատմաժողովրդագրական խնդիրների ուսումնասիրությունը հետազոտողների ու ընթերցող լայն հանրության սեփականությունը դարձնելու և հեղինակի պայծառ հիշատակը վառ պահելու գործում:

Աշոտ Մելքոնյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: ՆԱՀԱՆԳՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ (1827–1917 ԹԹ.)

1. Երևանի և Նախիջևանի խանությունների վարչական կառուցվածքը և կառավարումը Ռուսաստանին միանալուց մինչև 1849 թ.

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի[1] միացումով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը բովանդակային առումով թևակոխեց որակական նոր փուլ:

Տարածքային նվաճումների հետ մեկտեղ կայսրության զարգացման շահերը պահանջում էին ձեռնարկել և իրականացնել պետության քաղաքական և տնտեսական հիմքերի ամրապնդման միջոցառումներ, որոնք արմատական փոփոխություններ պիտի

---

[1] Արևելյան Հայաստանը վարչաաշխարհագրական առումով ընդգրկել է Երևանի նահանգը, Արցախը, Սյունիքը, Լեռնային Գանձակը, Լոռին, Փամբակը, հայկական Բորչալուն, Ջավախքը, իսկ 1878 թ. հետո նաև՝ Կարսի մարզը: Սույն աշխատանքում մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել միայն Երևանի նահանգը: Արևելյան Հայաստանի հիմնական տարածքն ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանություններում, իսկ Լոռին, Փամբակը, Բորչալուն և Շամշադինը Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության մեջ: Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի մյուս բոլոր խանությունները ենթակա էին շահնշահի գերագույն իշխանությանը: Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 179:

մտցնեին նորագրավյալ տարածքների վարչատարածքային կառուցվածքում և բնակչության սոցիալ-տնտեսական և մյուս հարաբերություններում:

Դրանք նորամվաճված երկրամասում ամրապնդվելու և այն ամբողջովին յուրացնելու ուղիների հարցում Ռուսաստանի կառավարության ունեցած պատկերացումներն էին, նրա որդեգրած քաղաքականությունը:

Անդրկովկասի երկրամասում այդ խնդիրների լուծումն ուներ առանձնահատուկ բնույթ: Նախ, անհրաժեշտ էր վերջ տալ հավատակից և ցեղակից տիրապետողներին փոխարինելու եկած քրիստոնյա Ռուսաստանի հանդեպ տեղի մահմեդական բնակչության թշնամանքին ու ատելությանը: Կար ևս մեկ բացասական գործոն: Պարսկա-թուրքական դարավոր տիրապետությունը Անդրկովկասի ժողովուրդներին, այդ թվում և արևելահայությանը տնտեսապես շահագործելուց, կեղեքելուց, ազգային ու կրոնական բռնաճնշումներից և ստորացումներից բացի, նրանց վարժեցրել էր այնպիսի ապրելակերպի, երբ պետահիրավական և տնտեսական հարաբերություններում օրենքի իշխանության փոխարեն գործում էին հիմնականում մուսուլման ժողովուրդների ազգային կենսակերպին և գոյածևին հարիր հոռի բարքերն ու սովորույթները: Այդ վիճակը շարունակվում էր նաև երկրամասը Ռուսաստանին անցնելուց հետո: Երևույթների նման ընթացքը, անշուշտ, իր հետ բերում էր անկայունություն ու խառնաշփոթ, պետականության հասկացության թերի ըմբռնում, ինչը կարող էր վտանգել երկրի կայունությանը և կայսրության հարավային սահմանները հեշտ խոցելի դարձնել արտաքին թշնամիների համար:

Տնտեսական տեսանկյունից ևս խնդիրն ուներ արդիական հնչեղություն: Նվաճված տարածքներում տեղական ժողովուրդների վարչական և օրենսդրական հնացած համակառույցի փոխարեն

ռուսական վարչաձևեր և օրենքներ մտցնելով, գործի էին դրվում հաստատուն օրենքներ հարկային դաշտում:

Ռուսական իշխանությունները գիտակցում էին ստեղծված վիճակն արագ հաղթահարելու անհրաժեշտությունը: Գեներալ Իվան Պասկևիչը, որին հանձնարարված էր Անդրկովկասում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու իրավասությունը, 1830 թ. ապրիլին Նիկոլայ Ա-ին գրած նամակում նշում էր, որ Անդրկովկասում ռուսական վարչաձևերի և օրենքների տարօրինակ խառնուրդ է ստեղծվել վրացականի և մուսուլմանականի հետ, հարկերի գանձման սիստեմն անկանոն է, պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների մեջ գոյություն ունի անորոշություն[1]: Միասնություն չկա ո՛չ կառավարման ձևի, ո՛չ օրենքների և ո՛չ էլ ֆինանսական սիստեմի մեջ: «Զարիքի արմատը,- գրում է նա,- գտնվում է հենց քաղաքացիական մասի կառավարչության մեջ»[2]:

Ռուսաստանի պաշտոնական շրջանակների տեսակետն էր. «Անդրկովկասը կապել Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին և ստիպել տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար»[3]:

Այսպիսով, Անդրկովկասում վարչատարածքային փոփոխություններ անցկացնելու խնդիրը կայսրության շահերից բխող կենսական անհրաժեշտություն էր: Հարց է ծագում. Ռուսաստանի կառավարությունը ինչպես էր պատկերացնում այս գործընթացը և մաս-

---

[1] Պարսկաստանում կառավարման տիրող վարչաձևը ռազմական բռնապետությունն էր: Պետության մեջ շահի, իսկ խանություններում խաների իրավունքներն անսահմանափակ էին: Նրանց քմահաճույքից էր կախված հպատակների կյանքի ու գույքի ապահովությունը: Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, էջ 180:

[2] **Վ. Պարսամյան,** *Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, 1979, էջ 67–68:

[3] *Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20–60-х гг. XIX в.*, ч. I, М.-Л., 1936, с. 21.

նավորապես ի՞նչ ռազմավարություն էր վարում այդ ուղղությամբ, այսինքն՝ խոսքը վերաբերում է ինչից պետք է սկսեր հարցին: Հենց սկզբից նշենք, որ երկրի ղեկավարությունը փաստորեն նոր եղանակներ չկիրառեց խնդիրը լուծելու համար, այլ կենսագործեց նախկինում փորձարկված և բազմիցս կենսունակությունը ապացուցած ուղին, որն էր՝ Անդրկովկասը տարածքային վերաձևման ենթարկելով ստեղծեց վարչատարածքային նոր համակարգ: Ընտրված ուղին դարձավ պետական քաղաքականություն, որն իր արտահայտությունը գտավ XIX դ. 30–40-ական թվականներին Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում մեկը մյուսին հաջորդող վարչատարածքային փոփոխությունների ծրագրերի փնջում: Տարածքային վերաձևումները և ըստ այդմ վարչակառավարման նոր համակարգի ստեղծումը ներկայացնում էին որպես մեկ ընդհանուր ռազմավարական ուղղություն, որն, ինչպես ենթադրում էին Ռուսաստանի իշխանությունները, թույլ կտար նորագրավյալ տարածքներն առանց ցնցումների և այլևայլ բարդությունների «ներծծել» կայսրության մեջ:

Հատկանշական է, որ Երևանի և Նախիջևանի խանություններում[1] ռուսական իշխանությունները մասնակի վարչական փոփոխություններ սկսում են տակավին այս խանությունների ռազմակալման հետ միաժամանակ: Արևելյան Հայաստանում Ռուսաստանը, առաջին անգամ, իշխանության մարմնի տեսքով ներկայացել է 1827 թ. հոկտեմբերի 6-ից, երբ գեներալ Ի. Պասկևիչի հրամանով ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչությունը: Ռազմավարչական բնույթի սույն վարչությունը, որը կոչված էր իշխանություն իրա-

[1] Երևանի խանությունը բաժանված էր 15 մահալների՝ Կրիբուլուղի, Զանգիբասարի, Գառնիբասարի, Վեդիբասարի, Ծաղրուի, Սուրմալուի, Դարալբենդ – Փալչենիսի, Սահաթլուի, Թալինի, Սեհդի-Ախսախլիի, Սարդարաբատի, Կարբիբասարի, Ապարանի, Դարաչիչակի և Գյոկչայի: Նախիջևանի խանությունն Օրդուբադի շրջանի հետ միասին կազմված էր 10 մահալից: Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, էջ 179:

կանացնել գրավյալ ժողովուրդների նկատմամբ, ընդամենը կես տարվա կյանք ունեցավ: 1828 թ. մարտի 21-ին կայսր Նիկոլայ Ա-ն Սենատի անունից հրովարտակ արձակեց, որով Երևանի և Նախիջևանի խանություններից և Օրդուբադի օկրուգից ստեղծվեց Հայկական մարզը: Նրանում մասնավորաբար ասված է. «...Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և մտցնել մեր տիտղոսի մեջ»[1]: Այս հրամանագրի հետ աղերս ուներ Պասկևիչի կողմից ժամանակավոր վարչությունը լուծարելու մասին հրամանի արձակումը: Մարզը բաժանվում էր երկու՝ Երևանի և Նախիջևանի գավառների և Օրդուբադի օկրուգի: Հայկական մարզի տարածքի փաստացի մակերևույթը կազմում էր 30 հազար քառ. վերստ, որից 1.200 քառ. վերստը բաժին էր ընկնում Սևանա լճին, 500 քառ. վերստը՝ գետեր, առուներ, ջրմուղներ, 500 քառ. վերստը՝ ճահիճներ, 200 քառ. վերստը՝ ճանապարհներ, 1.000 քառ. վերստը՝ քաղաքներ, գյուղեր, ձմեռանոցներ և այլ շինություններ և 250 քառ. վերստը՝ գերեզմաններ, դրանցից բացի. ա) 5.000 քառ. վերստը՝ պիտանի հող մերձարևադարձային բույսերի մշակման համար, 9.000 քառ. վերստը՝ հացաբույսերի մշակման համար, խոտհարք՝ 5.000 քառ. վերստ, անպիտանի հողեր և լեռնագագաթներ՝ 3.000 քառ. վերստ, աղուտներ՝ 200 քառ. վերստ, անտառներ՝ 1.000 քառ. վերստ, այգիներ՝ 125 քառ. վերստ և հացահատիկի մշակման համար 3.025 քառ. վերստ անջրդի հողերը: Մարզը հարավից սահմանակից էր Պարսկաստանին (250 վերստ երկարությամբ), իսկ արևմուտքից՝ Թուրքիային (230 վերստ երկարությամբ)[2]:

---

[1] *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа*, т. 1, М., 1833, с. 278; *Присоединение Восточной Армении к России*, т. 2, с. 566–568; *Полное собрание законов Российской империи*, II собр., т. III, 1828, № 1888.

[2] Տե՛ս *Документы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединение к*

Նորաստեղծ մարզի կառավարումը հանձնարարվեց բարձրաստիճան զինվորականներից կազմված մարզային վարչությանը[1], որի ղեկը ստանձնեց գեներալ Ճավճավաձեն, իսկ 1830 թ. մինչև 1838 թ. այդ պաշտոնը վարեց իշխան Վ. Բեհբութովը:

«Հայկական մարզի կառավարման կանոնների մասին» 1833 թ. հունիսի 23-ին Պետական խորհրդի ընդունած որոշման համաձայն մարզում անցկացվեց վարչատարածքային նոր բաժանում՝ ձևափոխվեց նրա վարչական քարտեզը՝ Երևանի գավառը բաժանվեց չորս օկրուգների (շրջանների)՝ Երևանի[2], Շարուրի, Սարդարաբադի և Սուրմալուի: Իսկ Նախիջևանի գավառը՝ Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի[3]: Յուրաքանչյուր օկրուգ բաժանվեց ավելի փոքր վարչական միավորների՝ մահալների և գյուղերի: Վերը նշված որոշման կիրարկման առաջին քայլերից մեկը եղավ այն, որ վարչական պաշտոններից հեռացվեցին խանական շրջանի նախկին պաշտոնյաները՝ խաները, բեկերը, մելիքները և աղաները[4]:

Որպես կանոն՝ նորաստեղծ վարչական կառույցներում ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում ռուսական քաղաքացիական կամ զինվորական աստիճանավորները, թեև առանձին դեպքերում նշանակվել են նաև հայեր:

Նախիջևանի և Օրդուբադի վարչական կառույցները պահպանվեցին: Հունիսի 23-ի որոշմամբ Նախիջևանի պրովինցիան և

России (1830–1870), под редакцией **Н.А. Тавакаляна**, Эреван, 1993, էջ 334 (այսուհետև՝ Документы и материалы):

[1] Վարչության կազմում ընդգրկվեցին երկու ռուս բարձրաստիճան զինվորականներ, մեկ հայ և մեկ մահմեդական՝ տեղական ընտրյալ դասի ներկայացուցիչներից: Կոլեգիայի հայ ներկայացուցիչը եղել է Ներսես Աշտարակեցին: Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 334:

[2] 1833 թ. Երևանը համարվեց Հայկական մարզի վարչական կենտրոն: Տե՛ս *Памятная книжка Эриванской губернии на 1906 г.*, Эриван, 1905, էջ 135 (այսուհետև՝ ПКЭГ):

[3] Տե՛ս **И. Шопен**, *Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи*, СПб., 1852, էջ 448:

[4] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V, Երևան, 1974, էջ 215:

Օրդուբադի օկրուգը թողնվեցին նայիբների կառավարման ներքո. «Նախիջևանի և Օրդուբադի... նայիբներին՝ Էսքան խանին և Շխալի-բեկին, որոնց այդ վայրերում զեմստվային իշխանություն է տրված, թողնել իրենց կոչման ու պաշտոնի մեջ...»[1]:

Ուղղորդվելով նշված օկրուգներում հին վարչակարգերը պահպանելու և մահմեդական բնակչության երբեմնի ազդեցիկ և թելադրող կարգավիճակը չխախտելու Ռուսաստանի շովինիստ ղեկավարության քաղաքականությամբ, տեղերում այդ քաղաքականությունը կուրորեն իրականացնող պաշտոնյաներն առանձին դեպքերում շատավելի հեռուն գնացին: Այսպես, տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների անմիջական և ակտիվ մասնակից Ա. Գրիբոյեդովը[2], որին խնդրո առարկա հիմնահարցը ուսումնասիրող խորհրդային բոլոր պատմաբանները, չնչին բացառությամբ, համարել են հայ ժողովրդի շահերի պաշտպան, Ի. Պասկևիչին հորդորում էր Նախիջևանի 500 ընտանիք (այդ թվում ներգաղթողներից) կամովին կամ հարկադրաբար տեղափոխել այլ վայրեր և նրանց տեղը բնակեցնել մահմեդականներով[3]:

Այս ամենից հետևում է, որ Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի պարսկական մասում, մասնավորապես Նախիջևանում և Օրդուբադում անցկացվող ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի վարչատարածքային բաժանումներն ու վերաբաժանումներն ուղեկցվում էին նախկին վարչամիավորների լրիվ կամ մասնակի պահմանմամբ: Փաստորեն, Անդրկովկասի նորագրավյալ մյուս տարածքների օրինակով Հայկական մարզում ևս վարչական

---

[1] *Полное собрание законов Российской империи*, т. VIII, 1833, № 62, 82.

[2] Ա. Գրիբոյեդովը մեծ մասնակցություն է ունեցել ինչպես Թուրքմենչայի պայմանագրի կնքման, այնպես էլ պարսկահայերի վերաբնակեցման աշխատանքներին: Տե՛ս **А. Берже**, *А. Грибоедов. Деятельность его как дипломата (1827–1829 гг.), Русская старина*, СПб., 1874, էջ 747–748:

[3] Տե՛ս նույն տեղում:

նոր վերաբաժանումների ժամանակ հին բոլոր վարչական կառույցները չլուծարվեցին, և ստեղծվել էր մի իրավիճակ, երբ դեռ ռուսական կայսրության իշխանության նոր կառույցները չէին ամրապընդվել, իսկ օրենքների կիրարկման համար համապատասխան օրենսդրական դաշտ չկար, հինն ու նորը դեռ զուգորդված էին և ներկայացնում էին հնի ու նորի հակադրությունների միասնություն:

Հարց է ծագում, ինչու այնպես եղավ, որ քրիստոնյա Ռուսաստանը հավատակից հայերից առավել վստահում էր մահմեդականներին:

Նախ՝ հենց սկզբից նշենք, որ գաղութատեր Ռուսաստանի ղեկավարությունը չէր վստահում, թե՛ հայերին և թե՛, առավել ևս, մուսուլմաններին: Այդ քաղաքականության պատճառները շատ ավելի բազմաշերտ են ու խորը, քան կարող է թվալ առաջին հայացքից: Առաջին, ռուսական պետության համար քաղաքական առումով շահեկան չէր, որ իր հարավային նորահաստատված և «փխրուն» սահմանը բնակեցված լիներ էթնիկական միատարր կազմ ունեցող մեծաթիվ բնակչությամբ, որն, անշուշտ, հակառուսական անջատողական տրամադրություն սնուցող գործոն էր: Երկրորդ, երկու ժողովուրդներից որևէ մեկի անհնազանդության և ապակենտրոն ձգտումների դեպքում, մյուսին հակակշռելու համար: Երրորդ, տեղի մուսուլման բնակչության համակրանքին արժանանալու, նրա վերնախավին սիրաշահելու և իր կողմը գրավելու համար: Չորրորդ, հաշվի էր առնվում նաև այն հանգամանքը, որ մուսուլման ժողովուրդները, որպես կանոն, շատ ավելի առաջնորդվում են ավանդույթների ու սովորույթների ուժով, քան օրենքներով:

Այսուհանդերձ, Հայկական մարզում «Կիրարկված վարչական բարեփոխումները,- գրում է Գ. Գալոյանը,- աննառարկելի դրական նշանակություն ունեցան: Բնակչության լայն զանգվածները ազատագրվեցին պարսկական խաների թալանից ու բռնադատումնե-

ից: Հայկական մարզում սկսեցին գործել ռուսական կայսրության օրենքները, որոնք սակայն գաղութային հնազանդության մեջ էին պահում նվաճված երկրամասերի ժողովուրդներին»[1]:

Անցել էր բավականին երկար ժամանակ: Ռուսաստանը հասցրել էր իր տիրապետող ներկայությունը ապահովել Անդրկովկասի երկրամասի տնտեսական և քաղաքական կյանքի կարևորագույն բնագավառներում և ուսումնասիրել նրա բնակլիմայական պայմանները, հաղորդակցության ուղիները, տնտեսական կապերը և հետաքրքրություն ներկայացնող այլ խնդիրներ:

Այս ամենը դեռ բավարար չէր երկրամասը կայսրության ամբողջական մարմնի կարկատանամաս դարձնելու, կարգ ու կանոն հաստատելու, նվաճված ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու, նրանց անջատողական տրամադրություններին վերջ տալու, ակնկալվող օգուտներ ստանալու և տերության ամբողջականությունը հավերժացնելու համար: Ռուսական իշխանությունները պետք է, որ անհրաժեշտ եզրակացություն անեին այդպիսի իրավիճակից:

Անդրկովկասում, հատկապես Արևելյան Հայաստանում սկսված գյուղացիական հակացարական զանգվածային ելույթները և շարժումները նոր սրությամբ դրեցին ոչ վաղ անցյալում նվաճված տարածքներում հրատապ բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Երկրամասում վարչատարածքային վերածևումներ կատարելու գաղափարն անմիջական արձագանք ստացավ ռուսական կառավարության կողմից, երբ 1837 թ. Նիկոլայ Ա-ն այցելելով Անդրկովկաս և Արևելյան Հայաստան, արժանացավ տեղի բնակչության, այսպես կոչված, անհյուրընկալ վերաբերմունքին:

---

[1] **Գ. Գալոյան,** *Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալ առճակատումներում (XVI դարից – 1917 թ.)*, Երևան, 2004, էջ 183:

Ռուսական կառավարությունը 1830-ական թթ. սկսեց ակտիվացնել Անդրկովկասում բարեփոխումներ անցկացնելու իր քաղաքականությունը և դիմեց գործնական քայլերի:

Մի այդպիսի քայլ էր ցարական կառավարության կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովը սենատոր Հանի գլխավորությամբ, որն Անդրկովկասում վարչատարածքային փոփոխությունների հարցն ուսումնասիրելու և ըստ այդմ կառավարությանը եզրակացություն ներկայացնելու համար 1837 թ. ուղարկվեց Անդրկովկաս: Մեկ տարի անց՝ 1838 թ., հանձնաժողովի կողմից կառավարությանը ներկայացված զեկուցագիրը բովանդակում էր նախատեսվող վարչատարածքային փոփոխությունների ամբողջ շրջանակը: 1840 թ. ապրիլի 10-ին կայսրը վավերացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը»[1]: Կառավարությունն իսկույն ևեթ ձեռնամուխ եղավ դրա կենսագործմանը: Անդրկովկասը ենթարկվեց վարչական նոր բաժանման: Առաջին քայլերից մեկն այն եղավ, որ ցրվեցին նախկին բոլոր վարչամիավորները, այդ թվում տասներկու տարվա կենսագրություն ունեցող Հայկական մարզը:

1840 թ. Հայկական մարզի տարածքի վրա ստեղծվեց երկու վարչական միավոր՝ Երևանի և Նախիջևանի գավառները, իսկ Օրդուբադը ստացավ գավառային ենթակայության՝ քաղաքի կարգավիճակ: Նույն տարում Անդրկովկասի երկրամասում ստեղծվեց երկու խոշոր վարչատարածքային միավոր՝ Կասպիական մարզը՝ Շամախի կենտրոնով և Վրաց-Իմերեթական նահանգը՝ Թիֆլիս կենտրոնով: 11 գավառից բաղկացած Վրաց-Իմերեթական նահանգի մեջ մտցվեց նաև Արևելյան Հայաստանի երեք՝ Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի (վերջինն իր մեջ ընդգրկում էր նաև

---

[1] Ապրիլի 10-ի օրենքով Կովկասում տեղական կառավարումը եռաստիճան էր. տեղամաս՝ տեղամասային ատենակալ, գավառ՝ գավառապետ, նահանգ՝ նահանգապետ: Տե՛ս **Г. Евангулов,** *Местная реформа на Кавказе*, СПб., 1914, էջ 18–19:

Բորչալուի շրջանի հարավային մասը և Շորագյալ-Փամբակի ամբողջ շրջանը, իսկ 1840 թ.՝ նաև Ախալքալաքի շրջանը) գավառները[1]:

Ընդ որում, ինչպես այս, այնպես էլ հաջորդ վարչատարածքային բաժանումների հիմքում ընկած էր քաղաքական գործոնը՝ Ռուսաստանի կառավարությունը Արևելյան Հայաստանը դիտում էր որպես գրավված տարածք, որի հետ կարող էր վարվել ինչպես ցանկանար, միայն թե հավերժացներ կայսրության ամբողջականությունը՝ ի շահ նրա հետագա ընդարձակմանն ու հզորացմանը:

Այլ խոսքով՝ ազգային առանձնահատկությունների, էթնոդավանաբանական, տնտեսական և ժողովրդագրական գործոնների հետ իշխանությունները հաշվի չէին նստում: Ըստ էության, դա կայսերապաշտական քաղաքականություն էր, որի կենսագործման ճանապարհին ամենաբիրտ կերպով ոտնահարվեցին արևելահայերի և Անդրկովկասի հայության ազգային արժանապատվությունը, կրոնաբարոյական զգացմունքները, խաթարվեց նրա ազգային-մշակութային ժառանգության շարունակականությունը: Սա դեռ ամենը չէ: Արևելյան Հայաստանը բաժան-բաժան արվեց: Արևելահայությունը և կովկասահայությունը զոհաբերվեցին այդ վարչատարածքային փոփոխություններին: Վերը ասվեց, որ հայկական տարածքների մեծ մասը մտվեց Վրաց-Իմերեթական նահանգի մեջ: Այս

---

[1] 1801 թ. Ռուսաստանին անցած Փամբակի շրջանից ստեղծվեց Լոռիի գավառը: Երևանի սարդարից կախվածության մեջ գտնվող Շորագյալի սուլթանության բնակչությունը 1815 թ. կամովին անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Այս երկու շրջանների միավորումից ստեղծվեց մեկ վարչական միավոր՝ Փամբակ-Շորագյալի դիստանցիա (աստիճանակարգ – Հ.Հ.) անունով: 1840 թ. այս դիստանցիային միացվեց Ախալքալաքի շրջանը և դրանց հիմքի վրա էլ ստեղծվեց Այնբասանդրապոլի գավառը, որը սկզբից անցավ Վրաց-Իմերեթական նահանգին, իսկ 1846 թ.՝ Թիֆլիսի նահանգին: Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 94, ց. 1, գ. 3151, թ. 68 (այսուհետև՝ ՀԱԱ), *ПКЭГ на 1892-й г.*, Эривань, 1891, էջ 105: *ПКЭГ на 1906 г.*, էջ 133–134: *Обзор Эриванской губернии за 1886 г.*, Тифлис, 1885, էջ 1, 3 (այսուհետև՝ ՕԷԳ): **Г. Евангулов**, նշվ. աշխ., էջ 11–13:

վարչատարածքային վերաձևումներից դժգոհելու առիթ չունեցան և Կովկասի թաթարները: Կասպիական մարզին բռնակցվեցին Սյունիքն ու Արցախը:

Այս բաժանմանն արժե անդրադառնալ, քանզի այն շոշափում է Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարցեր: Երկրամասի ժողովուրդները ռուսական իշխանությունների կողմից դիտվում էին որպես անջատողական տարրեր: Դրանց դեմ պայքարելու միջոցը հայտնի էր՝ փորձված ու արդյունավետ՝ որպիսին էր, բաժանիր, որ տիրես: Անդրկովկասի երկրամասը կամայականորեն վերաձևելով ցարական կառավարությունը հաշվի չէր առնում տեղական բնակչության ոչ մի սովորույթ, բորբոքում էր նրանց կրոնական զգացմունքները, բթացնում ազգային ինքնագիտակցությունը, աշխատում էր մի ժողովրդին մյուսի դեմ լարել, որպեսզի հեշտ լիներ նրանց վրա իշխելը:

Բայցևայնպես, այդ ամենը շատ հաճախ հանգեցնում էին տնտեսական ու քաղաքական լուրջ խնդիրների, որոնք անհապաղ լուծում էին պահանջում:

Վարչատարածքային նոր համակարգից Անդրկովկասի երեք հիմնական ազգությունները՝ հայերը, վրացիները և թաթարները, խոր տագնապի մեջ էին: Ծայրահեղորեն գրգռված էին հայերը: Արհեստածին այս համակարգը երկրամասի ժողովուրդներին հարուցել էր այլ կարգի անհարմարություններ ևս: Այն երկրամասի տնտեսության զարգացման համար նոր հնարավորություններ չստեղծեց, եթե չասենք, որ լուրջ դժվարություններ ու բարդություններ հարուցեց:

Անդրկովկասը՝ որպես լեռնային և տարածքով խիստ մասնատված տարածաշրջան, ռուսական կայսրության ամենադժվարամատչելի երկրամասերից մեկն էր: Ճանապարհների ցանցը չափազանց փոքր էր և խիստ անբարվոք: Եթե սրան ավելացնենք, որ

ձմռան ամիսներին դրանց մեծ մասը փակվում էր, ապա պատկերն ավելի պարզ ու հասկանալի կդառնա: Ճանապարհատրանսպորտային միջոցների բացակայության հետևանքով անհնարին էր դարձել աշխույժ կապ հաստատել նահանգային կենտրոնների և գավառների, ինչպես նաև վերջինների միջև: Երկրամասն առանձնանում էր յուրահատուկ բնակլիմայական պայմաններով, գյուղատնտեսական մասնագիտացման բնույթով, բնակչության խտությամբ, աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների թերօգտագործմամբ:

Այս ամենը վարչատարածքային այդ կազմույցների մեջ պարտադրված ընդգրկված ժողովուրդներից յուրաքանչյուրի տնտեսական զարգացման, հոգևոր-մշակութային սեփական նկարագիրը կերտելու և ազգային ինքնությունը պահպանելու համար անշրջելի վտանգ էր սպառնում:

Ի դեպ, ստեղծված տնտեսական և քաղաքական կացությունը օբյեկտիվորեն չէր բխում նաև Ռուսական կայսրության շահերից, որովհետև մի կողմից ակնկալվող օգուտները չէին ստացվում, մյուս կողմից էլ ժողովրդական զանգվածների հակապետական կրքերն ու տրամադրություններն էին բորբոքվում: Փաստորեն, Ռուսաստանի կառավարության սպասումները հետագայում չարդարացան, ուստի և նրա իշխանությունների կողմից այլևս չէր խրախուսվում ստեղծված կացությունը: Հենց դա է վկայում այն փաստը, որ Անդրկովկասը կայսրության համար էլ ավելի շահավետ դարձնելու և նրանից առավելագույնը ստանալու ընչաքաղցությամբ ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ երկրամասը նոր վարչական վերաձևման ենթարկելու փորձված մեթոդին:

Անդրկովկասի վարչատարածքային նոր բաժանման և կառավարման համակարգի վերափոխման անհրաժեշտության մասին 1845 թ. փոխարքա Միխայիլ Վորոնցովն իր հաշվետվության մեջ

նշել է. «Ես զարմացած եմ, որ զգալի թվով պետական պաշտոնյաներ զանազան գերատեսչություններից աշխատատեղ ու պաշտոններ են փնտրում»: Նա նշում է նաև, որ «1840 թ., երբ կազմավորվեց Անդրկովկասի երկրամասը և բացվեցին նահանգային և գավառային զանազան աշխատատեղեր, Ռուսաստանից հրավիրվեցին շատ պաշտոնյաներ: Կարճ ժամանակամիջոցում վիճակը փոխվեց: Նրանցից ոմանք հայտնվել են ծանր դրության մեջ: Բացի դա, ամեն տարի ավելանում է Ռուսաստանի գիմնազիաներ և մյուս հաստատություններ ավարտած տեղացի մասնագետների թիվը, որոնք ձգտում են աշխատել»: Նկատի ունենալով այդ ամենը, գրում է փոխարքան, «ես կարգադրություն եմ արել Ռուսաստանից չհրավիրել պաշտոնյաներ ծառայության համար առանց բացառիկ անհրաժեշտության և առանց իմ թույլտվության»[1]: Հավելենք, որ Կովկասի նոր փոխարքա Միխայիլ Վորոնցովը պաշտոնների նշանակում էր առավելապես տեղական կադրերին:

Անդրկովկասի վարչական բաժանումներն ուսումնասիրող Ա. Օհանյանը ևս անդրադառնալով այդ փոփոխությունների պատճառներին գրում է. «Այս վերջին բաժանման (1846 թ. – Հ.Հ.) նպատակն էր ուժեղացնել վարչական, դատական ու ոստիկանական ապարատի ճնշումը, ինչպես մասամբ նաև «մխիթարել» Իմերեթիայի ազնվականներին, վերջ տալ նրանց տրտունջներին այն մասին, որ իրենց ամբողջ թագավորությունը (Իմերեթիան) դարձրել են Թիֆլիսի նահանգի մի գավառը: Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովն այդպիսով ընդառաջեց Իմերեթիայի ազնվականությանը՝ ստեղծելով Քութայիսի նահանգը»[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 4:

[2] **Ա. Օհանյան**, *Վարչա-տերիտորիալ բաժանումները նախասովետական Հայաստանում*, Գիտական աշխատություններ, հ. 51, *Աշխատրհագիտական գիտությունների սերիա*, պրակ 2, Երևան, 1955, էջ 86–87:

Այսպիսով, կենտրոնական և երկրամասային իշխանություններն առաջացած խնդիրների լուծումը կապում էին գավառների և նահանգների թվի ավելացման հետ: 1846 թ. նոյեմբերի 14-ին Կովկասյան կոմիտեն ընդունեց «Կանոնադրություն Անդրկովկասի երկրամասը չորս նահանգների բաժանելու մասին»[1]:

Երկրամասում առաջին անգամ նոր վարչամիավորներ ստեղծելուց յոթ տարի անց՝ 1846 թ. դեկտեմբերի 14-ին Վրացահիմերեթական նահանգը բաժանվեց երկու նահանգի՝ Թիֆլիսի և Քութայիսի, որոնցից յուրաքանչյուրն ուներ հինգ գավառ: Ընդ որում՝ Ախալցխայի գավառն անցավ Քութայիսի նահանգին: Կասպիական մարզը նույնպես բաժանվեց երկու նահանգի՝ Շամախիի և Դերբենդի[2]: Փաստորեն, երկրամասի ողջ տարածքի վրա ստեղծվեցին չորս նահանգներ: Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի (վերջինիս կազմում նաև Ախալքալաքի շրջանը) գավառները, ինչպես նաև Ղազախի և Շամշադինի շրջանները, որոնք գտնվում էին Շամախիի նահանգի[3] Ելիզավետպոլի գավառի կազմում, միացվեցին Թիֆլիսի նահանգին[4]:

Երևանի գավառապետ նշանակվեց Նիկոֆոր Բլավատսկին, Նախիջևանի գավառապետ՝ Իեսսեյ Սուլխանովը, իսկ Ալեքսանդրապոլի գավառապետ՝ Ռոբերտ Բինեմանը[5]:

Անդրկովկասի երկրամասի վարչական սահմանաբաժան այս քարտեզն անփոփոխ մնաց մինչև XIX դ. 40-ական թվականների

---

[1] Տե՛ս **В. Тунян**, *Политика самодержавия России в Закавказье XIX – нач. XX вв.*, часть четвертая 1845–1876 гг., Ереван. 2007, էջ 17–18:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 6:

[3] Շամախի նահանգի (Շամախի վարչական կենտրոնով) կազմում էին Բաքվի, Լենքորանի, Շամախիի, Նուխիի և Շուշիի գավառները: Տե՛ս **А. Шахатунян**, *Административный передель Закавказского края*, Тифлис, 1918, էջ 88–92:

[4] Տե՛ս *ПКЭГ на 1906 г.*, էջ 134: *ОЭГ за 1886 г.*, էջ 1: **А. Шахатунян**, նշվ. աշխ., էջ 88–92: **Ա. Օհանյան**, նշվ. աշխ., էջ 87:

[5] Տե՛ս *Кавказский календарь на 1846 г.*, Тифлис, 1845, էջ 173–174 (այսուհետև՝ КК):

վերջը: Այս վերածնումը, սակայն, չունեցավ իր դրական հետևանքները: Տարիներ պետք է անցնեին, որպեսզի ակնհայտ այդ իրողությունն ընկալեին և անհրաժեշտ հետևության հանգեին ռուսական իշխանությունները՝ գործնական քայլեր կատարելու, կայսրության մեջ գործող օրենքներն երկրամասի վրա տարածելու, նրա վարչական կառուցվածքը ըստ հիմնական ազգությունների տեղաբաշխվածությանն ու խտությանը համապատասխան փոփոխության ենթարկելու համար:

Այսպիսով, Ռուսաստանի իշխանություններն Արևելյան Հայաստանը կայսրությանը կցեցին նրա տարածքային ամբողջականությունն անդամահատելով: Ոտնահարվեցին հայ ժողովրդի ազգային շահերը: Նրան չտրվեց անգամ առանձին վարչական միավոր ունենալու հնարավորություն: Հաշվի առնելով այս ամենը Ռուսաստանի կառավարությունը Թիֆլիսի նահանգի կազմից հանեց Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի գավառները և 1849 թ. հիմնեց Երևանի նահանգը:

Փաստորեն, XIX դարի առաջին 30-ամյակում ցարական Ռուսաստանը նվաճեց և կայսրությանը միացրեց Անդրկովկասն ու Արևելյան Հայաստանը, որն իբրև չարյաց փոքրագույն ունեցավ առաջադիմական նշանակություն: Սակայն, ռուսական կառավարությունը այնտեղ վարչատարածքային բաժանումներ անցկացնելիս և սոցիալ-տնտեսական քաղաքականություն վարելիս առաջնորդվել է գերազանցապես մեծապետական շահերով, որպես կանոն, հաշվի չի առել այնտեղ ապրող բնիկ ժողովրդների պատմական, տարածքային, քաղաքական, էթնիկ իրավունքները, հոգևորմշակութային առանձնահատկությունները, խնդիրներ, որոնք հետագայում ազգամիջյան ընդհարումների պատճառ դարձան և դրա արձագանքները, ցավոք, շարունակվում են մինչ օրս: Ընդ որում,

հարկ է ընդգծել, որ այդ վարչատարածքային բաժանումներից ամենաշատը տուժել է Հայաստանը և հայ ժողովուրդը:

2. Երևանի նահանգի կազմավորումը, վարչատարածքային փոփոխությունները և կառավարման համակարգը XIX դ. 40-ական թվականների վերջից – 1917 թ.

Անդրկովկասի վարչատարածքային կառուցվածքը նոր վերանայման ենթարկելու խնդիրը դարձել էր օրակարգային անհրաժեշտություն և հրատապ լուծում էր պահանջում:

Այդ փոփոխությունների հիմքի վրա ստեղծվեց Երևանի նահանգը: Վերջինիս ստեղծման ակտիվ շահառուներից մեկը՝ Կովկասի փոխարքա, գեներալ համահարգ Միխայիլ Վորոնցովն էր, իհարկե, ոչ առանց հիմքի: Պատճառները բազում էին: Նշենք դրանցից առավել կարևորները.

ա) նախ՝ որոշիչ է եղել ապագա նահանգի տարածքի վրա բնիկ ժողովրդի՝ հայության ստվար զանգվածով սեփական հայրենիքում, ինքնակալության հանդեպ անխոով ապրելու համար նվազագույն պայմաններ ստեղծելը: Ասվածին ավելացնենք ևս մեկը: Ռուսաստանը բազմաէթնիկ Արևելյան Հայաստանը հայ բնակչությամբ ամրապնդելու նպատակ էր հետապնդում: Բանն այն է, որ ռուսական իշխանություններին մեծ անհանգստություն էր պատճառում Արևելյան Հայաստանում մեծաթիվ մահմեդական բնակչության առկայությունը: Նրանք իրապես վախենում էին, որ Պարսկաստանում և Օսմանյան կայսրությունում հակառուսական տրամադրությունների վերելքը կարող է համակել նաև սահմանակից Հայաստանի մահ-

մեդական բնակչությանը: Կենտրոնական և կովկասյան իշխանությունները գիտակցում էին, որ հայ բնակչության քաղաքացիական և կառավարման իրավունքների որոշակի ընդլայնումը և գործնականում օրինականացումը, հակառակորդ երկրներին, հասկանալի պատճառներով, կզրկեր հինգերորդ շարասյան օգնությունից:

Հատկանշական է, որ ցարական կառավարությունն այս քաղաքականությունը որդեգրել էր դեռ Երևանի և Նախիջևանի խանությունները կայսրության մաս կազմելու առաջին իսկ օրից: Այսպես, գեներալ Իվան Պասկևիչը ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ Դիբիչին ուղարկած զեկուցագրում հետևյալ կերպ է բացատրում նորագրավյալ տարածքները պարսկահայ գաղթականներով բնակեցնելու անհրաժեշտությունը. «Մեր սահմանի ամայի հողերի բնակեցումը հնազանդ, աշխատասեր և հավատով մեզ նվիրված ժողովրդով կարող է մեծ օգուտ բերել»[1]:

բ) Անդրկովկասի երկրամասի սոցիալ-տնտեսական, մշակութային և հասարակական-քաղաքական կյանքում էապես թուլացնել Թիֆլիսի նահանգի չափազանց գերիշխող և ահագնացող ազդեցությունը, որը հղի էր թե՛ ազգամիջյան հարաբերությունների սրացման, և, թե՛ կենտրոնական իշխանությանը սպառնացող վտանգներով:

գ) Երկրամասի արդյունաբերության մեջ, բանկային համակարգում և առևտրի ասպարեզում վճռորոշ դեր խաղացող հայությանը և նրա մտավորականությանն իր շուրջը համախմբելու համար: Իբրև դրա ապացույց հարկ ենք համարում բերել հետևյալ փաստը: 1847 թ. նոյեմբերի 8-ին փոխարքա Մ. Վորոնցովը հայազգի գեներալ Վ. Բեհբութովին վստահում է Անդրկովկասի քաղաքացիական կառավարման վարչության պետի պատասխանատու

---

[1] **Հ. Հարությունյան,** *Նոր Բայազետի գավառ 1828–1913 թթ.*, Երևան, 2008, էջ 50:

պաշտոնը՝ նկատի ունենալով նրա մեծ հեղինակությունը հայերի և վրացիների շրջանում[1]:

դ) Հայաստանը սահմանակից լինելով Օսմանյան կայսրությանը և Պարսկաստանին, որպես առանձին վարչական միավոր կդառնար ավելի վստահելի գործընկեր արտաքին աշխարհի համար, ուստի և կարող էր մեծապես նպաստել ինչպես նշված պետությունների, այնպես էլ Մերձավոր Արևելքի մյուս երկրների հետ Ռուսաստանի առևտրատնտեսական կապերի ընդլայնմանն ու խորացմանը: Նշված և համանման այլ հանգամանքները նկատի ունենալով Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովը Թիֆլիսից Նիկոլայ Ա կայսրին 1849 թ. փետրվարի 5-ին ուղարկած զեկուցագրում առաջարկում է նախկին Հայկական մարզի հենքի վրա ստեղծել Երևանի առանձին նահանգ: «Անցյուծ հոկտեմբերին,- գրել է նա,- Երևանում գտնվելու ժամանակ, մաքսատան բնակիչներն ինձ խնդրեցին Ձեր առջև հարց բարձրացնեմ Երևանին նահանգի քաղաքի կարգավիճակ շնորհելու համար»[2]: Այնուհետև փոխարքան ընդգծել է. «Չպետք է աչքաթող անել, որ Երևանը ժամանակին եղել է Սարդարի նստավայրը, իսկ այնուհետև ռուսական կայսրության մարզային ղեկավարության կացավայրը»: Մ. Վորոնցովը շարունակում է, որ «Ներկայիս Թիֆլիսի նահանգի տարածքը շատ մեծ է, իսկ աշխատակազմը չափազանց շատ, որոնք օբյեկտիվորեն խանգարում են նահանգի ղեկավարությանն օպերատիվ և արդյունավետ կերպով կազմակերպելու նահանգի անխափան կենսագործունեությունը»[3]: Զեկուցագրում փոխարքան իր տեսակետը հիմնավորում է ավելի կոնկրետ փաստարկներով: Երևանի գավառը երկրամասի ամե-

---

[1] Տե՛ս **В. Тунян**, *Политика самодержавия России в Закавказье XIX – нач. XX вв.*, Часть четвертая, 1845–1876 гг., էջ 15:

[2] **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 197:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 197–199:

նաընդարձակ գավառներից մեկն է, սահմանակից է Թուրքիային, հարուստ է հացահատիկի արտադրությամբ, ունի մեծ թվով բնակչություն և ամենագլխավորը՝ ձգտում է անկախանալ Թիֆլիսի նահանգից: Ըստ կարելիության գնահատելով հայկական նաև մյուս գավառների հնարավորությունները՝ Մ. Վորոնցովը վստահեցնում է, որ Երևանի և Ալեքսանդրապոլի գավառների հետ Նախիջևանի, Օրդուբադի և Նոր Բայազետի վերամիավորումը կստեղծի բոլոր հարմարությունները ստեղծելու առանձնահատուկ բարեբեր ու ծաղկող նահանգ[1]: «Բնակչությունը,- գրում է նա,- որ մեծամասամբ կազմված է հայերից և անմիջականորեն կապված են նույն շահերով, մեծ էներգիայով կձգտեն զարգացնել արդյունաբերությունն ու առևտուրը և մեծացնել երկրամասի հարստությունը»[2]: Նա կայսրին հավաստում է, որ Երևանի նահանգի հիմնարկությունները չեն պահանջի պետական գանձարանից ոչ մի գումար և պաշտոնյաներին պահելու բոլոր ծախսերը կծածկեն պետական գույքի և արքունական պալատները մեկ կառավարման մեջ միավորելու արդյունքում՝ միջոցներ խնայելու հաշվին[3]:

Զեկուցագրին կցված տեղեկագիրը բովանդակում էր փոխարքայի տեսլականը ապագա Երևանի նահանգ ստեղծելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ §[1] Երևանի նահանգը կազմել ներկայիս Թիֆլիսի նահանգի կազմից հանելով. ա) նախկին Հայկական մարզից (կամ որ նույնն է Երևանի և Նախիջևանի գավառները – Հ.Հ.), բ) Ալեքսանդրապոլի գավառից, գ) Մեղրիի շրջանից և Կապան գյուղից, հանելով Շուշիի գավառի կամ Շամախիի նահանգի կազմից: §[2] Երևանի նահանգը բաժանել հինգ գավառների՝ Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի: §[3] Գա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:

վառները կազմել հետևյալ մասերից՝ 1. Երևանի գավառը՝ ներկա Երևանի շրջանից, անջատելով Գյոկչայի տեղամասը[1], քանի որ այն անցնելու է Նոր Բայազետի գավառին: 2. Նախիջևանի գավառը՝ ներկա Նախիջևանի տեղամասից: 3. Օրդուբադին՝ ներկա Օրդուբադի և Մեղրիի տեղամասերից և Կապան գյուղից, անջատելով Շուշիի գավառից: 4. Նոր Բայազետինը՝ Գյոկչայի տեղամասից և Գյոկչա լճի (Սևանա – Հ.Հ.) շրջակա գյուղերից: 5. Ալեքսանդրապոլինը՝ Շորագյալի և Փամբակի տեղամասերից:

Մյուս երկու (4 և 5) պարագրաֆներում նշվում է այն մասին, որ փոխարքային իրավունք վերապահվի անհրաժեշտության դեպքում փոփոխություններ անել Երևանի նահանգի վարչատարածքային կառուցվածքում՝ մի գավառից մյուսին հողամաս հատկացնել, գավառները միացնել, կամ բաժանել:

Հատկանշական է, որ փոխարքան առաջարկում էր Ալեքսանդրապոլի գավառի կազմից հանել Ախալքալաքի տեղամասը և միացնել Քութայիսի նահանգին[2]:

§[6] Երևանի նահանգի կառավարումը սահմանել երկաստիճան՝ ա) ընդհանուր նահանգային և բ) տեղական՝ գավառային, քաղաքային և գյուղական:

§[7] Նահանգի վարչական կենտրոն դարձնել Երևան քաղաքը[3]: Գավառային վարչական կենտրոններ դարձնել. Երևանին՝ Երևան քաղաքը, Նախիջևանին՝ Նախիջևան քաղաքը[4], Օրդուբադին՝ Օրդուբադ քաղաքը[5], Նոր Բայազետին՝ Գավառ քաղաքը (անվանա-

---

[1] Ընդգրկում էր ներկայիս Գեղարքունիքի մարզի Վարդենիսի, Մարտունիի և Գավառի ենթաշրջանների տարածքները:

[2] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 199–200:

[3] Երևանը ընկած էր Թիֆլիսից 273½ վերստ հեռավորության վրա: Տե՛ս *Статистических данных о населении Кавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.*, Тифлис, 1893, էջակալում չունի:

[4] Գտնվում էր Երևանից 150½ վերստ հեռավորության վրա: Տե՛ս նույն տեղում:

[5] Հեռավորությունը Երևանից կազմում էր 221½ վերստ: Տե՛ս նույն տեղում:

կոչվում է Նոր Բայազետ)[1] և Ալեքսանդրապոլին՝ Ալեքսանդրապոլ քաղաքը[2]:

Վերջին պարագրաֆում (8) նշված է, որ Անդրկովկասի երկրամասում գործող բոլոր օրենքներն ու օրինագծերն ամբողջ ուժով տարածվելու են նաև Երևանի նահանգի վրա[3]:

Նիկոլայ Ա կայսրը 1849 թ. հունիսի 9-ին ստորագրեց հրաման Երևանի նահանգ ստեղծելու մասին[4]: Ահա և այդ հրամանի տեքստը: Նկատի ունենալով Կովկասի փոխարքայի առաջարկությունը և Կովկասյան կոմիտեի դրական եզրակացությունն Անդրկովկասում նոր նահանգ ստեղծելու վերաբերյալ, հրամայում եմ՝ 1. Նոր հիմնադրվող նահանգի կազմում ընդգրկել Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառները (սակայն վերջինս առանց Ախալքալաքի շրջանի), իսկ Շամախիի նահանգի Շուշիի գավառից՝ Մեղրիի շրջանը և Կապան գյուղը: 2. Նահանգային քաղաք նշանակել Երևանը և նոր նահանգն անվանակոչել Երևանի: Նահանգը բաժանել հինգ գավառների. ա) Երևանի՝ կազմում ունենալով ներկա Երևանի գավառը, բացի Գյոկչայի շրջանից, գավառային քաղաք թողնել Երևանը, բ) Նոր Բայազետի՝ ընդգրկելով Գյոկչայի շրջանը և Գյոկչա լճի շրջակա բնակավայրերը, վարչական կենտրոն դարձնել Կավար (Գավառ – Հ.Հ.) գյուղը, որը Նոր Բայազետ անվանակոչվելու շնորհիվ կբարձրանա քաղաքի աստիճանի, գ) Նախիջևանին՝ Նախիջևանի ներկայիս տարածքի վրա, բացի Օրդուբադի շրջանից, գավառային քաղաք թողնել Նախիջևանը, դ) Օրդուբա-

---

[1] Գտնվում էր Երևանից 92¾ վերստ հեռավորության վրա: Տե՛ս նույն տեղում:

[2] Ընկած էր Երևանից 204 վերստ հեռավորության վրա: Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 199–200:

[4] Տե՛ս *ПКЭГ на 1908 г.*, Эривань, 1907, էջ 11–12: *ОЭГ за 1886 г.*, էջ 1: **А. Берже**, *Собрание материалов для составления исторического, географического и статистического описания Кавказского и Закавказского края*, Тифлис, 1859, էջ 233: **Г. Евангулов**, *Местная реформа на Кавказе*, էջ 66: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 208–209:

դին՝ կազմավորել Օրդուբադի շրջանից և Նախիջևանի գավառի մի մասից, ինչպես նաև Շուշիի գավառից անցած Մեղրիի շրջանից և Կապան գյուղից, ե) Ալեքսանդրապոլի գավառը ստեղծել Շորագյալի և Փամբակի շրջաններից և Ալեքսանդրապոլի գավառի առկա տարածքից: Վարչական կենտրոն դարձնել Ալեքսանդրապոլ քաղաքը[1]: Գավառի կազմից հանել Ախալքալաքի շրջանը, միացնել Ախալցխայի գավառին և մտցնել Քութայիսի նահանգի կազմի մեջ[2]: Նահանգի կառավարումը բաժանել երկու աստիճանի՝ 1) ընդհանուր նահանգային և 2) մասնակի կամ տեղային՝ գավառային, քաղաքային և գյուղական: Ինչպես կարելի է նկատել Նիկոլայ Ա-ն գրեթե նույնությամբ, օրենքի ուժով հաստատել է Մ. Վորոնցովի Երևանի նահանգ հիմնելու մասին առաջարկած նախագիծը: Ցարական հրամանագիրն ուժի մեջ մտավ 1850 թ. հունվարի 1-ից[3]: Երևանի նահանգապետ նշանակվեց գեներալ Իվան Նազարովը: Գավառապետներ նշանակվեցին. Երևանին՝ իշխան Իրակլիի Բագրատիոն Մուխրանսկին, Ալեքսանդրապոլին՝ փոխգնդապետ Ալեքսանդր Պոնկրատևը, Նախիջևանին՝ Զախար Մորոխովսկին, Օրդուբադին՝ Ադամ Վերցինսկին և Նոր Բայազետին՝ փոխգնդապետ Սոլոմոն Օնիկովը[4]:

Երևանի նահանգը (ներքին ջրերի հետ միասին) զբաղեցնում էր 554 միլ[5] կամ 26.799 քառ. վերստ, իսկ առանց ներքին ջրերի՝

---

[1] Ալեքսանդրապոլը մինչև 1837 թ. Գյումրի գյուղն էր: 1837 թ. այստեղ կառուցվեց ամրոց ի պատիվ Ալեքսանդր 2-րդ ցարի և անվանակոչվեց Ալեքսանդրապոլ: Վրաց-Իմերեթական նահանգի կազմում 1840 թ. Ալեքսանդրապոլին շնորհվեց քաղաքի կարգավիճակ, իսկ 1850 թ. Երևանի նահանգի կազմում դարձավ գավառային քաղաք: Տե՛ս *ПКЭГ на 1906 г.*, Эривань, 1905, էջ 135: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 311:

[2] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ199–200, 208–209:

[3] Տե՛ս *ПКЭГ на 1892-й г.*, էջ 105: **А. Берже**, նշվ. աշխ., էջ 232–233: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 208–209: **Г. Евангулев**, նշվ. աշխ., էջ 66:

[4] Տե՛ս *КК на 1851–1852 гг.*, էջ 567–569:

[5] Մեկ միլն հավասար է 412,5 քառ. վերստի:

530 միլ կամ 25.613 քառ. վերստ)[1] և հանդիսանում էր ռուսական կայսրության հարավարևմտյան վերջին սահմանագիծը: Այն տարածվում էր հյուսիսային լայնության 41°7 և 38°52, արևելյան երկարության 60°56 և 63°54 աստիճանների միջև[2]:

Երևանի նահանգը հյուսիսային կողմից սահմանակից էր Քութայիսի և Թիֆլիսի, արևելքից՝ Բաքվի նահանգներին, իսկ արտաքինից՝ Պարսկաստանին (250 վերստ[3] երկարությամբ) և Օսմանյան կայսրությանը (230 վերստ երկարությամբ), հարավից՝ Ղարադաղի, Մարաղայի, Մակվի խանություններին և Կարսի փաշայությանը[4]: Երևանի նահանգի ներքին սահմանի ընդհանուր երկարությունը հասնում էր 515 ½ վերստի, իսկ արտաքինը՝ 569 վերստի, այսինքն՝ ընդհանուր երկարությունը կազմում էր 1.084 ½ վերստ[5]: Այս վիճակով 1864 թ. դրությամբ Երևանի նահանգը կազմում էր ամբողջ Եվրասիական Ռուսաստանի տարածքի 1/200, իսկ ամբողջ ռուսական կայսրության 1/429 մասը, ամբողջ Անդրկովկասի 1/10 մասը[6]:

Երևանի նահանգի վարչական կառուցվածքն առաջին անգամ փոփոխության ենթարկվեց նահանգի հիմնադրումից ուղիղ 10 տարի անց՝ 1859 թ., երբ ստեղծվեց Էջմիածնի գավառը: Էջմիածնի գավառի ստեղծման պատմության հետ կապված կարևոր է նշել հետևյալը: 1859 թ. ապրիլի 27-ին Կովկասի գլխավոր կառավարիչ Ա. Բարյատինսկին հանձնարարում է Կովկասյան կոմիտեի նախագահ Ա. Օրլովին՝ Երևանի նահանգում տեղական կարիքներից

---

[1] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 394:

[2] Տե՛ս *ОЭГ за 1886 г.*, էջ 2:

[3] Ըստ ռուսական չափման միավորի, մեկ վերստը հավասար է 500 սաժենի (1066,78 մ.): Մեկ սաժենը հավասար է 3 արշինի (2,1335 մ.): Տե՛ս *КК на 1892-й г.*, էջ 47: *ПКЭГ на 1906 г.*, էջ 131–132:

[4] Տե՛ս *ПКЭГ на 1892-й г.*, էջ 106–107: *ПКЭГ на 1908 г.*, էջ 11–12: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 334, 393:

[5] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 393–394:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 394:

բխող առաջնահերթությամբ կազմավորել նոր՝ Էջմիածնի գավառ և հիմնել ոստիկանական անցակետային հիմնարկություն: Այս հիմքով էլ 1859 թ. հունիսի 7-ին Ա. Օրլովը հանձնարարում է ֆինանսների մինիստր Վ. Պանինին՝ Երևանի գավառը (կազմված էր չորս տեղամասերից՝ Սարդարապատի, Սուրմալուի, Զանգիբասարի և Շարուրի – Հ.Հ.) բաժանել երկու գավառների՝ Երևանի և Էջմիածնի: Առաջին գավառի կազմում ընդգրկել Զանգիբասարի և Շարուրի շրջանները, իսկ երկրորդին՝ Սարդարապատի և Սուրմալուի շրջանները[1]: Նորաստեղծ գավառներից յուրաքանչյուրն ունենալու էր իր առանձին գավառային կառավարչությունն, իր գավառապետով, երկու օգնականով, մեկ քարտուղարով, երկու տեղակալով, մեկ թարգմանչով և վեց գրագիրով[2]:

Այս բաժանումով Երևանի նահանգի գավառների թիվն ավելացավ ևս մեկով և հասավ վեցի:

Այսպիսին էր վարչատարածքային համակարգը Անդրկովկասի երկրամասում ընդհանրապես և Երևանի նահանգում մասնավորապես XIX դ. 60-ական թվականների սկզբներին: Հարկ է նշել, որ 1860-ականներից սկսված բազմատեսակ բարեփոխումները մեծապես կապված էին 1861 թ. ամբողջ կայսրությունում սկսված ճորտատիրական իրավունքի վերացման հետ:

Վարչատարածքային և տեղական կառավարման ուղղությամբ տարվող, այսպես կոչված, բարեփոխումները լայն թափով սկսվեցին 1862 թ. Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկուն փոխարինած Միխայիլ Ռոմանովի օրոք:

Կովկասի փոխարքան Անդրկովկասի երկրամասի վարչատարածքային նոր բաժանման անհրաժեշտությունը բացատրում էր նախկին բաժանման հետևանքով կառավարման, հաղորդակցութ-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 235–236, 241:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 236–237:

յան, սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային բնագավառներում համակարգի բարդ կառուցվածքով, ինչպես նաև 1864 թ. Կովկասում նոր Դատական կանոնադրության հրամայականով: Այլ խոսքով՝ Անդրկովկասում գոյություն ունեցող վարչատնտեսական և վարչաքաղաքական համակարգերը լիովին չէին համապատասխանում ամբողջ երկրի կառավարման վարչաձևին և այդ ուղղությամբ բարեփոխումները դարձել էին առաջնային խնդիր: Փոխարքա Միխայիլ Ռոմանովը կայսր Ալեքսանդր Բ-ին ներկայացրած հաշվետու զեկուցագրում բարեփոխման հրատապությունը բացատրում էր այսպես. «Երկրամասերում Ռուսաստանը կոչված է լինելու լուսավորյալ քաղաքացիականություն տարածող, կառավարության միջոցները վաղուց չեն համապատասխանում նրա պահանջներին և քաղաքացիականության ուղիով առաջ շարժվող բնակչության ամեն օր աճող կարիքներին»[1]: Գոյություն ունեցող վարչական կառույցը շատ ծախսատար էր և բարդ[2]: Բարեփոխումը թելադրված էր նաև Դատական Կանոնադրությունների ազդեցության տարածմամբ ու նրա հետ կապված գյուղական ինքնավարության բարեփոխության ներմուծմամբ և բնակչությանը մերձկառավարական իշխանության նոր սկզբունքներով վերակառուցելու անհրաժեշտությամբ[3]:

1865 թ. ստեղծված Հատուկ կոմիտեն կազմեց երկրամասի վարչական բաժանումների մասին Կանոնադրությունը:

---

[1] *Отчет по Главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краемего императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 – 6 декабря 1872 гг.*, Тифлис, 1873, с. 34–35 (այսուհետև՝ Очет). **Ա. Հակոբյան**, *Անդրկովկասի 1867 թ. վարչական բարեփոխման իրականումը և գնահատումը պատմագիտության մեջ*, Պատմաբանասիրական հանդես, 2007, № 3, էջ 91 (այսուհետև՝ ՊԲՀ):

[2] Տե՛ս **Ա. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 91:

[3] Տե՛ս **Г. Евангулов**, *Местная реформа на Кавказе*, էջ 17–18: **Ա. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 93:

Առաջ անցնելով, միջանկյալ, նշենք, որ մինչև վերոգրյալ Կանոնադրության ընդունելը և կիրարկելը Երևանի նահանգը ենթարկվեց անդամահատման՝ 1862 թ. Փամբակի հյուսիսային մաս կազմող Լոռու տեղամասը հանվեց Ալեքսանդրապոլի գավառի կազմից և միացվեց Թիֆլիսի նահանգին[1]:

Սա նշանակում է, որ այս վերածնման հետևանքով Երևանի նահանգի տարածքը փոքրացել է շուրջ 0,04 %-ով[2]:

1863 թ. Երևանի նահանգի զբաղեցրած տարածքը ըստ գավառների և բնակչության ուներ այսպիսի տեսք[3].

Աղյուսակ 1

Գավառներ	Տարածք		Բնակչության թիվը	Բնակչության խտությունը	
	Քառ. վերստ	Քառ. միլի		Քառ. վերստ	Քառ. միլի
Երևանի	2564,6	53,00	91202	35,52	171,88
Ալեքսանդրապոլի	3193,2	66,00	75909	23,77	1150,21
Նախիջևանի	4982,1	102,97	51963	10,43	504,65
Օրդուբադի	2874,3	59,40	33108	11,52	557,34
Նոր Բայազետի	5440,7	112,45	70184	12,90	624,16
Էջմիածնի	6552,7	135,43	98962	15,10	730,73
Ընդամենը	25607,6	529,25	421228	16,45	795,9

Կանոնադրությունը լիովին համահունչ էր ինքնակալության ձգտումներին: Այդ կապակցությամբ կենտրոնական կառավարությունը Կովկասի իշխանություններին հրահանգեց վերանայել 1840 թ. ընդունված տեղական կառավարման մասին օրենքը, ըստ որի Կովկասում տեղական կառավարումը եռաստիճան էր. տեղամաս՝ տե-

---

[1] Տե՛ս *ՕԷՊ за 1886 г.*, էջ 1: *ПКЭГ на 1892-й г.*, էջ 105: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 393:

[2] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 393:

[3] Տե՛ս *КК на 1865 г.*, էջ 113–118:

ղամասային ատենակալ[1], գավառ՝ գավառապետ, նահանգ՝ նահանգապետ:

Բարեփոխումը կարող էր ընթանալ երկու ուղղություններով. ա) վերացնել գավառները որպես միջանկյալ օղակ՝ նահանգների և տեղամասերի միջև, բ) կամ վերացնել տեղամասերը և տեղական ամբողջ կառավարումը կենտրոնացնել գավառներում և ակտիվացնել դրանց գործունեությունը:

Կառավարությունը նպատակահարմար գտավ լուծարել տեղամասերը և ապախոշորացնել գավառները[2]: Ըստ օրենքի գավառներից յուրաքանչյուրը չպետք է գերազանցեր 6.500 վերստ տարածքը, իսկ բնակչությունը՝ 80 հազ. շնչից կամ 10 հազ. տնտեսությունից ավելի լիներ[3]:

1867 թ. դեկտեմբերի 9-ին Ալեքսանդր երկրորդը ստորագրեց «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» հրամանագիրը: Իսկ մինչ այդ, նույն թվականի օգոստոսի 3-ին ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը[4]: Այն կազմավորվեց Թիֆլիսի և Բաքվի նահանգների մի մասի, Ելիզավետպոլի, Նուխիի և Շուշիի գավառների, ինչպես նաև Երևանի նահանգի Օրդուբադի գավառի Մեղրիի տեղամասի հաշվին[5]: Երևանի նահանգը կրճատվեց 1.519 մղոնով: Անհրաժեշտ ենք համարում բովանդակային առումով քննության առնել, առավել ևս գնահատել 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքի էությունը և նրա թողած հետագիծը Անդր-

---

[1] Յուրաքանչյուր տեղամաս ղեկավարում էր ատենակալը, որն ուներ օգնական՝ տեղացի ազնվականներից կամ բեկերից: Նրա իրավունքներն ու պարտավանությունները սահմանված էին տեղական ոստիկանության մասին որոշմամբ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 1:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 5:

[3] Տե՛ս *Отчет ...*, էջ 50:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 2, 5–6: *Дневник П.А. Валуева-министр внутренних дел*, т. 2, М., 1961, էջ 50: **Ա. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 94:

[5] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, էջ 389:

Կովկասի երկրամասի վարչատարածքային կառուցվածքի և կառավարման համակարգի վրա ընդհանրապես և Երևանի նահանգի վրա մասնավորապես, որովհետև այդ հիմնահարցերը հայ և ռուս պատմագիտության կողմից խորությամբ, համակողմանիորեն և հիմնավորապես լուսաբանվել են[1]: Դրանց շարքում առանձնանում է հատկապես Ա. Հակոբյանի ուսումնասիրությունը՝ պատմական իրադարձությունների ընթացքն իր ամբողջության մեջ ներկայացնելու, նախորդ ուսումնասիրողների մոտեցումները փաստարկված մերժելու կամ համերաշխվելու տեսակետից[2]: Ուստի, նկատի ունենալով վերոգրյալը, կամենում ենք միայն մի քանի փաստարկների միջոցով ընդհանուր գծերով ցույց տալ այդ օրենքի կիրարկման արդյունքով ձևավորված Անդրկովկասի և Երևանի նահանգի վարչատարածքային կառուցվածքում և կառավարման համակարգում կատարված նկատելի փոփոխությունները: Եվ այսպես՝ Անդրկովկասում կազմավորվեց հինգ նահանգ՝ Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Քութայիսի և Ելիզավետպոլի: Ավելացան գավառների թիվը՝ 18-ից հասցվեց 29-ի[3]: Ընդ որում՝ Երևանի նահանգում կատարվեց հակառակը՝ գավառների թիվը կրճատվեց՝ նախկին երկու գավառների միացման հետևանքով: 1867 թ. Օրդուբադի գավառը, որի կազմում էր նաև Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մի

---

[1] Տե՛ս **С. Эсадзе**, *Историческая записка об управлении Кавказом*, т. 2, Тифлис, 1907: **Г. Евангулов**, *Местная реформа на Кавказе*, СПб., 1914: **В. Иваненко**, *Гражданское управление Закавказьем*, Тифлис, 1901: **С. Егиазаров**, *Исследования по истории учереждений в Закавказье*, ч. I, Казань, 1889: **Н. Зейдлиц**, *Административные отделы Кавказского края.-Известия Кавказского отдела Русского географического общества*, т. 5, № 2, 1877: **А. Шахатунян**, *Административный передел Закавказского края*, Тифлис, 1918: **Г. Саркисян**, *Население Восточной Армении в XIX – начале XX вв.*, Ереван, 2002: **Ա. Օհանյան**, *Վարչա-տերիտորիալ բաժանումները նախասովետական Հայաստանում, Գիտական աշխատություններ*, հ. 51, Աշխարհագրական գիտությունների սերիա, Պրակ 2, Երևան, 1955.

[2] Տե՛ս **Ա. Հակոբյան**, *Անդրկովկասի 1867 թ. վարչական բարեփոխման բուսաբանական և գնահատական պատմագիտության մեջ*, ՊԲՀ, 2007, № 3, էջ 90–99:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. I, գ. 3151, թ. 6:

մասը, միացվեց Նախիջևանի գավառին, իսկ Օրդուբադ քաղաքը մնաց որպես գավառային քաղաք[1]: Օրդուբադի շրջանի համար նշանակվեց ս.դրիստավ, որին հետագայում փոխարինեց գավառապետի օգնականը, և կարգվեց հաշտարար դատավոր[2]:

Փաստորեն Երևանի նահանգի գավառների թիվը մեկով պակասեց և մնաց հինգ գավառ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Էջմիածնի[3]:

Որպես դրական արդյունք պետք է նշել և այն, որ զգալիորեն մեղմվեց գավառների տարածքային անհամաչափությունը, նպաստեց դրանց ապակենտրոնացմանը, որոշակիորեն սահմանափակվեցին փոխարքայի լիազորությունները և գերագույն վերահսկողությունը վերապահվեց գլխավոր վարչությանը, մահմեդականներով բնակեցված շրջաններում ուժեղացավ ոստիկանական հսկողությունը և այլն:

Այսպիսով, Ռուսաստանի կառավարությունը և Կովկասի իշխանությունները խնդիր ունեին բարեփոխումների ճանապարհով գավառային վարչության թույլ իշխանության փոխարեն, նահանգապետի անմիջական հսկողությունից հեռու շրջաններում ունենալ ավելի արդյունավետ գործող նահանգային իշխանություն[4], առավել ևս, որ 1864 թ. նոյեմբերի 20-ի որոշմամբ երկրում իրականացված դատական բարեփոխումների շնորհիվ տեղական ոստիկանությունները զրկվեցին դատական իշխանությունից[5]: Այս մասին հանգամանորեն անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

---

[1] Տե՛ս *ՕՀԳ за 1886 г.*, էջ 1: Մշակ, 19 փետրվարի, 1876:
[2] Տե՛ս Մշակ, 19 փետրվարի, 1876:
[3] Տե՛ս *ՕՀԳ за 1886 г.*, էջ 1:
[4] Տե՛ս *Дневник П. А. Валуева – Министр внутренних дел*, т. 2, М., 1961, էջ 50: **Մ. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 94:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 3: Մշակ, 29 դեկտեմբերի, 1898:

Բնակլիմայական և հաղորդակցության անհարմարությունները, ֆաբրիկագործարանային արտադրության, արհեստագործության, գյուղատնտեսության և առևտրի բնագավառներում առաջացած դժվարությունները, գավառների վրա նահանգային իշխանության պատշաճ վերահսկողության լծակների թուլացումը նահանգի վարչատարածքային նոր վերաձևումը դարձրին անխուսափելի: 1872 թ. Ռուսաստանի կառավարությունը Երևանի նահանգը վերստին վարչական բաժանման է ենթարկում:

Նահանգի տարածքի վրա հիմնվեցին ևս երկու նոր գավառներ. Էջմիածնի գավառը տրոհվեց երկու գավառների՝ Էջմիածնի և Սուրմալուի, իսկ Նախիջևանի գավառը վերակազմվեց Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառների: Նույն կանոնադրությամբ Նոր Բայազետի գավառի Ղրխբուլաղի գավառակի տարածքի որոշ մասը միացվեց Երևանի գավառին: Այսպիսով, նախորդ վարչատարածքային բաժանումից հինգ տարի անց Երևանի նահանգը բաժանվեց յոթ գավառների: Ստորև բերված աղյուսակում նշված են այդ գավառները և նրանց զբաղեցրած տարածքները[1]:

Աղյուսակ 2

Գավառներ	Քառ. մետր	Քառ. վերստ	Դեսյատին
Նոր Բայազետի	86.51 առանց Սևանա լճի	4.186,2 առանց Սևանա լճի	570.729
Նախիջևանի	80.51	3.908,4	412.292
Ալեքսանդրապոլի	69.89	3.381,8	356.771
Էջմիածնի	66.59	3.221,8	339.792
Սուրմալուի	65.15	3.151,1	332.604
Երևանի	56.60	2.738,6	288.854
Շարուր-Դարալագյազի	54.47	2.635,6	277.917
Ամբողջ նահանգի տարածք գումարած և Սևանա լիճը	479.72	24.447	2.578.959

[1] Տե՛ս *ПКЭГ на 1906 г.*, էջ 1: *ОЭГ за 1886 г.*, էջ 1:

Ալեքսանդրապոլի գավառը (կենտրոնը՝ քաղ. Ալեքսանդրապոլ), զբաղեցնում էր նահանգի հյուսիսային մասը: Նրան անցան ամբողջ Շորագյալի տեղամասը և Փամբակի արևմտյան մասը՝ առանց Լոռու տեղամասի:

Էջմիածնի գավառը (կենտրոնը՝ գյուղ Վաղարշապատ)՝ հարավից սահմանակից էր Ալեքսանդրապոլի գավառին, հյուսիս-արևելքից՝ Արագած սարին, արևմուտքից՝ Արփաչայ (Ախուրյան) գետին, հարավից՝ Արաքս գետին, արևելքից՝ Զանգու (Հրազդան) և Ապարան գետերին:

Երևանի գավառը (կենտրոնը՝ քաղ. Երևան), ընկած էր Էջմիածնի գավառից դեպի արևելք, Արաքս գետից ձախ, զբաղեցնում էր Զանգու գետի ներքին հոսանքի, Գառնի – չայ, Վեդի – չայ և Զանախչի գետերի հովիտը:

Սուրմալուի գավառը (կենտրոնը՝ գյուղ Իգդիր), զբաղեցնում էր նախկին Սուրմալուի շրջանի տարածքը (մինչև Երևանի գավառին միանալը), սահմանակից էր Երևանի և Էջմիածնի գավառներին, Արաքս գետի աջ ափին:

Շարուր-Դարալագյազի գավառը (կենտրոնը գյուղ Բաշնորաշեն), զբաղեցնում էր Արփա գետի ամբողջ արևելյան հովիտը, Շարուրի շրջանի հարավային մասը և Դարալագյազի ամբողջ շրջանը:

Նախիջևանի գավառը (կենտրոնը՝ ք. Նախիջևան), ընդգրկում էր Նախիջևան, Ալինջա – չայ, Գիլյան – չայ, Օրդուբադ – չայ գետերի ամբողջ հովիտը, ընդհուպ մինչև Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը[1]:

Առաջ անցնելով նշենք, որ ցարական Ռուսաստանի 44-ամյա տիրապետության ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1906 г.*, էջ 131: *ПКЭГ на 1892-й г.*, էջ 106: *КК на 1875 г.*, Тифлис, 1874, էջ 41–45: *Труды Закавказского статистического комитета земельныя дачи Эриванской губернии*, вып. II дачи Ново-Баязетского уезда, Тифлис, 1905, էջ 38:

սահմաններում ինքնակալության իրականացրած մի շարք ընդհանուր և մասնակի վարչատարածքային փոփոխությունների շղթայում սա վերջինն էր, և այն պահպանվեց մինչև 1917 թ.՝ Ռոմանովների ավելի քան 300-ամյա միապետության տապալումը:

Ասվածից չի հետևում, թե 1870-ական թվականներին հաջորդող տարիներին Անդրկովկասի երկրամասի վարչատարածքային կառուցվածքը և կառավարման համակարգը վերափոխումների կարիք չուներ այլևս: Բնավ, ոչ:

Անդրկովկասի երկրամասում և նրա մաս կազմող Երևանի նահանգում վարչատարածքային փոփոխությունները շարունակական էին և մնում էին օրակարգային նաև հետագա տարիներին, ինչպես, օրինակ, 1913 թ.: Այսպես, սահմանային և տարածքային նոր փոփոխությունների հարցին անդրադառնալուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մեջբերել Երևանի նահանգի գավառների զբաղեցրած տարածքներին վերաբերող վիճակագրական տվյալներ աղյուսակի տեսքով: Երևանի նահանգի և նրա գավառների տարածքները 1913 թ. դրությամբ[1]:

՝ *Աղյուսակ 3*

	Գավառների անվանումը	Դեսյատին	Քառ. վերստ
1	Ալեքսանդրապոլի	347817,60	3344,40
2	Նախիջևանի	405433,60	3898,40
3	Նոր Բայազետի	430528,80	4139,70
4	Սուրմալուի	332248,30	3194,70
5	Շարուր-Դարալագյազի	272958,40	2624,60
6	Երևանի	280196,80	2694,20
7	Էջմիածնի	349252,80	3358,20
	Ընդամենը	2418436,80	23254,20

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 94, ց. 1, գ. 3199, թ. 179:

1913 թ. մարտի 9-ին Անդրկովկասի փոխարքայության գրասենյակի տնօրենը Երևանի նահանգապետ Վլադիմիր Տիզենհաուզենին ուղարկած նամակում նշում է, որ հունվարի 19–24 օրերին փոխարքայության խորհուրդը քննարկել է երկրամասի նահանգների սահմանները նոր փոփոխությունների ենթարկելու հարցը և կազմել համապատասխան նախագիծ: Երևանի նահանգը ևս ներառված էր այդ նախագծում, ըստ որի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներից զգալի տարածքներ անցնելու էին Ելիզավետպոլի նահանգին և Կարսի մարզին, իսկ Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգներից՝ կցվելու էին Երևանի նահանգին[1]: Հարցը քննարկելու և կարծիք արտահայտելու համար 1913 թ. մարտի 18-ին Երևանի նահանգապետի գլխավորությամբ հրավիրվում է խորհրդակցություն՝ փոխնահանգապետի, Երևանի օկրուգային դատավորի, Երևանի օկրուգային դատարանի դատախազի, Երևանի պետական (արքունական) պալատի կառավարչի, Երևանի հողային և պետական գույքի կառավարման վարչության պետի և Երևանի նահանգի Ժողովրդական ուսումնարանի տնօրենի մասնակցությամբ[2]:

Հատկանշական է, որ խորհրդակցությունը նախագծի կապակցությամբ վերաբերմունք պետք է արտահայտեր ձեռքի տակ չունենալով անհրաժեշտ տվյալներ և հիմնավորումներ, որոնք ընկած լինեին այդ նախագծի հիմքում: Այս պատճառաբանությամբ էլ խորհրդակցության մասնակիցները հանձնարարում են նահանգապետին՝ դիմել գրասենյակի տնօրենին համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար: 1913 թ. մարտի 19-ին նահանգապետ Վլադիմիր Տիզենհաուզենը պաշտոնական գրությամբ դիմում է գրասենյակի տնօրենին՝ բացատրելու, թե փոխարքայության խոր-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 4, 15, 74:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 74 և շրջ:

հուրդն երկրամասի նահանգների սահմանների վերաձևման նախագիծը կազմելիս ինչ սկզբունքներով է առաջնորդվել: Ավելին, նահանգապետը գրասենյակի տնօրենին հրավիրել է այցելել Երևան և Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Սուրմալուի և Նախիջևանի գավառապետերի մասնակցությամբ հարցը քննարկել մարտի 25-ին նախատեսված խորհրդակցությունում[1]: Այնուհետև նահանգապետը տեղեկացնում է, որ նամակով դիմել է նաև Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգապետերին՝ ճշտելու համար, թե Ախալքալաքի, Բորչալուի գավառներից, մասամբ և Ելիզավետպոլի նահանգից ենթադրյալ ինչ տարածքներ և որքան բնակչությամբ պետք է անցնեն Երևանի նահանգին[2]: Բացի այդ, շարունակում է նահանգապետը, հանձնարարել եմ Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի և Սուրմալուի գավառապետերին տեղերում ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել տեղեկություններ հետևյալների մասին.

1. Ենթադրյալ ինչ տարածքներ և որքան բնակչությամբ պետք է անցնեն Ելիզավետպոլի նահանգին և Կարսի մարզին:

2. Մասնավորապես Ելիզավետպոլի նահանգի կազմը համալրող բնակչությունը մեծամասամբ կապված է Նոր Բայազետի գավառի հետ, թե՞ Ելիզավետպոլի նահանգի հետ, նրանք ձմռանն ունենալո՞ւ են հաղորդակցություն Ելիզավետպոլի նահանգի հետ, չե՞ն վնասվում Գյոկչա լճի արևմտյան ափի բնակչության շահերը, ունեցածս տեղեկություններով նրանք ձմռանն իրենց ոչխարների հոտը տեղափոխում են Գյոկչա լճի ափով, փոխադրելիս չի՞ խախտվում առանձին գյուղերի հողային սահմանը, Երևանի նահանգի են-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 74 շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում:

թադրյալ բաժանումը չի՞ վնասում մյուս գյուղերի տնտեսական շահերին, դպրոցական գործին և բնակավայրերի կառավարմանը[1]:

Փոխարքայության գրասենյակի տնօրենի պատասխան նամակը Երևանում ստացվել է ապրիլի 12-ին, որի բովանդակությանը դեռ կանդրադառնանք:

1913 թ. մարտի 28-ին Երևանի նահանգապետ Վլադիմիր Տիզենհաուզենը գրավոր կարգադրում է նահանգի հողաչափական վարչության պետ Վալոբուևին անհապաղ մեկնել նշված գավառներ և գավառապետերի և շրջանների վերակացուների մասնակցությամբ, տեղերում պետական և կալվածատիրական հողերի բնապայմաններից ելնելով, հստակեցնել այն սահմանները, որոնք ըստ նախագծի ենթադրվում է միացնել ուրիշ նահանգների: Նահանգապետը պահանջել է, որ հանձնաժողովն իր գործունեության մասին ներկայացնի գրավոր հաշվետվություն՝ հանձնաժողովականների ստորագրությամբ[2]:

1913 թ. մարտի 29-ին Վալոբուևը գրավոր տեղեկացնում է նահանգապետին՝ այժմ մեկնում եմ Նոր Բայազետի գավառ: Այս գավառում աշխատանքն ավարտելուց հետո, նույն նպատակով մեկնելու եմ սկզբից Ալեքսանդրապոլի գավառ, աշխատանքն ավարտելուց հետո անհապաղ ուղևորվելու եմ Էջմիածնի գավառ, իսկ այնուհետև՝ Սուրմալուի գավառ: Բոլոր գավառներում աշխատանքներն ավարտելուց հետո կներկայացնեմ հաշվետվություն՝ մասնակիցների ստորագրությամբ[3]:

Անդրկովկասի փոխարքայության գրասենյակի տնօրենը, Երևանի նահանգապետ Վ. Տիզենհաուզենին ուղարկած պատասխան գրության մեջ նշել է. «Ի պատասխան Ձեր մարտի 19-ի գրությանը,

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, թթ. 15–16, 75:
[3] Տե՛ս նույն տեղում, թթ. 17–20, 23:

պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ գոյություն ունեցող նահանգների սահմանների փոփոխության հարցի անհրաժեշտությունն Անդրկովկասում և դրան միացված նաև Զաքաթալայի և Սուխումի առանձին շրջանները եղել են փոխարքայության խորհրդի 1913 թ. հունվարի 19–24-ի նիստերի հիմնական քննարկման առարկան, ընդ որում՝ այդ ժամանակ էլ ներկայացվեց Կովկասի երկրամասի նոր սահմանների քարտեզի նախագիծը: Գրասենյակի տնօրենը հավաստում է, որ նահանգների սահմանների փոփոխությունների նոր նախագիծը կազմելիս, ամենից առաջ, հաշվի են առնվել երկրամասի նահանգների և գավառների միջև բազմաէթնիկ բնակչության անհավասար բաշխվածությունը, վարչական միավորների զբաղեցրած տարածքների անհամաչափությունը և այլն: Այդ տեսակետից նշել է նա, անհրաժեշտ ենք համարում Թիֆլիսի նահանգի զբաղեցրած տարածքը կրճատել և համապատասխանեցնել համառուսական ընդունված կարգին»[1]: Գրությունում նշվել են նաև Երևանի և Ելիզավետպոլի նահանգների և Կարսի մարզի միջև սահմանային-տարածքային ենթադրվելիք փոփոխությունների վերաբերյալ համապատասխան տվյալներ[2]: Չկրկնվելու համար դրանց չենք անդրադառնում, նկատի ունենալով, որ այդ մասին խոսք կլինի հետագա շարադրանքում՝ Վալոբուևի ղեկավարած հանձնաժողովի հաշվետվությունը և նշված գավառների գավառապետերի զեկուցագրերը քննարկելիս: Միջանկյալ նշենք, որ նոր քարտեզագրմամբ ենթադրվում էր Թիֆլիսի նահանգից Երևանի նահանգին միացնել Ախալքալաքի (6036,96 քառ. վերստ) և Բորչալուի (2.407 քառ. վերստ) գավառները, ընդհանուր գումարով

[1] ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 37, 75 և շրջ., 82:
[2] Տե՛ս նույն տեղում:

844.396 քառ. վերստ տարածք՝ երկու սեռից 270.024 բնակչությամբ[1]:

Ըստ վերոնշյալ գրության, Երևանի նահանգապետին լիիրավ իրավունք էր վերապահվում ներկայացված նախագծում կատարել շտկումներ և լրացումներ՝ հաշվի առնելով տեղական պայմաններն ու բնակչության շահերը[2]:

Եվ այսպես, ըստ Սուրմալուի գավառապետ Իոնինի զեկուցագրի, ուղղված Երևանի նահանգապետին և Վալոբուևի ղեկավարած հանձնաժողովի հաշվետվության, Սուրմալուի գավառից Կարսի մարզին ենթադրյալ անցնելու էր 1.590 քառ. վերստ տարածք, այլ խուսքով՝ 3-րդ ամբողջ ոստիկանական շրջանը, վեց՝ Կուլպինի, Գյուլլյուջի, Ջալալի-Սաքանլի, Եզդի-Հասանլի, Օգրուջայի և Ռադիկի-Սինակի գյուղական հասարակությունները, ինչպես նաև Ալիքոչակի և Յայջիի գյուղական հասարակությունների մի մասը, քանի որ նոր սահմանագիծն այս գյուղական հասարակությունները բաժանում էր երկու մասի՝ Ալիքոչակի, որից Երևանի նահանգին մնում էր միայն Օրգով, Կարագյունե, քուրդ մուսուլմանաբնակ Բեզիրխան և եզդիներով բնակեցված Կարակու գյուղերը, իսկ Յայջիի գյուղական հասարակությունից Կարսի մարզին էին անցնելու միայն թաթարաբնակ Կյուլլյուկ և Կիտի գյուղերը, իսկ այս հասարակության մնացած գյուղերը թողնվում էր Երևանի նահանգին[3]:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սուրմալուի գավառի և Կարսի մարզի միջև քարտեզագրված սահմանագիծը սկսվում է Արաքս գետից, Կիտիկ բնակավայրի մոտից, սահմանի արևմտյան մասի բոլոր հողերը թողնելով Կարսի մարզին, այստեղից նշված սահմանն ուղղվելով դեպի հարավ-արևելք,

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 82:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 75 և շրջ.:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 37, 77, 78 շրջ.:

հատում է Արաբքիրլու բնակավայրին պատկանող հողերը, որի 2/3 մասը բնակչության հետ մնում են Երևանի նահանգի սահմաններում, այնուհետև սահմանը նույն ուղղությամբ բաժանելով Կյուլլուկ գյուղի ամբողջ հողերը, որի արևմտյան մասից 1/3 մասն անցնում է Կարսի մարզին: Այստեղից նախագծված սահմանը թեքվում է հարավ և անցնում է Վերին Չերուխչի բնակավայրի մոտով, կտրելով հատկացված հողերի կեսը Կարսի մարզի կողմը, որից հետո նշված սահմանն անցնում է նույն ուղղությամբ, մոտավորապես 1,5 վերստ տարածությամբ, նշված, Վերին Չերուխչի բնակավայրի հողերով, այնուհետև սահմանն անցնում է Սոգուտլինի շրջանի արոտավայրերով մինչև Մուչա գյուղի հողերը: Գյուղն իրեն հատկացված բոլոր հողատարածքներով անցնում է Կարսի մարզին և վերջապես այստեղից նշված սահմանը ուղղվում է հարավ-արևելք, պետական ամառային արոտավայրերով և հասնում Օրգովից Չինգիլ տանող ճանապարհին, թեքվում է հարավ, ձգվում է նշված ճանապարհով մինչև Չինգիլի լեռնանցք, որտեղ հասնում է Օսմանյան կայսրության հետ պետական սահմանին[1]:

Կարսի մարզին անցնող տարածքի բնակչության ազգային կազմն այսպիսին էր. Կուլպինկի գյուղական հասարակություն՝ հայեր – 4.275 շունչ, թաթարներ – 3.685 շունչ, քուրդ սունիներ – 130 շունչ, Գյուլլյուջիի՝ հայեր – 2.710 շունչ, շիա թաթարներ – 3.978 շունչ, Ջալալի-Սաքանլի՝ սունի քրդեր – 1.416 շունչ, քուրդ եզդի – 2.046 շունչ և սունի քրդեր – 147 շունչ, Օգրուջայի՝ թաթարներ – 5.360 շունչ, Ռադիկի-Սինակիի՝ եզդի-քրդեր – 2.046 շունչ, սունի քրդեր – 1.660 շունչ և սունի թաթարներ – 77 շունչ, Ալիքոչակի գյուղական հասարակության մի մասից՝ շիա-թաթարներ – 1.363 շունչ,

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 39 և շրջ., 78 շրջ.–79:

սունի քրդեր – 1.683 շունչ, եզդի քրդեր – 3.158 շունչ և Յայջիի գյուղական հասարակությունից շիա-թաթարներ – 931 շունչ[1]:

Այսպիսով, թվական տվյալների հանրագումարը ցույց է տալիս, որ Սուրմալուի գավառից Կարսի մարզին ենթադրյալ անցնող տարածքների երկսեռ բնակչության թիվը կազմում էր 36.646 մարդ: Ենթադրյալ տարածքները Կարսի մարզին միացնելու հետևանքով Սուրմալուի գավառի ընդհանուր տարածքը (3.192 քառ. վերստ) կրճատվելու էր 50 %-ով և կազմելու էր ընդամենը 1.602 քառ. վերստ, 54.282 բնակչությամբ[2]:

Վալոբուևի հանձնաժողովի հաշվետվության մեջ նշված է, որ Սուրմալուի գավառի զբաղեցրած տարածքը և ունեցած բնակչությունը բավարար չեն, նրանից առանձին գավառ ստեղծելու համար: Հետևաբար, այն պետք է միացնել Երևանի կամ Էջմիածնի գավառներին: Եթե Սուրմալուի գավառը չի լուծարվելու, ապա անհրաժեշտ է նրան միացնել Էջմիածնի գավառի 3-րդ ոստիկանական շրջանը[3]:

Հարկ է նշել, որ Սուրմալուի գավառի և Կարսի մարզի միջև ենթադրվելիք սահմանաբաժանումը բնակչության համար ստեղծում էր բազում դժվարություններ և անհարմարություններ: Խոսքը գլխավորապես վերաբերում է Սուրմալուի գավառից Կարսի մարզին միացվելիք տարածքների բնակչությանը, առանձնապես բաժանման ենթակա գյուղաբնակներին, որոնց պատկանող վարելահողերի մի մասը կցվելու էր Կարսի մարզին, մյուս մասը մնալու էր Սուրմալուի գավառին: Նույնը վերաբերում է և արոտավայրերին, խոտհարքներին, ոռոգման ջրին, դպրոցներին, վարկային ընկերություններին և այլն: Այսպես, Կարսի մարզին անցնող ամբողջ

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 37 շրջ., 77 շրջ.:

[2] Վերահաշվարկը կատարվել է նույն տեղում, թ. 37–39 շրջ., 78 շրջ. տվյալների հիման վրա:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 78 շրջ.:

տարածքը, բացառությամբ Ռադիկի-Սինակի գյուղական հասարակությունից, անվիճելիորեն կապված էր Իգդիրի և Երևանի հետ, ինչպես առևտրատնտեսական հարաբերություններով, այնպես էլ վարչակառավարման: Բացի այդ, բաժանված մասի բնակչությունը Երևանի նահանգին մնացող բնակչության հետ ուներ ընդհանուր շահեր՝ կապված դպրոցների խնամատարության, համայնքային կառավարման, ջրօգտագործման հետ և այլն[1]: Օրինակ, Զոր գյուղի մեծ մասն անցնելու էր Կարսի մարզին, այն դեպքում, երբ այդ գյուղը հատուկ քուրդ երեխաների համար ուներ երկդասյա ուսումնարան, որի ծախսերն ընկած էր գավառի ամբողջ եզդի քուրդ և եզդի շիա բնակչության վրա[2]: Արաբկիրլու գյուղի հողերի մի մասն անցնում էր Կարսի մարզին, իսկ գյուղը և հողերի մեծ մասը մնում էր Սուրմալուի գավառում: Կյուլյուկ գյուղը, որն ուրիշ՝ Կիտի, Զորի, Դիբակլու, Ալիքոչակ, Բանդամուրադ և Գյունդա գյուղերի հետ ուներ ընդհանուր օգտագործման ոռոգման ջուր, հողերի փոքր մասով մնում էր Սուրմալուի գավառին, մնացած մեծ մասն անցնում էր Կարսի մարզին[3]:

Ելիզավետպոլի նահանգի և Նոր Բայազետի գավառի միջև ևս նախատեսվում էր սահմանային փոփոխություններ: Ըստ նոր քարտեզագրության, Նոր Բայազետի գավառից Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառին ենթադրյալ անցնելու էր մոտավորապես 996 քառ. վերստ տարածք, որն ընդգրկում է հետևյալ գյուղերը՝ Ջիլ, Բաբաջան-Դարասի, Կուշի-Դարասի, Սադանա-խաչ, Մեծ Մազրա, Փոքր Մազրա, Շիշկայ, Քյասլսման, Գեյսու, Օգրուջա, Սուլթան-Ալի-Ղշլաղ, Ինագ-Դաղ, Զոդ, Զարզիբիլ, Ախքիլիսա, Բասարգեչար, Թուսկյուլի, Զաղալու, Կրխ-Բուլաղ, Կիզիլ-Բուլաղ,

---

[1] Տես՝ նույն տեղում, թ. 86:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 37 շրջ., 86 շրջ.:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 86 շրջ.:

Քյարքիբաշ, Ղանլի-Ալլեխվերդի, Սուբատան, Թաշքենդ, Նոր Կեյ-տի, Սարիյաղուբ, Կոշեբուլաղ, Կայբաշի 2-րդ, Կոշեբուլաղ 1-ին, Հուսեյին-Ղուլի-Աղալու, Ենգիջա-Կարակոյունլու Մեծ, Ենգիջա-Կա-րակոյունլու Փոքր, Յարփուզլու, Կիզիլ-Վանք, Չամուրլու և Կիզիլ-Խարաբա – 2[1]:

Հեռացող մասի բնակչության թիվը կազմում էր 31.341 մարդ, այդ թվում՝ թաթարներ – 24.444 (78,0 %), հայեր – 6.243 (20,0 %), քրդեր 654 (2,0 %) մարդ[2]:

Նոր Բայազետի գավառի և Ելիզավետպոլի նահանգի հետ ենթադրյալ սահմանների նախագծին վերաբերվող փաստաթղթերից երևում է, որ նոր քարտեզագրմամբ սահմանը սկսվում է Գյոկչա (Սևանա) լճի հարավային ափից՝ Գեդակ Բուլաղ բնակավայրից 150 սաժեն արևելք, որտեղից սահմանն ուղղվում է դեպի հարավ և ձգվում է Չամուռլու գյուղ՝ այն թողնելով Ելիզավետպոլի նահանգին անցնելու առաջարկվող մասում: Այնուհետև Չամուռլու բնակավայրի մոտից սահմանն անցնում է Դիկ – Պիլական լեռան գագաթի հարավային ուղղությամբ և Գեդակ Բուլաղ, Յարփուզլու, Կիզիլ-Վանք և Չամուռլու գյուղերի մշակելի հողերը և արոտավայրերը բաժանելով երկու անհավասար մասերի (մեծ մասը մնում է Նոր Բայազետի գավառի կազմում), որից հետո հիշյալ սահմանագիծն անցնում է Գյոկչա լճի ափին տեղակայված Բաբաջան – Դարասի բնակավայրով և Շահ – Դաղ և Այրիջա – Դաղ բարձունքների միջնամասով ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք և Արդանիշ բնակավայրից կտրում է մշակելի հողերի մեծ մասը և Շահ – Դաղ լեռան շրջակայքի գրեթե ամբողջ արոտավայրերը (1.585 դեսյատին) թողնելով Ելիզավետպոլի նահանգին[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 28 և շրջ., 76:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 77:

Ինչպես արդեն ասվել է, Նոր Բայազետի գավառից Ելիզավետպոլի գավառին էր անցնելու ընդհանուր գումարով 996 քառ. վերստ տարածք, իսկ Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառից Նոր Բայազետի գավառին էր կցվելու 2.000 քառ. վերստ[1]: Այս մասին հետագա շարադրանքում:

Նոր Բայազետի գավառապետը Երևանի նահանգապետին 1913 թ. ապրիլի 26-ին ուղարկած զեկուցագրում հանգամանորեն և փաստարկված բացատրում է այն բոլոր անհարմարություններն ու դժվարությունները, որոնք կարող են առաջանալ ինչպես Ղազախի, այնպես էլ Նոր Բայազետի գավառներին կցվող տարածքների բնակչության համար, եթե նախագիծը կյանքի կոչվի.

1) Բնակչության հեռացող մասը սերտորեն կապված է Նոր Բայազետի գավառի բոլոր բնակավայրերի և վարչական կենտրոն Նոր Բայազետ քաղաքի հետ, ինչպես անիվավոր, այնպես էլ ջրային (Գյոկչա լճի վրայով) հաղորդակցության միջոցներով: Այս հանգամանքն, անշուշտ, տեղի բնակչության համար մեծ հնարավորություն է ստեղծում առևտրատնտեսական հարաբերություններ ծավալել գավառի ողջ տարածքում:

2) Նշված գավառներն աշխարհագրորեն իրարից բաժանված են բարձր լեռնաշղթաներով: Ձմռանը լեռնանցքներով հաղորդակցությունը ընդհանրապես անհնարին է: Տարվա մյուս եղանակներին նույնպես հաղորդակցությունը լի է բազում դժվարություններով, անհարմարություններով ու վտանգներով՝ բեռնակիր գրաստների ճանապարհն անցնում է անմարդաբնակ վայրերով, լեռնային կածաններով և անտառածածկ տեղանքով, որը բնակչության համար դժվարանցանելի լինելուց բացի, միաժամանակ ավազակախմբերի համար լավ թաքստոց է: Բնակչության հաղորդակցութ-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 97:

յունը անվտանգ կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի սահմանել աչալուրջ հսկողություն, ինչը կպահանջի լրացուցիչ միջոցներ և ծախսեր:

3) 4-րդ ոստիկանական մասի բնակչությունը, լսելով Ելիզավետպոլի նահանգի հետ հնարավոր միավորման մասին, ջանում է իշխանություններին ապացուցել, որ իրենց համար անհաղթահարելի դժվարություն է ունենալ նոր վարչական կենտրոն լեռնաշղթայի մյուս կողմում: Դրա հետ մեկտեղ պնդում են, որ իրենք հարմարվել են լեռնային զով եղանակին և չեն կարող դիմանալ Ղազախի տաքին և կկոտորվեն անգամ եզակի հիվանդությունից:

4) Բացի այդ՝ հեռացող Յարփուզլու, Կիզիլ-Վանք, Չամուռլու և Կիզիլ-Խարաբա-2 գյուղերը մնացող Բաշ-Գյոզալդարա, Ներքին Գյոզալդարա, Քյոլանիկերլան, Գեդակ-Բուլաղ, Ներքին Ալուչալու, Վերին Ալուչալու և Կարմիր-Խարաբա գյուղերի հետ ունեն ընդհանուր կառավարում, իսկ Ջիլ, Բաբաջան-Դարասի, Կուշչի-Դարասի, Սադանա-խաչ գյուղերը և մնացող Արդանիշ, Աղբուլաղ, Թոխլուջա և Նադեժդինո գյուղերը գտնվում են Նադեժդինո գյուղական հասարակության կառավարման ներքո:

5) Լճի արևմտյան ափի բնակչությունն իրենց ոչխարների հոտը ձմռանը քշում են Գյունեյի ափով, խախտվում է ափի բնակչության իրավունքները և ոտնահարվում է նրանց շահերը[1]:

6) Ղազախի գավառից միացվող տարածքը գավառի վարչական կենտրոն Նոր Բայազետ քաղաքից գտնվում է չափազանց մեծ հեռավորության վրա, իսկ հաղորդակցության միակ ճանապարհն անցնում է Սեմյոնովկայի դժվարանցանելի լեռնանցքով[2]:

7) Անհրաժեշտություն է առաջանալու գավառային ոստիկանական կառավարչությունը և գավառային մյուս հիմնարկություններ-

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 28 շրջ., 75–77:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 28 շրջ., 29 շրջ., 77, 88:

ը Նոր Բայազետ քաղաքից տեղափոխել Դիլիջան կամ ծայրահեղ դեպքում Ելենովկա (այժմ՝ Սևան քաղաք) գյուղը: Հետևաբար, նշում է գավառապետը, Նոր Բայազետից ենթադրյալ 4-րդ ոստիկանական տեղամասը Ղազախի գավառին միացնելը, ինչպես և Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառից Նոր Բայազետի գավառին տարածք կցելը բոլորովին չի բխում երկու կողմերի ամբողջ բնակչության շահերից ընդհանրապես և տեղափոխվող բնակչության շահերից մասնավորապես: Եթե այս ամենին գումարենք և այն, որ դա արվում է բնակչության կամքին ու ցանկությանը հակառակ, ապա անթույլատրելի է, եզրափակում է գավառապետը[1]:

Էջմիածնի գավառի և Կարսի մարզի հետ սահմանների շրջայցի վերաբերյալ Էջմիածնի գավառապետի կողմից 1913 թ. մայիսի 21-ին Երևանի նահանգապետին ներկայացված զեկուցագրից երևում է, որ նոր քարտեզագրմամբ Էջմիածնի գավառից Կարսի մարզին ենթադրյալ կցվելու էր 1.000 քառ. վերստ, երկու սեռից 8.042 շունչ բնակչությամբ, որից՝ թաթարներ – 2.655 կամ 33,0 %, քրդեր – 5.387 շունչ կամ 67 %[2]:

Էջմիածնի գավառի և Կարսի մարզի միջև նախագծված սահմանագիծը սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է Ալեքսանդրապոլի գավառի սահմանը և շարունակվում է Վերին-Թալին բնակավայրից հարավ-արևմուտք՝ հատում է Վերին-Թալին, Սարդարաբաղ և Քյալակ-Արխ գյուղերի հողերը, թողնելով Կարսի մարզի կողմում, իսկ մնացած գյուղերը՝ մնում են Էջմիածնի գավառին: Ինչ վերաբերում է Էշնակ գյուղին, ապա նախագծվող սահմանն անջատում է այդ բնակավայրը Կարսի մարզի ուղղությամբ, իսկ հողերը,

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 75 շրջ., 76 և շրջ.:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 48 և շրջ., 80 շրջ.:

մեծ մասամբ մնում են Երևանի նահանգին, այնուհետև սահմանը հասնում է մինչև Արաքս գետը[1]:

Ինչպես իրավացիորեն նշել է Էջմիածնի գավառապետի օգնական Պ. Սոլոմոն, Կարսի մարզի հետ նոր սահմանագծային քարտեզը կազմվել է կամայականորեն, չի համապատասխանում տեղական պայմաններին և չի կարող դառնալ հիշյալ գավառի և մարզի միջև բնական սահման: Նրա կարծիքով ենթադրյալ սահմանային փոփոխությունը ոչ միայն, և ոչ այնքան, օգուտ չի բերի Կարսի մարզին միացվող բնակավայրերի բնակչությանը, որքան նրանց համար կստեղծի ոչ քիչ թվով դժվարություններ և անհարմարություններ, իսկ այն բնակավայրերի համար, որոնց հատկացված հողերի մի մասը (անկախ ծավալից) նախատեսված սահմանով անցնում է Կարսի մարզին, իսկ մյուս մասը մնում է Էջմիածնի գավառին, նման անբնական բաժանումն անիմաստ է դառնում, քանի որ սահմանագծերի անորոշությունն ու անբնական լինելն, անկասկած, կառաջացնի բոլոր հնարավոր թյուրիմացությունները և դժվարությունները նաև տեղական վարչակառավարման համակարգի բոլոր օղակներում[2]: Գավառի պաշտոնատար անձի մտահոգությունները հաստատող բազում օրինակներից նշենք մի քանիսը: Օրինակ, Թալինի գյուղական հասարակության վարչական և Թալինի 2-րդ դասային ուսումնարանի շենքերը կառուցվել էին նաև Փիրմալաք և Թալին-Թաթարական գյուղերի բնակչության միջոցներով և անմիջական մասնակցությամբ: Հաջի-Բայրամ, Խայրիբեկլու, Ասսար և Շախվարուտ գյուղերը մասնաբաժին ունեին ինչպես Շագրիարի գյուղական հասարակության վարչական շենքի կառուցման մեջ, այնպես էլ անդամակցում էին Մեծ-Շագրիար գյուղում գտնվող վարկային ընկերությանը: Սարդարապատ գյուղի հասարակությու-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 50 և շրջ., 80 շրջ., 81:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 48 և շրջ.:

նը խնամակալական կապով կապված էր Ղուրդուղուլի գյուղում գործող ուսումնարանի հետ: Բոգուտլինի գյուղական հասարակության բոլոր մեղվապահները ամռանը քոչում էին Արագած լեռ, հետևաբար տնտեսապես և նյութապես կապված էին Երևանի նահանգի հետ և ոչ մի կախվածություն չունեին Կարսի մարզից[1]: Օրինակները շատ են ու բազմապիսի: Բավարարվենք եղածով ու հավելենք, որ բոլոր հեռացող գյուղերը, բնականաբար էջմիածնի գավառի հետ ունեին առևտրատնտեսական սերտ կապեր, օգտվում էին երկաթուղային և խճուղային հարմարավետ ճանապարհներից՝ վաճառքի հանելով իրենց գյուղատնտեսական ապրանքները և անասուններն, առավելապես Վաղարշապատում և Երևանում[2]:

Նոր շրջանառվող քարտեզագրմամբ Ալեքսանդրապոլի գավառից Կարսի մարզին անցնելու էր 159,5 քառ. վերստ տարածք[3], 3.431 բնակչությամբ (498 տնտեսություն), որից Բուղդաշեն գյուղից՝ 76 տնտեսություն կամ 489 շունչ, Ենիքեյ գյուղից՝ 54 տնտեսություն կամ 400 շունչ, Կիզիլ-Քիլիսա գյուղից՝ 175 տնտեսություն կամ 1.288 շունչ, Չիրպիլի գյուղից՝ 116 տնտեսություն կամ 741 շունչ և Կեգաչ գյուղից՝ 77 տնտեսություն կամ 513 շունչ: Ըստ ազգության՝ հայեր – 3.428 շունչ (496 տնտեսություն), քրդեր – 3 շունչ (2 տնտեսություն)[4]:

Ալեքսանդրապոլի գավառի Կարսի մարզի հետ սահմանների շրջայցին վերաբերող փաստաթղթից երևում է, որ սահմանների նշագիծը սկսվել է Արփաչայ գետից, Աղին բնակավայրի մոտից, որն իր հողերով մնացել է Երևանի նահանգի տարածքում, այստեղից նախագծված սահմանը անցնում է հարավային ուղղությամբ,

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 80 շրջ., 81 և շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 48 շրջ.:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 79:
[4] Վերահաշվարկը կատարվել է նույն տեղում, թ. 79 և շրջ. տվյալների հիման վրա:

Կարսի մարզին անցման նախատեսվող մասում թողնելով արևմտյան կողմում Արփաչայ գետին հարող Կեգաչ, Չիրպիլի և Ենիքեյ բնակավայրերը, մինչև Կիզիլ-Քիլիսա բնակավայր, ընդ որում՝ նկարագրվող սահմանը ճեղքում է վերոնշյալ բնակավայրը, իսկ բնակչության օգտագործման տակ գտնվող հողերը բաժանում երկու անհավասար մասերի՝ ավելի փոքրը՝ հարավարևմտյանը, որն անցնում է Կարսի մարզին, և հյուսիսարևելյան ավելի մեծը, որը մնում է Երևանի նահանգում, բացի այդ հարավարևմտյան մասում կան զինվորական-պաշտպանական հատվածներ 66 դեսյատին չափով: Այնուհետև նշված սահմանն անցնում է հարավարևելյան ուղղությամբ, ընդ որում՝ ըստ առկա քարտեզի նախագծվող սահմանն Անի կայարանի մոտից կտրում անցնում է երկաթգիծը և այնուհետև ոչ ավել քան կես վերստ անցնում է Բուղդաշեն բնակավայրից, թողնելով այն արևմուտքում և դրանով անջատելով այդ բնակավայրերը նրա բնակիչներին օգտագործման հատկացված հողերից, քանի որ այդ հողերի մեծ մասը գտնվում է նշված բնակավայրից հյուսիսում և արևելքում, այսինքն՝ Երևանի նահանգի սահմաններում, իսկ Բուղդաշեն բնակավայրը, նշված սահմանի համաձայն անցնում է Կարսի մարզին:

Այնուհետև սահմանը ծգվելով նույն հարավարևելյան ուղղությամբ և անցնելով չբնակեցված տեղերով հասնում է մինչև Էջմիածնի վարչաշրջանի սահմանները, որի հետ հատվում է Կարակուլի փլատակներ կոչվող տեղանքում[1]:

Այսպիսով, 1913 թ. նոր սահմանային փոփոխություններին վերաբերող հարցի քննարկումից կարելի է անել մի շարք եզրակացություններ: Առաջարկվող նախագիծը կազմվել է կամայականորեն, առանց հաշվի առնելու տեղական պայմանները, ազգային սո-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 80 և շրջ.:

վորույթները, առանձնահատկությունները, որտեղ կային բնակչության ազգային և սոցիալական կազմի, մշակույթի տարբեր հարաբերակցություն, կառավարման արդյունավետությունը, հաղորդակցության հնարավորությունները, տնտեսական կապերը և երկրամասի ժողովուրդների քաղաքացիության կարգավիճակը: Ահա թե ինչու ամենուր կապված սահմանային փոփոխությունների նոր նախագծի հետ, բնակչության մեջ դժգոհությունը շարունակաբար խորանում էր:

Թվական տվյալների համադրությունից պարզ է դառնում, որ Երևանի նահանգի տարածքից հարևան Ելիզավետպոլի նահանգին և Կարսի մարզին անցնելու էր ընդհանուր գումարով 3745,5 քառ. վերստ տարածք, երկու սեռից շուրջ 80.000 բնակչությամբ, այդ թվում՝ թաթարներ – 42.613 կամ 53,3 % շունչ, հայեր – 16.640 կամ 21 % շունչ, քուրդ եզդիներ և քուրդ սունիներ – 20.378 կամ 25,5 % շունչ[1]:

Երևանի նահանգին ենթադրյալ միացվելու էր՝ 1) Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի և Ղազախի գավառներից շուրջ 2.096 քառ. վերստ, երկու սեռից 58.322 բնակչությամբ, որից հայեր-50.390 (86,3 %) շունչ, թաթարներ – 6.850 (11,8 %) շունչ, ռուսներ – 1.082 (1,9 %) և 2) Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի և Բորչալուի գավառները 8443,96 քառ. վերստ ընդհանուր մակերեսով, երկու սեռից 270.029 շնչով, որից հայեր – 151.211 (56,0 %) շունչ, թաթարներ – 54.812 (20,5 %) շունչ, ռուսներ 18.051 (6,7 %) շունչ, վրացիներ-9.963 (3,8 %) շունչ, հույներ – 2882 (1,2 %) շունչ, այլ ազգեր – 4.912 (1,8 %) շունչ: Այլ խոսքով՝ հարևան նահանգներից Երևանի նահանգին էր անցնելու ընդհանուր գումարով 10.539,96 քառ. վերստ տարածք, 328.351,00 բնակչությամբ, այդ թվում՝ հայեր –

[1] Վերահաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 77–80 շրջ., 83 և շրջ.-ի տվյալների հիման վրա:

201.601 (61,4 %), թաթարներ – 61.662 (18,8 %), ռուսներ – 19.133 (5,8 %), վրացիներ – 9.963 (3,0 %), այլ ազգեր – 35.992 (11 %)[1]:

Ստացվում է, որ այս նախագիծը կյանքի կոչվելու դեպքում Երևանի նահանգը, որն ուներ 24.408,23 քառ. վերստ 10.700.000 բնակչությամբ[2], ավելանալու էր 6.794,46 քառ. վերստով, իսկ բնակչության թիվն աճելու էր 248.351 մարդով[3]:

Այսպիսով, ենթադրյալ սահմանային փոփոխություններն իրականում որևէ առնչություն չունեին այն բացատրությունների հետ, որոնք արվում էին Կովկասի իշխանությունների կողմից իրենց ծրագրի, այսպես կոչված, անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Ասվածին հավելենք, որ բնակչության համատարած դժգոհությունները՝ մի կողմից, տեղական իշխանությունների փաստարկված հորդորներն ուղղված երկրամասի բարձրագույն ղեկավարությանը՝ հրաժարվել հակասություններով լեցուն և ծանր հետևանքներով հղի նախագիծը գործադրելուց՝ մյուս կողմից, սթափեցրին բարձրագույն իշխանություններին և հետ կանգնեցրին նրանց բռնած ճանապարհից: Նախագիծը մնաց որպես սոսկ փաստաթուղթ:

Այդուհանդերձ, սա դեռ չէր նշանակում, թե Անդրկովկասի վարչական սահմանների փոփոխության հիմնահարցը բոլորովին դուրս էր մնացել Ռուսաստանի իշխանությունների ու քաղաքական ուժերի հետաքրքրության շրջանակներից, քանզի այդ փոփոխությունները երկրամասը խաղաղեցնելու և այն կայսրությանը հիմնովին միավորելու առումով ոչինչ չտվեցին:

Այս առումով հետաքրքիր մեկնաբանություն է անում Թիֆլիսում լույս տեսնող սոցիալ-դեմոկրատների պաշտոնաթերթ «Պայ-

---

[1] Վերահաշվարկը կատարվել է ըստ վերը նշված աղբյուրների տվյալների:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3206, թ. 88 շրջ.:
[3] Հաշվարկը կատարվել է ըստ նույն աղբյուրի, թ. 77–80 շրջ., 82, 83 տվյալների:

քարը» իր 1917 թ. օգոստոսի 23-ի համարում գրելով, որ «Ներկա վարչական սահմանները (նահանգ, գավառ, շրջան և այլն) միանգամայն անբավարար են, որ շատ տեղեր այդ բաժանումները կրում են պատահական բնույթ և չեն համապատասխանում Կովկասյան ժողովուրդների տնտեսական և ազգագրական պահանջներին, դրա մասին երկու կարծիք չի կարող լինել»[1]: Ուշագրավ է, որ դեռ 1905 թ., երբ Կովկասում զեմստվոների՝ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպման խնդիրը լայն կերպով հրապարակ եկավ, այդ հարցի հետ միասին շարունակ ասպարեզի վրա ցցվել էր վարչական սահմանների փոփոխության հարցը՝ որպես նախապայման զեմստվոների իրականացման[2]:

«Պատահական կամ դիտավորյալ սահմանաբաժանման անհարմարությունները,- գրել է Ստ. Կամսարականը,- շուտով աչքի ընկան, մանավանդ, երբ ծագեց հարց Անդրկովկասում զեմստվային հիմնարկություններ մտցնելու մասին»[3]:

Անդրկովկասի սահմանափոխման հարցը քննարկման առարկա է դարձել նաև 1909 և 1916 թթ. զեմստվոյական խորհրդակցություններում[4]:

Նշված խորհրդակցություններում հայազգի պատվիրակները վարչատարածքային փոփոխությունների անհրաժեշտությունը պատճառաբանում էին տնտեսական գործոններով: Ուշագրավ է, որ նրանք առաջնահերթությունը տալիս էին Անդրկովկասի վարչատարածքային բաժանմանը, հետո նոր միայն զեմստվոների ներդրմանը երկրամասում[5]: Բանն այն է, որ երկրամասի նախըն-

---

[1] Պայքար, 23 օգոստոսի, 1917:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] *Հանրահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, Երևան, 2004, էջ 196:

[4] Տե՛ս **Հ. Հարությունյան**, *Նոր Բայազետի գավառ 1914–1920 թթ.*, Երևան, 2012, էջ 13–15:

[5] Տե՛ս **Г. Гуманов**, *Организация земства в Закавказье*, Тифлис, 1918, էջ 3:

թաց բոլոր վարչատարածքային բաժանումները, որպես կանոն, արվել են Հայաստանի հաշվին: Հայոց ազգային համախորհրդակցության 1917 թ. հոկտեմբերի 6-ի նիստում Ստ. Կամսարականը Անդրկովկասի սահմանաբաժանմանը վերաբերող զեկուցման մեջ անդրադարձ կատարելով երկրամասի գավառների վարչական սահմանների ստեղծման պատմությանը, շեշտել է, որ «Սահմանների բաժանումը կատարելիս կառավարությունը աչքի առաջ չի ունեցել տեղագրական և տնտեսական պայմանները և ոչ իսկ վարչական կառավարության հարմարությունները: Երբեմն կառավարությունը, որպեսզի հայերը որևէ գավառում մեծամասնություն չկազմեն, այդ գավառից մի զուտ հայաբնակ մաս անջատել ու միացրել է հարևան թուրքաբնակ մասի»[1]:

Ինչպես, օրինակ, Ղարաբաղը, Ղազախը և Զանգեզուրը Արևելյան Հայաստանի կազմից հանելով միացվել էր Շամախու, հետագայում՝ Ելիզավետպոլի նահանգին, Բորչալուի և Ախալքալաքի գավառները տրվել էին Թիֆլիսի նահանգին, իսկ Կարսի և Կաղզվանի շրջանների վրա իրականացվում էր ռուսական վերահսկողություն: Ահա թե ինչու երկրամասի սահմանաբաժանման հարցը, որպես կանոն, առաջինը բարձրացնում էին հայերը:

Թեև Պետական դուման իր 1916 թ. մարտի 17-ի նիստում մերժեց իրեն կից հանձնաժողովի Անդրկովկասում զեմստվոներ մտցնելու առաջարկությունը, սակայն երկրամասի սահմանափոխության հարցը չկորցրեց հրատապությունը: Այս հարցը տեղից շարժելու և տեսականորեն այն հիմնավորելու ու հստակ ծրագիր մշակելու մտայնությամբ, Մ. Պապաջանյանի եռանդուն ջանքերով ստեղծվեց միջկուսակցական մարմին՝ անդամակցությամբ Հ. Փափազյանի, Ստ. Կամսարականի, Գ. Խատիսյանի և Ավ. Շահխա-

---

[1] *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, էջ 196:

թունյանի: Նրանք ստեղծեցին Անդրկովկասի վարչատարածքային բաժանման ծրագիր և Ավ. Շահխաթունյանի միջոցով ուղարկեցին Պետրոգրադ՝ ՆԳ նախարարությանը առընթեր գործող տեղական ինքնավարությունների հանձնախմբին[1]:

«Այս խորհրդակցություններում արդեն,- գրում է Վ. Մելիքյանը,- հայկական կողմն անփուփոխ հայտնվում էր փոքրամասնության վիճակում, քանի որ քաղաքական իրադրությունը, որտեղ վրացիներն ու մահմեդականները գրեթե ամենուրեք գերիշխում էին, լիովին բավարարում էր այդ մեծամասնությանը»[2]:

Մենք չենք անդրադառնում նրանց արտահայտած տեսակետներին, քանզի դրանք դուրս են մեր ուսումնասիրության շրջանակներից: Բավարարվենք միայն նշելով, որ նրանց տեսակետներն համակողմանիորեն քննության է առել Վ. Մելիքյանն իր «Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում» արժեքավոր մենագրության մեջ[3]:

1917 թ. ամռանն Անդրկովկասի ազգային տարածքային տարանջատման հիմնահարցը կրկին իջավ ասպարեզ և դարձավ քաղաքական ուժերի և տեղական կենտրոնական իշխանությունների լայն քննարկման առարկա: Երկրամասում զեմստվոներ մտցնելու խնդրին նվիրված Անդրկովկասյան հատուկ կոմիտեի խորհրդակցությունում հրապարակ հանվեց նաև Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգների ու Կարսի մարզի վարչատարածքային սահմանաբաժանման հարցը[4]: Հայտնի քաղաքական գործիչ Դ. Անանունի բնորոշմամբ «ազգային տերիտորիալ որոնումը 1917 թ. կազ-

---

[1] Տե՛ս А. Шахатунян, *Административный передел Закавказского края*, Тифлис, 1918, էջ 120:

[2] Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 126:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 126–127:

[4] Տե՛ս А. Шахатунян, նշվ. աշխ., էջ 120:

մում էր Անդրկովկասի ժողովուրդների կենտրոնական մտահոգությունը»[1]:

Խորհրդակցությունում լսվեցին առարկող ելույթներ ո՛չ միայն թաթարների ներկայացուցիչների, նաև վրացական ազգայնականների կողմից: Վրաց սոցիալ-դեմոկրատների միջամտության շնորհիվ որոշ չափով մեղմացավ հարցի սրությունը: Այդուհանդերձ, ինչպես նշում է Ավ. Շահխաթունյանը, գործը տեղից չշարժվեց[2]:

Անդրկովկասի սահմանաբաժանման թեման մեկ անգամ ևս օրակարգային դարձավ Պետրոգրադում միաժամանակյա հրավիրված երկու խորհրդակցություններում՝ նվիրված Սահմանադիր ժողովի ընտրությունների կանոնակարգերի մշակմանը և զեմստվոներից զրկված ազգային շրջաններում այդպիսիք հիմնելու հարցին: Մի շարք նախագծերի հետ մեկտեղ թույլատրվեց երկրամասերում կատարել վարչատարածքային փոփոխություններ և ստեղծել նոր նահանգներ ու գավառներ[3]:

Ասվածից կարելի է հետևության հանգել, որ Անդրկովկասի երկրամասի վարչատարածքային նոր բաժանումների հարցը զուտ հայկական խնդիր չէր, այլ կրում էր ընդհանուր տեղական բնույթ և հրապարակ էր իջել ոչ թե իբրև հայկական, այլ ընդհակառակը՝ իբրև Կովկասյան դեմոկրատիայի նախագիծ:

Անդրադառնալով վերոգրյալ խորհրդակցություններին՝ նշենք, որ զեմստվոյական խորհրդակցությունը, օգտվելով Անդրկովկասի երկրամասի գրեթե բոլոր ազգությունների ներկայացուցիչների Պետրոգրադում գտնվելու հանգամանքից (մասնակցում էին Սահմանադիր ժողովի ընտրություններին նվիրված խորհրդակցությա-

---

[1] **Դ. Անանուն**, *Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918)*, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 613:

[2] Տե՛ս **Ա. Շահխաթունյան**, նշվ. աշխ., էջ 120:

[3] Տե՛ս նույն տեղում:

նը), նրանց (յուրաքանչյուր ազգությունից 7 հոգի) հրավիրեցին մասնակցելու զեմստվոյական հանձնաժողովի աշխատանքներին: Հարց բարձրացվեց երկրամասի սահմաններում իրականացնել վարչական փոփոխություններ: Եղան մի քանի առաջարկություններ, ինչպես, օրինակ, կատարել Անդրկովկասի էթնիկական-սահմանային նոր փոփոխություն, կամ եզակի հիմքի վրա երկրամասում հիմնել զեմստվոներ: Մի քանիսն առաջարկում էին չքննարկել այդ հարցը և այն հանձնել Օզակոմին (Անդրկովկասյան հատուկ կոմիտեին), որն էլ կստեղծի համապատասխան հանձնաժողով՝ կյանքի կոչելու երկրամասի նոր վարչական բաժանումը: Իսկ հանձնաժողովականների մեծամասնությունը առաջարկում էր ավելի շահեկան և իրատեսական ճանապարհ, այն է՝ Պետրոգրադում գտնվող Անդրկովկասի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմել նախագիծ և այն ուղարկել Օզակոմին և Կովկասի դեմոկրատիան ներկայացնող կազմակերպությունների եզրակացությանը: Վերջիններս, որոնք ուղղակիորեն դեմ էին երկրամասի վարչական փոփոխությանը, հայտարարեցին, որ նրանք կոմպետենտ (ձեռնահաս) չեն, և չունեն բավականաչափ նյութեր: Սակայն դա չխանգարեց, որ մեծամասնության հավանությանը արժանանար վերջին տարբերակը[1]:

Հայ պատվիրակներն ունեին երկրամասի վարչական փոփոխության վերաբերյալ վաղօրոք մշակված հիմնավոր նախագիծ՝ վերնագրված «Անդրկովկասի վարչական սահմանաբաժանման նախագիծը»: Այն հեղինակել էր Ավ. Շահխաթույանը: Նախագծի տեքստը հրատարակվել է 1918 թ. Թիֆլիսում «Административный передел Закавказского края» խորագրով:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 121:

Ըստ Ավ. Շահխաթունյանի նախագծի Ելիզավետպոլի նահանգը բաժանվելու էր երկու առանձին նահանգի՝ Ելիզավետպոլի և Գանձակի[1]: Վերջինս զբաղեցնելու էր նախկին նահանգի լեռնային մասը, որը մեծամասամբ բնակեցված էր հայերով: Այսպիսով՝ ապագա Գանձակի նահանգը ստեղծվելու էր Քարվանսարայի[2] և Գանձակի[3] գավառներից (նախատեսվում էր նրանց կազմում ընդգրկել նաև Նոր Բայազետի գավառից Արդանիշ, Աղբուլախ, Թոխլուջա, Սեմյոնովկա, Չիբուխլու, Ջիլ, Կուշի Դարասի, Բազեջան Դարասի և Սատանախաչ գյուղերը)[4], Շուշիի[5] և Զանգեզուրի[6] գավառներից, ինչպես նաև Ելիզավետպոլ քաղաքի աջափնյա հայկական մասից՝ Գանձակ քաղաքից, որը պետք է դառնար նորաստեղծ նահանգի վարչական կենտրոնը[7]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 128–129: Հորիզոն, 17 հունվարի, 1918:

[2] Բաղկացած էր Բարանա, Բաշքենդ, Ղուլալի, Թաթիքենդ, Թաուզկալի, Հին Դիլիջան, Նոր Դիլիջան, Ղարադոյունլի, Թոթքենդ, Աքսիբարի, Միխայլովսկոե, Ճամբարակ, Ուզունթալա, Քարվանսարա և Ղարադաղ գյուղական համայնքներից: Տե՛ս **Ավ. Շահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 128–129: Հորիզոն, 17 հունվարի, 1918:

[3] Իր մեջ ընդգրկում էր Ելիսկոյե, Միխայլովսկոե, Բայանսիե, Զուռնաբաղ, Դամջալու, Զազլիկ, Դաստաֆիլլ, Աղջաքենդ, Բորիսինսկոե, Էրքեջ, Զարդախլու, Ֆրեզովսկոե, Գետաբեկ, Սլավյանսկոե, Մեսքիլինի, Կարամուրադ (Այլում), Նովոսարատովսկոե, Բաղաքենդ, Կովալենովկա-հայկական, Ղարամուրադ գյուղական համայնքները և Ելիզավետպոլ քաղաքի աջափնյա հայկական մասը: Տե՛ս **Ավ. Շահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 128–129: Հորիզոն, 17 հունվարի, 1918:

[4] Տե՛ս Հորիզոն, 17 հունվարի, 1918:

[5] Բացառությամբ Գյուլիստանի, Սկոբելևսկի, Ղաջարակլանի, Մարգալինի գյուղական համայնքների ու Արբաղուզ գյուղի: Տե՛ս **Ավ. Շահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 129:

[6] Առանց մի քանի թաթարական գյուղական համայնքների, որոնք միացվում էին նախկին նահանգի՝ Ելիզավետպոլի, թաթարական մասին: Տե՛ս **Ավ. Շահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 129:

[7] Տե՛ս **Ավ. Շահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 129:

1. Գանձակի նահանգ[1]

Աղյուսակ 4

Հազարներով % %				
Գավառներ	Բնակչությունը	Հայեր	Մուսուլմաններ	Այլք
Քարվանսարայի	74	61 (82,4 %)	9 (12,2 %)	4 (5,4 %)
Գանձակի	114	67 (59 %)	29 (25,4 %)	18 (16 %)
Շուշիի	214	150 (70 %)	58 (27,1 %)	6 (2,3 %)
Զանգեզուրի	127	88 (69,3 %)	38 (30 %)	1 (0,79 %)
Ընդամենը	529	366 (69,2 %)	134 (28,3 %)	29 (5,3 %)

2. Ելիզավետպոլի նահանգ[2]

Աղյուսակ 5

Հազարներով % %				
Գավառներ	Բնակչությունը	Հայեր	Մուսուլմաններ	Այլք
Նուխիի	220	40 (18,2 %)	163 (74,1 %)	17 (7,7 %)
Ելիզավետպոլի	171	6 (3,5 %)	156 (91,2 %)	9 (5,3 %)
Բարդայի	99	3 (3,1 %)	92 (96,8 %)	4 (4,2 %)
Կարյագինոյի	123	–	119 (96,7 %)	4 (3,2 %)
Արեշի	74	4 (5,4 %)	70 (94,6 %)	–
Ղազախի	64	–	63 (98,4 %)	1 (1,2 %)
Ընդամենը	751	53 (7,1 %)	663 (88,7 %)	35 (4,7 %)

Աղյուսակ 5-ից նկատելի է, որ ըստ հայկական նախագծի, Գանձակի նահանգում հայերը կազմելու էին բնակչության ավելի քան 69 %-ը, մահմեդականները՝ 25,3 %-ը, իսկ Ելիզավետպոլի նահանգում համապատասխանաբար՝ 7,1 և 88,7 %-ը:

Անդրադառնալով Երևանի և Թիֆլիսի նահանգներին և Կարսի մարզին վերաբերող փոփոխություններին՝ նշենք, որ նախագծում

---

[1] Աղյուսակը կազմվել և վերահաշվարկը կատարվել է ըստ **Ավ. Շահխաթունյանի,** նշվ. աշխ., էջ 131 և Հոդիզոն, 17 հունվարի, 1918, տվյալների հիման վրա:

[2] Աղյուսակը կազմվել և վերահաշվարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա:

առաջարկվում էր Լոռին անջատել Բորչալուի գավառից, իսկ Ախալքալաքի շրջանը հանել Թիֆլիսի նահանգի կազմից, որոնք ունեին ճնշող մեծամասնությամբ հայ բնակչություն:

Նախատեսվում էր նշված տարածքների և Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի և Կողբի գավառների միավորումով ստեղծել նոր նահանգ Ալեքսանդրապոլ վարչական կենտրոնով[1]: Ապագա Ալեքսանդրապոլի նահանգն ունենալու էր 709 հազար բնակչություն, որից հայեր՝ 464 հազար (65,5 %), մահմեդականներ՝ 121 հազար և այլք՝ 124 հազար (34,5 %)[2]:

Նահանգի բնակչության շարժընթացն աղյուսակի տեսքով կունենար հետևյալ պատկերը[3]

Աղյուսակ 6

Հազարներով % %				
Գավառներ	Բնակչությունը	Հայեր	Մուսուլմաններ	Այլք
Ալեքսանդրապոլի	194	160 (78,4 %)	22 (11 %)	12 (6 %)
Ախալքալաքի	120	94 (78,3 %)	10 (8,3 %)	16 (13,3 %)
Լոռիի	120	92 (77 %)	14 (12 %)	14 (12 %)
Կարսի	193	83 (43 %)	49 (25,4 %)	61 (32 %)
Կաղզվանի	82	35 (43 %)	26 (32 %)	21 (26 %)
Ընդամենը	709	464 (59 %)	121 (15,3 %)	124 (16 %)

Ինչ վերաբերում է Երևանի նահանգի կազմավորմանը, ապա հայկական կողմի պատկերացմամբ, այն պետք է ստեղծվեր Էջմիածնի, Երևանի, Նոր Բայազետի, Շարուրի, Նախիջևանի և Սուրմա-

---

[1] Տե՛ս **Ավ. Ճահխաթունյան,** նշվ. աշխ., էջ 126–127: Հորիզոն, 17 հունվարի, 1918:

[2] Վերահաշվարկը կատարվել է ըստ **Ավ. Ճահխաթունյանի,** նշվ. աշխ., էջ 133: Հորիզոն, 17 հունվարի, 1918, տվյալների հիման վրա:

[3] Աղյուսակը կազմվել և վերահաշվարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա:

լուի գավառների ներգավառային վարչական վերաձևումների հենքի վրա:

Երևանի նահանգի բնակչությունը ըստ էթնոդավանաբանական խմբերի կունենար այսպիսի պատկեր[1]

Աղյուսակ 7

Հազարներով % %				
Գավառներ	Բնակչությունը	Հայեր	Մուսուլմաններ	Այլք
Էջմիածնի	132	95 (72 %)	36 (27,2 %)	1(0,76 %)
Երևանի	238	154 (65 %)	73 (31 %)	11 (4,6 %)
Նոր Բայազետի	146	100 (68,5 %)	45 (31 %)	1 (0,69 %)
Շարուրի	88	18 (18,4 %)	70 (71,4 %)	–
Նախիջևանի	143	58 (40,5 %)	84 (59 %)	1 (0,70 %)
Սուրմալուի	109	34 (31,5 %)	63 (58 %)	12 (11 %)
Ընդամենը	856	459 (53 %)	371 (43,3 %)	26 (3 %)

Այսպիսով, ըստ նախագծի Արևելյան Հայաստանի տարածքի վրա նախատեսվում էր ստեղծել երեք նահանգներ՝ Գանձակի, Երևանի և Ալեքսանդրապոլի: Նահանգների ընդհանուր բնակչության թիվը կազմելու էր 2 մլն. 93 հազար մարդ, այդ թվում հայերինը՝ 1 մլն. 289 հազար կամ 60,5 %-ը:

Հենվելով այս և մյուս փաստական և վիճակագրական տվյալների վրա՝ կարող ենք վստահաբար նշել, որ նախագծի հեղինակը վարչատարածքային բաժանման հիմքում դրել էր էթնիկական սկզբունքը՝ խնդիր ունենալով ըստ ազգագրական հատկանիշների վերամիավորել տարանջատված տարածքները: Նախագիծը, իհարկե, չէր անտեսում նաև տնտեսական և աշխարհագրական գործոնների նշանակությունը:

---

[1] Վերահաշվարկը կատարվել է ըստ **Ավ. Ծահիսաթունյանի**, նշվ. աշխ., էջ 134 և Հորիզոն, 17 հունվարի, 1918 տվյալների հիման վրա

Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները համաձայնության եկան սահմանափոխության և առաջարկված նոր սահմանների շուրջը, իսկ թաթարները թեև սկզբունքորեն համերաշխվեցին սահմանափոխությանը, բայց երբ ծանոթացան ենթադրվող փոփոխություններին Գանձակի և Երևանի նահանգներում, հայտարարեցին, թե իրենք լիազորված չեն վերջնական համաձայնություն տալու: Այնուամենայնիվ նախագիծը Պետրոգրադում ընդունվեց, և այն մասնակի փոփոխություններով ուղարկվեց Կովկաս՝ լուծումը թողնելով Անդրկովկասյան հատուկ կոմիտեին[1]: Խնդրի լուծումը գործնական հարթության վրա դնելու համար Թիֆլիսում կազմվեց առանձին մասնաժողով Ն. Ժորդանիայի նախագահությամբ[2]:

Սուր վիճաբանություններ ծագեցին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի հրավիրած խորհրդակցության ժամանակ: Վրացական ազգային-դեմոկրատների ելույթներում այն միտքն էր իշխում, որ խորհրդակցությունը ոչնչով չի կարող փոխել 1783 թ. Գեորգիևյան պայմանագիրը և Վրաստանից անջատել Բորչալուի և Ախալքալաքի շրջանները[3]:

Վ. Մելիքյանի դիպուկ բնորոշմամբ «Այս ամենից պարզ երևում է, որ սահմանների լուծման հարցն այն ժամանակ արդեն դրված էր ոչ թե վարչական, այլ առավելապես պետական-տարածքային հարթության վրա»[4]:

Անդրկովկասյան ժողովուրդների համար ստեղծվելիք վարչակարգի մասին հարցը «Նահանգների և գավառների փոփոխության և զեմստվոյի հարցը» վերտառությամբ տեղ գտավ նաև 1917 թ.

---

[1] Տե՛ս *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, էջ 197:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս *Армяно-грузинский вооруженный конфликт*, Баку, 1919, էջ 67:

[4] **Վ. Մելիքյան**, *1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր)*, Երևան, 1997, էջ 119:

սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում բացված հայկական ազգային համախորհրդակցության (համագումարի) օրակարգում:

Համախորհրդակցությունը այդ հարցին անդրադարձավ հոկտեմբերի 6-ի նիստում: Առաջինը զեկուցեց Ստ. Կամսարականը: Դատելով նրա զեկուցման բովանդակությունից՝ դժվար չէ նկատել, որ նա սահմանափոխության հիմքում շեշտը դնելով տնտեսական և էթնիկ գործոնների վրա առաջարկում էր. «Համախմբել միևնույն ցեղի և միևնույն տնտեսություն ունեցող վայրերը, որպեսզի հեշտանա ապագա զեմստվոյի գործունեությունը»[1]:

Հատկանշական է, որ Ստ. Կամսարականը նշված սկզբունքներով առաջնորդվելիս ներկայացրեց իր պատկերացրած Երևանի նահանգի տեսլականը, այն է՝ նրա կազմում ընդգրկվելու էին ամբողջ համանուն նահանգը, Կարսի շրջանից՝ երկու գավառ, Թիֆլիսի նահանգից՝ երկու գավառ և Գանձակի նահանգի՝ լեռնային մասը: Նրա մոտավոր հաշվումներով նորաստեղծ Երևանի նահանգն ունենալու էր մոտ 60 հազար քառ. վերստ տարածք՝ 2 մլն. բնակչությամբ: Հայերը կազմելու էին նահանգի ընդհանուր բնակչության շուրջ 60 %-ը[2]:

Ստ. Կամսարականի զեկուցման տրամաբանությունը հուշում է, որ նա հակված էր հայահոծ բոլոր տարածքները մեկ վարչական միավորի մեջ ընդգրկելու գաղափարին՝ մերժելով նախարարության ծրագիրը, որը միևնույն սահմանների մեջ երեք նահանգ էր ենթադրում՝ Գանձակի, Երևանի և Ալեքսանդրապոլի[3]:

Գ. Խատիսյանը, համաձայնելով Ստ. Կամսարականի այս մտքի հետ, այդուհանդերձ որոշ տեխնիկական անհամաձայնությունների (կենտրոնի հեռավորությունը ծայրագավառներից, հաղոր-

---

[1] Տե՛ս *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, էջ 196:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 196–197:

դակցության դժվարությունները և այլն) պատճառով, շահեկան է համարում նախապատվությունը տալ նախարարության ծրագրին[1]:

Ղ. Տեր-Ղազարյանը համոզված էր, որ ծրագրված սահմանափոխությունը զեկստվոյի անվան տակ, իսկապես լուծում է ազգային-տարածքային խնդիրը: Նրա անհամաձայնությունը հիմնականում վերաբերում էր նահանգական և գավառային բաժանումներին: Սահմանափոխության մոտիվների մեջ նա առավելությունը տալիս էր կանտոնային սիստեմին, որի դեպքում ավելի միատարր խմբավորումներ կկազմվեն, բացի այդ, կանտոնական սիստեմը առաձգական է, որը կարելի կլինի ապագայում լայնացնել և խորացնել[2]:

Նահանգների ներքին բաժանումների հարցում Ղ. Տեր-Ղազարյանի տեսակետի հետ համակարծիք էր Արշ. Խոնդկարյանը[3]: Ըստ նրա՝ սահմանաբաժանումը կարելի էր գլուխ բերել միայն Անդրկովկասի երեք ազգերի համաձայնությամբ: Դա ըստ էության կլիներ խանգարիչ քայլ, ավելորդ գրգռումների տեղիք չտալու համար:

Բանախոսը առաջարկում է սահմանափոխության իրականացման հետևյալ աստիճանակարգը. առավելությունը տալ տնտեսական, ապա էթնիկական և վերջում միայն վարչական հարմարություններին:

Մի նահանգ ստեղծելու հակառակորդների առարկություններին պատասխանելով և դեմ արտահայտվելով կանտոնական տարբերակին, դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչ և նախագծի հեղինակներից Ավ. Շահխաթունյանը գտնում էր, որ զեմստվոյի հաջողությունը պահանջում է, որ ստեղծվեն վարչական մեծ միավորներ, և առաջարկում էր, որ բանաձևի մեջ մտցվի մի

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 197:
[3] Տե՛ս նույն տեղում:

նահանգ կազմելու անհրաժեշտությունը, իսկ դրա իրականացումը թողնելով կյանքին[1]: Ավ. Շահխաթունյանը, փաստորեն հրաժարվում էր երեք նահանգ ստեղծելու իր նախկին տեսակետից: Նրա տեսակետի փոփոխությունը, ըստ երևույթին, թելադրված էր նահանգների ներքին բաժանումը ըստ կանտոնների կողմնակիցներին հակադրվելու և այդ հարցում իր կուսակցության մոտեցումը պաշտպանելու հանգամանքով:

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկների տեսակետը պաշտոնապես մեկնաբանեց այդ կուսակցության անդամ Ա. Երզնկյանը: Հենց սկզբից նշենք, որ այս կուսակցությունը կողմնակից էր կանտոնալ սահմանաբաժանմանը և գտնում էր, որ մի նահանգ կամ երեք նահանգ առաջարկելով, հայերը ցանկանում են գծել քաղաքական և ոչ վարչական սահմաններ, ինչի համար էլ արժանանում են վրացթաթարական դիմադրությանը: Այս կապակցությամբ Ա. Երզնկյանը սուր քննադատություն ուղղեց դաշնակցության հասցեին, նրան մեղադրելով սահմանափոխության հարցում «թիկունքային» քաղաքականություն վարելու համար: «Պետրոգրադում լուծել տալով այն հարցը, որը պետք է լուծվեր այստեղ, կովկասյան դեմոկրատիայի միջոցով, որ մեր քաղաքականության ընդհանուր գիծը պետք է լինի»[2],- դժգոհում էր Ա. Երզնկյանը: Վերջինս նկատի ուներ 1917 թ. ամռանը Պետրոգրադում զեմստվոներ հիմնելու հարցին նվիրված խորհրդակցությունում հայերի շահերը ներկայացնող Գ. Խատիսյանի և Ավ. Շահխաթունյանի կողմից ներկայացրած Անդրկովկասի սահմանաբաժանմանը վերաբերող բավականին մշակված նախագիծը: Ի դեպ, դաշնակցության այսպես կոչված թիկունքային քաղաքականությունը անխնա քննադատեց նաև մենշևիկները կուսակցության պաշտոնաթերթ «Պայքարը»՝ 1917 թ. օգոստոսի 23-ի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 198–199:
[2] Նույն տեղում, էջ 199:

համարում տպագրելով «Կովկասյան զեմստվոն և սահմանների փոփոխության հարցը» խորագիրը կրող հոդվածը: «Դաշնակցականները պատրաստում են վարչական բաժանումների մի քարտեզ, ստեղծում թղթի վրա, «հայկական նահանգներ» կամ «հայկական նահանգ» և վազում Պետրոգրադ կանցելիարիաներում լուծելու այդ կնճռոտ հարցը: Ավ. Շահխաթունյանը և Գ. Խատիսյանը այդ նախագծով սկսում են մաշել «մեծամեծների» դռները և ճգնել գլուխ բերել Պետրոգրադում[1]: Սա մի դժբախտ քաղաքականություն է, որը շարունակ վարել են դաշնակցականները և դրանով մեկուսացրել հայ ժողովրդին»,- նշում է թերթը[2]:

Վերադառնալով հիշյալ համախորհրդակցության աշխատանքներին նշենք, որ սահմանաբաժանման սեկցիայի նախագահ Ք. Վերմիշյանը առարկություններին պատասխանելով, նկատում է, որ սեկցիան սահմանափոխության զեմստվոյի վրա նայել է զուտ վարչական-տնտեսական տեսակետից: Զեկուցողը այնուհետև առարկելով մի նահանգի պաշտպաններին, ցույց է տալիս դրա անհարմարությունը և երեք նահանգի առավելությունները՝ հարաբերության հեշտության և վարչական աշխատանքի տեսակետից[3], միաժամանակ նշելով, որ «երեք նահանգից միշտ կարելի է մի նահանգ ստեղծել, իսկ հակառակն անել կարելի չէ»[4]: Նա գտնում էր, որ սահմանափոխության հարցը հրատապ լուծում է պահանջում, ուս-

---

[1] Թերթը նկատի ուներ 1916 թ. մարտին Ս. Պապաջանյանի նախաձեռնությամբ ստեղծված միջկուսակցական մարմնի կողմից մշակված երկրամասի վարչական բաժանման ծրագիրը, որը Ավ. Շահխաթունյանի միջոցով հասցվեց Ռուսաստանի մայրաքաղաք՝ ներքին գործերի նախարարությանը առընթեր տեղական ինքնավարությունների հանձնախմբին:

[2] Պայքար, 23 օգոստոսի, 1917, թիվ 104:

[3] Տե՛ս *Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)*, էջ 199–200:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 198:

տի և անթույլատրելի էր համարում այն Սահմանադիր ժողովի իրավասությանը թողնելը[1]:

Հարցի քննարկումների ժամանակ առաջացած տարաձայնությունների հետևանքով բանաձև չընդունվեց: Համախորհրդակցության մասնակիցների ճնշող մեծամասնությունը գտավ, որ ժողովի համար հարցն արդեն սպառված է, և բավարարվեց ընդհանուր բանաձև կազմելու վերաբերյալ հանձնաժողով ձևավորելու որոշմամբ:

Յուրաքանչյուր ֆրակցիայից ընդունվեցին երկու հոգի «հաշտեցնող բանաձև» կազմելու համար[2]:

Մի վերջին անգամ Անդրկովկասի վարչական բաժանման հարցը լսվեց 1917 թ. հոկտեմբերի 14–15-ին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ընդլայնված նիստում, որտեղ հայկական կողմի ներկայացրած սահմանափոխության նախագիծը վրաց-թաթարական տանդեմի կողմից մերժվեց՝ հայերի և մահմեդականների միջև եղած անհանդուրժողականության պատճառաբանությամբ. «...այս անգամ,- Ավ. Շահխաթունյանի բնորոշմամբ,- որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ զենք»[3]:

Պետրոգրադում բոլշևիկյան հեղաշրջման պատճառով Անդրկովկասի երկրամասում դարձյալ ստեղծվեց շատ ավելի բարդ իրավիճակ: Երկրամասի նոր կառավարությունը՝ Անդրկովկասյան կոմիսարիատն ի տարբերություն իր նախորդի՝ Հատուկ կոմիտեի, որը փորձում էր անկողմնակալ ազգային քաղաքականության շնորհիվ կայունացնել երկրամասի ներքաղաքական կացությունը, կոմիսարիատը ընդհակառակը՝ ուժեղացնում էր վրաց-թաթարական

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 197:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 199–200:
[3] **Ավ. Շահխաթունյան**, նշվ. աշխ., էջ 124:

հակահայկական գործոնը և դրանով իսկ ավելի խճճում էր Անդրկովկասի ազգային-սահմանային խնդիրների լուծումը: Դրությունը ամենևին էլ չշտկեց 1918 թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասի՝ որպես անկախ դեմոկրատական դաշնակցային հանրապետության հռչակումը: Փաստորեն, այդ մարմինն Անդրկովկասի նոր կառավարությունն էր՝ վրաց մենշևիկ Ա. Չխենկելիի գլխավորությամբ:

Դաշնակցային հանրապետության հռչակումով վարչատարածքային-սահմանային հարցերի շուրջ բորբոքված կրքերն առժամանակ հանդարտվեցին: Սակայն դա թվացյալ անդորր էր փոթորկից առաջ, որովհետև Դաշնակցային հանրապետության ներսում առկա էին լուծման կարոտ ազգային-սահմանային անհաշտ վեճերը և արագ տեմպերով խորացող միջկուսակցական հակամարտությունները: Այս ամենի պատճառով 1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան դաշնությունը փլուզվեց, և նրա փլատակների վրա ստեղծվեցին Վրաստանի, Արևելակովկասյան մուսուլմանական (ապագա Ադրբեջանի) և Հայաստանի անկախ հանրապետությունները:

Անկախ պետականության առաջին իսկ օրից Հայաստանի և երկու հարևանների՝ Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների միջև տարածքային-սահմանային խնդիրները դրվեցին նոր սրությամբ:

*

* *

Կարևոր հետաքրքրություն է ներկայացնում նաև Երևանի նահանգի վարչական կառուցվածքի և կառավարման համակարգի հիմնահարցերի ուսումնասիրությունը: Հարկ է խնդրի քննությունը սկսել ցարական 1867 թ. դեկտեմբերի 9-ի «Կովկասյան և Անդրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» արդեն բազմիցս նշված հրամանագրին անդրադարձ կա-

տարելով: Նոր օրենքի կիրարկման հետևանքով, ինչպես արդեն ցույց է տրվել, տեղամասային ատենակալի (պրիստավի) հաստիքը վերացվեց: Պրիստավի փոխարեն նշանակվեցին գավառապետերի մեկ-երկու օգնականներ, որոնք կատարում էին ոստիկանական պարտականություններ[1]:

1867 թ. դեկտեմբերի 9-ի հրամանագիրը կյանքի կոչվելուց ավելի քան երկու տասնամյակ անց նոր բարեփոխումների անհրաժեշտություն առաջացավ: Բանն այն է, որ այդ փոփոխությունների հետևանքով առանձին նահանգների և գավառների տարածքների կրճատվելը, գավառների թվի ավելանալը, եռաստիճան կառավարումը երկաստիճանով փոխարինվելը, ինչպես նաև Կովկասում նոր դատական օրենքի կիրարկման հետ կապված ոստիկանության դերի թուլացումն, իրենց հետ բերեցին նոր դժվարություններ և բարդություններ, որոնք շատ շուտով դրսևորվեցին տեղական բոլոր վարչական կառույցներում: Այս ամենն, անշուշտ, պետք է, որ իրավասու մարմիններից համապատասխան լուծումներ պահանջեին:

Ներքին գործերի մինիստր Տոլստոյը Պետական Խորհրդին ներկայացված զեկուցման մեջ այդ բարեփոխման անհրաժեշտությունը հիմնավորում է հետևյալ նկատառումներով: «Այս նախագծի հիմքում ընկած է տեղագրական պայմանը, անմիջապես աչքի է զարնում Անդրկովկասի մի տեղանքի տարբերությունը մյուսից: Այլացեղ բնակչությունը, նրանց սովորույթները, խառնվածքը, քաղաքացիական հետամնացությունը և այլն, նահանգի ներսում ստեղծում են այնպիսի առանձնահատուկ պայմաններ, որոնք ոստիկանության արդյունավետ գործունեության համար պահանջում են, որ ոստիկանական պաշտոնյաները մշտապես բնակվեն գավառների նախատեսված կետերում: Հետևաբար, ավելի շահավետ է, գա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, գ. 3151, թ. 7 շրջ.:

վառների շրջաններում ունենալ այդպիսի շատ կետեր, քան գավառների շրջանների սահմանված տեղերում պահել մեծ թվով ոստիկաններ»[1]: Այլ խոսքով՝ առաջարկվում էր ապակենտրոնացնել տեղական կառավարումը և վերականգնել տեղամասերը՝ վարչական միավորները հնարավորինս մոտեցնել բնակչությանը:

Այդ ուղղությամբ առաջին քայլը եղավ 1888 թ. մայիսի 10-ի Անդրկովկասի հինգ նահանգները 37 գավառների և 125 տեղամասերի բաժանելու մասին օրենքը[2]:

Իսկ, թե՛ գործնականում ինչպիսի արտացոլում գտան այդ ամենը, ցույց տանք Երևանի նահանգի վարչական համակարգի երեք կառույցների՝ նահանգ, գավառ և գյուղ օրինակներով, սկսենք վարչական կառուցվածքի ամենավերին սանդղակից՝ նահանգից: Նախկինի պես նահանգը կառավարում էր կայսեր կողմից նշանակված նահանգապետը (նա նաև զինվորական հրամանատարն էր): Նրա ենթակայության տակ էր գտնվում նահանգի կառավարման ողջ համակարգը՝ համապատասխան ստորաբաժանումներով և աշխատակիցներով: Այդ ցույց տանք 1875 թ. Երևանի նահանգի օրինակով: Նահանգապետ (նահանգապետն էր Միխայիլ Ռոսլավլը), նահանգապետի տեղակալ, նահանգային գրասենյակ, պետական գույքի կառավարման վարչություն, նահանգի բնակեցման գործերի բաժին, քաղաքային ոստիկանության բաժին: Նահանգի վարչական կառույցի կարևոր ստորաբաժանումներից էին նաև Երևանի օկրուգային դատարանը, դատախազական հսկողությունը և հաշտարար հիմնարկությունները[3]:

Իհարկե, հետագա տարիներին, ժամանակի պահանջների թելադրանքով նահանգի կառավարման համակարգում ավելացել են

---

[1] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 91. ց. 1, գ. 3151, թ. 5, 7 շրջ.:
[2] Տե՛ս *КК на 1875 г.*, Тифлис, 1874, էջ 41:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 41–42:

նոր ստորաբաժանումներ, զուգահեռաբար աճել է և աշխատակիցների թվաքանակը:

Նահանգը բաժանված էր գավառների: Նշված տարում Երևանի նահանգը կազմված էր հինգ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Էջմիածնի գավառներից: Ամեն մի գավառ ուներ իր վարչական կենտրոնը: Վարչական այս կառույցը ղեկավարում էր նահանգապետի կողմից նշանակված գավառապետն իր մեկ կամ երկու տեղակալներով:

1) Երևանի գավառ՝ վարչական կենտրոնը ք. Երևան, գավառապետ՝ Վասակ Կամսարական, երկու օգնական, քարտուղար, գավառային բժիշկ, 2) Ալեքսանդրապոլի գավառ՝ վարչական կենտրոնը ք. Ալեքսանդրապոլ, գավառապետ՝ Զախար Զաչիկով, երկու օգնական, քարտուղար, գավառային բժիշկ, 3) Նոր Բայազետի գավառ՝ վարչական կենտրոնը ք. Նոր Բայազետ, գավառապետ՝ Կոնստանտին Սիլիչ, օգնական, քարտուղար, Քարվանսարայի ոստիկան պրիստավ, բժիշկ, 4) Էջմիածնի գավառ՝ վարչական կենտրոնը գ. Վաղարշապատ, գավառապետ՝ Եգ. Խան-Աղով, երկու օգնական, քարտուղար, բժիշկ, և 5) Նախիջևանի գավառ՝ վարչական կենտրոնը՝ ք. Նախիջևան, գավառապետ՝ Միխայիլ Ավդակով, երկու օգնական, քարտուղար, բժիշկ և Օրդուբադի ոստիկան պրիստավ[1]: Ինչպես կարելի է նկատել գավառների վարչական ապարատների կառուցվածքը գրեթե նույնն էր:

Վարչական տեսակետից գավառները բաժանված էին մահալների (ենթագավառների), իսկ վերջիններս՝ գյուղերի: Անդրկովկասում տեղական իշխանության մասին 1840 թ. օրենքը սահմանում էր վարչատնտեսական կառավարման մեկ աստիճան՝ գյուղական

[1] Տե՛ս նույն տեղում:

համայնք[1]: Յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ իր գյուղապետը, որին ընտրում էր համայնքի բնակչությունը: Մեծ թվով բնակչություն ունեցող գյուղերում ընտրում էին նաև գյուղապետի օգնական: 1885 թ. տեղական ինքնակառավարման մասին նոր օրենքով Երևանի նահանգում սկիզբ դրվեց գյուղական համայնքների խոշորացման գործընթացին՝ ստեղծվեցին, այսպես կոչված, գյուղական հասարակություններ: Վերջիններս ստեղծվում էին շրջակա մի քանի գյուղերի (փոքր, թե մեծ բնակչությամբ) և առանձին տնտեսությունների միավորման ճանապարհով[2]: Օրենքը գյուղական հասարակության կազմավորման համար սահմանում էր նաև պարտադիր մի շարք պայմաններ.

ա) կառույցի մեջ ընդգրկվող բնակավայրերն ինչպես միմյանց, այնպես էլ այդ կառույցի վարչական կենտրոնի հետ ունենան հաղորդակցության բանուկ ճանապարհներ, բ) վարչական հարմարավետ շենք, գ) բնակչության անհրաժեշտ թվաքանակ: Օրինակ, Երևանի նահանգում մինչև 2.000 տուն և ավելի քան 10 հազ. բնակիչ[3]:

Գյուղական հասարակությունը ղեկավարում էր տանուտերը (գալավարը), որին, իսկ մեծ համայնքներում նաև օգնականին, ընտրում էր համայնական ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին տվյալ գյուղական հասարակության մեջ մտնող բոլոր գյուղերի ծխատերերը: Տանուտերը ընտրվում էր միայն մեկ ժամկետով և իրավունք չուներ անընդմեջ երկրորդ ժամկետով վերընտրվելու: Տանուտերը հաստատվում էր նահանգապետի կողմից[4]: Տանուտերը պարտավոր էր կարգավորել գյուղերի միջև ծագած վիճելի հար-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թ. 30:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 30 շրջ.:
[4] Տե՛ս Մշակ, 29 դեկտեմբերի, 1898:

ցերը, զբաղվել հարկերի հավաքման, ջրանցքների անխափան աշխատանքի ապահովման և գյուղական հասարակությանը վերաբերող այլ խնդիրներով[1]: Գյուղական հասարակության ավագները և նրանց օգնականները հասարակական հիմունքներով աշխատող չինովնիկներ էին և այդ ծառայության դիմաց պետական միջոցներից չէին վարձատրվում: Նրանք ազատվում էին պետական հարկերից, տուրքերից և այլ պարհակներից, վարձատրվում էին համայքի հաշվին: Աշխատավարձի չափը որոշում էր տվյալ գյուղական հասարակության մեջ մտնող բոլոր գյուղերի ծխատերերի ընդհանուր ժողովը[2]:

Արդեն ասվել է, որ 1864 թ. նոյեմբերի 20-ի որոշմամբ համապետական մասշտաբով անցկացվեցին դատական բարեփոխումներ. դասային հին դատարանի փոխարեն ստեղծվեցին հաշտարար, շրջանային դատարաններ և դատաստանական պալատը[3], որոնց արդյունքում տեղերում գործող ոստիկանությունները զրկվեցին դատական իշխանությունից և այդ լիազորության մի մասն անցավ համայնական դատավորներին: Համայնական ժողովներն ընտրում էին երեք հոգուց կազմված համայնական դատավորներ, տալով նրանց լիազորություն՝ ըստ գյուղական կանոնադրության 72-րդ հոդվածի դատել համայնքներին պատկանող կողմերին մինչև 100 ռ. սահման ունեցող գործերը՝ քաղաքացիական գործառության վերաբերող և 30 ռ. ոչ ավելի (հոդված 75) քրեական գործունեության տեսակետից, որով հանցագործները ենթարկվում էին

---

[1] Տե՛ս **Ա. Մելքոնյան**, *Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին*, Երևան, 2003, էջ 199:

[2] Տե՛ս **С. Эгиазаров**, *Исследования по истории учреждений в Закавказие*, ч. I, Казан, 1889, էջ 100–101: *Հայ ժողովրդի պատմություն*, հ. VI, Երևան, 1981, էջ 17: **Ա. Մելքոնյան**, նշվ. աշխ., էջ 199: **Հ. Հարությունյան**, *Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.*, էջ 119:

[3] Անդրկովկասում այդ որոշումը գործի դրվեց 1868–1877 թթ.: Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, էջ 388:

տուգանքի մինչև 3 ռ., կամ հասարակական աշխատանքներ պետք է կատարեին մինչև 6 օր կամ բանտարկվելու էին մինչև 7 օր[1]:

1888 թ. մայիսի 10-ի օրենքով Երևանի նահանգի յոթ գավառները բաժանվեցին 21 ոստիկանական տեղամասերի, որից Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Էջմիածնի գավառներից յուրաքանչյուրը՝ չորս, Սուրմալուի գավառը՝ երեք, իսկ Շարուր-Դարալագյազի գավառը՝ երկու ոստիկանական տեղամասերի: Յուրաքանչյուր տեղամաս ղեկավարում էր ոստիկանական պրիստավը: Հավելենք, որ ոստիկանական վարչության պետը նշանակվում էր նահանգապետի, իսկ ոստիկանական պրիստավը՝ ոստիկանապետի կողմից՝ նահանգապետի համաձայնությամբ[2]:

Կարևոր ենք համարում նշել, որ Երևանի նահանգում զեմստվոյական հիմնարկությունների բացակայության պայմաններում ոստիկանությունը հանդիսանում էր ոչ միայն հասարակության անվտանգությունը պաշտպանող, այլ նաև նրա նյութական և հոգևոր կյանքին օգնող և աջակցող գործոն: Երևանի նահանգի տեղամասային ոստիկանական պրիստավը ղեկավարում էր միջինը 1.077 քառ. վերստ տարածք: Նրա տնօրինության տակ գտնվում էր 53 բնակավայր, 3.454 բնակչությամբ: Ոստիկանական տեղամասն ուներ 50-ից մինչև 90 վերստ երկարություն և 10–12-ից մինչև 20 վերստ լայնություն[3]:

Ոստիկանական պրիստավի տարեկան աշխատավարձը կազմում էր 1200 ռ.[4]:

Հետագա տարիներին Երևանի նահանգի ոստիկանական շրջանները կրել են էական փոփոխություններ: Այդ փոփոխությունները

---

[1] Տե՛ս Մշակ, 5 օգոստոսի, 1910: **Հ. Հարությունյան,** *Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ.*, էջ 120:

[2] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. VI, էջ 17:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 1, գ. 3151, թթ. 10–11:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 14:

ների պատկերը ըստ 1914 թ. վիճակագրության տրված է ստորև բերված աղյուսակում[1]:

Աղյուսակ 8

	Տարածություն		Գյուղական հասարակության թիվը	Գյուղերի թիվը	Տնտեսությունների թիվը
Ք. Երևան	քառ. վերստ 90	դես. 9450	-	-	-
Ոստիկանական տեղամաս					
Առաջին	718,98	749	3	56	4153
Երկրորդ	259,30	27010	3	43	4184
Երրորդ	632,92	65929	4	52	5027
Չորրորդ	1113,1	115947	6	63	4481
Ընդամենը	2724,3	283730	16	214	17845
Ք. Ալեքսանդրապոլ	90	9450	-	-	-
Առաջին	840,89	87593	7	37	4974
Երկրորդ	832,79	86746	5	46	4481
Երրորդ	815,50	84948	5	44	3876
Չորրորդ	897,52	93491	5	38	5133
Ընդամենը	3386,7	352778	22	165	18464
Ք. Նախիջևան	87	9135	-	-	-
Ք. Օրդուբադ	45	4725	-	-	-
Առաջին	660,62	68815	3	31	3277
Երկրորդ	1253,92	130617	4	47	3338
Երրորդ	1327,35	138263	3	37	3217
Չորրորդ	697,15	72620	4	52	3381
Ընդամենը	3939,04	410315	14	167	13213
Շարուր Դարա-լագյազ					

[1] Տե՛ս *ПКЭГ на 1914 г.*, էջ 2–3:

Առաջին	747,26	77839	7	63	5060
Երկրորդ	1890,24	196890	5	100	3583
Ընդամենը	2637,5	274729	12	163	8613
Ք. Նոր Բայազետ	20	2100	-	-	-
Առաջին	1071,35	111599	6	41	4529
Երկրորդ	650,45	67755	3	21	3404
Երրորդ	983,99	102499	3	24	3891
Չորրորդ	1416,97	147601	4	49	5395
Սևանա լիճ	1213,14	126400	-	-	-
Ընդամենը	9336,20	555854	16	135	17219
Սուրմալուի					
Առաջին	725,65	75589	4	61	6044
Երկրորդ	1214,24	126481	3	59	3176
Երրորդ	1207,20	125750	6	107	3056
Ընդամենը	3147,09	327820	13	227	12276
Էջմիածնի					
Առաջին	820,62	85482	5	32	4965
Երկրորդ	431,09	44905	5	64	6895
Երրորդ	984,43	102336	4	42	4554
Չորրորդ	1203,26	104506	4	78	3573
Ընդամենը	3237,4	337229	18	216	19987
Ընդամենը	24408,23	2542505	111	1287	107647

Աղյուսակի տվյալներից նկատելի է, որ 1914 թ. Երևանի նահանգի յոթ գավառների 111 գյուղական հասարակությունները բաժանված էին 25 ոստիկանական տեղամասերի՝ իրենց կազմում ունենալով 1.287 բնակավայր և 107.647 գյուղացիական տնտեսություն՝ զբաղեցնելով 24.408,23 քառ. վերստ կամ 2.542.505 դես. տարածք: Այդ թվում՝ Երևանի գավառին (գավառապետը՝ Կոնստանտին Առաքելով) բաժին էր ընկնում ոստիկանական չորս տեղամաս. 1) գ. Քանաքեռի (ոստիկանական տեղամասի պրիստավը՝ Եվսեի Կոժևնիկով), 2) գ. Աղամզալու (պրիստավը՝ տեղը թափուր է), 3) գ. Ղամարլու (տեղամասի պրիստավը՝ Նիկոլայ Լապերով), 4) գ. Դա-

վալու (տեղամասի պրիստավը՝ Ալեքսեյ Գաբիև), զբաղեցնում էր 2.724,3 քառ. վերստ կամ 283.780 դես., ուներ 214 բնակավայր և 16 գյուղական հասարակություն[1]:

Ոստիկանական առաջին տեղամասն իր մեջ ընդգրկում էր երեք գյուղական հասարակությունների, որոնց նստավայրերն էին՝ Քանաքեռը, Բաշգառնին և Արամուսը, երկրորդ ոստիկանական տեղամասի նույնքան գյուղական հասարակությունների նստավայրերն էին՝ Իմանշալուն, Փարաքարը և Նորագավիթը, երրորդը բաղկացած էր չորս գյուղական հասարակություններից՝ Ղամարլու, Կոյլասար, Օգուրբելու և Դվին-Ասորի նստավայրերով, չորրորդ ոստիկանական տեղամասը ընդգրկում էր հինգ գյուղական հասարակություններ, որոնց նստավայրերն էին՝ Դավալուն, Կարախաչը, Սադարակը, Ջիրմանիսը, Թորուն և Բեյուկ-Վեդին[2]:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ նշված 16 նստավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից կազմում էր՝ առաջին ոստիկանական տեղամասի համար համապատասխանաբար՝ 17,5 և 17,5 վերստ, երկրորդինը՝ 11,3 և 8 վերստ, երրորդինը՝ 24,7 և 7,3 վերստ, իսկ չորրորդինը՝ 65 և 28 վերստ[3]: Քաղաքային ոստիկանության վարչության նստավայրը ք. Երևանն էր (ոստիկանապետը՝ Ալեքսանդր Վիգուրան, պրիստավները՝ Մարկ Տերնոն և Իվան Վասիլևը, երեք տեղակալներով)[4]:

Ալեքսանդրապոլի գավառի (գավառապետը՝ Վիսսարիոն Դուդնիկով) ոստիկանական չորս տեղամասերը՝ 1) նստավայրը՝ գ. Մեծ Ղարաքիլիսա (պրիստավը՝ Դմիտրի Դմիտրիև), 2) նստավայրը՝ գ. Քյաֆթարլի (պրիստավը՝ Ասատուր Գրիգորյանց), 3) նստավայրը՝

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1914 г.*, Эривань, 1914, էջ 229:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[3] Հաշվարկը կատարվել է նույն տեղում, էջ 14-ի տվյալների հիման վրա:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 33:

ք. Ալեքսանդրապոլ (պրիստավը՝ Իլլարիոն Սուխորուկով), 4) նստավայրը՝ Աղին կայարան (պրիստավը՝ Լևոն Մելիք-Սարգսյան) ընդգրկում էին 3.386,7 քառ. վերստ կամ 352.778 դես. տարածք: Տնտեսությունների թիվը հաշվվում էր 18464, գյուղական հասարակություններինը՝ 22, իսկ բնակավայրերինը՝ 165[1]: Առաջին ոստիկանական տեղամասի գյուղական հասարակությունների նստավայրերն էին՝ Մեծ Բեքանդը, Նիկիտինոն, Մեծ Ղարաքիլիսան, Բոզիքենդը, Համամլուն, Վոսկրեսենովկան և Սարալը, երկրորդինը՝ Քավթարլուն, Հաջիխալիլը, Միրաքը, Մեծ Քափանակը և Ջաջուրը, երրորդինը՝ Կիզիլ-Կոչը, Իլլի-Ղարաքլիսը, Օրտաքիլիսան, Փոքր Ղարաքիլիսան և Կեֆլյուն, չորրորդինը՝ Արթիկը, Սոգուտլին, Հոռոմը, Թավշանոշլաղը, Մոլլագոչկան[2]: Գյուղական 22 հասարակությունների նստավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից կազմում էր՝ ոստիկանական առաջին տեղամասինը համապատասխանաբար՝ 63,6 և 20,2 վերստ, երկրորդինը՝ 27,4 և 22 վերստ, երրորդինը՝ 19 և 19 վերստ, չորրորդինը՝ 21,2 և 10,2 վերստ[3]:

Ալեքսանդրապոլ քաղաքն ուներ առանձին քաղաքային ոստիկանական երկու պրիստավ, որպիսիք էին՝ Դիոնիսիի Սիմոնովը և Աբուբեկիր Բատչաևը[4]:

Նոր Բայազետի գավառը (գավառապետը՝ Սեմյոն Ֆիլիպով) ուներ չորս ոստիկանական տեղամաս: Առաջին տեղամաս, նստավայրը՝ գ. Ներքին Ախտա (պրիստավը՝ Ալեքսանդր Շեյնիչ), երկրորդ տեղամաս, նստավայրը՝ գ. Ելենովկա (պրիստավը՝ Զախար Ցալկալամիձե), երրորդ տեղամաս, նստավայրը՝ գ. Ղարանլուղ (պրիստավը՝ Ալեքսանդր Սմիռնով), չորրորդ տեղամաս, նստավայ-

---

[1] Տես նույն տեղում, էջ 230:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 17–18:
[3] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի էջ 17–18 տվյալների հիման վրա:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 30:

ը՝ գ. Բասարգեչար (պրիստավը՝ Ավետիս Տեր-Գրիգորով)[1]: Ոստիկանական չորս տեղամասերն ընդգրկում էին գյուղական 16 հասարակություն, 135 բնակավայր, 17.219 տնտեսություն, զբաղեցնելով 5.336,20 քառ. վերստ կամ 555.854 դես. (Սևանա լճի հետ միասին) տարածք: Ոստիկանական առաջին տեղամասի գյուղական հասարակությունների նստավայրերն էին՝ Ալափարսը, Քյանքյանը, Ներքին Ախտան (ռուսական), Ներքին Ախտան (հայկական), Ռնդամալը և Թայչարուխը: Երկրորդինը՝ Ելենովկան, Չոչոը, Աղզիբիրը: Երրորդինը՝ Դալիղարդաշը, Գելը, Ղարանլուղը: Չորրորդինը՝ Քելապիկիրլանը, Բասարգեչարը, Մեծ-Մազրան և Ջիլը[2]: Ոստիկանական առաջին տեղամասի նստավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից հասնում էր համապատասխանաբար՝ 59 և 15 վերստի, երկրորդինը՝ 37,5 և 9,5 վերստի, երրորդինը՝ 22,3 և 23,5 վերստի, չորրորդինը՝ 77 և 26 վերստի[3]: Հավելենք նաև, որ Նոր Բայազետ քաղաքը ևս ուներ ոստիկանական երկու պրիստավ ի դեմս՝ Ալեքսանդր Հայրապետյանցի և Իվան Վիլենգժանինի[4]:

Ոստիկանական չորս տեղամաս ունեցող գավառների թվում էր նաև Նախիջևանի գավառը (գավառապետը՝ Պլատոն Կավրիև): 1-ին ոստիկանական տեղամասի նստավայրը՝ ք. Նախիջևան (պրիստավը՝ Պյոտր Լուկասևիչ), 2-րդ տեղամասի նստավայրը՝ գ. Ջագրի (պրիստավը՝ Բոլեսլավ Դուշինսկի), 3-րդ տեղամասի նստավայրը՝ գ. Աբրակունիս (պրիստավը՝ Դանիել Կալինովսկի), 4-րդ տեղամասի նստավայրը՝ ք. Օրդուբադ (պրիստավը՝ Աբաս Կուլի Աղա Թահիրով): Քաղաքային պրիստավները՝ Միր Մուրադ-բեկ օղլի Կենգեր-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 31:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 16–17:
[3] Հաշվարկը կատարվել է նույն տեղում, էջ 16–17 տվյալների հիման վրա:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 31:

լինսկին և Պրոկոֆիի Բենդուկիձեն[1]: Գավառը զբաղեցնում էր 3.939,04 քառ. վերստ կամ 410.315 դես. տարածք, ընդգրկում էր գյուղական 14 հասարակություն, 167 բնակավայր և 13.213 տնտեսություն: Առաջին ոստիկանական տեղամասի գյուղացիական երեք հասարակությունների նստավայրերն էին՝ Թումբուլը, Կիվրագը և Շախմախմուդը, երեկրորդինը՝ Ջագրին, Կարամալինովկան, Իտկրանը և Շախբուզը, երրորդինը՝ Չեշմաբասարը, Ղազանչին, Աբրակունիսը, չորրորդինը՝ Վերին Ագուլիսը, Թիվան, Վանանդը և Վերին Ազան[2]: Առաջին ոստիկանական շրջանի գյուղական հասարակությունների նստավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից հասնում էր համապատասխանաբար՝ 14,3 և 14,3 վերստի, երկրորդինը՝ 34,3 և 28,7 վերստի, երրորդինը՝ 23 և 12,5 վերստի և չորրորդինը՝ 70,5 և 23, 5 վերստի[3]:

Ոստիկանական չորս տեղամասից բաղկացած Էջմիածնի գավառը (գավառապետը՝ Լեոնիդ Լեմմերման) իր կազմում ուներ գյուղական 18 հասարակություն, 216 բնակավայր և 19.987 տնտեսություն, ընդգրկում էր 3.237,4 քառ. վերստ կամ 337.229 դես. տարածք: 1-ին ոստիկանական տեղամասի նսավայրն էր գ. Վաղարշապատը (պրիստավը՝ Պավել Պոպով), 2-րդին՝ գ. Աշտարակը (պրիստավը՝ Ալեքսանդր Առաքելյանց), 3-րդին՝ գ. Ղուրդուղուլին (պրիստավը՝ Իվան Ներյասով), 4-րդին՝ գ. Թալին-Հայկականը (պրիստավը՝ Խաչատուր Բաբասով)[4]: Ոստիկանական առաջին տեղամասի գյուղացիական հինգ հասարակությունների նստավայրերն էին հանդիսանում՝ Վաղարշապատը, Այնթափը, Օշականը, Ներքին Խաթուն-Արխը և Չոբանքարը, երկրորդինը՝ Աշտարակը, Ղարաքի-

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1914 г.*, էջ 30–31:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 19:
[3] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի. էջ 19 տվյալների հիման վրա:
[4] Տե՛ս *ПКЭГ на 1914 г.*, էջ 332:

լիսան, Եղվարդը, Բաշ-Աբարանը և Փարպին, երրորդինը՝ Ղուրդուղուլին, Սարդարապատը, Մեծ-Շագրիարը, Թալինը և Ալագյազ կայարանը: Առաջին տեղամասի բնակավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից հասնում էր համապատասխանաբար՝ 9 և 9 վերստի, երկրորդինը՝ 30 և 20 վերստի, երրորդինը՝ 21 և 11 վերստի, չորրորդինը՝ 47,5 և 32 վերստի[1]:

Ոստիկանական երեք տեղամասից, գյուղացիական 13 հասարակությունից, 227 բնակավայրից և 12.276 տնտեսությունից բաղկացած Սուրմալուի գավառը (գավառապետը՝ Եվգենի Իոնին) ընդգրկում էր 3.147,09 քառ. վերստ կամ 327.820 դես. տարածք: Ոստիկանական 1-ին տեղամաս, նստավայրը՝ գ. Իգդիր (պրիստավը՝ Պյոտր Իգնատև), 2-րդ տեղամաս, նստավայրը՝ գ. Դաշբուռն (պրիստավը՝ Իսիդոր Կվաշալի)[2], 3-րդ տեղամաս, նստավայրը՝ գ. Կուլպի (պրիստավը՝ Իվան Մորդվինցև): Ոստիկանական առաջին տեղամասի գյուղական հասարակությունների նստավայրերն էին՝ Իգդիրը, Ալի Կամարլուն, Եվջիլարը և Ալիքոչակը, երկրորդինը՝ Դաշբուռնը, Արալ-Բաշքենդը, Բուլախ-Բաշը, երրորդինը՝ Օգրուջին, Կուլպին, Ջիվանլու-թաթը, Գյուլլուջան[3]: Առաջին տեղամասի գյուղական հասարարությունների նստավայրերի միջին հեռավորությունը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից հասնում էր համապատասխանաբար՝ 12,3 և 12, 3 վերստի, երկրորդինը՝ 27,6 և 14,5 վերստի, երրորդինը՝ 57,8 և 24 վերստի[4]:

Ոստիկանական տեղամասերի թվաքանակով ամենափոքրը Շարուր-Դարալագյազի գավառն էր (գավառապետը՝ Զեյիդ – բեկ Նաբիբեկով): 2.637,5 քառ. վերստ կամ 274.729 դես. տարածք, 12

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի էջ 15–16 տվյալների հիման վրա:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 32:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 3:
[4] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի էջ 15-ի տվյալների հիման վրա:

գյուղական հասարակություն, 163 բնակավայր և 8643 տնտեսություն ունեցող գավառը բաժանված էր ոստիկանական երկու տեղամասերի: 1-ին, նստավայրը՝ գ. Բաշնորաշեն (պրիստավը՝ Անդրեյ Շուկին), 2-րդ, նստավայրը՝ գ. Քեշիշքենդ (պրիստավը՝ Հասան Վեզիրով)[1]: Գյուղական 12 հասարակությունների նստավայրերն էին՝ ոստիկանական առաջին տեղամասի համար Բաշնորաշենը, Կուշչի-Դեմուրչին, Ենգիջան, Յայջին, Փուսիանը, Խանլուխլյարը, երկրորդինը՝ Արփան, Քեշիշքենդը, Փաշալուն, Գնդեվազը և Ղասանքենդը: Առաջին ոստիկանական տեղամասի գյուղական հասարակությունների նստավայրերը ոստիկանական վարչությունից և պրիստավի նստավայրից միջինը գտնվում էին համապատասխանաբար՝ 15 և 15, իսկ երկրորդինը՝ 60,2 և 27 վերստ հեռավորության վրա[2]:

Վերը շարադրանքից դժվար չէ նկատել, որ մեր ուսումնասիրության առարկա Երևանի նահանգի նահանգային, գավառային, ոստիկանական և այլ իշխանության մարմիններում էթնիկ առումով հայերը փոքր տոկոս են կազմել:

*

* *

XIX դարի երկրորդ կեսից Ռուսաստանում իրականացված մի շարք բարենորոգումների շարքին է դասվում նաև 1870 թ. հունվարի 16-ին հրապարակված նոր «Քաղաքային կանոնադրությունը»: Կանոնադրության ընդունումով Կայսրության կենտրոնական շրջաններում ստեղծվեցին քաղաքների կառավարման ոչ դասային, քաղաքային ինքնավարության ընտրովի ներկայացուցչական մարմիններ՝ քաղաքային դուման և քաղաքային վարչությունը: Ինքնավարության գործադիր մարմինը՝ քաղաքային վարչությունը և կար-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 33:
[2] Հաշվարկը կատարվել է ըստ նույն աղբյուրի էջ 19 տվյալների:

գադրիչ մարմին քաղաքային դուման պետք է ընտրվեին չորս տարին մեկ անգամ, ըստ գույքային ցենզի: Թեկնածուների համար սահմանված էր երեք կարգ՝ առաջինի մեջ մտնում էին խոշոր արդյունաբերողները, հողատերերը, առևտրականները և կառավարիչները: Երկրորդ խումբը կազմում էր միջին խավը, իսկ երրորդը՝ ցածր վճարունակ քաղաքացիները[1]: Ընտրությունը կատարվում էր ըստ հերթականության՝ սկզբից ընտրում էին առաջին դասի թեկնածուներին, ապա՝ երկրորդին, որից հետո՝ երրորդին[2]: Քաղաքային դումայի պատգամավորներին ընտրում էին քաղաքի բնակչությունից միայն հարկ վճարողները[3], իսկ ընտրելու և ընտրվելու իրավունք չունեին հանցագործները, քրեական դատապարտվածները, սնանկացածները, միկիտանները (ոգելից խմիչք վաճառողները), անմեղսունակները և հոգևոր դասի ներկայացուցիչները[4]: Ընտրվելուց հետո ձայնավորները և լիազորները ձևավորում էին իրենց խորհուրդներին: Ըստ գործող կարգի, նահանգապետը կամ նահանգային վարչությունը հաստատում էր ընտրված վարչության կազմը, որից հետո վերջինս իր միջից ընտրում էր քաղաքագլխին և նրա տեղակալին: Քաղաքային դուման և քաղաքային վարչությունը ղեկավարվում էին քաղաքագլխի կողմից:

Հարկ է նշել, որ նահանգապետը կամ նահանգային վարչությունը, չարաշահելով քաղաքային վարչության և քաղաքագլխի հաստատման իրենց վերապահված իրավունքները[5], շատ հաճախ ան-

---

[1] Տե՛ս В. Тунян, *Политика самодержавия России в Закавказье XIX – нач. XX вв.* Часть пятая. 1877–1900 гг., Ереван, 2008, էջ 26:

[2] Տե՛ս Մշակ, 27 ապրիլի, 1889:

[3] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. III, գիրք առաջին, էջ 389:

[4] Տե՛ս Մշակ, 6 նոյեմբերի, 1896:

[5] 1892 թ. հուլիսի 11-ին ընդունված նոր «Քաղաքային կանոնադրության» համաձայն նահանգապետն իրավունք ուներ ուղղակի վերահսկողություն հաստատել հասարակական կառավարման վրա՝ խառնվել քաղաքային ինքնավարության բոլոր գործերին, քննության առնել պաշտոնատար անձի նպատակահարմարության հարցը, անհրաժեշտությանն դեպքում պարտավանքի ենթարկել նրան, իսկ առանձին

վավեր էին ճանաչում այդ ընտրությունների արդյունքները և անցկացնում էին նոր ընտրություններ[1]: Ի դեպ, օրենքով քաղաքային վարչության անդամներն իրենց պաշտոնում հաստատվելուց հետո իրավունք ունեին երկու անգամ ընտրություն կատարել թե՛ քաղաքագլխի և թե՛ նրա տեղակալի համար: Երրորդ անգամ լիազորները կորցնում էին իրենց ընտրական իրավունքը, երբ երկրորդ ընտրությունը անհետևանք էր անցնում, հետևաբար այդ դեպքում նահանգապետը ինքն էր լիազորված լինում իր կողմից նշանակել քաղաքային վարչության պաշտոնյային[2]:

Նշենք, որ քաղաքային դուման և քաղաքային վարչությունը զբաղվում էին իրենց քաղաքի բարեկարգման, տնտեսության, կենցաղասպասարկման, առողջապահության, առևտրի, կրթամշակութային, ներքին կարգ ու կանոնի և այլ հարցերով:

«Քաղաքային կանոնադրության» մասին նոր օրենքն Անդրկովկասի երկրամասում առաջինը կիրառվեց Թիֆլիսի նահանգում:

1875 թ. հունվարի 1-ին ընտրվեց Թիֆլիսի քաղաքային դուման: Օրենքը Երևանի նահանգի վրա տարածվեց ավելի քան կես տարի անց: 1876 թ. հուլիսի 24-ին Երևանի նահանգապետ Մ. Ռոսլավլևը գրավոր դիմում է Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչին՝ միայն Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում հասարակական կառավարում մտցնելու հնարավորության մասին, այն հիմնավորմամբ, որ այդ քաղաքների տարեկան եկամտի կանխիկ մնացորդը կազմում է համապատասխանաբար՝ 4.463 ռ. 93 կոպ. և 4.861 ռ. 69 կոպ.[3]: Ուշագրավ է, որ նահանգապետը միաժամանակ

դեպքերում նաև հեռացնել զբաղեցրած պաշտոնից: Տե՛ս **Բ. Տունյան**, նշվ. աշխ., էջ 35: Մշակ, 26 հուլիսի, 1912:

[1] Մանրամասն տե՛ս **Հ. Հարությունյան**, *Նոր Բայազետի գավառ 1828–1913 թթ.*, էջ 125–126:

[2] Տե՛ս Մշակ, 26 հուլիսի, 1912: **Հ. Հարությունյան**, *Նոր Բայազետի գավառ 1828–1913 թթ.*, էջ 121:

[3] Տե՛ս **Բ. Տունյան**, *Политика самодержавия России в Закавказье XIX – нач. XX вв.*, Часть пятая, 1877–1900 гг., Ереван, 2008, էջ 24:

հնարավոր է համարում Կանոնադրությունը կիրառել միայն Երևան քաղաքի համար, քանի որ, նրա կարծիքով, Ալեքսանդրապոլ քաղաքը չունի քաղաքագլխի պաշտոնի համար համապատասխան թեկնածու[1]: 1877 թ. մարտի 29-ին Կովկասի փոխարքան հանձնարարում է Երևանի նահանգապետին սկսել նախապատրաստական աշխատանքներն Երևան քաղաքում մտցնելու հասարակական կառավարում[2]: Այլ խոսքով՝ ընտրել քաղաքային դուման և քաղաքային վարչություն: Օրենքի պահանջով քաղաքային դումայում ձայնավորների ընդհանուր տեղերի 2/3-ը պետք է զբաղեցնեին քրիստոնյաները[3]: Նախապատրաստական աշխատանքների համար ստեղծվեց հանձնաժողով Երևանի գավառապետ Վասակ Կամսարականի նախագահությամբ[4]: Ընտրվեց Երևան քաղաքի դուման: Ըստ գործող օրենքի դուման պետք է ընտրեր քաղաքային վարչություն և վարչության ղեկավար, որը միաժամանակ հանդիսանալու էր Երևանի քաղաքագլուխը: Երևանի քաղաքագլխի համար առաջադրվեց Վ. Կամսարականի թեկնածությունը: Դրանից հետո առաջ քաշվեց նաև պրոգիմնազիայի ուսուցիչ Իվան Կորգանովի թեկնածությունը: Նահանգապետ Ռոսլավլևը Երևանի հասարակության երևելի անձանց և իշխանության ներկայացուցիչների հետ անձնական հանդիպումներից հետո պաշտպանեց Ի. Կորգանովի թեկնածությունը և 1877 թ. հունիսի 4-ին առաջարկեց Կորգանովին զբաղեցնել քաղաքագլխի պաշտոնը:

1879 թ. ապրիլի 15-ին Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը գրավոր կարգադրություն արեց՝ հոկտեմբերի 1-ին բացել

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 25: 1889 թ. Ընդունված օրենքը սահմանեց, որ այսուհետև քաղաքային դումայի ձայնավորների ամբողջ թվի կեսը կարող են լինել մահմեդականներ: Տե՛ս Մշակ, 21 փետրվարի, 1889:

[4] Տե՛ս В. Тунян, նշվ. աշխ., էջ 25:

Երևանի դուման[1]: Նշված օրը այն բացվեց: Նույն օրը փոխարքան այդ կապակցությամբ շնորհավորել է Երևան քաղաքի բնակչությանը և ցանկացել է դումային հաջող գործունեություն[2]:

«Մշակ» թերթը ուշագրավ տեղեկություն է հաղորդում Երևանի քաղաքային դումայի անդրանիկ նիստում քննարկված հարցերից մեկի մասին: Թերթն իր առաջին էջում գրել է. «1879 թուականի հոկտեմբերի 1-ին բացվեցաւ քաղաքային ինքնավարութիւնը, որ քննելով քաղաքից անցնող զօրքերի բնակարանների հարցը[3], հարկաւոր համարեց քաղաքային ազատ գումարներ չունենալու պատճառով այդ ծախսը ծածկելու համար հաւաքել բնակիչներից պօլիցիայի որոշած 10.000 ռ. տեղ 8.215 ռ. այն ձևով, ինչպէս որոշել էր պօլիցիան, այսինքն այդ գումարի 1/2 հայերից, իսկ 2/3 մամեդականներից»[4]:

Նահանգի մյուս՝ Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան և Օրդուբադ քաղաքները, որոնք հասկանալի պատճառներով ձեռք չբերեցին ինքնավարության կարգավիճակ, նրանց գործունեությունը, նախկինի նման, ղեկավարում էին քաղաքի լիազորը և ավագների խորհուրդը:

Ժամանակի ընթացքում սոցիալ-տնտեսականի և հոգևոր-մշակութայինի հետ մեկտեղ քաղաքի վիճակի կայունացման, կառավարման կատարելագործման, նոր խնդիրների լուծման հրամայականով փոփոխություններ կատարվեցին նաև Երևանի նահանգի մյուս քաղաքների կառավարման կառուցվածքում: Այդ ճանապարհին առաջին քայլը դարձավ քաղաքային ինքնավարության հաս-

---

[1] Մանրամասն տե՛ս **В. Туман**, նշվ. աշխ., էջ 25: Մշակ, 9 մարտի, 1882:

[2] Տե՛ս **В. Туман**, նշվ. աշխ., էջ 25:

[3] 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Երևան քաղաքով անցնող զորքի համար ոստիկանական վարչությունը տներ, քարվանսարաներ և գոմեր վարձեց, որոնց տերերին ժամանակին չվճարեց: 1879 թ. մայիսի 17-ին ոստիկանական վարչությունը որոշեց այդ բնակատերերին վճարել 10.000 ռ.: Տե՛ս Մշակ, 9 մարտի, 1882:

[4] Տե՛ս Մշակ, 9 մարտի, 1882:

տատումը: 1893–1894 թթ. Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներին շնորհվեց քաղաքային ինքնավարության կարգավիճակ: 1894 թ.[1] Նոր Բայազետի գավառապետ Չերքեզովի համառ ջանքերի շնորհիվ քաղաքին տրվեց ինքնավարության կարգավիճակ[2]: Սեպտեմբերի 29-ին ոստիկանության շենքի բակում, բացօդյա, կայացավ քաղաքի լիազորների ընտրությունը: Գավառապետը համառոտ կերպով բացատրելով ժողովրդին ինքնավարության նշանակությունը, ասաց հետևյալը. «Կայսերական բարձրագույն բարեհաճությամբ մեր քաղաքին տրվում է ինքնավարություն, դուք պետք է ձեր միջից ընտրեք 15 լիազորներ և 3 անձնափոխներ»: Այնուհետև Չերքեզովը հաղորդեց. «Մինչև հիմա պոլիցիան էր կառավարում քաղաքային գործերը, սրանից հետո քաղաքային գործերն անցնում են ավագի և լիազորների ձեռքը. դուք պետք է աշխատեք ընտրել հասկացող և հուսալի մարդիկ, որոնք հավատարմությամբ ծառայեն հասարակությանը»[3]: 524 ընտրողներից ներկա էին 110 հոգի, բացակայում էին գլխավորապես հողագործները: Առաջադրվեցին 64 թեկնածուներ: Ընտրվեցին 15 լիազորներ և 3 անձնափոխներ՝ Հ. Մամիկոնյանը, Հ. Խաչատրյանը, Ստ. Բատիկյանը, Խ. Բաղամյանը, Ն. Արևշատյանը, Հ. Աֆրիկյանը, Գ. Դայանը, Ա. Փոստոյանը, Գ. Բուռնազյանը, Ա. Բուռնազյանը, Խ. Բունիաթովը և այլոք, իսկ անձնափոխներ՝ Գ. Քոչարյանը, Ս. Աֆրիկյանը և Գ. Դաբաղյանը[4]:

Նահանգապետի կողմից հաստատվելուց հետո լիազորները քաղտնի քվեարկությամբ ընտրեցին ավագ և տեղակալ: Ավագ ընտրվեց Հարություն Մամիկոնյանը, իսկ տեղակալ՝ Գևորգ Արծ-

---

[1] Մեկ այլ տեղ նշված է 1896 թ., որը տեխնիկական վրիպակ է: Տե՛ս **Հ. Հարությունյան,** *Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.*, էջ 125:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2174, թ. 9: Մշակ, 10 հոկտեմբերի, 1896:

[3] Մշակ, 10 հոկտեմբերի, 1896:

[4] Այլ աղբյուրներում նշված է, որ ընտրվել են 6 լիազորներ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2174, թ. 9:

ռունին[1]: Հետագա տարիներին ավագի պաշտոնը զբաղեցրել են Գ. Արծրունին, Հ. Տեր-Սահակյանը, Ստ. Բատիկյանը և այլոք:

1894 թ. սեպտեմբերի 24-ին Ալեքսանդրապոլի գավառապետը դիմում է Երևանի նահանգապետին թույլատրելու անցկացնել քաղաքի դումայի ձայնավորների ընտրություն: Դումայի պատգամավորներ ընտրվեցին Տիգրան Յուզբաշյանը, Հովհաննես Գեղամովը, Արտակ Տեր-Ղազարովը, Հակոբ Տեր-Սիմոնովը, Թաթոս Ծաղիկյանը, Վասիլի Վարդանովը, Սեթ Ֆահրադյանը և այլոք[2]: Նույն թվականին ինքնավար դարձան նաև Նախիջևան և Օրդուբադ քաղաքները:

Այսպիսով, 1890-ական թվականների առաջին կեսերին Երևանի նահանգի հինգ քաղաքները կառավարվում էին ընտրովի մարմինների՝ քաղաքային դումայի և քաղաքային վարչության կողմից, ինչը լուրջ քայլ էր դեպի ժողովրդավարություն անցման տեսակետից: Այլ կերպ ասած՝ ընտրությունների ճանապարհով իշխանության մարմիններ ձևավորելը շրջադարձային իրադարձություն էր ինչպես Երևանի նահանգի ամբողջ բնակչության կյանքում ընդհանրապես, այնպես էլ քաղաքային բնակչության համար մասնավորապես: Խոսքն այն մասին է, որ օրենքի կիրարկումով քաղաքային բնակչության լայն շերտերն իրավունք էին ստանում ուղղակի կամ ներկայացուցչական խողովակներով մասնակից դառնալ քաղաքի կառավարման և գործունեության աշխատանքներին: Հավելենք, որ այս ամենից բացի, քաղաքային ինքնավարությունը խթանում էր բնակչության հասարակական-քաղաքական ակտիվությանը և նպաստում հանրության հանդեպ յուրաքանչյուրի պարտքի գիտակցման պատասխանատվության բարձրացմանը: Վերոգրյալից դժվար չէ եզրակացնել, որ քաղաքային դումայի և վարչության

---

[1] Տե՛ս Մշակ, 22 փետրվարի, 1897: Հ. Հարությունյան, *Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.*, էջ 125:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2173, թթ. 2–3:

գործունեության արդունավետությունն ուղղակի և անմիջականորեն կապված էր ձայնավորների որակից: Այսինքն՝ եթե ձայնավորների ընտրությունը հաջող է կատարվել, դումայի մեջ ընդգրկվել են բանիմաց, պրոֆեսիոնալ և նվիրյալ մարդիկ, իսկ քաղաքագլխի աթոռն էլ զբաղեցրել է խելացի, ընդունակ, ժողովրդի ձայնին ականջալուր և մեծ եռանդի տեր մարդ, ապա հաջողությունները կդառնան անխուսափելի: Նկատի ունենալով նաև այս հանգամանքը «Մշակ» թերթն իր մարտի 16-ի համարում ընդգծում էր. «Շուտով այդ քաղաքում (Երևանում – Հ.Հ.) մտցվելու է նոր քաղաքային ինքնավարություն. Հույս ունենք, որ երևանցիները զգույշ կլինեն ձայնավորների ընտրության մեջ, որովհետև լավ կամ վատ ընտրությունից կախված է քաղաքի բարեկարգ դրությունը և ձայնավորները մեծ գործ և նշանավոր պատասխանատվություն պետք է հանձն առնեն: Հարկավոր է ընտրել թարմ և նոր ուժեր»[1]:

Արդյոք, ընտրող զանգվածն այս գիտակցումով է կատարել իր ընտրությունը, իհարկե, երբեմն, ոչ: Իբրև ասվածի ապացույց հարկ եմ համարում մեջբերել նույն «Մշակ» թերթի մի գնահատականը տրված Երևան քաղաքի 1886 թ. դումայի ձայնավորների որակական կազմին: «Երևանի դումայի այժմեան ձայնաւորները, - որոնք եթե չենք սխալվում, 65 հոգի են, թուրքեր և հայեր,- մեծ մասամբ անընդունակ են իրանց պաշտոնի էութիւնը հասկանալու: Նրանցից շատերը, մանաւանդ թուրք ձայնաւորների ահագին մեծամասնութիւնը, զուրկ լինելով որեւէ կրթութիւնից, զուրկ լինելով քաղաքի շահերը ճշմարիտ կերպով հասկանալու ընդունակութիւնից, զուրկ լինելով վերջապես իրենց քաղաքի համար գործելու եռանդից, ոչինչ օգտավէտ գործունեութիւն չեն ցոյց տուել իրենց ձայնաւոր եղած ժամանակի ընթացքում»[2]: Այնուհետև թերթը հայտնում է, որ

---

[1] Մշակ, 16 սեպտեմբերի, 1876:
[2] Մշակ, 5 մարտի, 1888:

ձայնավորներից շատերը շատ քիչ են հաճախել դումայի նիստերին. շատերը բոլորովին չեն էլ հաճախել: Օրինակ, 1886 թ. առաջին կիսամյակում Երևանի քաղաքային դուման ունեցել է 21 նիստ: Ոչ մի ձայնավոր, նույնիսկ քաղաքագլուխը այդ նիստերին ներկա չի եղել, շատ շատերը ներկա են եղել վեց, չորս և երկու անգամ, շատերը մի մի անգամ, իսկ շատերն էլ երբեք[1]: Անշուշտ, այս հանգամանքը չէր կարող ազդեցություն չունենալ վարչության գործունեության վրա:

Հատկանշական է, որ հասարակության զանազան շրջաններում միշտ արտահայտվել են դժգոհություններ դումայի անարդյունավետ աշխատանքի դեմ: Ժամանակի մամուլի էջերը և արխիվային վավերագրերը լի են բազում օրինակներով, երբ ընտրողներն իրավացիորեն դժգոհել են դումայի կամ քաղաքային վարչության անգործությունից, ձայնավորների թույլ տված չարաշահումներից, պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքից, հովանավորչության, ինչու չէ ընտրություններում տեղ գտած թերությունների և այլնի մասին: Ժամանակի մամուլը և արխիվային վավերագրերը հարուստ են այդպիսի օրինակներով: Իբրև ասված ապացույց, հարկ եմ համարում դիմել մամուլի հրապարակումներին: «Մշակ» թերթը գրել է. «Երևանի քաղաքային դումայի կազմակերպության վերանորոգելը և նոր ընտրությունների լինելը մի անհրաժեշտ հարց է դարձել բոլոր երևանցիների համար: Ընտրությունը պետք է լիներ անցյալ տարվա մայիսին, համաձայն քաղաքային կանոնադրության 16-րդ հոդվածի, որովհետև չորս տարին լրանում էր այդ միջոցին, բայց ձայնավորիների մի մասը ենթարկված լինելով զանազան դեր խաղացող և ճարպիկ անձնավորություններին, ընտրությունը հետաձգվեց մինչև հոկտեմբեր: Սակայն հոկտեմբերին ընտրությունները չկայացան և այն հե-

[1] Տե՛ս նույն տեղում:

տաձգվեց անորոշ ժամանակով»[1]: Մեկ այլ հրապարակման մեջ կարդում ենք. «Սրտի ցաւով պետք է ասենք, որ ընդհակառակն, մեզանում ինքնավարութեան կանոնադրութիւնը բոլորովին ծալած, մէկ անկիւնում է դրած, նրա վրա շատ քիչ նայող կայ և քաղաքային գործերում կատարեալ դեսպոտական ձև է ընդունած կանոնադրութեան հետևելու փոխարէն»[2]: «...Բայց հարցնում եք,- շարունակում է թերթը,- ուր մնացին Դալմայ անվանված քաղաքամասի հարյուրավոր դեսյատին քաղաքի հողերը, որոնց վրա հարյուրավոր այգիներ, ծառատնկեր են գցել զանազան մարդիկ և իրենց են սեփականացրել»[3]:

Վերոշարադրյալից հակված չենք անտեսելու կամ նսեմացնելու ուսումնասիրվող տարիներին Երևանի նահանգի քննության առարկա ընտրովի մարմինների կատարած հիրավի մեծածավալ աշխատանքներն իրենց քաղաքների բազում խնդիրների լուծման ուղղությամբ: Այստեղ հարկ չեմ համարում այդ հարցերին անդրադառնալ, քանի որ դրանք առանձին տարիների կտրվածքով լուսաբանվել են Վ. Թունյանի կողմից[4]: Մեկ այլ խնդրի մասին ևս: Նկատի ունենալով ուսումնասիրության ծավալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ տարիների ընթացքում քաղաքային դուման բովանդակային, կառուցվածքային և գործառույթների առումով գրեթե փոփոխություններ չի կրել, ուստի բավարարվենք միայն նշելով, որ Երևանի քաղաքային դուման իր ստեղծման օրվանից մինչև 1917 թ. ընտրվել է ավելի քան ինն անգամ, Ալեքսանդրապոլինը՝ վեց, նույն չափով էլ՝ Նոր Բայազետ, Նախիջևան և Օրդուբադ քաղաքների լիազորներինը:

---

[1] Մշակ, 14 հունվարի, 1889:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս В. Тунян, նշվ. աշխ., էջ 36-38:

Այդուհանդերձ, հետաքրքիր է աղյուսակի տեսքով ցույց տալ գործող ընտրակարգի հիման վրա Երևանի նահանգի քաղաքների վերջին երեք ընտրությունների արդյունքում ձևավորված այդ մարմինների պատկերը թվերի տեսքով[1]:

Աղյուսակ 9

	1910 թ.					1914 թ.					1917 թ.				
Քաղաքներ	Հայ	Մուսուլման	Ռուս	Վրացի	Ընդամենը	Հայ	Մուսուլման	Ռուս	Վրացի	Ընդամենը	Հայ	Մուսուլման	Ռուս	Վրացի	Ընդամենը
Նյութան Քաղաքագլուխը	Մելիք Աղամալով					Իվան Մելիք Աղամալյան					Սմբատ Խաչատուրյան				
Ձայնավորներ	37	10	2	-	49	35	13	1	-	49	37	16	1	-	54
Քաղաքային վարչություն	13	-	4	-	17	13	2	2	-	17	12	-	5	-	17
Անչանգրաղ քաղաքագլուխը	Իոսիֆ Տիգրանյան					Գեորգիա Կամսարական					Գերասիմ Կամսարական				
Ձայնավորներ	41	-	1	1	43	37	-	4	1	42	29	-	3	-	32
Քաղաքային վարչություն	20	-	1	-	21	16	-	2	-	18	20	-	6	-	26
Նոր Բայազետ քաղաքի ավագը	Ստեփան Բատիկյան					Գևորգ Արծրունի					Գևորգ Արծրունի				
Լիազորներ	15	-	-	-	15	9	-	-	-	9	8	-	-	-	8
Քաղաքային վարչություն	2	-	-	-	2	2	-	-	-	2	2	-	-	-	2
Նախիջևան քաղաքի ավագը	Բեյուկ խան Նախիջևանսկի					Նազարի Խան օղլի Նախիջևանսկի					Խան Նախիջևանսկի				
Լիազորներ	4	6	-	-	10	5	8	-	-	13	-	6	-	-	6
Քաղաքային վարչություն	-	1	-	-	1	-	2	-	-	2	-	2	-	-	2
Օրդուբադ քաղաքի ավագը	Ռիզա-Կուլի Հաջի Հուսեյին օղլի Ռիզան					Ռիզա-Կուլի Հաջի Մահմեդ Հուսեյին օղլի Ռիզան					Հաջի Բայդար Մաշադի Բաբիրով				
Լիազորներ	4	8	-	-	12	4	8	-	-	12	4	9	-	-	13
Քաղաքային վարչություն	-	1	-	-	1	-	2	-	-	2	-	1	-	-	1

[1] Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է *ПКЭГ на 1910 г.*, էջ 37–41, *ПКЭГ на 1914 г.*, էջ 34–37 և *КК на 1917 г.*, Тифлис, 1916, էջ 291–306 աղյուսակների տվյալների հիման վրա:

Աղյուսակից նկատելի է՝ ա) այդ տարիներին ընտրովի մարմինների ձայնավորների և լիազորների թվաքանակում էական փոփոխություններ չեն կատարվել, բ) մեծ քաղաքներում ինչպիսին էին Երևանը և Ալեքսանդրապոլը, քաղաքի ղեկավարը կոչվել է քաղաքագլուխ, իսկ փոքր քաղաքներինը՝ ասենք Նոր Բայազետինը, Նախիջևանինը և Օրդուբադինը՝ քաղաքի ավագ:

Ամփոփելով նշենք, որ 1870 թ. ռուսական կայսրությունում «Քաղաքային կանոնադրության» կիրարկումն, անշուշտ, որոշակի առաջընթաց քայլ էր այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքում և այն պետք է դիտարկել 1860–1880-ական թվականներին իրականացված բուրժուական բարեփոխումների համատեքստում: Սակայն այդ Կանոնադրությունը շատ կողմերով թերի էր ու անկատար, ինչպես օրինակ, քաղաքացիների մեծ մասին զրկում էր ընտրելու և ընտրվելու իրավունքից:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում ազատության միջոցով նաև դեպի քաղաքական համակարգի դեմոկրատացման և ժողովրդավարացման լայն ճանապարհ հարթեց: Այդ ուղղությամբ կատարած առաջին քայլերից մեկը հանդիսացավ քաղաքային դումայի ընտրության նոր Կանոնադրության ընդունումը:

Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 15-ին հրատարակեց Կանոնադրություն, որի հիման վրա արդեն գոյություն ունեցող քաղաքային դումաները պետք է նորից ընտրվեին, չսպասելով իրենց լիազորության ժամանակամիջոցի լրանալուն: Համաձայն այդ Կանոնադրության նոր քաղաքային դումայի ընտրությունը կատարվելու էր հետևյալ կերպ: Նշենք դրանցից առավել կարևորները: 1) Քաղաքային դումայի ձայնավորները ընտրվում են մինչև 1919 թ. հունվարի 1-ի ժամանակամիջոցով: 2) Ձայնավորներ ընտրելու մասնակցության իրավունք ունեն ռուսական բոլոր քաղաքացիները, երկու սեռի, բոլոր ազգությունների և դավանություններ-

րի, որոնք մինչև ընտրական ցուցակների կազմման օրը հասած կլինեն 20 տարեկանի և որոնք ապրում են տվյալ քաղաքում կամ ունեն այդտեղ տնային տնտեսություն և կամ որևէ զբաղմունք: 3) Ընտրություններին մասնակցում են և բոլոր զինվորականները, ընդհանուր հիմունքներով: 4) Ձայնավորներ և նրանց թեկնածուներ կարող են ընտրվել ոչ միայն ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողները, այլև ուրիշ անձինք, որոնք նույնիսկ չեն բնակվում քաղաքում: 5) Ձայնավորների ընտրության համար նշանակված օրից 10 օր առաջ ընտրողները պետք է հայտնեն քաղաքագլխին կամ ավագին ցուցակն այն թեկնածուների, որոնք կամենում են ձայնավոր ընտրել և որոնք տվել են իրենց համաձայնությունը քվեարվկել: Ցուցակների մեջ գրված թեկնածուների թիվը պետք է այնքան լինի, որքան որոշված է ձայնավորների թիվը, ավելորդ գրված անունները հաշվի չեն առնվի: 6) Ընտրությունները պետք է լինեն համեմատական, այսինքն՝ պետք է նկատի առնվի և փոքրամասնություն կազմող խմբակցությունների և կուսակցությունների ցուցակը և այլն[1]:

Փետրվարյան հեղափոխությունը արմատական փոփոխություններ մտցրեց նաև Անդրկովկասի տեղական իշխանությունների կառուցվածքում: Ժամանակավոր կառավարությունն իր որոշումներով լուծարեց տեղական կառավարման նախկին մարմինները: Կովկասի փոխարքայության փոխարեն մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, որն իրեն իրավունք էր վերապահում հանդես գալու ժամանակավոր կառավարության անունից: Անդրկովկասյան հատուկ կոմիտեն մշակեց և հրատարակեց Կանոնադրություն Անդրկովկասի տեղական նոր իշխանություններ ստեղծելու մասին: Ըստ որի, «Անդրկովկասի բոլոր վայրերում

[1] Տե՛ս Մշակ, 19 մայիսի, 1917:

պետք է կազմակերպվեն և գործեն մինչև համառուսական Հիմնադիր ժողովը, թե՛ նահանգական և, թե՛ բայոնական ու շինական նոր իշխանություններ ի տեղի նախկին նահանգապետերի[1], գավառապետերի, պրիստավների և քեռխվաների»[2]: Այդ Կանոնադրության հիման վրա Անդրկովկասյան հատուկ կոմիտեն ուղարկելու էր նահանգները և գավառները՝ վերոհիշյալ իշխանությունները կազմակերպելու համար առանձին լիազորներ: Ստեղծված մասնաժողովը (անդամներ՝ Հ. Առաքելյան, Վեքիլով, Գ. Գվազուլա, Սարգսյան), 1917 թ. մայիսի 1-ին կայացած իր նիստում վերջնականապես խմբագրեց լիազորների համար հրահանգներ, որոնց հիման վրա պետք է գործեին նրանք[3]:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, կամ ինչպես ընդունված է ասել հեղաշրջումը, այլ ընթացք տվեց զարգացող դեպքերին, փոխեց քաղաքական իրադրությունը: Հեղափոխությունը կասեցրեց նախկին կայսրության ժողովուրդների համար փետրվարով սկսած ազատության և դեմոկրատիայի գործընթացը: Այս ընդհանուր վիճակն ամբողջապես հատկանշական էր նաև Երևանի նահանգին:

---

[1] 1917 թ. Երևանի նահանգապետն էր Արկադի Ստրելբիցկին, Ալեքսանդրապոլի գավառի գավառապետը՝ Կոնստանտին Քալանթարաշվիլին, Նախիջևանի գավառինը՝ Միխայիլ Մամուլաշվիլին, Նոր Բայազետի գավառինը՝ Զաիդ Նաբիբեկովը, Սուրմալուի գավառինը՝ Սերգեյ Զազինովը, Շարուր-Դարալագյազի գավառինը՝ Սեմյոն Ֆիլիպովը, Երևանի գավառինը՝ Կոնստանտին Առաքելովը և Էջմիածնի գավառինը՝ Լիոնիդ Լեմմեյնմանը: Տե՛ս *ՀՀ на 1917 г.*, էջ 297–302:

[2] Մշակ, 3 մայիսի, 1 917:

[3] Տե՛ս նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1850–1915 ԹԹ.

Յուրաքանչյուր ժողովուրդ՝ որպես կենդանի հավաքական մարմին, ունի շարունակականության, լինելիության իր ներքին տրամաբանությունը՝ վերարտադրվում և սերնդափոխվում է, որն ուղեկցվում է նրա թվաքանակի փոփոխություններով՝ աճելով կամ նվազելով: Դա կատարվում է երկու ճանապարհով՝ բնական և մեխանիկական: Հիմնական և կայուն աղբյուրը բնական աճն է (սա որոշվում է միավոր ժամանակամիջոցում ծնվածների և մահացածների տարբերությամբ), որից սնվում է բնակչությունը վերարտադրվելու համար: Բնակչության թվաքանակը փոփոխվում է նաև կապված նրա կենսագործունեության ձևերից մեկի՝ մեխանիկական շարժընթացի հետ: Ընդ որում՝ այդ աղբյուրներից յուրաքանչյուրի կենսունակության ցուցանիշն անմիջականորեն շաղկապված է տվյալ ժամանակաշրջանի ներքին ու արտաքին կացության հետ: Այլ խոսքով՝ բնակչության բնականոն վերարտադրության համար անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական և քաղաքական, այսինքն՝ սոցիալական առողջ միջավայր, ինչպես և արտաքին բարենպաստ պայմաններ:

Ռուսաստանի կազմի մեջ մտնելն Արևելյան Հայաստանի մեծ մասը կազմող Երևանի նահանգի բնակչության համար արագ և կայուն աճի խթան հանդիսացավ՝ ստեղծվեցին խաղաղ ապրելու և

վերարտադրվելու աննախադեպ պայմաններ, մյուս կողմից էլ՝ բնակչության նյութական ու կենցաղային պայմանների որոշակի բարելավման շնորհիվ ավելացավ ամուսնությունների, հետևաբար և ծնունդների թիվը, զուգահեռաբար նկատելիորեն մահացությունների ցուցանիշը: Այս տեսակետից գիտական և հեռանկարի իմաստով նաև ժողովրդագրական մեծ հետաքրքրություն ու կարևորություն է ներկայացնում ուսումնասիրվող նահանգի բնակչության թվաքանակի, համալրման աղբյուրների, ազգային և սեռատարիքային կազմի, սոցիալական կառուցվածքի, զբաղմունքի, տեղաբաշխվածության և կրթամշակութային կյանքի փոփոխությունների շարժընթացի ուսումնասիրությունը: Նշված հարցերի վերաբերյալ հարուստ վիճակագրական տվյալներ և նյութեր կան ռուսական կայսրությունում հրատարակված բազմաթիվ ժողովածուներում, մարդահամարներում, կամերալ ցուցակագրություններում, ժամանակի պարբերականներում, Կովկասի փոխարքայության Կենտրոնական գրասենյակի կառավարիչների, նահանգապետերի և գավառապետերի զեկուցագրերում, հաշվետվություններում և այլ փաստաթղթերում: Բայց և այնպես պետք է նշել, որ ինչպես Անդրկովկասի երկրամասի մյուս նահանգների, այնպես էլ Երևանի նահանգի տարածքում բնակչության հաշվառումները մոտավոր են եղել, կապված որոշակի դժվարությունների հետ: Բանն այն է, որ բնակչության մի զգալի մասը, գլխավորապես մուսուլմանները, քոչվոր կյանք են վարել և հանգամանքների բերումով երբեմն դուրս են մնացել հաշվառումից, իսկ նստակյաց բնակչությունը գիտակցաբար՝ բանակում չծառայելու, հարկման չենթարկվելու և համանման այլ գործոններով պայմանավորված խուսափել է ճիշտ պատասխան տալուց: Հաշվառումից դուրս են մնացել նաև արտաքնա աշխատանքի մեկնածները և փախուստի մեջ գտնվողները: Եթե այս բոլորին գումարենք այդ հաշվառումների տևական լինելը,

բնակչության տեղաշարժերի հաճախականությունը, ապա կարելի է դատել ստացված արդյունքների իսկության մասին: Այսինքն՝ դրանք շատ դեպքերում թերի են և բոլորովին տարբերվում են միմյանցից[1]: Այսուհանդերձ, բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական և այլ տվյալների համակողմանի համադրումը և քննությունը հնարավորինս լրացնում է այդ բացը:

Երևանի նահանգի բնակչության քանակական և սեռային կազմում կատարված փոփոխություններում բնական և մեխանիկական աղբյուրների ունեցած նշանակությունը ցույց տալու համարանհրաժեշտ է հարցի լուսաբանումն սկսել նահանգի բնակչության թվաքանակի աճին և սեռային կազմին վերաբերող տվյալների քննությունից: 1850–1915 թթ. այդ փոփոխությունների պատկերը տրված է ներքոհիշյալ աղյուսակում[2]:

---

[1] Տե՛ս *Военно-статистическое обозрение Российской империи*, т. XVI, ч. 6, էջ 137 (այսուհետև՝ ВСОРН): Հ. **Սարգսյան**, *Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1950–1900 թթ.)*, Բանբեր Երևանի համալսարանի, 1990, թիվ 1, էջ 114 (այսուհետև՝ ԲԵՀ):

[2] Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 94, ց. 9, գ. 8, թթ. 1–2: *Первая всеобщая перепись население Российской империи 1897 г.*, СПб., 1905, էջ 1: *ՕԷԳ за 1887 г.*, Эриван, 1888, էջակալում չունի: *ՕԷԳ за 1899 г.*, էջ 6–10: *КК на 1887 г.*, Тифлис, 1886, էջ 6, 38, 226–227: *КК на 1904 г.*, Тифлис, 1903, էջ 8–25: *КК на 1890 г.*, Тифлис, 1889, էջ 70–71: *КК на 1914 г.*, Тифлис, 1913, էջ 113–135, 164: *ՕԷԳ за 1892 г.*, էջ 13–14: *ՕԷԳ за 1886 г.*, էջ 6, 16, 38: *КК на 1917 г.*, Тифлис, 1916, էջ 215–219, 219–221, 246: *Сборник сведений о Кавказе*, т. 2, Тифлис, 1872, էջ 168, 191, 194, 352: *Сборник сведений о Кавказе*, т. 4, Тифлис, 1878, էջակալում չունի: *ՕԷԳ за 1907 г.*, էջակալում չունի: *ՕԷԳ за 1908 г.*, Эриван, 1909, էջակալում չունի: *ՕԷԳ за 1910 г.*, Эриван, 1911, էջ 51: *ՕԷԳ за 1912 г.*, Эриван, 1913, էջ 57: *ՕԷԳ за 1901-й г.*, Эриван, 1902, էջ 8, 13: *Сборник материалов о Закавказском крае*, էջ 324: *КК на 1865*, Тифлис, 1864, էջ 122–126: *Статистический временник Российской империи серия 2*, вып. 8, СПб., 1872, էջ 3: *КК на 1883 г.*, Тифлис, 1882, էջ 224: *КК на 1884 г.*, Тифлис, 1883, էջ 291, 353: *КК на 1885 г.*, Тифлис, 1884, էջ 242–243: *КК на 1875 г.*, Тифлис, 1874, էջ 219: *ՕԷԳ за 1905 г.*, Эриван, 1905, էջակալում չունի: *ՕԷԳ за 1891 г.*, Эриван 1891, էջ 29–31: *ՕԷԳ за 1898 г.*, Эриван, 1898, էջ 6, 10–11, 21: *ՕԷԳ за 1893 г.*, Эриван, 1893, էջակալում չունի: *КК на 1915 г.*, Тифлис, 1914, էջ 217: *КК на 1890 г.*, Тифлис, 1889, էջ 70–71: *ՕԷԳ за 1906 г.*, Эриван, 1906, էջ 8: *КК на 1855 г.*, Тифлис, 1854, էջ 280–285: *ՕԷԳ за 1909 г.*, էջ 8: *КК на 1867 г.*, Тифлис, 1866, էջ 312–313: *ПКЭГ на 1908 г.*, էջ 2–3: *ПКЭГ на 1912 г.*, էջ 3: *ПКЭГ на 1910 г.*, էջ 2–35: *ՕԷԳ за 1900-й г.*, էջ 5: *КК на 1885 г.*, էջ 243: *КК на 1901 г.*, Тифлис, 1900, էջ 24–25, 42–43: *Девятая ревизия, Исследование о*

	Նախիջևանում					Գավառներում					Այդ թվում քաղաքներում				
	Ար.	%	Իգ.	%	Ընդ.	Ար.	%	Իգ.	%	Ընդ.	Ար.	%	Իգ.	%	Ընդ.
1850	136690	51.9	125974	48.1	262662										
1856					255124										
1857					259338										
1863					421228										
1864	233740	54.6	193967	45.4	427707	260028	54.0	173367	45.2	383325	23702	53.4	20700	46.1	44402
1865					437719										
1866	239606	54.3	201234	45.6	440840	214345	54.3	180682	45.7	395027	25261	55.1	20552	44.9	45813
1867	242015	54.4	203093	45.6	445098										
1868					435658										
1869	242818	54.5	202864	45.5	445682	215969	54.4	180746	45.6	396719	26849	54.8	22118	45.2	48967
1870	239854	53	213743	47	452597	209835	52.4	190189	47.6	399994	30040	56	23554	44	53603
1871															
1872	267866	53.7	230790	46.3	498656	242035	53.8	207784	46.2	449819	25931	53	23006	47	48937
1873	293907	53.6	253796	46.4	547693	264216	53.8	226871	46.2	491087	29681	52.4	26926	47.6	56606
1874					545040										
1876	289459	53.7	249231	46.3	538710										
1883					583957										
1884					593956					544087					49869
1885	353520	53.4	308114	46.6	661634					606396					55308
1886	361627	53.9	308778	46.1	670405	331375	54	281436	46	612811	30252	52.5	27342	47.5	57594
1889	366661	53.6	314687	46.7	681348										
1891	376861	53.7	324459	46.3	701320										
1892	377913	53.7	325598	46.3	703511					644916					50595
1893					721845										
1896	406025	53.7	350166	46.3	756191										
1897	429689	53.4	375068	46.4	804757	380796	52.8	340629	47.2	721425	48893	58.6	34433	41.4	83332
1898					832682										
1899					843193										
1900					853404										
1901					866265										
1905					88371										
1906	476056	53.3	416377	46.7	892433					807512					84921
1907					918235										
1908	426011	53	378631	47	808642	426011	53	378631	47	808642					
1909					940638										
1910					954278										
1911					965363										
1913	614583	53.3	537686	46.7	1152269	555803	53.2	488234	46.8	1044097	59120	54.4	49452	45.6	108572
1915	589125	52.6	531117	47.4	1120242	519621	52.6	468012	47.4	987633	69454	52.4	63105	47.6	132559

Աղյուսակ 10-ի տվյալների համադրումը ցույց է տալիս, որ 1915 թ. 1850 թ. համեմատությամբ բնակչությունն ավելացել է 857.580

числе жителей в России в 1851 г., СПб., 1857, էջ 155: *Статистических данных о населении Закавказского края*, Тифлис, 1893, էջակալում չունի: *Документы и материалы по истории Армянского народа. Социаль-политического и экономическое положение Восточной Армении после присоединение к России (1830–1870)*, под редакцией **Н.А. Тавакаляна**, Ереван, 1993, էջ 222–223, 236–237, 239, 241, 243, 322–323, 394–395, 470, 477, 491, 504–505, 537, 560: **Հ. Սարգսյան**, *Երևանի նահանգի բնակչություն 50 տարում (1850–1900 թթ.)*, էջ 114–121 տվյալների հիման վրա:

շնչով, 262.662-ից հասել է 1.120.242-ի: Նշանակում է 65 տարիների ընթացքում Երևանի նահանգի երկսեռ բնակչության թվաքանակն աճել է 4,3 անգամ կամ 76,5 %-ով: Այդ տարիներին տղամարդկանց թվաքանակն ավելացել է 4,3 անգամ կամ 76,8 %-ով, 136.688-ից հասել է 589.125-ի, իսկ կանանց՝ 4,2 անգամ կամ 76,3 %-ով և 1915 թ. կազմել է 531.117-ի 1850 թ. 125.924-ի դիմաց:

Բացառություն է կազմում 1868 թ., երբ Երևանի նահանգի Մեղրիի տեղամասը հանձնվեց Ելիզավետպոլի նահանգին: Երևանի նահանգի բնակչության թվաքանակը 1868 թ. 1867 թ. համեմատությամբ կրճատվեց 9.358-ով կամ 2,2 %-ով[1]:

Նշված տարիներին Երևանի նահանգում երկսեռ բնակչության միջին տարեկան աճը կազմել է 17.234,5 շունչ, արական սեռի հաշվով այն կազմել է 9.063,5, իսկ իգական սեռին՝ 817.103 շունչ, 892,5 շնչով կամ 9,8 %-ով պակաս: Ընդ որում քաղաքային բնակչությունն աճի տեմպերով գերազանցել է գյուղական բնակչության ցուցանիշին: Օրինակ, 1915 թ. 1864 թ. համեմատությամբ այն աճել է 3 անգամ, իսկ գյուղականը՝ 2,6 անգամ:

Այսպիսով, 1850–1915 թթ. Երևանի նահանգում արձանագրվել է երկսեռ բնակչության թվաքանակի աճի բարձր տեմպեր: Հիմնահարցի կարևորությունից ելնելով անհրաժեշտ եմ համարում անդրադարձ կատարել Երևանի նահանգի բնակչության շարժընթացին նաև ըստ առանձին քաղաքների և գավառների:

Այդ մասին կարելի է պատկերացում կազմել ստորև բերված աղյուսակից:

---

[1] Հաշվարկը կատարվել է աղյուսակ 10-ի տվյալների տվյալների հիման վրա:

Բնակչության շարժընթացը Երևանի նահանգի քաղաքներում և գավառներում[1]

Աղյուսակ 11

	1864 թ.			1873 թ.			1886 թ.			1897 թ.			1915 թ.		
Քաղաքներ	Բնակչության թիվը			Բնակչության թիվը			Բնակչության թիվը			Բնակչության թիվը			Բնակչության թիվը		
	Արական	Իգական	Ընդհ.	Արական	Իգական	Ընդհ.	Արական	Իգական	Ընդհ.	Արական	Իգական	Ընդհ.	Արական	Իգական	Ընդհ.
Երևան	6744	5768	12512	6400	5538	11938	7823	6915	14738	17328	11678	29006	25548	25738	51286
Ալեքսան Դրապոլ	8762	7787	16549	10414	9562	19976	12391	11839	24230	19049	11567	30616	28874	22963	51837
Նոր Բայազետ	2322	2256	4578	2686	2677	5363	3954	3534	7488	4666	4124	8790	7480	7268	14748
Նախիջևան	3363	2842	6205	3720	3157	6877	3753	3186	6939	4370	4116	8486	4564	4407	8971
Օրդուբադ	2511	2047	4558	2063	1426	3489	2331	1868	4199	2458	2153	4611	3423	2294	5717
Գումարը	23702	20700	44402	25283	22360	47643	30252	27342	57594	54141	38182	92323	69454	63105	132559
Գավառներ															
Երևանի	42044	36884	78928	45513	38661	84174	54608	44268	98876	82899	67980	150879	82680	71651	154331

[1] Հաշվարկը կատարվել է և աղյուսակը կազմվել է ըստ *КК на 1901 г.*, Тифлис, 1900, էջ 24–25: *КК на 1917 г.*, Тифлис, 1916, էջ 218–223: *ПКЭГ на 1906 г.*, էջ 159: *Сборник сведений о Кавказе*, т. 7, Тифлис, 1880, էջակալում չունի: Н. Тавакалян, *Документы и материалы*, էջ 243 տվյալների:

Սեղանը դատարանում	Ընդհանուր	Վերադարձվել է	Էջերի թիվ	Շատախ-Դարասար գյուղ	Սարուսար	Կոստանդին	Հայոց Բաղաբերդ	Վերանորոգվել	Սեղանը դատարանում
233740	210038	16323	53290	-	-	25149	40565	32667	32667
193967	173267	12629	47458	-	-	21130	24849	30317	30317
427707	383305	28952	100748	-	-	46279	65414	62984	62984
289499	264216	-	44267	27897	31533	33547	35722	45737	45737
249231	226871	-	38772	23894	26954	25211	32077	41302	41302
536730	491087	-	83039	51791	58487	58758	67799	87039	87039
361627	331375	-	53795	33852	38354	41353	50630	58783	58783
308778	281436	-	46796	27920	32712	31529	45493	52718	52718
670405	612811	-	100591	61722	71066	72882	96123	111501	111501
441889	387748	-	68149	41559	49958	52984	63128	89482	89482
387667	349485	-	61355	35846	43777	47787	59445	76021	76021
829556	737233	-	129504	77405	93735	100771	122573	165503	165503
589125	519671	-	82680	47399	55364	66117	90384	91011	91011
531117	468012	-	71651	42851	49427	56091	83727	83195	83195
1120242	987683	-	154331	90250	104791	122208	174111	174206	174206

Ի՞նչ հեղտոնոթյունների վարվի ։ հաղեթ թիվ 11 աղոտաձիգ։ 1864–1915 թթ., այնքան 51 տարվանվի ստրոմիջքով նուսարի նամակ թաղ-մայրի բանակչությունը ընդհանուր հաշվեկշռման շարու-նակեցի թանաքային գրանցումը գնալ նրա թաղամիջուն ացի բարձր տեսանելի Սյոսքեն, 1915 թ. 1864 թ. հաստեղատարը նամակ գնալ եր գրվել ։ 3 ագաստ վան 66,5 %-ով։ գրանցվի բանակչությունը թվերն ամենաշատը Սարուսար գյուղում։

Արդեն 1915 թ. նահանգի քաղաքներում ապրող երկսեռ բնակչության թիվը հասնում էր 132.559 մարդու, 1864 թ. 44.402-ի դիմաց: Վիճակագրական տվյալներից նկատելի է, որ Երևան, Նոր Բայազետ և Ալեքսանդրապոլ քաղաքները բնակչության աճի տեմպերով գերազանցել են նահանգի բոլոր քաղաքների միջին ցուցանիշին: Այսպես, նշված տարիներին Երևան, Ալեքսանդրապոլ և Նոր Բայազետ քաղաքներում բնակչության թիվն ավելացել է համապատասխանաբար՝ 4,0, 3,2 և 3,1 անգամ, նահանգի բոլոր քաղաքների միջին ցուցանիշի՝ 3-ի դիմաց: Միջինից ցածր ցուցանիշ են գրանցել Նախիջևան և Օրդուբադ քաղաքները համապատասխանաբար՝ 1,4 և 1,2 անգամ, այսինքն՝ միջին ցուցանիշին զիջել են 1,6 և 1,8 անգամ: Քաղաքային բնակչության կազմում մեծ էր արական սեռի տեսակարար կշիռը: Դա յուրահատուկ էր նահանգի բոլոր քաղաքներին: Այսպես, 1915 թ. նահանգի հինգ քաղաքների 132.559 բնակչից 69.454-ը կամ 52,4 %-ը կազմում էին տղամարդիկ: Առանձին քաղաքներում այդ ցուցանիշներն ավելի քան ցայտուն են: Օրինակ, Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչության կազմում տղամարդկանց բաժին էր ընկնում 55,7, Օրդուբադում՝ մոտ 60 %-ը, իսկ Նոր Բայազետ և Նախիջևան քաղաքներում այն համապատասխանաբար եղել է 50,7 և 50,9: Հատկանշական է, որ Երևան քաղաքի բնակչության կազմում որոշակիորեն մեծ էր կանանց տեսակարար կշիռը՝ 50,2 %-ը:

Ինչ վերաբերում է ըստ գավառների բնակչության շարժընթացին, ապա նույն աղյուսակը ցույց է տալիս, որ վերոնշյալ տարիներին Երևանի նահանգի գավառների բնակչության թվաքանակում էական տեղաշարժեր են կատարվել: Բնական վերարտադրության և դրանից ներհոսքի շնորհիվ գավառների ընդհանուր բնակչության թիվն ավելացել է 2,6 անգամ կամ 61,2 %-ով, 383.305-ից հասել է 987.683-ի: Նահանգի գավառների ամբողջ բնակչության քանակական աճի միջին ցուցանիշից որոշակի բարձր գործակից են գրան-

ցել Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառները արձանագրելով համապատասխանաբար՝ 2,8 և 2,7 անգամ: Ինչ վերաբերում է մյուս գավառներին, ապա Երևանի գավառի բնակչության թիվն ավելացել է 1,9, Էջմիածնին՝ 1,5, իսկ 1873–1915 թթ. Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի գավառներում համապատասխանաբար՝ 1,8 և 1,7 անգամ:

Աղյուսակից բխող մյուս հետևությունն այն է, որ նահանգի գավառներում միասին վերցրած բնակչության թիվը տարեկան միջինը ավելացել է 21.965,5 շնչով, որից արական՝ 11.551,4 և իգական՝ 10.414 շնչով:

Այժմ դիտարկենք Երևանի նահանգի բնակչության թվաքանակի շարժընթացի փոփոխությունների հարցերը ըստ բնական վերարտադրության և մեխանիկական տեղաշարժերի: Հարցի քննությունը սկսենք բնակչության սեփական վերարտադրությունից:

Սկզբնաղբյուրներից երևում է, որ ուսումնասիրվող տարիներին Երևանի նահանգին բնորոշ էր բնակչության ծնելիության գործակցի բարձրանալը: Այդ տարիներին բնակչության բնական վերարտադրությունը կատարվել է ծննդի շարունակական ավելացման ու մահացության մակարդակի նվազման պայմաններում:

Պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանի նահանգում ծնվածների թիվը մշտապես առավելություն ուներ մահացածների նկատմամբ: Օրինակ, 1850 թ. Երևանի նահանգում ծնվածների թիվը՝ 9.415 (ար.՝ 5.123, իգ.՝ 4.292) 2.990-ով կամ 31,7 %-ով գերազանցել է մահացածների՝ 6.425 (ար.՝ 3.612, իգ.՝ 2.813) թվին: Նշված տարում նահանգում 1.000 բնակչի հաշվով ծնվել է 36 երեխա, նույնքան մարդու հաշվով 38 տղա և 34 աղջիկ: 1866 թ. վիճակագրությամբ 16.751 (ար.՝ 9.123, իգ.՝ 7.628) ծննդի դիմաց արձանագրվել է 13.765 (ար.՝ 7.493, իգ.՝ 6.272) մահ, այսինքն՝ 2.986-ով կամ 17,8 %-ով պակաս: 1.000 բնակչի հաշվով ծնունդը կազմել է համապատասխա-

նաբար՝ 38, 38 և 38 շունչ: 1869 թ. նահանգում ծնված և մահացած երեխաների գործակիցների հարաբերակցությունը կազմել է 8.206 (ար.՝ 4.321, իգ.՝ 3.885), հոգուտ ծնվածների, այսինքն՝ բնական աճը եղել է 8.206 մարդ: 1.000 բնակչի հաշվով վիճակագրությունն այսպիսին էր. երկու սեռից 41 ծնունդ, այդ թվում՝ 40 տղա և 41 աղջիկ:

Թվական տվյալների համադրությունից հետևում է, որ 1869 թ. 1850 թ. դիմաց Երևանի նահանգի բնակչության թիվն ավելացել է 183.020 շնչով կամ 41 %-ով: Այդ տարիներին Երևանի նահանգի բնակչության քանակական կազմի շարժընթացում վճռորոշ դերը կատարել է սեփական վերարտադրությունը: Այսպես, օրինակ, 1867 թ. 1866 թ. համեմատությամբ նահանգի բնակչության թիվն ավելացել է 4.176 շնչով կամ 0,9 %-ով բացառապես սեփական վերարտադրության ճանապարհով[1]: Բնական վերարտադրության գերակայությունը շարունակվել է նաև հետագա տարիներին, մինչև 19-րդ դարի 70-ական թվականների երկրորդ կեսերը:

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է անել մի քանի հետևություններ. ա) 19-րդ 50–60-ական թվականներին Երևանի նահանգի բնակչության թվաքանակի աճի հիմնական աղբյուրը հանդիսացել է բնական վերարտադրությունը: բ) Ծնվածների թիվը շարունակաբար գերազանցել է մահացածների թվին: գ) Ծնվածների մեջ մեծ էր արական սեռի թիվը:

Բնական աճի հաշվին Երևանի նահանգի բնակչության շարժընթացն համակողմանի և խորքային հիմնավորապես ներկայացնելու համար հարկ է այն քննության առնել ժամանակագրական ավելի լայն կտրվածքով, ինչը պատկերված է ստորև բերված 12 աղյուսակում:

---

[1] Հաշվարկը կատարվել է աղյուսակ 10-ի և **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 222–223, 237, 241, 243 տվյալների հիման վրա:

Երևանի Նահանգի բնակչության բնական աճի շարժընթացը 1883-1915 թթ[1].

Աղյուսակ 12

Տարիներ	Մեզանից																	
	Ամբողջ նահանգում					Քաղաք				Գյուղեր				Ամբողջ նահանգում				
	Մահ	Ծն.	%	Բն.	%	Մահ	%	Բն.	%	Մահ	%	Բն.	%	Մահ	Ծն.	%	Բն.	%
1883	19909	30032	53.4	9367	46.6									18529	9485	51	9044	49
1884	20716	31084	54	9647	46	5006	51	975	49	50081	53.7	8672	46.2	22212	5043	52.3	5169	47.5
1886	23607	32512	58	11095	47	997	51.2	958	48.8	31515	53.2	10144	46.8	13558	2037	53	1821	48
1887	23200	33295	53	9995	43	1154	53	1277	47	30541	53	8968	47	11136	4096	54.1	3020	45.7
1888	25015	33210	57.7	11005	46.3									17262	8964	51.9	8298	48.1
1889	23358	27434	53.3	10906	46.7									16603	6307	55.7	7386	44.3
1890	22717	28499	55	10218	45									13159	7441	55.4	6117	44.6
1891	21793	30058	53.7	11245	46.3	3669	51.5	3305	48.5	17979	54	20240	46	17501	7500	53.6	6001	44.4
1892	21735	22921	51.5	10804	45.5	3159	52.1	2942	47.9	18762	55.6	8764	45.4	21534	11869	55.1	9665	44.9
1893	20837	26882	54.7	13955	45.3	1248	52.4	1131	47.6	19604	55	12824	45	17741	9815	55.3	7924	44.7
1894	23332	24999	51	14733	49	1238	54.2	1183	45.6	18601	54.5	17330	45.5	17671	11121	57.3	7549	42.7
1895	23613	35397	55.2	12602	44.3	1915	53.4	1675	46.6	21644	56	10997	44	16257	8734	54	7473	46
1896	22798	35493	54.3	14435	45.9									14797	7667	53.2	6930	46.8
1897	24318	35533	53	16835	47									16863	7667	51.2	7199	48.8
1898	32395	37107	53	15158	47	1455	50.5	1424	49.5	35692	53.5	23704	46.2	18645	10004	53	8851	47
1899	31184	36675	53.6	16334	46.6	1458	52	1345	48	35212	53.6	23569	46.4	20830	11300	53.3	9730	46.7
1900	29113	35857	54.5	13926	45.5	1391	51.3	1319	48.7	34466	55	21927	45	18342	10864	55.3	8778	44.7
1901	20099	35244	52.4	18955	47.6	1423	50	1420	50	33821	52.6	27535	47.4	16241	9359	51.5	7882	48.5
1904	25319	36055	53	13724	47	1339	52	1235	48	33756	53.4	21979	46.6	23287	10367	51.7	9723	48.3
1906	32212	36169	53.5	14040	46.5	1668	52.3	1550	47.7	34471	53.6	22493	46.4	25476	12407	51.8	10369	48.2
1907	33595	37787	53	15858	47	2155	52.1	1987	47.7	35582	53	23871	47	21862	10935	49.9	10947	50.1
1908	30482	35417	53.3	17045	46.7	1882	51.4	1872	48.6	37455	54.5	25373	45.5	28882	12657	53	11256	47
1909	31266	37508	52.6	15778	47.4	1707	50	1705	50	35801	53	24071	47	23446	11385	52.6	10261	47.4
1910	34635	37735	52.7	15601	47.3	1795	51	1720	49	35840	53	24162	47	27351	11931	53.4	10420	46.6
1912	37321	38836	53	17555	47	2412	53	1308	28	35854	53	16246	47	35459	15223	52.5	9232	47.5
1913	38898	38943	53.2	14955	46.0	1322	51.6	1239	48.4	35621	53.2	13716	46.8	37260	3160	53.4	8000	46.6
1914	27482	34770	55	12818	46	1207	52.8	1099	47.2	33562	54.3	11533	45.9	28417	7355	52.4	6855	47.6
1915	33617	38411	53.4	16766	46.7	1415	53	1262	47	37416	53	15524	47	32606	17390	53.1	15275	46.9
Գումարը	802224	928193	53.4	373993	46.6	51718	52	23472	48	316969	53.6	223855	46.4	501737	262354	53.3	234163	46.7

[1] Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2272, թ. 2: *Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.*, СПб., 1905, էջ 1: *КК на 1915 г.*, Тифлис, 1914, էջ 117, 243: *КК на 1901 г.*, Тифлис, 1900, էջ 28–29, 40–43, 60–67: *ОЭГ за 1892 г.*, էջ 13–14: *ОЭГ за 1901-й г.*, էջ 12: *ОЭГ за 1886 г.*, էջ 17, նաև էջակալում չունի: *ОЭГ за 1891 г.*, էջ 29–32: *ОЭГ за 1898-й г.*, էջ 10: *КК на 1899 г.*, Тифлис, 1898, էջ 48–49: *ПКЭГ на 1904 г.*, Эривань, 1903, էջ 110–117: *ОЭГ за 1899 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1889 г.*, էջ 44–45: *ОЭГ за 1887 г.*, էջակալում չունի: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 239, 243, 322–323, 477, 491, 566, 571: *КК на 1865 г.*, Тифлис, 1864, էջ 113–118: *КК на 1875 г.*, Тифлис, 1874, էջ 226–227: *КК на 1917 г.*, Тифлис, 1916, էջ 246–247: *ОЭГ за 1900-й г.*, էջ 10, նաև էջակալում չունի: *ОЭГ за 1910 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1912 г.*, էջ 57: *ОЭГ за 1908 г.*, Эривань, 1908, էջակալում չունի: *КК на 1890 г.*, Тифлис, 1889, էջ 70–71: *ОЭГ за 1909 г.*, էջակալում չունի: *ОЭГ на 1904 г.*, էջակալում չունի: *КК на 1885 г.*, Тифлис, 1884, էջ 242–243: *КК на 1901 г.*, Тифлис, 1900, էջ 64–67: *КК на 1898 г.*, Тифлис, 1897, էջակալում չունի: *ОЭГ за 1907 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1906 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1898-й г.*, էջ 10, նաև էջակալում չունի: *ПКЭГ на 1891-й г.*, էջ 108–109: *Сборник сведений о Кавказе*, т. 7, էջակալում չունի: **Հ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 104–121 տվյալների:

Մահ								Բնական աճը					Միգրացիա		
Ծաղոր				Գագար									Ներգաղթ հանրապետություն	Դուրս գալիս	Մնացք
Ար	%	Իգ	%	Ար	%	Իգ	%	Ընդ	Ար	%	Իգ	%			
								6380	3717	58.2	2561	41.6	3812	3553	279
520	51.7	496	48.8	5323	52.2	4873	47.8	9524	5246	55	4278	45	4255	3887	368
707	50.6	689	49.4	6370	52.2	5832	47.8	10089	5435	54	4574	46	5108	4636	472
742	53.2	653	46.8	6556	54.3	5090	45.7	10064	5150	51.1	4906	48.7	4267	3900	367
								8493	5046	57.6	3567	42.4	4276	3804	472
								8645	3125	47	3520	53	4250	3768	482
								8558	4652	54.1	3906	45.7	5240	4688	552
771	52.5	697	47.5	6729	56	5304	44	10792	5548	51.3	5244	48.7	5684	5074	610
1360	52.4	1234	47.6	10509	55.5	8431	44.5	2191	1052	48	1139	52	5321	4836	485
1232	53.2	1081	47.7	8581	55.6	6843	44.4	13096	7067	54	6029	46	6124	5408	716
855	54.6	735	45.4	9237	57.5	6833	42.5	13721	6976	41.6	6745	58.4	6386	5896	490
1540	53.3	1009	46.7	7644	54.2	6464	45.8	13362	8373	58	5189	42	5788	4613	675
								14503	7996	55.1	6505	44.9	5091	4436	655
								14465	7846	54.2	6619	45.8	5431	4885	546
1283	51.7	1104	48.3	8821	53.3	7737	46.7	13460	7143	53	6317	47	5919	5295	524
1235	50.8	1098	49.2	9655	53.6	8357	46.4	10354	5570	53.4	4784	46.6	6205	5542	663
592	54	767	46	9872	55.4	7611	44.6	10333	5591	53	4888	47	6287	5753	534
327	52.4	843	47.6	8131	54.5	7019	45.5	12858	5855	51.5	5973	46.5	7961	7394	600
1069	55.2	881	44.8	9278	53.6	8017	46.4	9032	4728	52.3	4304	47.7	6289	5635	654
1230	53.4	1070	46.6	9177	50.5	8399	49.5	5736	5762	50.2	3474	49.8	8766	6473	2293
1199	53.3	1047	46.7	9120	52.8	8300	47.2	11733	6822	58.1	4911	41.9	6980	5802	1178
1928	52.3	1492	47.7	11129	53.1	9814	46.9	12620	6740	54	5840	46	6056	5270	786
1342	55.5	1076	44.5	10043	71.2	9185	28.8	11640	6123	53	5517	47	6621	5897	724
1668	57.6	1245	42.3	10243	52.7	9197	47.3	11285	5804	51.4	5481	48.6	7244	6546	698
917	55.5	740	44.7	9310	52.8	8492	47.7	17962	9689	51.6	8123	48.4	7881	7231	650
1041	55.8	824	44.2	7815	51	7480	49	14738	7783	53	6955	47	8000	7195	805
823	56.2	640	43.8	6731	52	6223	48	12956	7216	55.6	5770	44.4	6152	5994	158
2947	60.8	1317	39.2	15183	52.2	13959	47.7	3011	1501	49.8	1510	50.1	5897	576	332
24395	54.2	20617	45.8	178121	51	171937	49	300507	160987	53.6	139520	46.4	165827	142598	23229

Ըստ աղյուսակ 12-ի 1883–1916 թթ. Երևանի նահանգում ծնվել է 802.244 երեխա, որից՝ 428.341 (53,4 %) տղա, 373.903 (46,6 %) աղջիկ, 6,8 %-ով պակաս: Աղյուսակի տվյալներից միաժամանակ հետևում է, որ թեև առանձին տարիների նկատվել են ծնելիության որոշակի փոփոխություններ՝ աճել կամ նվազել է, այդուհանդերձ ծնելիության գործակիցը մշտապես գերազանցել է մահացությանը: Այս մասին հետագա շարադրանքում:

Վերոգրյալ տարիներին Երևանի նահանգում տարեկան միջինը ծնվել է 25.070,1 (ար.՝ 13.385,6, իգ.՝ 11.684,5) երեխա: Ընդ որում՝ նահանգի գավառներում տարեկան միջին ցուցանիշը կազմել է 18.462,3 (ար.՝ 9.903,4, իգ.՝ 8.558,9) երեխա, իսկ քաղաքներում՝ 1.912 (ար.՝ 991, իգ.՝ 921) երեխա: Միջանկյալ նշենք, որ ծնվածների ճնշող մեծամասնությունը տղաներ էին: Այս տվյալները ցույց են տալիս, որ նշված տարիներին նահանգի գյուղական բնակչության ծնելիության, հետևաբար և բնական աճի տեմպերն

առաջանցիկ են եղել քաղաքային բնակչության համապատասխան ցուցանիշներից: Այդ է հավաստում նաև ներքոհիշյալ աղյուսակը: Առանձին քաղաքներում և գավառներում ծնվածների թիվը և հարաբերակցությունը 1.000 բնակչի հաշվով[1]:

Աղյուսակ 13

Բաղաքներ	1886 թ.											
	Բնակչություն			Մահեր			1000 բնակչի հաշվով			Ծնվածներ		
	Ար.	Իգ.	Միայ.	Ար.	Իգ.	Միայ.	Ար.	Իգ.	Միայ.	Ար.	Իգ.	Միայ.
Երևան	7823	6915	14738	260	242	502	34	36	35	7479	6818	14297
Ալեքսանդրապոլ	12591	11839	24230	524	534	1058	43	46	44	13274	12716	25990
Նոր Բայազետ	3954	3534	7488	138	123	261	35	35	35	4279	3923	8202
Նախիջևան	3753	3186	6939	47	28	75	13	9	11	3520	2991	6521
Ղարաքիլիսա	2331	1868	4199	28	19	47	12	11	12	2246	1732	3978
Գյումրի	30252	27342	57594	997	958	1948	33	35	34	30608	28180	58788
Գավառներ												
Երևանի	54408	44268	98676	1397	916	2313	26	21	24	55359	45559	100918
Ալեքսանդրապոլի	58783	52718	111501	2740	2724	5481	47	52	50	64151	52752	121933
Էչմիածնի	53795	46796	100591	1820	1490	3310	34	32	33	53499	46767	100266
Նոր Բայազետի	50530	45493	96123	2102	1885	3987	42	42	42	54058	49096	103154
Սևանի	38654	32712	71066	850	690	1540	23	21	22	40396	34627	75023
Նախիջևանի	41353	31529	72882	1710	1200	2910	42	38	40	43244	33145	76389
Հաղբատ-Թալինի	33852	27920	61722	876	1239	2115	26	45	35	35346	29253	64629
Գյումրի	331325	281436	612811	11515	10144	21659	35	36	36	349653	324459	701520
Ամբողջ նահանգում	361627	308778	670405	12512	11095	23607	35	36	36	376861	324459	701320
Բաղաքներ				Մահեր								
Երևան	7823	6915	14738	162	164	326	21	24	23	7479	6818	14297
Ալեքսանդրապոլ	12591	11839	24230	392	385	765	31	33	32	13274	12716	25990
Նոր Բայազետ	3954	3534	7488	94	82	176	24	24	24	4279	3923	8202
Նախիջևան	3753	3186	6939	41	35	76	11	11	11	3520	2991	6521
Ղարաքիլիսա	2331	1868	4199	40	43	53	13	13	13	2246	1732	3978
Գյումրի	30252	27342	57594	707	689	1396	23	26	25	30608	28180	58788
Գավառներ												
Երևանի	54408	44268	98676	501	228	729	9.2	5.1	7.4	55359	45559	100918
Ալեքսանդրապոլի	58783	52718	111501	1296	1213	2509	22	23	22.5	64151	52752	121933
Էչմիածնի	53795	46796	100591	1190	1040	2230	22.1	22.2	22.2	53499	46767	100266
Նոր Բայազետի	50530	45493	96123	1611	1503	3114	32	33	33	54058	49096	103154
Սևանի	38654	32712	71066	450	350	800	12	11	12	40396	34627	75023
Նախիջևանի	41353	31529	72882	745	680	1420	18	22	20	43244	33145	76389
Հաղբատ-Թալինի	33852	27920	61722	582	818	1400	18	40	23	35346	29253	64629
Գյումրի	331325	281436	612811	6370	5832	12202	20	21	20	349653	324459	701520
Ամբողջ նահանգում	361627	308778	670405	7077	6521	13598	20	22	21	376861	324459	701320

[1] Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ *ՕՅԳ за 1886 г.*, էջակարգում չունի: *КК на 1901 г.*, Тифлис, 1900, էջ 24: *ՕՅԳ за 1891 г.*, էջ 29–34: *КК на 1917 г.*, Тифлис, 1916, էջ 218–221, 246–247 տվյալների:

1891 թ.						1916 թ.								
Մուտքը			1000 բնակչի հաշվով			Մեռելներ			Մուտքը			1000 բնակչի հաշվով		
Ար.	Իգ.	Մեռ.	Ար.	Իգ.	Մեռ.	Ար.	Իգ.	Մեռ.	Ար.	Իգ.	Մեռ.	Ար.	Իգ.	Մեռ.
277	250	527	37	36,7	36,9	25548	25738	51286	457	342	799	18	13,1	16
513	520	1033	39,6	40,9	39,7	28874	22968	51837	653	647	1300	21	29	25
109	160	329	34,5	40,8	40,1	7480	7268	14748	167	170	337	23	24	23
70	50	120	19,8	16,7	18,4	4564	4407	8971	119	97	216	26	22	24
40	25	65	17,8	14,4	16,3	3423	2294	5717	19	6	25	6	3	5
1009	1005	2024	31,7	35,7	35,2	69454	63105	132559	1415	1262	2673	21	20	21
1809	1607	3416	32,7	35,3	33,8	82680	71651	154331	2638	2159	4817	32	31	32
2517	2479	4996	39,7	42,9	41,3	91011	83195	174206	4797	3778	7575	42	46	44
2072	1661	3733	38,7	35,5	37,2	86716	81070	167786	2971	2651	5622	35	33	34
1798	1561	3361	33,2	31,8	32,6	90384	83727	174111	2884	2363	5247	32	29	31
1482	1248	2730	36,7	36	37	55364	49427	104791	2307	2256	4563	42	46	44
1130	960	2090	26,1	29	27,4	66117	56091	122208	1347	1042	2389	21	19	20
1171	722	1893	28,1	24,7	29	47399	42851	90250	1472	1235	2707	31	29	30
11979	10240	22219	34,6	34,6	34,6	519671	468112	987783	17416	15524	32940	34	34	34
13048	11245	24367	35	35	35	589125	531117	1120242	18831	16786	35613	32	32	32
Մաքր									Մաքր					
245	212	457	33	31	32	25548	25738	51286	722	456	1178	29	18	23
277	265	542	21	21	21	28874	22968	51837	1070	668	1738	37	29	34
62	65	127	15	17	16	7480	7268	14748	108	64	172	15	9	12
122	105	227	35	36	35	4564	4407	8971	125	110	235	28	25	27
65	50	115	29	29	29	3423	2294	5717	22	19	41	7	9	8
771	697	1468	25	25	25	69454	63105	132559	2047	1317	3364	30	21	26
945	776	1721	17	17	17	82680	71651	154331	1818	1560	3384	22	22	22
1326	1201	2527	21	21	21	91011	83195	174206	4357	4086	8443	48	50	49
1320	1000	2320	25	22	24	86716	81070	167786	2617	2431	5020	31	30	31
1211	898	2109	21	19	21	90384	83727	174111	2368	2156	4424	25	26	26
825	665	1490	21	20	20	55364	49427	104791	2404	2237	4641	44	46	45
683	573	1256	16	18	17	66117	56091	122208	1064	851	1915	16	16	16
419	391	1256	12	7	20	47399	42851	90250	735	627	1362	16	15	15
6729	5304	12033	20	17	18	519671	468112	987783	13465	12390	25855	26	27	27
7501	6001	13501	20	19	20	589125	531117	1120242	15512	13707	29219	27	26	26

Ներքոհիշյալ աղյուսակը հնարավորություն է տալիս համադրության մեջ դիտարկել նահանգի քաղաքներում և գավառներում ծնված երեխաների թվի, սեռային կազմի և տարեկան միջին աճի շուրջ 30 տարիների շարժընթացի խճանկարը: Ըստ աղյուսակի նահանգի քաղաքներում արձանագրվել են նորածինների աճ՝ 1916 թ. ծնվել է 2.673 մարդ 1886 թ.՝ 1.948-ի դիմաց, այսինքն՝ ավելացել է 725-ով կամ 23 %-ով: Միջին տարեկան աճը կազմել է 92,2 մարդ: Աճի տեմպերը զգալի բարձր են եղել Ալեքսանդրապոլում՝ 1886 թ. արձանագրվել է 1.058 ծնունդ, որը կազմել է քաղաքներում ծնված-

ների 54,3 %-ը, 1891 թ.՝ 49,8 %-ը և 1915 թ.՝ 49,5 %-ը: Հինգ քաղաքներում ծնվածների աճի միջին տեմպերը գերազանցել են նաև Նոր Բայազետ և Երևան քաղաքները, իսկ Նախիջևան և Օրդուբադ քաղաքները նկատելիորեն զիջել են: Հատկանշական է, որ նշված հինգ քաղաքներն առանձին-առանձին, բացառությամբ Նախիջևան և Օրդուբադ քաղաքների, 1.000 բնակչի հաշվով ծնվածների թվով գերազանցել են ամբողջ քաղաքների միջին ցուցանիշին: Ընդհանուր գումարով արական սեռի ծնվածների թիվը գերազանցել է իգական սեռին: Միջանկյալ նշենք, որ արական սեռի տեսակարար կշիռը ցածր է եղել Նոր Բայազետ և Ալեքսանդրապոլ քաղաքներում:

Ինչ վերաբերում է գավառներին, ապա ծնունդների թիվը 1886 թ. 21.659-ից ավելացել է 11.281-ով և 1916 թ. հասել է 32.940-ի կամ աճել է 34,2 %-ով: Ծնունդների տարեկան միջին թիվը կազմել է 1.135.8, իսկ ամբողջ նահանգում՝ 1.228,0:

Առանձին գավառներում ծնելիության ցուցանիշներն ըստ նշված տարիների արտահայտվել են հետևյալ թվերով. 1886 թ. ամենաբարձր գործակիցը գրանցվել է Ալեքսանդրապոլի գավառում՝ 5.484 ծնունդ, որը կազմել է գավառներում ծնվածների 25,3 %-ը, որին հաջորդել են Նոր Բայազետի և Նախիջևանի գավառները համապատասխանաբար՝ 18,4 և 13,4 %-ը: Ամենացածր ցոցանիշն ունեցել է Սուրմալուի գավառը՝ 7,1 %:

1891 թ. առաջին հորիզոնականում դարձյալ Ալեքսանդրապոլի գավառն էր 22,5 %-ով, որից հետո Էջմիածնի գավառը՝ 16,8 %, Երևանի գավառը՝ 15,4 % և Նոր Բայազետի գավառը՝ 15,1 %: Պետք է ընդգծել, որ նշված գավառները 1.000 բնակչի հաշվով նույնպես գերազանցել են ամբողջ գավառի միջին ցուցանիշին: Մյուս երեք գավառների գործակիցը ցածր է եղել ինչպես 15 %-ից, այնպես էլ ամբողջ գավառի միջին ցուցանիշից:

Ակնհայտ է. որ ծնելիության ընդհանուր գործակցի վրա ուղղակի էական ազդեցություն են ունեցել՝ մի կողմից ամուսնության թվի աճը[1], մյուս կողմից՝ ամուսնալուծությունների նվազումը[2]:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանի նահանգում թեև առանձին տարիներին դիտվել են ամուսնության աճի բարձր կամ նվազ տեմպեր, բայցևայնպես մեծ հաշվով աճի դինամիկան պահպանվել է:

Այսպես, 1864 թ. 1850 թ. համեմատությամբ Երևանի նահանգում ամուսնությունների թիվն ավելի քան կրկնապատկվել է 1924-ից հասել է 4.745-ի (639-ը կամ 13,5 %-ը քաղաքներում, իսկ 4.106-ը կամ 86,5 %-ը գավառներում), այսինքն՝ ավելացել է 2.821-ով կամ 59,4 %-ով: Հավելենք, որ եթե 1850 թ. հազար բնակչի հաշվով ամուսնացողների թիվը կազմում էր 8, ապա 1864 թ.՝ 11[3]:

Հետագա տարիներին նահանգում ամուսնության գործակիցը շարունակաբար մեծացել է ի հաշիվ ամուսնացողների թվի ավելացման: Աճի տեմպերի մասին պատկերացում կազմելու համար դիմենք աղյուսակ 12-ի տվյալներին:

Ըստ աղյուսակի տվյալների 33 տարվա կտրվածքով նահանգում գրանցվել է 165.827 ամուսնություն, որից 23.229 կամ 14 %-ը քաղաքներում, իսկ 142.598 կամ 86 %-ը գավառներում, այլ խոսքով՝ նահանգում ամուսնությունների թիվն ավելացել է 43,2 անգամ, այդ թվում՝ քաղաքներում 83,2, իսկ գավառներում՝ 40,1 անգամ:

---

[1] Թիֆլիսի նահանգում մինչև 15 տարեկան հայ և վրացի տղամարդկանցից ամուսնացել էին 5–8 %-ը, 15–20 տարեկանում՝ 62–65 %-ը, իսկ մինչև 20 տարեկան վրացիների մոտ ամուսնացել էր 6 %, հայերի մոտ՝ 13 %: Տե՛ս *КК на 1899 г.*, Тифлис, 1898, էջ 86:

[2] Ամուսնալուծության ցուցանիշով կանայք գերակշռություն են ունեցել: Օրինակ՝ 1897 թ. այդ հարաբերակցությունն արտահայտվել է հետևյալ թվերով. նահանգում կանայք՝ 0,18, տղամարդիկ՝ 0,12, քաղաքներում համապատասխանաբար՝ 0,27 և 0,05, գավառներում՝ 0,16 և 0,13: Տե՛ս *КК на 1906 г.*, էջ 153:

[3] Հաշվարկը կատարվել է **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 239, 322–323 տվյալների հիման վրա:

Նշված տարիներին Երևանի նահանգում տարեկան միջինը գրանցվել է 5.182,1 ամուսնություն, այդ թվում 4.456,2 կամ 86 %-ը գավառներում, իսկ 725,9 կամ 14 %-ը քաղաքներում:

Ինչ վերաբերում է առանձին գավառներում և քաղաքներում ամուսնության վիճակագրությանը, ապա այդ ներկայացնում է ստորև բերված աղյուսակը[1]:

Աղյուսակ 14

Քաղաքներում	1891	1892	1893	1894	1895	1896	1897	1898	1899	1900	գումարը
Ալեքսանդրապոլ	201	225	226	193	173	240	277	189	204	191	2119
Նախիջևան	156	85	119	159	160	150	59	116	114	92	1210
Նոր Բայազետ	60	67	85	84	89	97	101	77	83	63	806
Օրդուբադ	52	42	46	85	80	75	45	50	45	16	536
Երևան	141	66	160	169	173	172	183	192	217	172	1645
Գումարը	610	485	636	690	675	734	665	624	663	534	6316
Գավառներում											
Ալեքսանդրապոլի	1070	758	874	1915	738	863	1188	1032	1235	1146	10819

[1] Վերահաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ *ОЭГ за 1893-й г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1900-й г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1899 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1892 г.*, էջակալում չունի: *ОЭГ за 1891 г.*, էջակալում չունի: *КК на 1901 г.*, էջ 64–67 տվյալների:

Նախիջևանի	692	300	382	405	308	310	285	483	475	775	4415
Նոր Բայազետի	813	824	832	727	812	836	902	1104	986	1092	8928
Սուրմալուի	640	830	702	585	637	618	609	574	620	607	6422
Շարուր-Դարալագյազի	381	370	348	307	361	429	473	363	452	519	4003
Երևանի	637	798	1424	1546	759	546	452	719	675	864	8420
Էջմիածնի	841	956	906	1111	998	755	913	1020	1099	750	9349
Գումարը	5074	4836	5468	6596	4613	4357	4822	5295	5542	5753	52356
Ընդամենը	5684	5321	6104	7286	5288	5091	5487	5919	6205	6287	58672

Աղյուսակից բխում է, որ Երևանի նահանգում 1891–1900 թթ. գրանցվել է 58.672 ամուսնություն, որից 6.316 (10,8 %)՝ քաղաքներում, իսկ 52.356-ը (89,2 %)՝ գավառներում: Այսինքն՝ նշված ժամանակաշրջանում նահանգում ամուսնությունների թիվն ավելացել է 9,3 անգամ կամ 89,3 %-ով: Աղյուսակի տվյալներից նկատելի է, որ քաղաքներից ամուսնության բարձր ցուցանիշ գրանցվել են Ալեքսանդրապոլ և Երևան քաղաքներում համապատասխանաբար՝ 2.119 կամ ընդհանուրի 33,5 %, 1645 կամ 26 %: Գավառներից բարձր ցուցանիշը Ալեքսանդրապոլինն է եղել՝ 2119 ամուսնություն կամ ընդհանուրի 20,6 %-ը, որին հաջորդել են Էջմիածնի գավառը՝ 9.343 ամուսնություն կամ 17,8 % և Նոր Բայազետի գավառը՝ 8.928

ամուսնություն կամ 17 %: Որպեսզի նահանգի բնակչության ամուսնության պատկերն ամբողջական լինի, հարկ է քննության առնել ամուսնացածների սեռային կազմի հարաբերակցությունը: Այդ մասին պատկերացում կազմելու համար դիմենք վիճակագրությանը: Այսպես, 1891 թ. Երևանի նահանգում ամուսնացածների սեռային կազմն այսպիսի պատկեր է ներկայացնում. նահանգի կտրվածքով յուրաքանչյուր 1.000 տղամարդուց ամուսնացել էր 15,1, 1.000 կանանցից՝ 17,5, իսկ երկու սեռից միասին ամուսնացել էր 8,1-ը: Համեմատության համար նշենք, որ 1890 թ. այն կազմել էր համապատասխանաբար՝ 14,1, 16,4 և 7,6[1]:

Աղյուսակի տեսքով ներկայացնենք վիճակագրական տվյալներ 1.000 բնակչի հաշվով ամուսնացածների սեռային կազմի մասին ըստ առանձին քաղաքների և գավառների 1891 թ.[2]:

Աղյուսակ 15

Քաղաքներ	1000 տղամարդուց	1000 կանանցից	1000 երկու սեռից
Երևան	18,9	20,7	9,9
Ալեքսանդրապոլ	15,1	15,8	7,7
Նոր Բայազետ	14,0	15,3	7,3
Նախիջևան	44,2	52,2	23,9
Օրդուբադ	23,2	30,0	13,1
Բոլոր քաղաքներում	19,3	21,6	10,3
Գավառներ			
Երևանի	11,0	14,0	6,3
Էջմիածնի	15,7	18,0	8,4
Ալեքսանդրապոլի	16,7	18,9	8,5
Նոր Բայազետի	15,0	16,6	7,9
Սուրմալուի	15,0	18,5	8,6
Նախիջևանի	16,0	20,9	9,1

[1] Տե՛ս *ОЭГ за 1891 г.*, էջ 29:
[2] Տե՛ս նույն տեղում:

Շարուր-Դարալագյազի	10,8	13,0	5,9
Բոլոր գավառներում	14,7	17,1	7,9

Ըստ 15 աղյուսակի տվյալների ինչպես նահանգի կտրվածքով, այնպես էլ քաղաքներում և գավառներում 1.000 բնակչի հաշվով ամուսնացածների կազմում կանանց տեսակարար կշիռը մեծ է եղել. քաղաքներում կազմել է 21,6, գավառներում՝ 17,1 տղամարդկանց համապատասխան՝ 19,3 և 14,7-ի դիմաց: Կանանց տեսակարար կշիռն առանձնապես բարձր է եղել Նախիջևան՝ 52,2 և Օրդուբադ՝ 30,0 քաղաքներում, ամենացածրը՝ Նոր Բայազետ՝ 15,3 և Ալեքսանդրապոլ՝ 15,8 քաղաքներում: Գավառներում ամուսնացածների մեջ կանանց գերակշռությամբ առանձնանում են Նախիջևանի՝ 20,9, Ալեքսանդրապոլի՝ 18,9, Սուրմալուի՝ 18,5 և Էջմիածնի՝ 18,0 գավառները: Սա այն դեպքում, երբ նահանգում տղամարդիկ թվաքանակով մշտապես գերազանցել են կանանց: Այս մասին թեև բազում անգամներ առիթ ենք ունեցել նշելու, այդուհանդերձ, անկարևոր չենք համարում, դիմել նոր ասելիք ունեցող փաստերի օգնությանը: Եվ, այսպես, 1886 թ. Երևանի նահանգում քաղաքային բնակչության շրջանում 100 տղամարդուն ընկել է 90,4 կին, իսկ գյուղական բնակչության մեջ՝ 84,9 կին, ամբողջ նահանգում՝ 85 կին[1]: Մեկ տասնամյակ անց՝ 1897 թ. նահանգի գյուղական բնակչության 100 տղամարդուն ընկել է 90,13 կին, քաղաքային բնակչության մեջ՝ 70,2 կին[2]: Ավելին տղամարդիկ բարձր թվաքանակով կանանց գերակշռել են նաև երիտասարդ տարիքային կազմի առումով: Նույն տարում նահանգի 20–29 տարեկան քաղաքային բնակչության 100 տղամարդուն բաժին է ընկել 37,72 կին, գավա-

[1] Տե՛ս *Сборник статистических сведений по Закавказского краю*, ч. 1, Тифлис, 1902, էջ 18–21; Հ. **Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 120:
[2] Տե՛ս *КК на 1906 г.*, Тифлис, 1905, էջ 138:

ռային բնակչության մեջ՝ 96,88 կին, նահանգում՝ 84,12 կին, իսկ 30–39 տարիքային խմբին համապատասխանաբար՝ 76,15, 90,82 և 89,13[1]:

Այսպիսով, նահանգի բնակչության սեռային կազմում տղամարդիկ գերակշռում էին: Նույնը չի կարելի ասել ամուսնության հետ կապված՝ կանայք գերազանցել են տղամարդկանց: 1897 թ. մարդահամարի տվյալներով նահանգի բնակչության 15-ից մինչև 39 տարեկան տարիքային խմբերում 100 տղամարդու հաշվով ամուսնացած չէր 54,49-ը կանանց՝ 18,2 դիմաց, պակաս 36,3 մարդով կամ 33,4 %-ով:

Այդ անհամամասնությունների մասին, որոնք վերը նշվեցին, հարկ ենք համարում տալ որոշ բացատրություններ: 1) Բնակչության սեռային կազմում տղամարդկանց գերակայությունը, մեր կարծիքով, հայոց մեջ տղա երեխա ունենալու ավանդության շարունակումն էր, 2) Կանանց համեմատությամբ տղամարդկանց ամուսնության ցածր գործակիցը պայմանավորված էր ա) բարձր տարիքում ամուսնանալու սովորույթը, բ) արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքը, գ) բանակում ծառայելը, դ) առանձին օջախ ստեղծելու համար առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները:

Որպես բնական երևույթ ծնելիությունն ուղեկցվել է մահացությամբ: Երևանի նահանգում ծնելիության գործակիցը մահացության գործակցի համեմատությամբ զգալիորեն բարձր է եղել և այն շարունակվել է ուսումնասիրվող ժամանակաշրջանի ողջ ընթացքում, թեև առանձին տարիների գործակիցների հարաբերակցությունն աճել կամ կրճատվել է, ամեն դեպքում պահպանվել է ծնելիության դինամիկան, ինչը և հաստատում են վիճակագրական տվյալները:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

Այսպես, 1850 թ. Երևանի նահանգում երկու սեռից ծնվել է 9.415 երեխա, որից մահացել է 6.425-ը կամ 31,7 %-ը, 1864 թ.՝ 15.246 ծնվածների դիմաց մահացությունը կազմել է 14.005, այսինքն՝ պակաս 1.242-ով կամ 8,1 %-ով, 1869 թ.՝ 17.878 ծնվածներից մահացել է 9.672-ը, այլ խոսքով՝ ծնվածների թիվը մահացածներին գերազանցել է 8.006-ով կամ մոտ 46 %-ով, այլ խոսքով՝ բնական աճը կազմել է 8.006 մարդ: 1864 թ. նահանգի քաղաքներում գրանցվել է 1932 ծնունդ և 2111 մահ, այսինքն՝ 179-ով կամ 9,3 %-ով ավել: Նույն տարում նահանգի գավառներում ծնվել է 13.314 երեխա, որից մահացել է 11.894 կամ 10,7 %-ը, բնական աճը կազմել է 1420 երեխա: 1869 թ. նահանգի քաղաքներում ծնունդը 900-ով գերազանցել է մահվան ցուցանիշին և կազմել է համապատասխանաբար՝ 2.559 և 1.659, իսկ գավառներում՝ 15.319 ծննդի դիմաց մահացությունը եղել է 1.659 այսինքն՝ 13.660-ով պակաս[1]:

Հետագա ավելի քան 30 տարիների (1883–1916 թթ.) ընթացքում նահանգի բնակչության թվաքանակի շարժընթացը բնական վերարտադրության ճանապարհով դիտարկենք ավելի լայն կտրվածքով՝ աղյուսակ 13-ի տվյալներով: Ըստ այդ տվյալների, նշված տարիներին նահանգում երկու սեռից ծնունդների թիվը եղել է 802.244, մահացության թիվը՝ 501.737, այսինքն՝ բնական աճը կազմել է 300.507 մարդ:

Թվային և տոկոսային արտահայտությամբ ծնունդը ըստ սեռի հետևյալ տեսքն է ունեցել. 428.341 կամ 53,4 % տղա, 373.903 կամ 46,6 % աղջիկ, մահացությունների թիվը՝ 267.354 կամ 53,3 % տղա, 234.383 կամ 46,7 % աղջիկ: Պարզորոշ երևում է, որ ծննդի և մահվան ցուցանիշներով տղաները գերազանցել են աղջիկներին: Մի-

---

[1] Հաշվարկը կատարվել է Н. Тавакалян, *Документы и материалы*, էջ 239, 243, 322–323, 477 տվյալների հիման վրա:

ջանկյալ նշենք, որ նորածինների և ընդհանրապես բնակչության մահացության բարձր ցուցանիշը բացատրվում է մարդկանց անբավարար կենապայմաններով, կրթվածությամբ, առողջապահական համակարգի թույլ զարգացվածությամբ և հաճախակի կրկնվող տարափոխիկ համաճարակային հիվանդություններով (մալարիա, քութեշ, ծախկախտ, ասիական խոլերա, բծավոր տիֆ, ջրծաղիկ և այլն)[1], որոնք խլում էին հազարավոր մարդկային կյանքեր[2]:

Համապատասխան տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1883–1916 թթ. Երևանի նահանգի բնակչության թվաքանակի աճի մեջ բնական վերարտադրության տեսակարար կշիռը կազմել է 44 % նախորդ տարիների (1850–1870-ական թթ. երկրորդ կես) 56 %-ի դիմաց, այլ խոսքով՝ նահանգը բնութագրվում է բնակչության սեփական վերարտադրության բացասական մնացորդով:

Ինչպես ասվել է, 1870-ական թվականների երկրորդ կեսից սկսած նահանգի բնակչության թվաքանակի աճի տեսակարար կշռում բնական վերարտադրությունն իր տեղը զիջել է մեխանիկական տեղաշարժերին, արևմտահայ և մասամբ պարսկահայ փախստականների ներգաղթով, ինչպես և Ռուսաստանից և հարևան նահանգներից հայ և այլազգի բնակչության կամավոր ու հարկադիր ներհոսքով:

---

[1] «Շատ մանուկներ,- գրում է «Մշակը»,- զոհ են գնում ոչ թե դիֆտերիտին, այլ իրենց ծնողների տգիտութեան: Երբ մի ընտանիքում մի երեխայ հիւանդանում է, ծնողները երբէք չեն մտածում առանձնացնել հիւանդին, կամ արգելել երեխաներին հիւանդի սենեակը մտնելու, այսպիսով հիւանդ, թէ առողջ բնակվելով մի սենեակում ամբողջ ընտանիքը վարակվում է»: Տե՛ս Մշակ, 12 դեկտեմբերի, 1887:

[2] Հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարելու միջոցները և հնարավորությունները չափազանց սուղ էին և անբավարար: Այդ մասին պատկերացում կազմելու համար բավական է մեջբերել 1912 թ. օրինակը: Երևանի նահանգում ընդհանուր հաշվով եղել է 23 հիվանդանոց, այդ թվում՝ 7-ը քաղաքներում, 16-ը գավառներում: Բժշկական անձնակազմը բաղկացած էր 44 բժշկից (ար.՝ 40, իգ.՝ 4), 71 բուժակից, 36 մանկաբարձից և տատումներից, 8 ատամնաբույժից և 26 դեղագործից, ընդհանուր գումարով 185 բուժաշխատող: Տե՛ս *ОЭГ за 1913 г.*, էջ 21–22:

Արխիվային փաստաթղթերը, մամուլի նյութերը և ժամանակակիցների հուշագրությունները հավաստում են, որ արևմտահայության ներգաղթը հատկապես լայն թափ է ստացել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և նրա ավարտից անմիջապես հետո, երբ Բեռլինի դաշնագրով Ռուսաստանը պարտադրված էր գրաված տարածքները հետ վերադարձնել Թուրքիային: Այդ դաշնագիրն արևմտահայությանը դրեց ավելի ծանր ու մղձավանջային դրության մեջ:

Հայկական տարածքներից ռուսական զորքերի դուրս գալուց հետո, հայությանը սպառնացող վտանգը էլ ավելի մեծացավ: Տեղին է մեջբերել Լլոյդ Ջորջի մի խոստովանությունը, որ «Ռուսներն ստիպված էին հեռանալ, դժբախտ հայերը նորից ճզմվեցին իրենց հին կեղեքողների կրունկների տակ»[1]:

Բեռլինի պայմանագրի գնահատման խնդրին, Հայկական հարցի տեսակետից, բնականաբար, անդրադարձել են ժամանակի հայտնի քաղաքական և դիվանագիտական գործիչներ: Թուրքիայում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդի կարծիքով Բեռլինի դաշնագիրը նպաստեց Արևմտյան Հայաստանը հայաթափ անելու թուրքական քաղաքականության իրականացմանը, ինչը բավական է ապացուցելու այդ պայմանագրի հակահայկական էությունը: 1878 թ. սեպտեմբերի 16-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերիին ուղարկած հաղորդագրությունում Լեյարդը գրում էր. «Հայերը հակված են հավատալու, որ զրկվելով Ռուսաստանի անմիջական պաշտպանությունից, կարող են ենթարկվել մահմեդականների վատ վերաբերմունքին ու բռնություններին, և, որ միակ միջոցը՝

[1] **Ллойд Джордж**, *Правда о мирных договорах*, т. 2, М., 1957, с. 390:

ծեռք բերելու իրենց ունեցվածքի ու կյանքի անվտանգությունը՝ Ռուսաստանի տարածքներն անցնելն է...»[1]:

Հատկանշական է, որ Ռուսաստանն իր հերթին խրախուսում էր արևմտահայության արտագաղթը: Գ. Գալոյանը անհերքելի փաստերով ապացուցում է, որ «Զրկվելով Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով վերապահված իրավունքներից, Ռուսաստանն իր հերթին քայլ է կատարում՝ չկորցնելու իր ազդեցությունն արևմտահայության վրա: Այդ նպատակով նա սկսեց խրախուսել ներգաղթը ռուսական տարածքները»[2]:

Մի կողմից Թուրքիայի շահախնդրությունը Արևմտյան Հայաստանը հայաթափելու և Ռուսաստանի տարածաշրջանային նկրտումները, մյուս կողմից էլ արևմտահայերի նկատմամբ գործադրվող բռնությունները, որոնք սպառնում էին նրա ֆիզիկական գոյությանը, պատճառ դարձան նոր զանգվածային արտագաղթի: Հազարավոր հայ ընտանիքներ ցանկություն են հայտնում անցնել ռուսական կայսրության սահմանները: Միայն այն փաստը, որ Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի տվյալներով Ալաշկերտի և Բայազետի գավառներից գաղթել ցանկացողների թիվը հասնում էր մոտ 1.000 ընտանիքի[3], բավական է համոզվել, որ արտագաղթելու ցանկություն ունեցողների թիվը չափազանց մեծ էր: Ալաշկերտից, Բայազետից և Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերից հազարավոր հայ ընտանիքներ ետ քաշվող ռուսական զորքի հետ բռնում են գաղթի ճանապարհը: Ներգաղթող քարավանների մեջ քիչ չէին նաև քրդեր, եզդիներ, ասորիներ, հույներ և ազգային փոքրամասնությունների այլ ներկայացուցիչներ: Այսպես, 1877 թ. սեպտեմբե-

---

[1] **Գ. Գալոյան,** *Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.),* Երևան, 2004, էջ 305:

[2] Նույն տեղում, էջ 304:

[3] Տե՛ս Մշակ, 28 օգոստոսի, 1878:

ին Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից հայկական և ռուսական զորաջոկատների հետ Երևանինահանգ են տեղափոխվել շուրջ 432 հայ և եզդի ընտանիքներ: Նրանցից 22 հայ ընտանիք և (183 հոգի) և 22 եզդի ընտանիք (210 հոգի) հաստատվել են Սուրմալուի գավառում, 71 հայ ընտանիք (545 հոգի) և 13 եզդի ընտանիք (101 հոգի) բնակվել են Էջմիածնի գավառում, 132 հայ ընտանիք (1.020 հոգի) և 12 եզդի ընտանիք (100 շունչ) տեղավորվել են Նոր Բայազետի գավառում, 83 հայ ընտանիք (540 մարդ)՝ Երևանի գավառում, իսկ 5 հայ ընտանիք (34 շունչ)՝ Երևան քաղաքում, 46 հայ ընտանիք (417 մարդ) և 19 ընտանիք եզդի՝ Ալեքսանդրապոլի գավառում[1]:

Դրան հետևեցին գաղթականների նորանոր խմբեր: 1877 թ. հոկտեմբերի 15-ին Հին Բայազետից Ալեքսանդրապոլի գավառ են ներգաղթել ևս 116 (ար.՝ 228, իգ.՝ 248) քուրդ-եզդիներ:

Այսպիսով, վիճակագրական տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ 1877 թ. աշնանը Արևմտյան Հայաստանից Երևանի նահանգ են անցել մոտ 2.300 հայ, եզդի, քուրդ[2], հույն և այլ ազգի ընտանիքներ, ընդհանուր թվով ավելի քան 8.200 մարդ:

Հատկանշական է, որ Բայազետից, Ալաշկերտից և նրանց լիվաներից վավերագրերից մեկի հավաստմամբ՝ 1877 թ. վերջին այստեղ եկածների թիվը կազմում էր 2.476 մարդ, որից 40 ընտանիք (170 մարդ՝ 92 արական և 78 իգական) հաստատվեց Նոր Բայազետ քաղաքում, իսկ 2.306-ը՝ գավառի գյուղերում[3]:

Ցավով պետք է արձանագրել, որ Երևանի նահանգում շարունակվում էր ստվարանալ արևմտահայ փախստականների շարքե-

---

[1] Հաշվարկը կատարվել է ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 67–68, 75, 607–608, 631–654 տվյալների հիման վրա:

[2] 1877 թ. հունվարի դրությամբ Երևանի նահանգում հաշվվում էր 2.989 քուրդ ընտանիք: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թ. 255:

[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 21, թթ. 173–187:

ը, ինչի մասին վկայում են պաշտոնական վիճակագրական տվյալները: Այսպես, 1878 թ. հունվարի դրությամբ Էջմիածնի գավառում հանգրվան գտած արևմտահայ փախստականների թիվը կազմում էր 571 շունչ[1], Երևանի գավառում այդ թիվը հասնում էր 582-ի (ար.՝ 294, իգ.՝ 288)[2]: Նույն տարում Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության զանազան շրջաններից Երևանի նահանգ են անցնում 217 փախստական (178 հայ և 39 եզդի) ընտանիքներ, որից 150 հայ ընտանիքներ հաստատվում են Ալեքսանդրապոլի գավառում, իսկ 272 հայ և եզդի ընտանիքներ հանգրվանում են Սուրմալուի գավառում[3]:

Ըստ պաշտոնական վիճակագրության 1878 թ. մայիսի 24-ի կտրվածքով Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ շրջաններից Երևանի նահանգ են գաղթել 7.063 փախստականներ, որոնք բնակություն են հաստատել Էջմիածնի գավառում՝ 2.563 հոգի, Սուրմալուի գավառում՝ 595, Նոր Բայազետի գավառում՝ 2.476, Երևանի գավառում՝ 1.126, Ալեքսանդրապոլի գավառում՝ 263 և Երևան քաղաքում՝ 40 հոգի[4]:

Հաջորդ տարում՝ 1879 թ. Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի զանազան վայրերից ևս 534 փախստական ընտանիք (4.225 շունչ) հաստատվեց Երևանի նահանգում, այդ թվում՝ 54 ընտանիքը (369 շունչ)՝ Սուրմալուի գավառում, 136 ընտանիքը (1.042 շունչ)՝ Նոր Բայազետի գավառում, 136 ընտանիքը (1.173 շունչ)՝ Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի տեղամասում, 55 ընտանիքը (350 շունչ)՝ Երևանի գավառում, իսկ 5 ընտանիքը (34 շունչ)՝

---

[1] Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 417–441, 607–608 տվյալների:

[2] Հաշվարկը կատարվել է նույն տեղում, էջ 607–669 տվյալների հիման վրա:

[3] Նույն տեղում, թթ. 67–68, 75:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 208, ց. 1, առաջին մաս, թ. 174:

Երևան քաղաքում[1]: Եվս 62 քուրդ և եզդի ընտանիքներ համալրեցին Ալեքսանդրապոլի գավառի բնակչության շարքերը[2]:

Արևմտյան Հայաստանից, ավելի նվազ չափով Պարսկաստանից փախստականների հոսքը դեպի Երևանի նահանգ չի ընդհատվել և հաջորդ՝ 1880–1884 թթ. և 1886–1888 թթ. տարիներին:

Կամերալ ցուցակագրության տվյալներով 1880 թ. մարտի 15-ի դրությամբ Նոր Բայազետ գավառի 15՝ Դդմաշեն, Քաղսի, Օրդակլու, Ալափարս, Նորադուս, Երանոս, Զազալու, Վերին և Ներքին Ադիաման և այլն գյուղերի մշտական բնակիչներ դարձան շուրջ 960 արևմտահայ փախստականներ[3]: Նույն տարվա ապրիլի 1-ի հաշվառմամբ Սուրմալուի գավառում վերաբնակություն հաստատած հայ և եզդի փախստականների թիվը կազմել է 760 շունչ[4]: 1890-ական թվականների վերջերին արևմտահայ փախստականների հոսքը դեպի Երևանի նահանգ մեծ ծավալներ ստացավ հատկապես, 1890-ական թվականների վերջերին կապված Թուրքիայում 1894–1896 թթ. հայերի զանգվածային կոտորածների հետ:

Բնական է նշել, որ 1896–1897 թթ. Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի սահմաններ վերաբնակվել են 50-ից 60 հազար հայեր[5]:

Արևմտահայության ներգաղթը, թեև նվազ տեմպերով, շարունակվել է նաև հետագա տարիներին: «Եթե,- գրում է Վ. Խոջաբեկյանը,- նկատի առնենք, որ 1873–1913 թթ. Երևանի նահանգում բնակչության 1000 շնչի հաշվով բնական աճը կազմել է 13–14 մարդ, ապա կստացվի, որ այդ 40 տարիների ընթացքում Արևմտյան Հայաստանից Երևանի նահանգ է ներգաղթել և մշտա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 207, թթ. 232, 235:
[2] Տե՛ս նույն տեղում թթ. 54–55, 64:
[3] Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 335–349 տվյալների:
[4] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի էջ 351–357 տվյալների հիման վրա:
[5] Տե՛ս П. Надеждин, *Кавказский край, природа и люди.* Тула, 1901, էջ 155:

կան բնակություն հաստատել մոտավորապես 310 հազար մարդ: Նշանակում է Երևանի նահանգում տարեկան բնակություն է հաստատել միջինը 7–8 հազար ներգաղթող»[1]:

20-րդ դարի երկրորդ տասնամյակը համաշխարհային պատմության մեջ թողեց մի շարք իրողություններ, որոնց եղելությունը միջազգային հանրության համար չափազանց ծանր ու վտանգավոր հետևանքներ ունեցավ: 1914–1918 թթ. տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմը, 1917 թ. Ռուսաստանն անցավ փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան հեղաշրջման փոթորիկների միջով:

Նշված տարիներին հայ ժողովուրդն ապրեց իր նախընթաց պատմության ամենաողբերգական էջերից մեկը:

Օսմանյան կայսրության ղեկին կանգնած երիտթուրքերը, օգտվելով պատերազմի հետևանքով միջազգային ասպարեզում ստեղծված քաոսային իրավիճակից, անցան վաղօրոք մշակած իրենց հրեշավոր ծրագրերի իրականացմանը, այն է՝ իսպառ ոչնչացնել արևմտահայությանը և տեր դառնալ նրա պատմական հայրենիքին, յուրացնել նրա նյութական ու մշակութային արժեքները, թալանել նրա ինչքն ու ունեցվածքը:

Ոչ ամբողջական տվյալներով, Օսմանյան կայսրության մեջ բնակվող 2,5 մլն. հայերից ցեղասպանությանը զոհ գնաց շուրջ 1,5 մլն. մարդ, իսկ այդ եղեռնագործությունից հրաշքով փրկված մոտ 800 հազար հայ էլ բռնեց գաղթի ճանապարհը և սփռվեց աշխարհով մեկ՝ իբրև ցեղասպանությունից մազապուրծ բեկորներ: «1915 թ. ծայր առած Մեծ եղեռնի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությունը, այսպիսով՝ ոչ միայն կյանք տվեց նոր գաղթօջախների,- գրում է Սփյուռքի պատմության ճանաչված մասնագետ Կ. Դալլաք-

[1] **Վ. Խոջաբեկյան,** նշվ. աշխ., էջ 57:

յանը,- այլև նոր ազգային ավյուն հաղորդեց արդեն մարող հին ածուներին»[1]: Բնավեր եղած 800 հազար հայերց 250 հազար[2] (այլ աղբյուրներում 300 հազար)[3] ապաստանեց Ռուսաստանում ու Անդրկովկասում: Անդրկովկասի երկրամասում հայտնված արևմտահայ և պարսկահայ փախստականների գերակշիռ մասը տեղավորվեց Արևելյան Հայաստանում, մասնավորապես Երևանի նահանգում՝ շուրջ 58 %-ը:

Արևմտահայ փախստականներն առաջին անգամ Կովկասի սահմաններում երևացին 1914 թ. հոկտեմբերին, երբ ռուս-թուրքական պատերազմի արդյունքում դեպի Բագրևանդի և Բասենի գավառներ առաջացած ռուսական զորքերը կրեցին առաջին ժամանակավոր անհաջողությունները[4]: Արևմտահայերի ստվար զանգվածներով փախուստը դեպի Ռուսահայաստան և այլուր սկսվեց 1914 թ. դեկտեմբերից:

Տարբեր աղբյուրներ փաստում են, որ 1914 թ. դեկտեմբերի վերջերից սկսած Արևմտյան Հայաստանի զանազան շրջաններից մազապուրծ եղած հայերի առաջին քարավաններից հարյուրավոր ընտանիքներ կանգ են առել նաև Նոր Բայազետի գավառի բազմաթիվ բնակավայրերում: «Հորիզոն» թերթի հրապարակումից տեղեկանում ենք, որ «Դեկտեմբերի 22-ին հեռագրով (թեմակալ առաջնորդի կողմից – *Հ.Հ.*) հայտնվեց, որ Ալաշկերտի գաղթականներից մոտ 500 ընտանիք ուղարկվելու են Նոր Բայազետի շրջանը: Անմիջապես քաղաքային տանը տեղի ունեցավ բազմամարդ (հիմնական մասը արհեստավորներ և երկրագործներ) խորհրդակցություն, որը ընտրեց հանձնաժողով՝ զբաղվելու գաղթականներին ընդունելու և

---

[1] **Կ. Դալլաքյան,** *Հայոց սփյուռքի պատմություն,* Երևան, 2004, էջ 10:

[2] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն,* հ. VI, Երևան, 1981, էջ 575:

[3] Տե՛ս **Է. Դանիելյան,** *Եղեռնից փրկված հայ փախստականներ Անդրկովկասում 1914–1922 թթ.* (ատենախոսություն), Երևան, 1996, էջ 43–44:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 3, թթ. 30–31:

տեղավորելու խնդիրներով»: Այնուհետև նշվում է, որ հանձնաժողովի ներկայացուցիչ Ստեփան Բատիկյանն ուղևորվեց Երևան՝ կազմակերպելու գաղթականների տեղափոխելու գործը Նոր Բայազետի գավառ[1]: «Մշակ» թերթի այս գավառի մշտական թղթակից Գ. Սինանյանը այդ մասին հետևյալ մանրամասներն է պատմում. «Թուրքաց փախստական գաղթականների հոսքը հասավ նաև մեր քաղաքը (Նոր Բայազետ – Հ.Հ.): Այդ առիթով Կովկասի հայոց բարեգործական ընկերության[2] տեղիս ճյուղի[3] նախաձեռնությամբ դումայում ժողով գումարվեց: Հավաքվել էր մեծ բազմություն, որը թեմակալ առաջնորդի հեռագիրը լսելով՝ միաձայն ընդունեց գաղթականների ընդունելությունը մեզանում: Որոշվեց ընդունել 500 ընտանիք, բայց ինչպես երևում է, ուղարկելու են ավելի շատ թվով ընտանիքներ»: Հարկ համարվեց,- նշում է հոդվածագիրը,- գաղթականների մի մեծ բաժին տեղավորել գավառի Դարաչիչագի շրջանի գյուղերում, ուր անցյալ տարի (1914 թ.) հացի բերքը ավելի առատ է եղել, քան գավառի մյուս մասերում, ուր գաղթականների ծանրությունը ընկնելով ազատ ժողովրդի վրա՝ կարող է ազդել և հացի գներին և թանկություն առաջացնել[4]: Այդ ժողովում ներկա գտնվողնե-

---

[1] Տե՛ս Մշակ, 6 հունվարի, 1915:

[2] Այսուհետև՝ ԿՀԲԸ:

[3] 1889 թ. Նոր Բայազետ քաղաքում միտք է հղանում՝ տեղում բացել Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղ՝ օգնելու կարիքավոր և ընչազուրկ ընտանիքներին, ինչպես նաև բազմաթիվ աղքատ և ծնողազուրկ երեխաներին տարրական կրթություն տալու համար: 1889 թ. մայիսի 1-ին հիշյալ ընկերությունից ստացվում է թույլտվություն ընկերության տեղական մասնաճյուղ բացելու վերաբերյալ: Նույն տարվա հունիսի 5-ին մասնաճյուղը բացվում է: Այդ օրը գավառի գործակալ Եղիազար քահանա Տեր-Միքայելյանի նախաձեռնությամբ Ստ. Բատիկյանի գրադարանում կայացած ժողովը փակ քվեարկությամբ վարչության անդամներ ընտրեց Ստեփան Բատիկյանին, Երվանդ Ատոմյանին, Գևորգ Արծրունուն, Արշակ Մամիկոնյանին և Ավետիս Բուռնազյանին: Տե՛ս **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 142: Հավելենք, որ 1914 թ. ԿՀԲԸ-ն ուներ 66 մասնաճյուղ: Տե՛ս Հորիզոն, 17 ապրիլի, 1914:

[4] Տե՛ս Մշակ, 22 հունվարի 1915:

ը միահամուռ քվեարկեցին փախստականներին ընդունելու օգտին:

Գ. Սինանյանը տեղեկացնում է փախստականների հետ կապված այլ մանրամասների մասին ևս: «Այժմ արդեն գաղթականների հոսանքը մտել է մեր գավառը, ուր հյուսիսային մասի առաջին հայ գյուղերից սկսած (Արզաքանդ, Ալափարս, Բջնի և այլն) տեղավորվելով պետք է անցնեն մինչև գավառի հարավային ծայրը՝ Բասարգեչար և ապաստանեն 57 հայ գյուղերում»[1]:

Ցեղասպանության հետևանքով սկիզբ առած հայ փախստական զանգվածների շարժընթացը դեպի Արևելյան Հայաստան շարունակվում էր: 1915 թ. հունվարի սկզբներին թուրքական և քրդական վայրագությունների հետևանքով ավելի քան 60 հազար հայեր (2/3-ը արևմահայեր, իսկ 1/3-ը սյարսկահայեր)[2] լքեցին իրենց բնակավայրերը և պատսպարվեցին Կարսի, Ալեքսանդրապոլի և Նախիջևանի շրջաններում:

Այդ ընթացքում ասորի գաղթականների մի խումբ (20 հազար շունչ) Ուրմիայից և Սալմաստից տեղափոխվեց Երևանի նահանգ[3]: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ստեղծված ծանր պայմաններում անգամ, Հայաստանում աջքաթող չէին անում նաև այլազգի գաղթականների հետ կապված բոլոր խնդիրները և կանխորոշում հետագա անելիքները: Մեկ օրինակն էլ բավական է դրանում համոզվելու համար: 1915 թ. հունվարի 9-ին Մայր Աթոռ

---

[1] Նույն տեղում:

[2] Կոտորածների առաջին զոհերը 1914 թ. վերջերից դառնում են պարսկահայերը՝ կապված Ատրպատականի շրջաններ թուրքական զորքերի ներխուժման հետ: 1915 թ. հունվարի սկզբների դրությամբ (գաղթը սկսվել է դեկտեմբերի 15-ին և վերջացել է հունվարի 11-ին) Թավրիզից, Մարաղայից, Ուրմիայից, Սալմաստից և Խոյից գաղթել են մոտ 15 հազար հայեր, որոնք հիմնականում տեղավորվել են Նախիջևանի, Ծարուրի շրջաններում և Դարալագյազի գյուղերում: Տե՛ս Հորիզոն, 28 հունվարի 1915:

[3] Նույն տեղում:

Սբ. Էջմիածնի դիվանապետ Բագրատ եպիսկոպոսը Էջմիածնից հեռագրում է Թիֆլիս՝ Պետական դումայի պատգամավոր, փախստականների ճակատագրով մտահոգ և նախանձախնդիր Միքայել Պապաջանյանին[1] և նրան տեղեկացնում, որ Վեհափառ կաթողիկոսը հեռագրով դիմել է Կովկասի փոխարքային, որ կար-

---

[1] Մ. Պապաջանյանը մտահոգ էր բնաջնջումից հրաշքով փրկված և Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում և այլուր պատսպարված տասնյակ հազարավոր իր տայրաբնակ հայրենակիցների անասանելի ճակատագրով: Նա բազմաթիվ անգամներ մեկնել է փախստականաբնակ վայրերը ծանոթանալու տեղահան եղած, ահ ու սարսափի մեջ ընկած բնակչության դրության հետ և նրանց անհրաժեշտ օգնություն կազմակերպելու նպատակով: Այս մասին ուշագրավ բազմաթիվ տեղեկություններ են տիտված ժամանակի մամուլի հրապարակումներում: Ահավասիկ, մեկը՝ դրանցից, որ տպագրել է «Մշակ» թերթը իր 1915 թ. դեկտեմբերի 17-ի համարում: Նկատի ունենալով, որ հոդվածը փախստականների հիմնահացին վերաբերող ուշագրավ և հավաստի տեղեկություններ է հաղորդում, ուստի կարևոր են համարում այն մեջբերել ամբողջությամբ, առանց խմբագրական միջամտության: Այսպես. Թիֆլիս վերադարձավ Պապաջանյանը, որ հաղորդեց մեզ հետևյալ տեղեկությունները: Նա գնացել էր Կարս, Սարիղամիշ, Միջինկերտ և Կայաուրգան: (Գնացել էր 1914 թ. դեկտեմբերի 4-ին, վերադարձել՝ 1915 թ. հունվարի 8-ին: Տե՛ս Մշակ, 30 դեկտեմբերի 1914, 9 հունվարի 1915): Նրա նպատակն է եղել ծանոթանալ գաղթականների խնդրի հետ: Դեկտեմբերի 11–12-ի գիշերը նա, իրենից անկախ պատճառներով, ստիպված է եղել վերադառնալ Կարաուրգանից և Սարիղամիշից, իսկ այդտեղից նա մեկնել է Կարս, կռիվը սկսվելուց մի քանի ժամ հետո, դեկտեմբերի 12-ին: Գաղթականների խնամատարության համար Սարիղամիշում կազմակերպվել էր մի առանձին մարմին, բայց այժմ պետք է թողնել ու մտածել նրանց օգնելու նոր ձևի մասին միայն տեղ: Բացի արդեն եղած գաղթականներից, որոնց թիվը հասնում էր 90–100 հազարի, սկսվել է գաղթականների նոր հոսանք Օլթիի և Սարիղամիշի շրջաններից: Հայ գաղթականներից բացի դեպի Կարս են գնում և ռուս գյուղացիները (աղանդավորներ) Սեյիմ գյուղից, և հույներ՝ Սարիղամիշից և Օլթիի շրջաններից:

Անհրաժեշտ է տեղում կազմակերպել օգնության գործը: Ամենից նպատակահարմար է հանձնել գործը Ալեքսանդրապոլի կոմիտեին, որ բազմանդամ է, և որի մեջ մտնում են տեղական գրեթե բոլոր հասարակական գործիչները: Ինչպես երևում է, գաղթականների հոսքը մեծ է լինելու և նրանց թիվը ոչ միայն կրկնապատկվելու, այլև եռապատկվելու է:

Անհրաժեշտ է,- ասաց Պապաջանյանը,- հասարակական ուժերի սաստիկ լարում: Հավանական է, որ, երբ որոշվի մեր ռազմագիտական դիրքը, այն ժամանակ կարելի կլինի գաղթականների մի մասը ուղարկել՝ աշխատելու ճանապարհների վրա: Նա դիմումներ է արել այդ ուղղությամբ Բաքվի բյուրոյի ներկայացուցչի հետ, ուր հարկն է, այն է՝ զինվորական իշխանություններին և դրական պատասխան է ստացել, որ աշխատանքներ կտարվեն: Հավանորեն շուտով կսկսվի գործը: Գաղթականներին պետք է դասավորել Ալեքսանդրապոլի շրջանում և ավելի հեռու»: Տե՛ս Մշակ, 17 դեկտեմբերի 1914:

գադրություն լինի՝ տեղավորել Պարսկաստանից եկած փախստականներին, Երևանի նահանգի այլ քրիստոնյա գյուղերում: Եվ ապա ավելացնում է՝ նկատի ունենալով, որ հայ գյուղերը արդեն լցված են հայ փախստականներով, որ ձմեռվա պատճառով հաղորդակցություն չկա լեռնային գյուղերի հետ և դաշտային հայ գյուղերն անկարող են պահպանել միաժամանակ, թե՛ հայ և, թե՛ ասորի փախստականներին, ուստի Երևանի նահանգում 17 գյուղեր կան, որոնք կարող են պատսպարել ասորի փախստականների մեծ մասին, որոնց թիվը մոտ 20 հազար է[1]:

Ուսումնասիրությունը[2] ցույց է տվել, որ պաշտոնական ոչ լրիվ տվյալներով 1915 թ. հունվարի դրությամբ Երևանի, Շարուր-Դարալագյազի, Էջմիածնի, Սուրմալուի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառներում փախստական հայերի (հիմնականում ալաշկերտցիներ, հին բայազետցիներ, վանեցիներ, մշեցիներ և այլն) ընդհանուր թիվը կազմում էր 30 հազար 800 մարդ[3]:

Երևանի նահանգում 1915 թ. մարտին կատարված միօրյա ցուցակագրության համաձայն այս նահանգում, բացի Ալեքսանդրապոլի գավառից, հայ փախստականների թիվը եղել է 24.665, որից

---

[1] Տե՛ս Մշակ, 11 հունվարի 1915:

[2] Երևանի Եղբայրական օգնության կոմիտեի վիճակագրական հանձնաժողովը ստանալով նույն կոմիտեի և Համառուսական զեմստվոյական միության ներկայացուցչի հանձնարարությունները, անցյալ հունվար ամսի սկզբից ձեռնարկեց վիճակագրել Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից եկած փախստականներին, ինչպես և ռուսահպատակ փախստականներին: Վիճակագրությունը տեղի ունեցավ հունվարի 30-ին բոլոր տեղերում միաժամանակ: Վիճակագրությունը ընդգրկեց այն բոլոր շրջանները, որտեղ ապաստան էին գտել ոչ միայն Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից եկած գաղթականները, այլև թուրքական զորքի առաջխաղացման պատճառով ռուսահպատակ փախստականները: Այսպիսով՝ վիճակագրության ենթարկվեցին Երևանի նահանգի յոթ և Կարսի շրջանի չորս գավառները, ինչպես և Թիֆլիսի նահանգի մեկ գավառը՝ Ախալքալաքը: Երևանի նահանգի և գավառների վիճակագրությունը կատարվեց ներկայի հանձնաժողովի 6 անդամների անմիջական հսկողությամբ, աշխատակցությամբ երիտասարդ ուժերի ու մասնավորապես ուսուցիչների: Տե՛ս Հորիզոն, 7 մարտի 1915:

[3] Տե՛ս Մշակ, 31 հունվարի 1915:

3.065 շունչը գնացել են զանազան տեղերը, իսկ մնացած 21.600 շունչը ապաստանել են Երևան քաղաքում՝ 1.258 հոգի, Երևանի գավառում՝ 3.344, Էջմիածնի գավառում՝ 6.920, Նախիջևանի գավառում՝ 5.292, Սուրմալուի գավառում՝ 2.974, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 993 և Նոր Բայազետի գավառում՝ 820 հոգի, իսկ Ալեքսանդրապոլի գավառում, չհաշված Ղարաքիլիսայինը՝ 6.500, այսինքն՝ ընդհանուր թվով 31166 մարդ[1]:

Նոր Բայազետի գավառում վերը նշված 820-ից բացի, այլ աղբյուրներում նշվում են նաև 1.000, 1.200 և 1.400 մարդ[2]: Վիճակագրական տվյալների այս անհամապատասխանությունը թերևս կապված է այդ ժամանակներում ոչ միասնական ու թերի անցկացված վիճակագրության հետ: Մեր կարծիքով ճիշտ թիվը 1.200-ն է: Այս համոզմանն է մեզ բերում պատերազմից տուժածներին օգնող Կովկասյան կոմիտեի լիազոր Ա. Պավլովի՝ 1915 թ. հունվարին կոմիտեին հասցեագրված զեկուցագրում տեղ գտած հետևյալ նախադասությունը. «Այդ հաշիվը (խոսքը վերաբերում է 1.200-ին – Հ.Հ.) նահանգապետի առաջարկությամբ կազմվել է առանձին ոստիկանական պրիստավների և հաշտարար միջնորդների ձեռքով»[3]:

Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից եկած փախստականների գործընթացի պատկերը, ըստ հունվարին անցկացված վիճակագրության, առանձին գավառներով ներկայացվում է ներքոհիշյալ աղյուսակում[4]:

---

[1] Տե՛ս Մշակ, 10 մարտի 1915:
[2] Տե՛ս Մշակ, 9 մայիսի 1915, 15 դեկտեմբերի 1915: Հորիզոն, 3 հոկտեմբերի 1915:
[3] Տե՛ս Մշակ, 31 հունվարի 1915:
[4] Տե՛ս Հորիզոն, 7 մարտի 1915:

Գավառներ և քաղաքներ[1]	Հայեր				Ասորիներ				Ընդամենը	
	Տուն	Շունչ	Բացա կայում են	Այժմ ներկայիս	Տուն	Շունչ	Բացա կայում են	Այժմ ներկայիս	Տուն	Շունչ
Երևան քաղաք	244	1435	177	1258	30	147	29	118	274	1376
Երևանի գավառ	588	3765	422	3343	922	5700	1195	4505	1510	7848
Շարուր-Դարալագյազի գավառ	173	1077	84	993	263	1529	342	1187	436	2186
Էջմիածնի գավառ	917	7702	782	6920	8	39	13	26	925	6946
Նախիջևանի գավառ	1060	6517	1225	5292	33	211	45	166	1093	5458
Սուրմալուի գավառ	389	3284	310	2974	-	-	-	-	[2]389	2974
Նոր Բայազետի գավառ	135	885	65	820	-	-	-	-	135	820[2]
Ընդամենը	3506	24665	3065	21600	1256	7626	1624	6002	4762	27608

[1] Ծանոթություն.

ա) Ներկա գտնված փախստականների ընդհանուր թվի՝ 27.602-ի մեջ չեն մտնում գաղթի ընթացքում սպանվածները, մեռածները, ինչպես նաև անհետ կորածները, որոնք կազմում էին բավական մեծ թիվ:

բ) Այդ թվի մեջ չեն մտնում նաև բավական մեծ թվով հայ և ասորի ընտանիքներ, որոնք մինչև հունվարի 30-ը, այսինքն՝ վիճակագրության օրը, ուղևորված են եղել Թիֆլիս և Ռուսաստան: Տե՛ս Հորիզոն, 7 մարտի 1915:

[2] Փախել են Ղարաքիլիսայից, Ալաշկերտից, Դիադինից, Իրեցու գյուղից, Մոլլա-Սուլեյմանից, Զեյտիկանից և այլ վայրերից: Տե՛ս Մշակ, 9 մայիսի 1915:

Աղյուսակում բերված տվյալներից ակնառու է, որ փախստականների մի խոշոր զանգված կանգ է առել Երևանի, Նախիջևանի և Սուրմալուի գավառներում: Փախստականների նման ձգտումը կարելի է բացատրել երկու հանգամանքով.

1. Արևմտյան Հայաստանին և Պարսկահայքին որքան կարելի է մոտ գտնվելու հանգամանքով, քանզի փախստականներին չէր լքել հայրենի օջախները վերադառնալու հույսը, և նրանք սրտատրոփ սպասում էին այդ օրվան:

2. Նշված գավառներում փախստականների բնակության համար սոցիալական կացությունն ավելի տանելի էր:

1915 թ. սկզբներից Երևանի նահանգի հայությունն ուժից վեր ջանք էր գործադրում ընդունելու և տեղավորելու Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի տարբեր շրջաններից եկած հայ փախստականներին: Բազմաթիվ սկզբնաղբյուրների տեղեկացմամբ 1914 թ. վերջերից մինչև 1915 թ. սկզբը փախստականների թիվը Արևելյան Հայաստանում հասնում էր ավելի քան 100 հազարի[1]:

Երևանի և Ալեքսանդրապոլի գավառներում կուտակված արևմտահայ փախստականների սեռատարիքային կազմն ըստ Մ. Պապաջանյանի տվյալների այսպիսին էր՝ 40–50 %-ը երեխաներ էին, 30-40 %-ը՝ կանայք, իսկ 20–30 %-ը՝ տղամարդիկ[2]:

Փախստականների տեղաշարժն ընդգրկել էր և Նոր Բայազետի գավառը: Ահա թե ինչ ենք կարդում «Հորիզոն» թերթի էջերից մեկում. «Երևանի նահանգապետը հեռագրով հայտնելով, որ Նոր Բայազետի գավառ են գալու 6.000 փախստականներ, կարգադրում է հոգ տանել Նոր Բայազետի գավառում տեղավորելու մասին»: Թերթի տեղեկացմամբ գավառապետ Ֆիլիպովը, խորհրդակցելով

---

[1] Տե՛ս Հորիզոն, 4 հունվարի 1915: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 165:

[2] Տե՛ս **Р. Багдасарян,** *Геноцид и армянская интеллигенция России*, Ереван, 2003, էջ 188:

Եղբայրական օգնության կոմիտեի հետ, որոշում է փախստականներին տեղավորել 59 հայկական գյուղերում, միջին թվով 100 շունչ[1]: Այնուհետև նշվում է, որ գավառապետը, պրիստավը և լիազոր Լ. Պետրոսյանը մեկնել են Սուխոյ Ֆանտան գյուղը՝ դիմավորելու և ընդունելու փախստականներին[2]:

Նույն թերթի մեկ այլ հրապարակումից իմանում ենք, որ օգոստոսի 20–31-ը Ելենովկայի խճուղով դեպի Նոր Բայազետ քաղաք են անցել Վանի, Ալաշկերտի, Ախլաթի և Մանազկերտի շրջաններից փախած թվով 2.458 շունչ՝ 543 ընտանիք արևմտահայեր[3]:

Աղբյուրները վկայում են, որ 3.380 փախստականներ էլ կանգ էին առել Ներքին Ախտայի շրջանի հարկի տակ և տեղավորվել նրա 16 գյուղերում՝ Ներքին Ախտայում՝ 472 մարդ, Վերին Ախտայում՝ 250, Քաղսիում՝ 295, Յանջիում՝ 138, Մաքրավանքում՝ 80, Սոլակում՝ 199, Ռնդամալում՝ 290, Ֆառուխում՝ 65, Քարվանսարայում՝ 250, Աղփարայում՝ 133, Արզաքանում՝ 155, Ալափարսում՝ 475, Թայչարուխում՝ 220, Բջնիում՝ 272, Թեզխարաբայում՝ 36 և Բաբաքշիում՝ 50 մարդ[4]:

Փախստականների խմբերում եղել են նաև քուրդ երկու ընտանիքներ, որոնք հաստատվել են Դավախարաբա քրդաբնակ գյուղում:

Փախստական հայերի թիվը Երևանի նահանգում շարունակաբար մեծանում էր: 1917 թ. հունիսին արված վիճակագրության համաձայն այստեղ ապրող փախստականների թիվը տատանվել է 200 հազարից 250 հազարի սահմաններում, երբ ստացվեց ռուսական կառավարության՝ փախստականներին նախկին բնակավայրերը

---

[1] Տե՛ս Հորիզոն, 20 օգոստոսի 1915:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, 15 սեպտեմբերի 1915:
[4] Տե՛ս նույն տեղում, 22 սեպտեմբերի 1916:

վերադառնալու հրահանգը: Խոսքն այն մասին է, որ ռուսական զորքերի հետ վերադառնալով Արևմտյան Հայաստան նպաստավոր պայմաններ ստեղծեցին Արևելյան Հայաստան և այլուր քշված փախստականների հայրենադարձության համար: Մոտ 150 հազար արևմտահայ փախստականներ վերադարձան հայրենի օջախները:

Հայրենի բնօրրանից փախստական դարձած հայությունը ժամանակավոր բնակավայրերում (բնակեցնում էին պետական հողերի վրա)[1] բազում պատճառներով ընկնում էր աննախադեպ ծանր վիճակի մեջ: Նախ՝ նրանցից շատերը, փախուստից առաջ կամ փախուստի ճանապարհին կորցրել էին ամեն ինչ և զրկվել ապրուստի ամենատարրական միջոցներից: Մի քանի օրինակներ բերենք այս ծավալուն հարցից: Այսպես, ԿՀԲ ընկերության լիազոր Շարաֆյանը, որ ընկերության կողմից ուղարկված էր Սարիղամիշի շրջան մանրամասն ծանոթանալու փախստականների դրությանը, ընկերությանը հասցեագրած զեկուցագրում նշում է, որ 11 գյուղերից փախել են հայերը և ոչ մեկը չի կարողացել հետը ոչինչ վերցնել, որովհետև նրանցից ամեն մեկը աշխատել է միայն իր կյանքն ազատել վերահաս վտանգից[2]:

Դարաչիչագի շրջանի Ռնդամալ գյուղից «Հորիզոն» թերթին հայտնում են, որ այստեղ ևս շարան-շարան գալիս են տաճկահայ փախստականներ, բոլորն էլ մերկ, ոտաբոբիկ, բաղկացած մեծ մասամբ կանանցից և երեխաներից[3]:

Անդրադառնալով Երևանի նահանգում տեղավորված փախստականների կացությանը՝ թերթը տվել է հետևյալ նկարագիրը. «Վերջին օրերս գաղթականները գալիս են ու գալիս: Բոլորը մերկ, գունատ, նվազած, ոսկրացած: Կատարյալ ուրվականներ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 33–34:
[2] Տե՛ս Հորիզոն, 8 դեկտեմբերի 1914:
[3] Տե՛ս Հորիզոն, 15 սեպտեմբերի 1915:

Տնքոցից միայն իմացվում է, որ նրանք շնչավոր են: Մեծ մասը կանայք ու երեխաներ»[1]:

Մյուսը՝ փախստականների հիմնախնդիրները լուծելու հարցում ցարական իշխանությունների շահագրգիռ վերաբերմունքի բացակայությունն էր:

Փախստականներին Երևանի նահանգում և նրա առանձին գավառներում տեղավորելու դժվարությունների թվին կարելի դասել արևելահայության ծայրահեղ վատթարագույն սոցիալական պայմանները և նրա խղճուկ ապրելակերպը: Երկրի գոյատևման և զարգացման երաշխիքը՝ տնտեսությունը, գրեթե զրոյական մակարդակի վրա էր: Ստեղծվել էր հանձնաժողով փախստականների կենցաղը կազմակերպելու համար[2]: Նրանք թեև ստանում էին պետականորեն հատկացված իրենց պարենը հացով կամ դրամով օրական 1/5 ֆունտ այլուր և 3 կոպ. (այլ աղբյուրներում 10 կուպ.)[3] փող, բայցևայնպես կանոնավոր սնունդ նրանց շրջանում բացակայում էր: Փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Անդրկովկասի և Արևելյան հայաստանի հայությունը զորավիգ են կանգնել կարիքի մեջ հայտնված հայրենակիցներին՝ մասնակցել նրանց համար կատարվող դրամահավաքին և կենսական առաջնահերթության այլ միջոցների հայթհայթմանը: Այդ նպատակի համար Անդրկովկասի խոշոր կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր հիմնվեցին բարեգործական ընկերություններ, որպիսիք հետագայում ստեղծվեցին նաև գավառների վարչական կենտրոններում[4]:

---

[1] Տե՛ս Հորիզոն, 3 ապրիլի 1915:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թ. 31:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 33:

[4] Մանրամասն տե՛ս **Հ. Հարությունյան,** *Նոր Բայազետի գավառ 1828–1913 թթ.*, էջ 141–144: **նույնի՝** *Նոր Բայազետի գավառ 1914–1920 թթ.*, էջ 165–193:

*

* *

Երևանի նահանգի և առհասարակ Արևելյան Հայաստանի բնակչության մեխանիկական աճի պատկերը նկատելի փոփոխություններ է կրել XIX դարի 30–40-ական թվականներից սկսած, որն անմիջականորեն կապված էր Ռուսաստանի տարբեր շրջաններից արտաքսված զանազան աղանդների պատկանող խմբերին սույն նահանգի տարածքում բնակեցնելու հետ: Նշված ժամանակաշրջանում, Անդրկովկասում ռուս գաղթականների բնակեցման գործը ղեկավարում էին Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի մինիստրության, կովկասյան լիազոր Ֆադեևը և Երևանի գավառապետ Բլավատսկին[1]: Նորանվաճ տարածքների ռուս գաղթականներով վերաբնակեցումը ցարական կառավարության գաղութային քաղաքականության մեխանիզմի դետալներից մեկն էր և հիմքում ուներ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական դրդապատճառներ. նախ, կենտրոնական Ռուսաստանը «մաքրել» կայսրության համար վտանգավոր տարրերից: Երկրորդ, կենտրոնական Ռուսաստանը բեռնաթափել ագրարային գերբնակչությունից:

Երրորդ, ռուսականացնել նորանվաճ տարածքները, ինչպես էթնիկական, այնպես էլ տնտեսական ու հոգևոր մշակութային առումներով:

Չորրորդ, հաշիվ տեսնել աղանդավորների հետ և վերադարձնել նրանց ուղղափառության գիրկը, իսկ մյուս կողմից էլ արտոնություններ շնորհելով «բարձր դասին», իր համար կայուն քաղաքական հենարան ստեղծել Անդրկովկասում[2]:

---

[1] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V, էջ 223:

[2] Տե՛ս *ПКЭГ на 1912 г.*, Эривань, 1913, էջ 21: *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V. էջ 223:

1830-ականներից սկսվեց ռուս աղանդավորների՝ մոլոկանների, դուխոբորների, ստարավերների, հրեացողների և այլոց տեղահանությունը դեպի Արևելյան Հայաստան: Ռուսաստանի կենտրոնական նահանգների՝ Տամբովի, Սարատովի, Սամարայի, Տուլայի, Վորոնեժի և Եվրոպական Ռուսաստանի այլ նահանգների[1] վտարանդի ռուսների մշտական բնակության համար Երևանի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառներում հատկացվում են հողամասեր[2]: Հիմնադրվում են մի քանի ռուսական գյուղեր: Առաջին բնակավայրերից մեկը, որ հիմնադրվել է սույն գավառում, Սեմյոնովկան է[3]: 1848 թ. այն հիմնադրել են Տամբովի նահանգի Ուվարովոյ գյուղից վտարված սուբբոտնիկ և մոլոկան ռուս աղանդավորները: Հետագա տարիներին (1848–1850 թթ.) գյուղը համալրվում է նոր ռուս գաղթականներով: 1851 թ. այստեղ մշտական բնակություն հաստատած ռուս վերաբնակիչների թիվը հասնում էր 191 շնչի՝ 96 արական – 95 իգական կամ 23 ծուխ[4]: 18–46 թ. գավառի տարածքում Երևանը Թիֆլիսի հետ կապող մայրուղու վրա առաջացավ ռուսական նոր գյուղ՝ Ելենովկան[5], որի հիմնադիր բնակիչները Տամբովի և Սարատովի նահանգների զանազան գյուղերից եկած աղանդավորներ էին՝ մեծ մասամբ սուբբոտնիկներ, կային և մոլոկաններ, պրիգուններ ու ստարավերներ[6]: Շնորհիվ նոր համալրումների՝ Ելենովկայի բնակչությունը ավելա-

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1912 г.*, էջ 39:

[2] Նրանց բնակեցնում էին ազատ և բերրի հողերի վրա, ամեն մի շնչին 25 դեսյատին հատկացնելով, նահանգի և գավառի վարչական կենտրոնները տանող բանուկ ճանապարհների վրա:

[3] Գյուղն իր անվանումը ստացավ Կովկասի փոխարքայի հոր անունից: Տե՛ս **Ա. Հայրյան**, *Հայաստանի ռուս վերաբնակիչները (1830–1920 թթ.)*, Երևան, 1989, էջ 68:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, թթ. 95–100: **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 127: **П. Надеждин**, *Кавказский край. Природа и люди*, 1901, էջ 155:

[5] Բնակավայրն անվանակոչվել է Նիկոլայ Ա-ի որդու կնոջ՝ Ելենա Պավլովնայի անունով: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 329, թ. 296:

[6] Սկզբնաղբյուրները վկայում են, որ առաջին վերաբնակիչներն այստեղ հայտնվել են դեռ 1835 թ.: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, թ. 96:

ցավ, և 1851 թ. դրությամբ նրա թիվը կազմեց 550 մարդ (281 արական, 269 իգական) կամ 108 ընտանիք[1]: Տամբովի նահանգից քշված մոլոկան աղանդին պատկանող մի քանի ընտանիքներ 1846 թ. հիմնադրեցին Կոնստանինովկա գյուղը: Գյուղն անվանակոչվել է Նիկոլայ Ա-ի որդու՝ Կոնստանտինի անունով. «... ի նշանավորումն Կոնստանտին Նիկոլաևիչի միապետական մեծության՝ հաճելի է Դարաչիչակ բնակավայրը անվանել Կոնստանտինովկա»[2]: Կոնստանտինովկա գյուղի բնակչության թիվը 1851 թ. կազմում էր 131 մարդ (61 արական, 70 իգական) կամ 18 ընտանիք[3]: Այսպիսով, ինչպես ցույց են տալիս արխիվային վավերագրերը, 1846–1850 թթ. Նոր Բայազետի գավառում հիմնվում են ռուսաբնակ Սեմյոնովկա, Ելենովկա և Կոնստանտինովկա գյուղերը: Նշված տարիներին ի հաշիվ Ռուսաստանի տարբեր նահանգներից (գլխավորապես կենտրոնական) կատարվող ներհոսքի ռուս բնակչության թիվն արագորեն ավելացել է 1850 թ. վերջին հասնելով 872 շնչի (438 արական, 434 իգական) կամ 149 ընտանիքի[4]: Նախատեսված էր չորս գյուղ էլ հիմնադրել Ելենովկայի և Նոր Բայազետի միջև: Այդ գյուղերի հիմնադրման հետ կապվում էին նաև որոշակի տնտեսական հեռանկարներ՝ կապված Սևանա լճի հետ: Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի մինիստրության կովկասյան լիազոր Ֆադեևի մտադրությամբ այդ գյուղերի հիմնումը նոր լիցք կհաղորդեր ավազանի տնտեսության զարգացմանը, նավագնացության աշխուժացմանը և առևտրի ծավալմանը: Սակայն ռուս աղանդավորների հակառակ-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, թ. 96:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, թ. 96, գ. 329, թ. 296: Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 127:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 329, թ. 296:

[4] Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 378, թթ. 94–95, 100-ի տվյալների:

վելը ծախողեց այդ պլանի կենսագործումը: Այստեղ հիմնվեց միայն Ալեքսանդրովկա գյուղը[1]: Գավառի տարածքի բնակեցումը ռուս աղանդավորներով շարունակվել է և հետագա տարիներին, մի տարբերությամբ, որ այս անգամ այդ գործընթացին մասնակցել են նաև այն վտարանդի աղանդավորները, որոնք մինչ այդ ժամանակավորապես հաստատվել էին Անդրկովկասի տարբեր շրջաններում և Երևանի նահանգի զանազան գավառներում: Նոր Բայազետի գավառում կառուցվում են նոր ռուսական բնակավայրեր: 1851 թ. հիմնվում են Սուխոյ-Ֆանտանը[2], Ալեքսանդրովկան հնում՝ Զեյնալ Աբդին[3] (բնակիչները Տամբովի նահանգից եկած ռուս մոլոկաններ)[4], Նադեժդինոն կամ Շորժան (բնակիչները Սամարայի նահանգի համանուն գավառի Կաբիլնա և այլ գյուղերից տեղահանված 15 ընտանիք ռուս մոլոկան, պրիգուն և սուբբոտնիկ աղանդավորներ)[5], իսկ 1850 թ. Տոմբովի և Վորոնեժի նահանգներից քշված մոլոկան աղանդավորները՝ Ներքին Ախտան[6]: Ռուս աղանդավորներից առանձին ընտանիքներ հաստատվեցին Ալեքսանդրապոլի

---

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 222–224:

[2] Այս անունը գյուղը ստացել է այն պատճառով, որ այստեղի միակ աղբյուրը կաթ-կաթ էր բխում և հաճախ չորանում: Հայերը կաթ-կաթ բխելը նկատի առնելով կաթ-կաթ էին կոչում, ռուսները նրա չորանալը նկատի ունենալով անվանում էին Սուխոյ-Ֆանտասն (չոր աղբյուր): Տե՛ս **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 80, 84:

[3] Եյենովկայում և Ալեքսանդրովկայում բնակություն հաստատած մոլոկանների որոշ մասը հետագայում տեղափոխվում է Կաղզվանի գավառ: Տե՛ս Сборник материалов для описания ..., вып. 38 отд..., էջ 237: **Ա. Խոջաբեկյան**, նշվ. աշխ., էջ 50:

[4] Տե՛ս **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 127:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, թթ. 96–97, 100: **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 80: Այս գյուղի մի քանի թաթար ընտանիքներ ցանկություն են հայտնում տեղափոխվել Բասարգեչարի (Վարդենիսի) շրջան: Հենց այդ դիմումն էլ օգտագործելով որպես հարմար պատրվակ, ցարական պաշտոնյաները գյուղի բոլոր բնակիչներին «իրենց ցանկության համաձայն» վտարեցին գյուղից: Դատարկված գյուղում վերաբնակվեցին ռուս աղանդավորները: Տե՛ս **Ա. Հայթյան**, նշվ. աշխ., էջ 71:

[6] Ներքին Ախտան բաղկացած էր երկու մասից՝ հայոց և ռուսաց: Հայկականը գտնվում էր արևելյան մասում և հիմնվել էր 1829 թ., իսկ ռուսականը հյուսիսային մասում և հիմնվել էր 1860 թ.: Տե՛ս **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 81:

գավառի Նիկիտինո և Վոսկրեսենովկա գյուղերում[1]: Երկու նոր գյուղեր հիմնվեցին Ղարաքիլիսայի շրջանում, իսկ մեկն էլ՝ Ալեքսանդրապոլի գավառում:

Սուխոյ-Ֆանտան գյուղից քիչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, Երևան տանող ճանապարհի վրա 1861 թ. հիմնադրվում է ռուսական Նովո-Նիկոլաևկա (Ջրաբեր) գյուղը[2]: Երևանի գավառապետ Բլավատսկու առաջադրությամբ Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառների միացման վայրում՝ Միսխանայի ձորում (Հանքավան) հիմնադրվեց Նոր Միխայլովկա (Միսխանա) ռուսաբնակ գյուղը, որի վրայով նախատեսվում էր Ալեքսանդրապոլը անմիջականորեն կապել Սևանա լճի ավազանի հետ[3]:

Տվյալ ժամանակաշրջանի սկզբնաղբյուրները զգալի նյութ են պարունակում նաև Սևանա լճի հարավարևելյան մասի՝ Մազրայի հարթավայրը ռուս աղանդավորներով բնակեցնելու հարցի մասին: Պարզվում է, որ նշված հարթավայրը եղել է ռուսներով վերաբնակեցնելու Կովկասի իշխանությունների ծրագրերում: Այդ կապակցությամբ 1849 թ. դեկտեմբերի 6-ին Ֆադեևը Կովկասի փոխարքային ուղղված նամակում հիմնավորում է նշված տարածքը ռուս աղանդավորներով բնակեցնելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը: «Գյոկչա լճի հարավարևելյան մասում գտնվում է Մազրայի հարթավայրը: Անդրկովկասի երկրամասում իմ տեսած ամենահարուստ հարթավայրերից մեկը, ինչպես տեղադրությամբ, այնպես էլ հողի որակով, կլիմայով և առատ ջրով: ... այստեղ կարող են բնակվել մինչև 3 հազար ընտանիքեր...»[4],- վստահեցնում էր Ֆադեևը: Սակայն այս ծրագիրը կյանքի չկոչվեց[5]: Լճի ափամերձ

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1912 г.*, էջ 21:
[2] Տե՛ս *ПКЭГ на 1912 г.*, էջ 21: **Ա. Հայության**, նշվ. աշխ., էջ 66:
[3] Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, հ. V, էջ 224:
[4] ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 359, թ. 17:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 57, թ. 11:

այս հատվածում ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու հիմնական բարդությունը կապված էր ճանապարհների բացակայության հետ. «...այդ վերաբնակեցումը գլուխ չեկավ, քանի որ այն գտնվում էր փոստային մայրուղուց շատ հեռու և ռուսական վերաբնակեցման գլխավոր նպատակին՝ այդ բնակավայրերը գլխավոր ճանապարհների երկայնքով հիմնադրելու խնդրին չէր համապատասխանում»:

Այսպիսով, Երևանի նահանգի բնակչության կազմում նկատելիորեն ավելանում է ռուս վերաբնակիչների թիվը: Արդեն 1850-ական թվականներին Երևանի նահանգում մշտական բնակություն հաստատած ռուս աղանդավորների ընդհանուր թիվը հասնում էր 3.561 մարդու[1]: 1886 թ. Երևանի նահանգում արդեն հաշվվում էր 4.320 ռուս աղանդավոր, որից մոլոկան՝ 2.905, պրիգուն՝ 432, դուխոբուր՝ 150, սուբբոտնիկ՝ 833[2]:

Քննարկվող ժամանակաշրջանում Երևանի նահանգի բնակչությունը ռուս վերաբնակիչներից բացի, համալրվել է նաև Անդրկովկասի նահանգների և Հյուսիսային Կովկասի զանազան գավառներից մահմեդական բնակչության դեպի նահանգի տարածք պարբերական բնույթ կրող զանգվածային ներհոսքի ճանապարհով:

Այս իմաստով Հայաստանի հրաշալի բնակլիմայական պայմանները նպաստում էին անասնապահությամբ զբաղվելու համար: Խոսքն առավելապես վերաբերում է Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառներին, ինչպես նաև Շարուր-Դարալագյազի գավառի Դարալագյազի շրջանին: Անհարկի չծավալվելու համար, բազմաթիվ օրինակներից վկայաբերենք մեկ խոսուն օրինակ:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2382. թ. 24:

[2] Տե՛ս *ՕՀՄ за 1887 г.*, էջ 3: *Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886 г.*, Тифлис, 1893, էջակալում չունի:

Այսպես, 1889 թ. Ելիզավետպոլի նահանգից դեպի Նոր Բայազետի գավառ քոչեցին 655 տուն (3.446 շունչ), Բաքվի նահանգից՝ Շարուր-Դարալագյազի գավառ անցան 260 տուն (969 շունչ), իսկ Ելիզավետպոլի նահանգից՝ ևս 162 տուն (500 շունչ): Թիֆլիսի նահանգից Էջմիածնի գավառ քոչեց 50 տուն (290 շունչ), Ալեքսանդրապոլի գավառ՝ 1.360 տնտեսություն (6.080 շունչ)[1]: Թվական տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ նշված տարում Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգներից Երևանի նահանգ մուտք է գործել մահմեդական բազմազան ցեղերի ընդհանուր գումարով 2.487 տնտեսություն, երկու սեռից 11.285 շնչով: Կասկածից վեր է, որ նրանց զգալի մասը մշտական բնակություն է հաստատել Երևանի նահանգում՝ էլ ավելի ստվարացնելով հավատակից ցեղերի շարքերը:

Տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը, աշխատուժի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, մշակելի հողերի սակավությունը XIX դ. վերջերից սկսած պայմանավորեցին Երևանի նահանգի բնակչության արտահոսքը դեպի Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս, Ռուսաստան և արտասահման: Մեր ձեռքի տակ չկան ամփոփ տվյալներ XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակին նահանգի բնակչության արտագնացության վերաբերյալ, ինչը սակայն չի նշանակում, թե արտագաղթի խնդիրը օրակարգային չէր: Այն, որ նահանգի բնակչության գործազուրկ և աղքատ զանգվածը աշխատանք գտնելու ակնկալիքով վաղուց էր սկսել մեկնել արտագնա աշխատանքի, իսկ արդեն նշված ժամանակաշրջանում մեծ ծավալների էր հասել, հաստատում են արխիվային փաստաթղթերը, ժամանակի մամուլը և «Կովկասյան օրացույցը»: Ըստ «Մշակ» թերթի՝ ամեն տարի հա-

[1] Տե՛ս *ОЭГ за 1889 г.*, էջ 21:

զարավոր մարդիկ, տնտեսական և այլ կարիքներից դրդված ստիպված հեռանում էին դեպի օտարություն, դեպի մեծ քաղաքներ՝ ապրուստ ճարելու համար[1]: Պաշտոնական տվյալներով, նահանգից տարեկան միջինը 10–13 հազար մարդ մեկնել է նահանգի սահմաններից դուրս արտագնա աշխատանքի: Օրինակ, 1898 թ. Երևանի նահանգից զանազան քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում, Քութայիս և այլն) արտագնա աշխատանքի է մեկնել 20 հազար մարդ, յուրաքանչյուրի միջին եկամուտը եղել է 50 ռուբլի, այսինքն՝ ընդանուր գումարով 1.000.000 ռուբլի[2]: 1900 թ. նահանգից արտագնա աշխատանքի մեկնածների թիվը կազմել է 10 հազար մարդ, վաստակել են մոտ 150 հազար ռուբլի[3] կամ յուրաքանչյուրի միջին մաքուր եկամուտը կազմել է 15 ռուբլի: 1901 թ. նահանգից արտագնա աշխատանքի է մեկնել 13.400 մարդ, այդ թվում՝ Նոր Բայազետի գավառից – 5.000, Ալեքսանդրապոլի գավառից – 3.200, Նախիջևանի գավառից – 3.000 և Շարուր-Դարալագյազի գավառից-2.200 մարդ, որոնց ընդհանուր վաստակը եղել է 201.000 ռուբլի, այսինքն՝ յուրաքանչյուր մարդու միջին վաստակը կազմել է 15 ռուբլի[4]:

Երևանի նահանգի տարբեր գավառներից արտագնա աշխատանքի մեկնած բնակչության թիվը և վաստակած գումարը 1912 թ. այսպիսի պատկեր է ունեցել[5]:

---

[1] Տե՛ս Մշակ, 1 մայիսի 1910:
[2] Տե՛ս *ОЭГ за 1898-й г.*, էջ 8:
[3] Տե՛ս *ОЭГ за 1900-й г.*, էջ 7:
[4] Տե՛ս *ОЭГ за 1901-й г.*, էջ 10–11:
[5] Տե՛ս *ОЭГ за 1912 г.*, էջ 14:

Աղյուսակ 17

Գավառներ	Գյուղերի թիվը, որտեղից մեկնել են արտագնա աշխատանքի	Արտագնա աշխատանքի մեկնածների թիվը			Տարեկան վաստակը ռուբլիով
		Նահանգի սահմաններից դուրս	Նահանգի սահմաններում	Արտասահմանում	
Երևանի	79	195	1758	6	36230
Էջմիածնի	120	1157	3121	328	373565
Սուրմալուի	126	751	820	150	151410
Նոր Բայազետի	132	7361	3049	41	873780
Ալեքսանդրապոլի	148	5237	3821	515	832460
Շարուր-Դարալագ-յազի	96	1750	554	1	88950
Նախիջևանի	127	3917	1424	1077	350285
Ընդամենը	828	20368	14547	2118	2706680

Վերոնշյալ աղյուսակից կարելի է անել հետևյալ եզրահանգումները. ա) Արտագնա աշխատանքը (մշտական կամ ժամանակավոր) հանդիսացել է Երևանի նահանգի բոլոր գավառների բնակչության առօրյա կյանքի մի մասը, ընդգրկելով գյուղերի շուրջ 70 %-ը, բ) Արտագնա աշխատանքի (նահանգի ներսում և նրա սահմաններից դուրս) մեկնածների ընդհանուր թիվը կազմել է 37.033 մարդ, որից 20.368 կամ 55 %-ը աշխատանք է փնտրել երկրի այլ նահանգներում, 2.118-ը կամ 5,7 %-ը՝ արտասահմանյան երկրներում, իսկ 14.547-ը կամ 39,3 %-ը՝ նահանգի ներսում, գ) Նրանց տարեկան միջին վաստակը կազմել է 73 ռուբլի, դ) Արտագնա աշխատանքի մեկնողների ցուցանիշով առաջին տեղում Նոր Բայազետի գավառն է եղել՝ բոլոր գյուղերից, առանց բացառության, մեկնել են արտագնա աշխատանքի:

Ըստ վերոնշյալ աղյուսակի տվյալների այս գավառից երկրի այլ նահանգներ մեկնածների թիվը կազմել է ամբողջ նահանգից մեկնածների թվի 36,1 %-ը:

Տեղին է նշել, որ Նոր Բայազետի գավառի գործազուրկ և աղքատ զանգվածը աշխատանք գտնելու ակնկալիքով վաղուց էր սկսել մեկնել արտագնա աշխատանքի, իսկ արդեն ուսումնասիրվող տարիներին մեծ ծավալների էր հասել: «Նրանց (Նոր Բայազետի բնակչության – Հ.Հ.) չափազանց շատ գնալու պատճառը,- կարդում ենք «Մշակ» թերթի հրապարակումներից մեկում,- պետք է վերագրել այն հանգամանքին, որ օտարություն գնացողներից և ոչ մեկը սերմացու ցորեն կամ գարի չուներ, իսկ եթե պարտքով կամ վերադրով (հավելավճարով – Հ.Հ.) վերցներ (վերադիրը հասնում էր 80–90 %-ի) վերադարձնել չէր կարող»[1]: «Չկա Կովկասում մի այնպիսի տեղ, որ այնքան թվով պանդուխտներ ունենան օտար վայրերում, ինչպես Նոր Բայազետը»[2],- գրում է «Մշակ» թերթը: Աղբյուրները վկայում են, որ տարիների ընթացքում, աստիճանաբար հարմարվելով նոր պայմաններին, պանդուխտները դեպի իրենց են քաշել նաև «իրենց ընտանիքը՝ կին, երեխա և այլն, թողնելով բոլորովին խոպանացած իրենց հողն ու ջուրը, իրենց արտն ու արորը»[3],- տագնապում է հոդվածագիրը: «Այս որպեիս,- շարունակում է հեղինակը,- քաղաքում (Նոր Բայազետ – Հ.Հ.) մի ամբողջ թաղաբաժին՝ Բանդի-մահլա անունով, ավերակների է նմանվում: Տուն չեք գտնի, որում իր սեական տերը ապրելիս լինի: Նրանցից մի մասը փակ է, մյուս մասը տրված է քրեհով (վարձով – Հ.Հ.) մի չնչին գումարով՝ 1 ռուբլի ամիսը, երրորդ մասը՝ թողնված ծրիապես որևէ աղքատ ընտանիքի բնակության և պահպանության համար,

---

[1] Մշակ, 29 մարտի, 1888:
[2] Նույն տեղում, 1 մայիսի, 1910:
[3] Նույն տեղում:

չորրորդ մասը քանդված է: Եվ այդ թաղի բնակիչները չվելով դեպի Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլ տեղեր՝ բոլորովին մոռացել են իրենց տուն ու տեղ, իրենց մայր հայրենիքը»[1]: Համաձայն ժամանակի մամուլի հրապարակած տեղեկությունների, պանդուխտները Անդրկովկասի խոշոր արդյունաբերական և նավահանգստային կենտրոններում կատարում էին ամենաչարքաշ աշխատանքները, բայց վարձատրվում էին չնչին կոպեկներով: Նրանք աշխատում էին օրական 11–12 ժամ և ստանում միջին հաշվով 80 կոպեկ:

«Միակ մխիթարանքն այն է, որ,- գրում է «Մշակը»,- մեր կողմերի պանդուխտները բավական փող են հասցնում իրենց ընտանիքներին: Օրինակ, Դալի-Ղարդաշ, Քյոսա Ահմեդ, Փաշաքենդ և այլ գյուղերը ամսական 1000 ռուբլուց ավելի փող են ստանում յուրաքանչյուրն իր պանդուխտներից»[2]:

Արտագնա աշխատանքը որպես ապրելակերպի լրացուցիչ միջոց իր կենսունակությունը չի կորցրել նաև հետագա տարիներին: Օրինակ, 1913 թ. Նոր Բայազետի գավառից արտագնա աշխատանքի մեկնածների թիվը եղել է 13.198, Ալեքսանդրապոլի գավառից՝ 12.700, որից՝ 3.121-ը նահանգի սահմաններում, 9.308-ը՝ նահանգից դուրս և 271-ը՝ արտասահմանում, իսկ Շարուր-Դարալագյազի գավառից՝ 2.407 մարդ, այդ թվում՝ 543-ը նահանգի սահմաններում, 1.863-ը՝ նահանգից դուրս և 1-ը՝ արտասահմանում[3]:

Հատկանշական է, որ Երևանի նահանգից արտագնա աշխատանքի էին մեկնում նաև արտասահմանյան երկրներ՝ գլխավորապես Թուրքիա (Արևմտյան Հայաստան) և Պարսկաստան: Օրինակ, ըստ աղյուսակ 17-ի, 1912 թ. նահանգի գավառներից արտասահման արտագնա աշխատանքի է մեկնել 2.118 մարդ, որը կազմում է

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, 1 մայիսի, 1910; 14 հուլիսի, 1910:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, թթ. 18–21:

այլ նահանգներ մեկնածների՝ 10,4 %-ը, հիմնականում Նախիջևանի (1.077 մարդ կամ 50,8 %), Ալեքսանդրապոլի (515 մարդ կամ 24,3 %) և Էջմիածնի (328 մարդ կամ 15,5 %) գավառներից[1], որոնք անմիջականորեն սահմանակից էին Թուրքիային:

Արտագնա աշխատանքի էին մեկնում զանազան մասնագիտությամբ արհեստավորներ, հողագործներ և սեզոնային բանվորներ ինչը ևս վկայում են սկզբնաղբյուրները: «Այսօր այստեղից (Ալեքսանդրապոլից – Հ.Հ.),- գրում է «Մշակ» թերթը,- ուղևորվեցին դեպի Մուշ և նրա նահանգը 300-ի չափ մշակներ: Այդ ժիր երիտասարդները, հագնված նոր ու գեղեցիկ շորեր, տանում էին այստեղից գործիքներ, ինչպես օրինակ՝ գերանդիք, խզարներ, ուրագներ, կացիններ և այլ գործիքներ»[2]:

Սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1912–1914 թթ. ընթացքում Երևանի նահանգի տարբեր գավառներց արտագնացության է դիմել շուրջ 119,5 հազար մարդ, որից նահանգից դուրս՝ երկրի այլ նահանգներ 68.618 մարդ կամ 57,4 %-ը, 5.934-ը կամ մոտ 5 %-ը արտասահման, իսկ 45.000-ը կամ 37,7 %-ը՝ նահանգի սահմաններում[3]: Այս տվյալներն ամբողջությամբ վերաբերում են հայ բնակչությանը, որովհետև, ինչպես հավաստում են աղբյուրները, «թուրքաբնակ գյուղերն անշարժ են մնում, նրանք ոչ մի ժամանակ օտարության չեն գնում»[4]:

Ամփոփելով նշենք, որ բնակչության մեծաթիվ արտահոսքը երկարատև ժամանակամիջոցում էական ազդեցություն է թողել նահանգի ժողովրդագրական կառուցվածքի վրա՝ պակասել էր

---

[1] Հաշվարկը կատարվել է աղյուսակ 17-ի տվյալների հիման վրա:

[2] Մշակ, 26 հոկտեմբերի, 1883:

[3] Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, թ. 1821: *ОЭГ за 1912 г.*, Эривань, 1913, էջ 14: *ОЭГ за 1913 г.*, Эривань, 1914, էջ 16: *ОЭГ за 1914 г.*, Эривань, 1915, էջ 17 տվյալների:

[4] Մշակ, 1 մայիսի, 1910:

երիտասարդ տարիքային խմբի բաժինը ամբողջ բնակչության կազմում:

Երիտասարդ աշխատունակ տարիքի տղամարդկանց թվաքանակի կրճատման հետևանքով բնակչության կազմում կանանց տեսակարար կշռի բարձրացումը նկատելի էր դառնում:

Ահա թե ինչու ժողովրդագրական տեղաշարժերը անհանգստություն են պատճառել տեղական իշխանություններին և նրանք ամեն գնով պայքարել են այդ երևույթը կանխելու կամ հնարավորինս նվազագույնի հասցնելու համար: Ահա այդպիսի մի խոսուն փաստ, որը վերը ասվածը հաստատելուց բացի, ընչազուրկ աշխատավորության իրավազրկությանն ցայտուն օրինակ է: Այսպես, ըստ «Մշակ» թերթի մի հրապարակման «Թիֆլիսում ոստիկանությունը միշտ անցաթղթեր է պահանջում օտարականներից, այսինքն՝ գավառի բնակչներից: Գյուղական ազգաբնակչությունը շատ դժվարությունների է հանդիպում անցաթուղթ ձեռք բերելու համար: Օրինակ, Նախիջևանի գավառում անցաթուղթ է տրվում միայն գավառական կառավարությունից, ուստի և ամբողջ գավառից ավելի քան 100 վերստ հեռավորություններից հավաքվում են Նախիջևան գավառական կառավարությունից անցաթղթեր ստանալու: Դիպուկ մի խեղճ գյուղական Ագուլիսից կամենում է գնալ օտարության՝ իր և իր տարեկան ապրուստը հայթայթելու համար. նա գյուղական հասարակությունից վերցնում է հարկավոր վկայականը՝ նրանով գավառական կառավարությունից օրինավոր անցաթուղթ ստանալու համար, նա ստանում է փոստային սայլակ կամ ֆուրգոն և գալիս Նախիջևան: Հասնելով Նախիջևան նրան ընդառաջ են վազում մի խումբ գրագիրներ, նրա համար, որ վճարովի դիմում գրեն գավառապետին: Տևում է մի երկու ժամ մինչև իր հերթը հասնում է: Գավառապետը թղթի վրա մակագրելով՝ հանձնում է գրագիրներին հարկավոր եղածը գրելու, որից հետո նա շտապում է

արքունի գավառական գանձատուն այնտեղից անցաթուղթ ստանալու համար»[1]: Սակայն ստեղծված արհեստական դժվարությունների պայմաններում անգամ, հանապազօրյա հաց վաստակելու համար, մարդիկ շարունակել են բռնել դեպի այլ նահանգներ և արտերկիր տանող ճանապարհները:

Այսպիսով, Երևանի նահանգի բնակչության մեխանիկական տեղաշարժերի (նահանգից դուրս և դեպի նահանգ) տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ շարժընթացը Երևանի նահանգի համար ունեցել է դրական ցուցիչ և կազմել է նրա բնակչության 30 %-ը կամ բացարձակ թվով կազմել է 37.033 մարդ:

* * *

Ուշագրավ է Երևանի նահանգի բնակչության ազգային էթնոդավանաբանական կազմի փոփոխությունների պատկերը: Աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով ամբողջ Հայաստանի, նաև Երևանի նահանգի բնակչության ազգային կազմը եղել է խայտաբղետ:

Ինչպես նախորդ դարերում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բնակչության ազգային կազմի փոփոխությունները սնուցող գործոնը հանդիսացել է արտաքին քաղաքականը: Հաստկանաշական է, որ Հայաստանի էթնիկ օտարացման գործընթացը սկիզբ է առել XI դ. սկսած, կապված Արևելքի վաչկատուն ցեղերի դեպի արևմուտք կատարած և հաճախակի բնույթ կրող զանգվածային տեղաշարժերի հետ: Ավարառու այս ցեղերի հիմնական կորիզը կազմում էին օղուզները

[1] Մշակ, 24 մայիսի, 1883:

և թուրքմենները[1]: Թուրքալեզու այս ցեղերը Հայաստանում հաստատեցին իրենց ապրելակերպին և կենցաղավարությանը հարիր տնտեսավարման համակարգ, որը մեծ հաշվով ուղղված էր նորագրավյալ երկիրը կողոպտելուն և նրա բնիկ բնակչությանն արմատախիլ անելուն: Խառնիփնթոր քաոսում հայության մի մասն էլ ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար, նախկինի նման հեռանում էր հայրենիքից և կյանքի ու ապրուստի միջոցներ փնտրում օտարության մեջ: Նրանք տեղաբնիկ ժողովրդին զանգվածաբար ոչնչացնելով և բնավեր անելով, երբեմնի ծաղկուն ու շեն երկիրը, չափազանց կարճ ժամանակամիջոցում, վերածեցին մոխրակույտի: Հայ ժողովուրդը դեռ չէր հասցրել ամոքել սելջուկ-թուրքերի ձեռքով ծվեն-ծվեն արված Հայաստան երկրի վերքերը, երբ կարճ ժամանակ անց նոր արհավիրքների ենթարկվեց մեկը մյուսին հաջորդող քրդական ցեղերի[2], մոնղոլ հորդաների և թուրքալեզու այլ ցեղերի կողմից:

Հայաստանում ամենուր էթնոժողովրդագրական կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան XVI–XVIII դարերում, երբ տևական և ավերիչ պատերազմներից հետո իրենց արյունոտ տիրապետությունը հաստատեցին Արևելքի մուսուլմանական երկու խոշոր տերությունները՝ խանական Պարսկաստանը և Օսմանյան կայսրությունը: Բավական է նշել, որ Ռուսաստանին միանալուց առաջ Արևելյան Հայաստանում ապրում էր ընդամենը 169.155 մարդ: Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանի երկու՝ Երևանի և Նախիջևանի խանություններին (ապագա Հայկական մարզին), ապա նույն ժամա-

---

[1] Տե՛ս С. Агаманов, *Очерки истории огузов и туркмен Средней Азии IX–XIII вв.*, Ашхабад, 1969, էջ 165:

[2] Քրդական տարրը Հայաստան ներթափանցեց Առաջավոր Ասիայից: Նրանք կենտրոնացան գլխավորապես Հայաստանի հարավային շրջաններում, Արարատյան դաշտում, Արագած լեռան ստորոտում, Սևանա լճի հարավային ու արևմտյան ափերին և այլուր: Տե՛ս Հ. Հարությունյան, *Նոր Բայազետի գավառ 1828–1913 թթ.*, էջ 12:

նակամիջոցում նրանց բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 119.650 մարդու:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով պարսկահայերի և 1829 թ. Ադրիանուպոլսի պայմանագրով արևմտահայերի վերաբնակեցման հետևանքով, Արևելյան Հայաստանում ընդհանրապես և Հայկական մարզում (ապագա Երևանի նահանգում) մասնավորապես նկատելիորեն փոխվեց բնակչության քաղաքակրթական և էթնիկ նկարագիրը:

Հատկանշական է, որ 1850 թ. սկսած Երևանի նահանգը իրապես դարձավ հայության հավաքական կենտրոնը: Նշված տարում Երևանի նահանգի բնակչության թիվը երկու սեռից եղել է 262.662 շունչ, որից՝ ար. – 136.688 (52 %), իգ. – 125.974 (48 %)[1]: Ճանաչված ազգագրագետ-ժողովրդագիր Հ. Սարգսյանը հենվելով մեկ այլ աղբյուրի վրա 1850 թ. Երևանի նահանգի բնակչության թիվը նշում է 240 հազար, որից՝ նստակյաց 81 %, նահանգի վաչկատուն՝ 9 %[2]: Մեր կարծիքով իրականությանն ավելի մոտ է 262.662 թիվը: Բարեբախտաբար սկզբնաղբյուրներում պահպանվել է 1850 թ. հաջորդ 1851 թ. Երևանի նահանգի բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ, որը հիմք է տալիս հանգել նման եզրակացության: Այսպես, 1851 թ. նահանգի բնակչությունը եղել է ավելի քան 294 հազար[3], այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 54 հազարով կամ 18,4 %-ով, որն անհավանական է, քանի որ այդ տարիներին բնակչության տարեկան միջին աճը կազմել է 17,3 հազար մարդ:

---

[1] Տե՛ս Н. Тавакалян, *Документы и материалы*, էջ 322:

[2] Տե՛ս Հ. Սարգսյան, *Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850–1900 թթ.)*, էջ 115:

[3] Տե՛ս *Девятая ревизия. Исследование о числе жителей в России в 1851 г.*, П. Кеппэна, СПб., 1857, էջ 155: Հ. Սարգսյան, էջ 115:

1851 թ. Երևանի նահանգի բնակչության էթնիկ կազմը ամբողջությամբ ներկայացնել չենք կարող, քանի որ վիճակագրությունն այդ հնարավորությունը չի տալիս*: Այդ իսկ պատճառով բավարարվենք միայն քաղաքային բնակչության ազգային կազմը ներկայացնելով: 1851 թ. հայերը Երևան քաղաքում եղել են 6.115 շունչ: Ալեքսանդրապոլ քաղաքում (բնակչությունը՝ 11.280) եղել է 10.696 (94,8 %) հայ բնակչություն, մահմեդականներ՝ 410 (3,6 %) շունչ, հույներ՝ 163 (1,4 %) շունչ: Նոր Բայազետ քաղաքում (բնակչության թիվը՝ 2.560) հայերը կազմել են 2.484 (97,0 %), այլք՝ 76 (3 %):

Ամենահայաշատը շարունակում էին մնալ Ալեքսանդրապոլ և Նոր Բայազետ քաղաքները: Մահմեդականները գերակշռել են Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում:

Հ. Սարգսյանի հաշվարկներով 1865 թ. Երևանի նահանգի բնակչության շուրջ 55 %-ը կազմել են հայերը, թաթարները՝ 37,5 %-ը[1], քրդերը (16.033 շունչ) 3,6 %, գնչուները (415 շունչ) 0,09 %, ասորիները (966 շունչ) 0,22 %, այլք՝ 3,6 %[2]: Միջանկյալ նշենք, որ արդեն 1866 թ. Երևանի նահանգում քուրդ բնակչության թիվը երկու սեռից կազմել է 22 հազար, հույներին մինչև 1 հազար, նույնը և ասորիներին, իսկ գնչուներին 500 շունչ[3]:

Հինգ տարի անց՝ 1870 թ. Երևանի նահանգի բնակչության ազգային կազմն այսպիսի տեսք ուներ. 453.540 մարդուց 256.300 կամ 56,5 %-ը բաժին էր ընկնում հայերին, 181.700 կամ 40 %-ը

---

* Վերջին հետազոտությունները բերում են այն համոզման, որ Ռուսաստանին միացումից առաջ մասնավորապես Երևան քաղաքն ունեցել է մոտ 13–14 հազար բնակիչ, որից 10 հազարը՝ հայ: Ուստի Ի. Շոպենի հաշվարկները խիստ կասկածելի են և վերանայման ենթակա են (տե՛ս **Ա. Մելքունյան**, *Ժողովրդագրական իրավիճակը Երևանում XIX դարի առաջին քառորդին*, «Երևան – 5 (Գիտական հոդվածների ժողովածու)», Երևան, 2018, էջ 89–100 (խմբ.)):

[1] Տե՛ս **Հ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 117:

[2] Հաշվարկը կատարվել է ըստ **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 239, 241, 404 տվյալների:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 485:

մահմեդականներին, 10.500 կամ 2,3 %-ը ռուսներին, 4.600-ը կամ 1 %-ը ասորիներին և 0,1 հազարը կամ 0,2 %-ը հրեաներին ու լեհերին[1]: Դժվար չէ նկատել, որ նահանգում 1870 թ. 1865 թ. համեմատությամբ բնակչության կազմում հայերի թվաքանակը ավելացել է 1,5 %-ով, իսկ մահմեդականներինը՝ 2,5 %-ով:

Երևանի նահանգի բնակչության էթնիկ կազմին վերաբերող հարուստ տվյալներ կան 1886 թ. մարդահամարի նյութերում: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված տարում նահանգի հայ բնակչությունը կազմել է ամբողջ բնակչության 56 %-ը (1870 թ. համեմատությամբ մնացել է նույնը), գավառներում՝ 54,9 %, քաղաքներում՝ 69,3 %, թվաքանակով երկրորդ տեղն զբաղեցնող մահմեդականների (թուրքական ծագմամբ և քրդեր) համապատասխանաբար՝ 41,2, 42,3 և 29 %-ի դիմաց: Ամենահայաբնակը շարունակում էր մնալ Ալեքսանդրապոլի գավառը՝ 91,1 %, որին հաջորդում էր Նոր Բայազետի գավառը՝ 63,8 %: Մահմեդականները մեծ թիվ էին կազմում Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի և Նախիջևանի գավառներում[2]:

Նույն աղբյուրի տվյալներով բնակչության էթնիկ կազմը ըստ առանձին գավառների այսպիսի տեսք ուներ: Ալեքսանդրապոլի գավառն ամենահայաշատն էր՝ 91,1 %, Նախիջևանի գավառում հայերը՝ 45,3 % էին, Նոր Բայազետի գավառում՝ 96,4 %, Էջմիածնի գավառում՝ 63,5 % և այլն:

Մյուս ազգություններից. ասորիներ՝ 323 ընտանիք կամ 1682 շունչ (ար.՝ 921, իգ.՝ 761) բնակվել են Երևանի, Շարուր-Դարալագյազի և Էջմիածնի գավառներում: Հույները՝ 176 ընտանիք կամ 1026

---

[1] Տե՛ս *Сборник сведений о Кавказе*, т. 1, Тифлис, 1871, էջ 352–353:

[2] Հաշվարկը կատարվել է ըստ *ОЭФ за 1893 г.*, էջակալում չունի: *КК на 1898 г.*, էջ 44–47: *Свод статистических данных о населении Закавказского края. Извлеченных из посемейных списков 1886 г.*, Тифлис, 1893, էջակալում չունի տվյալների հիման վրա:

շունչ (ար.՝ 547, իգ.՝ 479) տարածվել են Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառներում, հրեաները, լեհերը, վրացիները, գերմանացիները միասին՝ 0,2 %-ից պակաս են եղել[1]:

Երևանի նահանգի տարածքում ապրող ազգերի ու ազգությունների և նրանց տեղաբաշխման մասին արժեքավոր տեղեկություններ են վկայաբերված 1897 թ. համառուսական մարդահամարի նյութերում: Ազգային կազմով նահանգի բնակչության շրջանում 100 բնակչին ընկել է 53,16, գավառային բնակչության մեջ՝ 52,49, իսկ քաղաքային բնակչության մեջ՝ 58,49 հայ:

Ալեքսանդրապոլի գավառում հայերը կազմում էին ամբողջ բնակչության 4/5-ը: Հաջորդ հայաշատը Նոր Բայազետի գավառն էր, ուր հայերը կազմում էին բնակչության ավելի քան 2/3-ն էին: Մոտավորապես նույն հարաբերակցությունն էր Էջմիածնի գավառում[2]: Հայերով ամենանոսր բնակեցվածը եղել է Շարուր-Դարալագյազի գավառը:

Հայերից հետո թվաքանակով երկրորդը թաթարներն (Կովկասի թուրքեր) էին, որոնց բաժին էր ընկնում նահանգի ամբողջ բնակչության 2/5 մասը: Թաթարների տոկոսը մեծ էր Շարուր-Դարալագյազի գավառում, ուր նրանք կազմում էին ամբողջ բնակչության ավելի քան 2/3-ը[3]: Հաջորդ խոշոր էթնիկ միավորը քրդերն են եղել՝ նահանգի ամբողջ բնակչության 5,9 %-ը[4]: Քրդերը մեծ թվով բնակվել են Սուրմալուի գավառում, նրանց բաժին էր ընկնում

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] 1897 թ. նահանգում հաշվվում էր 49.389 քուրդ (ար.՝ 26.239, իգ.՝ 23.150), որոնք ըստ դավանանքի բաժանվել են՝ շիա-մահմեդականներ – 35.675 (72,2 %) շունչ, եզդիներ – 13.647 (27,6 %), մնացյալ 67 շունչը (0,1 %)՝ ուղղափառ, հայ-կաթոլիկ, հայ-լուսավորչական և հուդայական դավանանքների հետևորդներն էին: Տե՛ս *Первая всеобщая перепись населения Российской империи*, 1897 г., էջակալում չունի:

ամբողջ բնակչության ավելի քան հինգերորդ մասը: Ռուսները կազմել են նահանգի բնակչության հիսուներորդ մասը: Նրանք հիմնականում բնակվել են Ալեքսանդրապոլի գավառում՝ 3,43 %-ը, իսկ ամենաքիչը Էջմիածնի գավառում՝ 0,07 %: Նահանգի բնակչության ավելի քան 0,3 % կազմել են ասորիները (2.862 շունչ): Նրանք հիմնականում ապրել են գավառներում, քաղաքաբնակ էր նրանց 0,1 %-ը: Ամենաասորաշատը Շարուր-Դարալագյազի գավառն էր, որտեղ նրանց տոկոսը հասնում էր 0,43-ի[1]:

Նահանգի բնակչության մեջ հրեաների տեսակարար կշիռը կազմել 0,12 %: Նրանցից 794-ը կամ 79,4 %-ը քաղաքաբնակ էր, իսկ 206-ը կամ 20,6 %-ը՝ գավառաբնակ: Բանն այն է, որ հրեաների հիմնական զբաղմունքն առևտուրն էր: Երևանի նահանգում ինչպես միշտ վրացիների թիվը փոքր էր, ընդամենը 566[2]:

Երկու մարդահամարների տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ ավելի քան տաս տարիների ընթացքում նահանգի բնակչության ազգային կազմը նկատելի փոփոխություններ է կրել:

1897 թ. 19 տարի անց՝ 1916 թ. հայերը կազմել են Երևանի նահանգի բնակչության 59,8 %-ը, թուրքալեզու էթնիկ խմբերը՝ 33,3 %-ը, քրդերը՝ 3,2 %-ը, եզդիները՝ 1,5 %-ը, ռուսները՝ 1,4 %-ը և այլք՝ 0,8 %-ը: Գավառներում հայերի տեսակարար կշիռը կազմել է 57,7 %, մահմեդականներին՝ (թուրքական ծագման և եզդիներ)՝ 38,7 %, քաղաքներում համապատասխանաբար՝ 79,5 % և 19,2 %: 1897–1916 թթ. պաշտոնական վիճակագրությունը հնարավորություն է տալիս համեմատության մեջ տեսնել Երևանի նահանգի բնակչության էթնոժողովրդագրական կազմի 19 տարիների ուրվագիծը: Այդ տարիներին Երևանի նահանգի բնակչության կազմում հայերի

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:
[2] Հաշվարկը կատարվել է ըստ նուն աղբյուրի էջ 1–3 և աղյուսակ 18-ի տվյալների:

տեսակարար կշիռն ավելացել է 3,8 %-ով, իսկ մահմեդականներինը՝ կրճատվել է 4,7 %-ով[1]:

Քննարկվող հարցի տեսանկյունից հարկ է դիտարկել բնակչության տարիքային կողմից՝ միգրացիոն տեղաշարժերի: Ցավոք, կամերալ ցուցակագրություններում բնակչության տարիքային կազմին վերաբերող տվյալներ չկան կամ այդ մասին տեղեկություններ գտնել մեզ չի հաջողվել: Եզակի բացառություն է 1873 թ. կամերալ ցուցակագրությունը: Ըստ այս աղբյուրի 1873 թ. Երևանի նահանգի գավառների բնակչության (երկու սեռից 491.087 մարդ) մեջ 0–15 տարեկանների տեսակարար կշիռը կազմում էր 25,4 %, 16–20 տարիքային խմբերին՝ 5,8 %, 21–40 խմբերին՝ 15,1 %, 41–60 տարիքայիններին՝ 5,8 %, 60 և բարձր՝ 1,6 %[2]: Նույն տարիքային խմբերի կտրվածքով գավառներից յուրաքանչյուրի ցուցանիշն այսպիսին էր. Երևանի գավառ՝ 24,9 %, 5,9 %, 15,7 %, 6 %, 1,6 %, Ալեքսանդրապոլի գավառ՝ 25 %, 5,6 %, 14,3 %, 5,7 %, 1,8 %, Նախիջևանի գավառ՝ 27,4 %, 6 %, 15,7 %, 6,1 %, 1,7 %, Նոր Բայազետի գավառ՝ 24,9 %, 6 %, 14,3 %, 5,5 %, 1,9 %, Էջմիածնի գավառ՝ 25 %, 5,7 %, 15,1 %, 5,8 %, 1,6 %, Սուրմալուի գավառ՝ 19,4 %, 5,9 %, 16,1 %, 6 %, 12,3 %, Շարուր-Դարալագյազի գավառ՝ 26,4 %, 5,8 %, 14,9 %, 5,4 %, 1,2 %[3]: Ներկայացված թվային տվյալները ցույց են տալիս, որ 0-ից մինչև 15 տարիքային խմբերում ամենաբարձր ցուցանիշն ունեցել են Շարուր-Դարալագյազի (49,1 %) և Նախիջևանի (48 %) գավառները, գավառների միջինը եղել է 47 %, 16–20 տարիքային խմբերում ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Նոր Բայազետի և Սուրմալուի գավառներում՝ 11 %, գավառ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Հաշվարկը կատարվել է ըստ *Сборник сведений о Кавказе*, т. 7. 1880. տվյալների էջակալում չունի:

[3] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա:

ների 10 % միջին ցուցանիշի դիմաց, 21–40 տարեկանների հաշվով առաջին տեղը 29 %-ով զբաղեցրել է Սուրմալուի գավառը, որին 28 %-ով հաջորդել են Երևանի և Էջմիածնի գավառները՝ հավասարվելով գավառների միջին ցուցանիշին: 41-ից մինչև 60 տարեկանները կազմել են գավառների բնակչության 10 %-ը, բացառությամբ Երևանի և Սուրմալուի գավառների՝ 11 %: 61 և բարձր տարիքային խմբերը Երևանի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի գավառներում կազմել են բնակչության 2 %-ը, իսկ մնացյալ չորս գավառներում՝ 3 %-ը[1]:

Հետագա տարիներին նահանգի բնակչության տարիքային կազմը զգալի փոփոխություններ է կրել տարիքային կազմի երիտասարդացման շարժընթացի առումով: 1897 թ. համառուսական մարդահամարի տվյալներով Երևանի նահանգի բնակչության (829.556) կազմում 0–19 տարիքային խմբերում հաշվվում էր 428.897 մարդ կամ ամբողջ բնակչության 51,7 % (սեռային կազմով. ար.՝ 53 %, իգ.՝ 47 %), գավառներում կազմում էին 388.304 (սեռային կազմով. ար.՝ 52,9 %, իգ.՝ 47,1 %) մարդ, այսինքն՝ գավառային բնակչության 52,6 %, քաղաքներում համապատասխանաբար՝ 40.593 (սեռային կազմով. ար.՝ 52,8 %, իգ.՝ 47,2 %) մարդ կամ քաղաքների բնակչության 44 %-ը[2]: Նահանգում 20–39 տարիքային խմբերում հաշվվում էր 252416 (սեռային կազմով. ար.՝ 53 %; իգ.՝ 46,3 %) մարդ, որը կազմում էր ամբողջ բնակչության 30,4 %-ը, գավառներում այդ տարիքային խմբի թիվը եղել է 217.495 (սեռային կազմով. ար.՝ 51,5 %, իգ.՝ 48,5 %) մարդ կամ գավառների ամբողջ բնակչության 29,5 %-ը, քաղաքներում համապատասխանաբար՝ 34921 (սեռային կազմով. ար.՝ 67,3 %, իգ.՝ 32,7 %) մարդ, այլ խոսքով՝ քաղաքային

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:

[2] Հաշվարկը կատարվել է ըստ *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г.*, էջ 1, 6–8 տվյալների:

բնակչության 37,8 %-ը: Ըստ մարդահամարի տվյալների Նահանգում հաշվվում էր 40–59 տարիքային խմբի 108.806 (սեռային կազմով. ար.՝ 54,2 %, իգ.՝ 45,8 %) մարդ, այսինքն՝ ամբողջ բնակչության 13,1 %-ը: Տարիքային այս խումբը՝ 12.877 մարդ (սեռային կազմով. ար.՝ 56,4 %, իգ.՝ 43,6 %) կազմում էր գավառային ամբողջ բնակչության 1,8 %-ը, իսկ քաղաքային բնակչության մեջ համապատասխանաբար՝ 9716 (սեռային կազմով. ար.՝ 49,3 %, իգ.՝ 50,7 %), 10,5 %:

Նահանգի բնակչության կազմում 60 և ավելի տարիքի մարդկանց տեսակարար կշիռը եղել է 8 %[1]:

Այսպիսով, նահանգի բնակչության տարիքային կազմի տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ նրա կազմում գերակշռում էր ամենաակտիվ տարիքային (10–49) խմբերի տեսակարար կշիռը՝ նահանգի կտրվածքով այն կազմել է 38,6 %, գավառային բնակչության կազմում՝ 37,7 %, քաղաքայինում՝ 49,8 %-ը: Անշուշտ, ժամանակի համար սա լավ ցուցանիշ էր ինչպես բնակչության բնական վերարտադրության, այնպես էլ տնտեսության մեջ բարձր ակտիվությամբ աշխատուժ ընդգրկելու համար:

Նահանգի բնակչության ներկապնակն ամբողջական ներկայացնելու շահախնդրությամբ հարկ է անդրադարձ կատարել նաև նրա սոցիալական կառուցվածքին, որը բազմաշերտ է եղել[2].

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի, էջ 1, 6–7 տվյալների հիման վրա:

[2] Պետական գյուղացիները պետական հողերից օգտվելու համար արքունիքին վճարում էին՝ ծխահարկ, հողահարկ և պետական տուրք: Նրանք կատարում էին պետության օգտին նաև զանազան պարհակներ: Կայվածատիրական գյուղացիները իրավաբանորեն նույնպես կոչվում էին պետական կամ արքունական, բայց տերունական հողերում բնակվող գյուղացիներ: Այդ գյուղացիները բաժանվում էին տարբեր խմբերի և կոչվում էին ֆեոդալական հողատիրության անուններով՝ պետական-մուլքադարական (բնակվում էին պետական-մուլքադարական հողերի վրա), մուլքադարական-թիուլդարական (բնակվում էին մուլքադարների և թիուլդարների տիրույթներում), վանքապատկան (բնակվում էին հիմնականում Էջմիածնի, մասամբ Սանահինի, Հաղպատի և Օձունի հողատարածությունների վրա), աղալարա-

արքունական (պետական), կալվածատիրական, մուլքադարական, թիուլդարական, աղալարական, պետական-մուլքադարական և վանքապատկան գյուղացիներ, քաղաքային դաս, տոհմիկ և անձնապես ազնվականներ[1], առևտրականներ, հոգևորականներ, զինվորական կոչում ունեցողներ և սոցիալական այլ շերտեր: Ըստ 1850 թ. տվյալների՝ նահանգի բնակչության սոցիալական կազմն այսպիսի պատկեր ուներ. տոհմիկ բարձր դասի ներկայացուցիչներ՝ 1.279 մարդ կամ ամբողջ բնակչության (262.662 մարդ) 0,5 %-ը, արքունական (պետական և այլ կարգի) գյուղացիներ՝ 258.671, եկեղեցու սպասավորներ և նրանց ընտանիքի անդամներ՝ 1.188, հոգևորականներ և նրանց ընտանիքի անդամներ՝ 1.179, անձնապես ազնվականներ՝ 219, զինվորականներ և նրանց կանայք՝ 21 մարդ[2]: Ինչպես կարելի է նկատել ամենաբազմամարդը եղել է գյուղացիությունը. կազմել է ամբողջ բնակչության 98,4 %-ը: Բազմաշերտ գյուղացիության կազմում առանձնապես մեծ էր հողագործության մեջ ընդգրկված գյուղացիության թվաքանակը: Բազմաթիվ օրինակներից վկայաբերենք մեկը: Այսպես, 1870 թ. նահանգում հողագործությամբ զբաղվել է 375.088 մարդ, այսինքն՝ ամբողջ գյուղացիության ավելի քան 76 %-ը[3], բարձր դասի ներկայացուցիչների 0,5 %-ի և ազնվականների՝ 0,4 %-դիմաց:

1850 թ. հետո մինչև 1867 թ. նահանգի բնակչության սոցիալական կազմի փոփոխությունների պատկերն այսպիսին էր, գյու-

---

կան-բեգական և այլն: Գյուղացիության սոցիալական խմբերից պետք է հիշատակել նաև սեփականատերերին: Նրանք խիստ սակավաթիվ էին, դարավերջին կազմում էին 203 տնտեսություն: Տե՛ս **Ա. Համբարյան**, *Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը XIX դարի երկրորդ կեսին*, ՊԲՀ, 1984, № 1, էջ 111–114:

[1] Ազնվականների դասի մեջ մտել են խաները, բեգերը, մելիքները, սուլթանները և աղայարները: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 9, գ. 8, թթ. 1–2:

[2] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 222–223:

[3] Հաշվարկը կատարվել է ըստ *Сборник сведений о Кавказе*, т. 2, Тифлис, 1872, էջ 168–169, т. 7, Тифлис, 1880, էջակալում չունի տվյալների:

ղացիներ՝ 398.673 (ար.՝ 216.466, իգ.՝ 182.207), որը կազմել է նահանգի ամբողջ բնակչության 89,6 %-ը: 398.673 գյուղացիությունից 324.649 (ար.՝ 156.703, իգ.՝ 167.940)-ը կամ 81,4 %-ը պետական գյուղացիներն էին, որոնք բնակվել են պետական հողերի վրա[1]:

Գյուղացիության ճնշող մեծամասնությունը բաժին էր ընկնում Երևանի գավառին՝ 73.281 (ար.՝ 39.079, իգ.՝ 34.202) մարդ կամ ամբողջ գյուղացիության 22,6 %-ը, չնչին փոքրամասնությամբ՝ մոտ 0,6 %-ով հետ էր մնում Նոր Բայազետի գավառը՝ 71.415 գյուղացիությամբ: Երկու դասերի՝ տոհմական և անձնապես ազնվականության թիվը հաշվվում էր 827, որից՝ տոհմիկ՝ 175-ը կամ 21,2 %-ը, 652-ը կամ 78,8 %-ը անձնապես ազնվականներ: Ընդ որում՝ տոհմիկ ազնվականներից 141-ը կամ 80,6 %-ը բաժին էր ընկնում Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներին, 3 %-ը՝ Նոր Բայազետ քաղաքին, իսկ 31 %-ը՝ Էջմիածնի գավառին: Ինչ վերաբերում է անձնապես ազնվականությանը, ապա նրանք բնակվում էին նահանգի համարյա բոլոր գավառներում՝ բացառությամբ Օրդուբադի գավառի: Երևանի գավառում հաշվվում էր 23, քաղաքում՝ 334, Ալեքսանդրապոլի գավառում՝ 229, քաղաքում՝ 23, Նախիջևան և Նոր Բայազետ քաղաքներում համապատասխանաբար՝ 29 և 9, իսկ Էջմիածնի գավառում՝ 28 անձնապես ազնվականներ[2]:

Բարձր դասին պատկանող սոցիալական մյուս խմբերի՝ բեգերի, մելիքների ու խաների ընդհանուր թիվը եղել է 3.853 կամ ամբողջ նահանգի բնակչության 0,9 %-ը: Հատկանշական է, որ նշված սոցիալական խմբերի կազմում մեծ էր բեգերի տեսակարար կշիռը՝ 3.526 մարդ կամ 91,5 %-ը[3]: Սոցիալական այս խմբերը տա-

---

[1] Հաշվարկը կատարվել է ըստ **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 190, 491 տվյալների:

[2] Հաշվարկը կատարվել է **Н. Тавакалян**, նշվ. աշխ., էջ 190 տվյալների հիման վրա:

[3] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:

բաժված էին նահանգի բոլոր գավառներում, առանձնապես Օրդուբադի, Նախիջևանի, Էջմիածնի և Երևանի գավառներում:

Երևանի նահանգում հաշվվում էր 6.692 հոգևորական, այդ թվում՝ 5.480-ը կամ 81,9 %-ը հայ առաքելական եկեղեցու, իսկ 1.212-ը կամ 18,1 %-ը մահմեդական կրոնի սպասավորներ: Աղբյուրում տվյալներ կան քաղաքային դասից հարկատու դասին վերաբերող՝ 40.379 մարդ[1]:

1867 թ. հետո 30 տարիների ընթացքում (ներառյալ 1897 թ.) Երևանի նահանգի բնակչության սոցիալական կազմի պատկերը ըստ Համառուսական մարդահամարի նյութերի ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակում[2]:

Աղյուսակ 18

Գավառներ և քաղաքներ	Բնակչություն	Տոհմիկ ազնվական կալվածքներ	%	Հոգևորական կալվածքներ	%	Առևտրականներ	%	Քաղաքային դաս	%	Գյուղացիներ	%	Օտար երկրյա հպատակներ	%	Մնացյալ դասեր	%
Երևանի գավառ	150879	3712	2,46	1208	0,8	187	0,1	15059	10	124914	83	4154	2,7	1645	1,1
Ք. Երևան	29006	2170	7,5	334	1,1	185	0,6	14927	51,5	8094	28	2122	7,3	1174	4,0
Ալեքսանդրապոլի գավառ	165503	1394	0,8	1572	0,9	381	0,2	20745	12,5	138515	83,7	2296	1,4	600	0,4
Ք. Ալեքսանդրապոլ	30616	1111	3,6	302	1	363	1,2	20240	66,1	7999	26,1	462	1,5	139	0,5

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г.*, էջ 2:

Սիլ. լեռնային գետաքարերի մեջտեղում	Ամբողջ նստվածքում	տարեսկզբին գետերում	տարեկան կիսամյակային	գ. Հրազդանի	տարեսկզբին գետերում	գ. Լեռնակերտ	տարեսկզբին գետերում	գ. Նոր Բայազետ	գետերում Նոր Բայազետ	գ. Օրգովի	գ. Դարբնիս	Նոր Բայազետ
92323	829556	5267	124237	867	76538	4680	89055	8486	122573	4611	8790	100771
4615	10823	196	1263	140	1389	142	1005	65	291	165	626	1769
5,0	1,3	3,7	1,0	16,1	1,8	3,0	1,1	0,8	0,2	3,6	7,1	1,8
1078	6531	194	1478	-	318	61	452	88	786	12	87	717
1,2	0,8	3,7	1,2	-	0,4	1,3	0,5	1,0	0,6	0,3	1	0,7
805	1014	2	2	3	3	31	73	220	225	-	1	143
0,9	0,2	0,04	0,002	0,4	0,004	0,7	0,08	2,6	0,2	-	0,01	0,1
52627	54222	126	322	43	216	18	71	7480	7641	3766	6027	10168
57	6,5	2,4	0,3	5	0,3	0,4	0,08	88,2	6,2	81,7	68,6	10,1
26572	737080	3886	118265	589	72884	3589	84025	413	112840	499	1503	85637
28,7	88,8	74	95,2	68	95,2	76,7	94,4	4,9	92,0	10,8	17,1	85
4521	15488	779	2591	86	1624	399	2626	15	123	147	511	2074
4,9	1,9	15	2,1	10	2,1	8,5	3	0,2	0,1	3,2	5,8	2,0
2105	4398	84	316	6	104	440	803	205	667	22	35	263
2,2	0,5	1,6	0,3	0,7	0,1	9,4	0,9	2,4	0,5	0,5	0,4	0,3

Աղյուսակից առաջինը, որ ուշադրություն է գրավում, նահանգի բնակչության կազմում գյուղացիության ճնշող մեծամասնությունն է: Նրանք կազմել են նահանգի ամբողջ բնակչության 88,8 %-ը, քաղաքային բնակչության մեջ՝ 28,7 %-ը[1]: Փաստորեն 1897 թ. 1867 թ. համեմատությամբ նահանգի բնակչության կազմում գյուղացիության տեսակարար կշիռը կրճատվել է 0,8 %-ով: Այդ նվազումը արդյունք էր ինչպես բնական վերարտադրության հետ կապված խնդիրների, այնպես էլ բնակչության գյուղից դեպի քաղաք կամ նահանգից դուրս արտահոսքի:

Աղյուսակի տվյալներով նահանգի գյուղացիությունը, ըստ գավառների տեղաբաշխված է եղել այսպես. Երևանի գավառում՝ ամբողջ գյուղացիության՝ 16,9 %, Ալեքսանդրապոլի գավառում՝ 18,8 %, Նախիջևանի գավառում՝ 11,6 %, Նոր Բայազետի գավառում՝ 15,3 %, Սուրմալուի գավառում՝ 11,4 %, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 9,9 %, Էջմիածնի գավառում՝ 16 %: Նկատելի է, որ գյուղացիության կտրվածքով ամենաբազմամարդը եղել են Ալեքսանդրապոլի և Երևանի գավառները: Նահանգում քաղաքային դասը հաշվվում էր 54.222 մարդ, այդ թվում 52.627 կամ 97 %-ը քաղաքներում: Փաստորեն նահանգի հինգ քաղաքներում ապրել է քաղաքային դասի 57 %-ը, մնացյալ 43 %-ը՝ նահանգի գավառներում: Նախորդ տարիների համեմատությամբ նահանգում նկատելիորեն ավելացել է տոհմիկ ազնվականների թիվը և հասել է 10.823-ի, որից 4.615 կամ 42,6 %-ը՝ քաղաքներում: Թվական տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ նահանգի բնակչության կազմում տոհմիկ ազնվականության տեսակարար կշիռը հավասար է եղել 1,3 %, գավառային բնակչության մեջ՝ 1,5 %, իսկ քաղաքային բնակչության մեջ՝ 11,7 %: Ներկայացված տվյալներին հավելենք, որ բնակչության

[1] Գյուղացի է կոչվել նաև կիսաբատրակը, կիսաբանվորը, որի գյուղացիական տնտեսությունը նրա գոյատևման օժանդակ աղբյուր է ծառայել:

թվաքանակի հաշվով քաղաքային բնակչության շրջանում 100 մարդուն ընկել է 3,07 տոհմիկ ազնվական, իսկ գավառային բնակչության շրջանում՝ 0,79, ամբողջ նահանգում՝ 1,92 տոհմիկ ազնվական: Նույն ժամանակ նահանգում անձնապես ազատների ցուցանիշը եղել է համապատասխանաբար՝ 1,92, 0,04 և 0,25[1]:

Տոհմիկ ազնվականության ազգային կազմի պատկերն այսպիսին էր. թաթարներ՝ 44,1 %, ռուսներ՝ 31,2 %, հայեր՝ 15,3 %, վրացիներ՝ 4,5 %, այլք՝ 4,9 %[2]:

Աղյուսակի տվյալները փաստում են, որ Երևանի նահանգի բնակչության սոցիալական կազմում ամենացածրը առևտրական դասի տեսակարար կշիռն է եղել. կազմել է նահանգի բնակչության 0,12 %-ը, գավառայինի՝ 0,13 %-ը և քաղաքայինի՝ 1,1 %-ը: Քաղաքաբնակ և գավառաբնակ առևտրականների թվային հարաբերակցությունն այսպիսին էր. 1014 առևտրականներից քաղաքաբնակ էր 805 կամ 79,4 %-ը, իսկ գավառաբնակ՝ 209 կամ 20,6 %-ը: Նահանգում առևտրականների թվով առանձնանում են Ալեքսանդրապոլի գավառը՝ հաշվվում էր 381 առևտրական, որը կազմում էր ամբողջ առևտրականների 36,7 %-ը, Նոր Բայազետի գավառը՝ 225 առևտրական (22,3 %) և Երևանի գավառը՝ 187 առևտրական (18,4 %), ամենասակավաթիվը եղել են Շարուր-Դարալագյազի և Էջմիածնի գավառները համապատասխանաբար՝ 3 առևտրական (0,3 %) և 2 առևտրական (0,2 %):

Այս ամենը վկայում են, որ Երևանի նահանգում առևտրաարդյունաբերական հարաբերությունների թույլ զարգացման մասին:

Նահանգի բնակչության սոցիալական շերտերի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր են հոգևոր դասին վերաբերող տվյալները: 1897 թ. տվյալներով նրանց ընդհանուր թիվը կազ-

---

[1] Տե՛ս *ПКЭГ на 1906 г.*, էջ 154:
[2] Տե՛ս նույն տեղում:

մում էր 6.531, որից 24 %-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի գավառում, 18,5 %-ը՝ Երևանի գավառում, 12 %-ը՝ Նոր Բայազետի գավառում, մնացյալ 45,5 %-ը՝ մյուս գավառներում: 6.531 հոգևորականներից 1.078 կամ 16,5 %-ը բաժին էր ընկնում քաղաքներին: Երևան քաղաքում հաշվվում էր 334 հոգևորական, Ալեքսանդրապոլ քաղաքում՝ 302, Նոր Բայազետ քաղաքում՝ 88, այսինքն՝ ընդհանուր հաշվով քաղաքաբնակ հոգևորականների 67,2 %-ը:

Այսպիսով, 1897 թ. Երևանի նահանգում հոգևոր գործունեությամբ զբաղվել է բնակչության մոտ 0,8 %-ը:

Բնակչության թվաքանակի աճն ուղղակի կապի մեջ է դրվում նրա տեղաբաշխվածության հարցի ուսումնասիրության հետ: Նահանգի սակավահողության և աշխարհագրական ռելիեֆի (մակերևույթի կազմության) բազմազանության (լեռնային, նախալեռնային և ցածրադիր) հետևանքով բնակչության տեղաբաշխվածությունը ընթացել է այդ պայմաններին ու հնարավորություններին համապատասխան, այսինքն՝ անհամաչափ: Հասկանալի պատճառներով բնակեցումն ակնառու էր ցածրադիր գոտում:

Այսպես, 1850 թ. Երևանի նահանգի ցածրադիր գոտու բնակտարածքում 1 քառ. վերստի վրա միջին խտությունը կազմել է 5 ½ մարդ, լեռնային գոտում՝ 4, միջին գոտում՝ 1 1/3 մարդ[1]: Այս տվյալները վկայում են բնակչության հիմնական զբաղմունքների մասին, որոնք էին հողագործությունը և անասնապահությունը: Հողագործը դառնում էր ցածրադիր գոտու, իսկ անասնապահը՝ լեռնային գոտու գլխավոր դեմքը:

Դա բնականաբար հանգեցնում էր աշխատուժի և բնական պաշարների արդյունավետ օգտագործման: Պետք է նշել, որ բնա-

[1] Տե՛ս Н. Тавакалян, *Документы и материалы*, էջ 334:

կավայրերի խիտ կամ նոսր բնակեցվածությունը մշտապես կախված է եղել մարդկանց տնտեսական-մշակութային կյանքից:

Նկատի ունենալով այն իրողությունը, որ ուսումնասիրվող տարիներին Երևանի նահանգը հաճախ ենթարկվել է վարչատարածքային վերաձևումների՝ նրանից տարածքներ են կցվել Վրաստանի և Ելիզավետպոլի գավառներին, ինչպես նաև կրել է ներկառուցվածքային փոփոխություններ, որոնք, անշուշտ, ազդել են նահանգի բնակեցվածության միջին խտության վրա: Ասվածից ենթադրելի է, որ նշված հարցը պետք է դիտարկել ըստ առանձին ժամանակահատվածների: Պաշտոնական վիճակագրությունը հավաստում է, որ 1864 թ. 1850 թ. համեմատությամբ Երևանի նահանգում բնակչության միջին խտությունը ավելացել է 4,6 մարդով կամ աճել է 27,3 %-ով և 12,2-ից հասել է 16,8-ի[1]: 1886 թ. 1864 թ. համեմատությամբ նահանգում բնակչության միջին խտությունը աճել է 42 %-ով կամ 12,2 մարդով և 16,8-ից հասել է 29-ի: Առավելագույն ցուցանիշներ արձանագրվել են Երևանի և Ալեքսանդրապոլի գավառներում: 1864 թ. տվյալներով Երևանի գավառում միջին խտությունը 1 քառ. վերստի հաշվով եղել է 17, իսկ արդեն 22 տարի անց՝ 1886 թ., ավելացել է 26,6 մարդով և կազմել է 43,6, այսինքն՝ աճել է 50,4 %-ով կամ մոտ 2,6 անգամ: Ալեքսանդրապոլի գավառում այդ ցուցանիշը 19,7-ից կազմել է 40,5 մարդ, ավելացել է 20,9 մարդով կամ ավելի քան 1,9 անգամ (51,6 %): Նույն թվականների կտրվածքով ամենանոսր բնակեցվածը եղել է Նախիջևանի գավառը, որտեղ միջին խտությունը 1886 թ. նշվում է 21,2 մարդ, 1864 թ. 9,3-ի դիմաց[2]:

---

[1] Հաշվարկը կատարվել է **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 239. 322 տվյալների հիման վրա:

[2] Հաշվարկը կատարվել է *КК на 1867 г.*, էջ 312–313: *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г.*, էջակալում չունի: **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 239, 322 տվյալների հիման վրա:

Ճիշտ է դա մեծ ցուցանիշ չէր, սակայն պետք է նկատի ունենալ, որ աճի տեմպերը ցածր չէին:

Հետագա տարիներին էլ ավելի է բյուրեղացել նահանգի բնակչության միջին խտությունը 1 քառ. վերստի վրա 1915 թ. հասնելով 48,3 մարդու, 1897 թ. 35,71 մարդու դիմաց, աճելով ավելի քան 1,3 անգամ կամ 26 %-ով: Նախորդ տարիների նման ամենախիտը բնակեցված էին Երևանի՝ 56,7 մարդ, Ալեքսանդրապոլի՝ 51,4 մարդ և Էջմիածնի՝ 51,8 մարդ գավառները: Ի տարբերություն նշված գավառների՝ մնացյալ՝ Նոր Բայազետի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր Դարալագյազի գավառներն իրենց ցուցանիշներով զիջում էին նահանգի միջին ցուցանիշին համապատասխանաբար՝ 6,1, 17,3, 14,9 և 14,1 մարդով[1]:

Քաղաքների բնակեցվածության միջին խտությունն ամբողջության մեջ ներկայացնել հնարավոր չէ, քանի որ նշված տարիների համար, բացառությամբ 1886 թ., քաղաքների զբաղեցրած տարածքների վերաբերյալ համապատասխան տվյալներ չունենք: Ըստ այդմ, բավարարվենք 1886 թ. քաղաքային բնակչության միջին խտությունը արտահայտող տվյալների վերլուծությամբ:

1886 թ. մարդահամարի տվյալներով ամենախիտ բնակեցվածը եղել է Ալեքսանդրապոլ քաղաքը (բնակչությունը՝ 24.230, տարածքը՝ 45,60 քառ. վերստ)՝ 531 մարդ, որից հետո Նոր Բայազետ քաղաքը (բնակչությունը՝ 7.488, տարածքը՝ 19,60 քառ. վերստ)՝ 382 մարդ: Ամենանոսրը բնակեցված էին Նախիջևան քաղաքը (բնակչությունը՝ 6.939, տարածքը՝ 87,58 քառ. վերստ)՝ 79,2 մարդ և Օրդուբադ քաղաքը (բնակչությունը՝ 4.199, տարածքը՝ 45,30 քառ.

---

[1] Հաշվարկը կատարվել է *Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г.*, էջ 1: *КК на 1899 г.*, Тифлис, 1898, էջ 34–37: *Сборник сведений о Кавказе*, т. 2, Тифлис, 1872, էջ 191: *ПКЭГ на 1906 г.*, էջ 169: *КК на 1917 г.*, էջ 218–221 տվյալների հիման վրա:

վերստ)՝ 92,7 մարդ[1]: Այս հանգամանքը կարելի է բացատրել երկու հանգամանքով: ա) Մահմեդական բնակչության տնտեսամշակութային կեցությամբ, այն է՝ ավանդական զբաղմունքը՝ անասնապահությունը և մասամբ հողագործությունը: բ) Դարավոր հետամնացությունն ու խավարը նրանց վարժեցրել էր քոչվոր ու կիսաքոչվոր կյանքին:

Քննարկվող հարցի տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել նահանգի բնակավայրերի, ծխերի, տնտեսությունների և շնչերի թիվը ըստ գավառների և քաղաքների: Այսպես, 1865 թ. վիճակագրությամբ նահանգի հինգ քաղաքներում և 1.115 գյուղերում (416 հայկական, 606 մահմեդական, 83 խառը և 10 ռուսական) բնակվելիս է եղել ընդամենը 437.719 (ար.՝ 237.868, իգ.՝ 199.851) մարդ[2]:

1873 թ. կամերալ ցուցակագրության մի քանի տվյալները կօգնեն մոտավոր գաղափար կազմել 1870-ական թվականների սկզբներին Երևանի նահանգի քաղաքներում և գավառներում մարդկանց բնակեցվածության հետ կապված որոշ հարցերի պատասխանելու համար: 1873 թ. Երևանի նահանգում բնակչության թիվը եղել է 535.040 մարդ[3], տների քանակը՝ 71.630, որից գավառներում՝ 62.557 (87,3 %), իսկ քաղաքներում՝ 9.073 (12,7 %): Հիմնական բնակիչները հայերն ու մահմեդական ժողովուրդներն են եղել: Քանակական տեսակետից քրիստոնեաբնակ տների քանակը եղել է 6.118, մահմեդական և եզդիաբնակներին՝ 2.953, գավառներում համապատասխանաբար՝ 32.664 և 140.211 տուն, իսկ նահանգում՝ 38.782 և 157.343 տուն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ տները հիմնականում կենտրոնացված էին քաղաքներից Ալեքսանդ-

---

[1] Հաշվարկը կատարվել է ըստ *КК на 1899 г.*, Тифлис, 1898, էջ 34–37 տվյալների:

[2] Տե՛ս **Հ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 117: *КК на 1867 г.*, էջ 312–313:

[3] Այլ աղբյուրներում նշված է 547.693: Տե՛ս *Сборник сведений о Кавказе*, т. 7, Тифлис, 1880, էջակալում չունի:

ռապոլում՝ 3.526 և Երևանում՝ 2.556 տուն, իսկ գավառներից Երևանի՝ 11.269, Էջմիածնի՝ 10.964 և Ալեքսանդրապոլի՝ 10.000 տուն:

Եթե գավառների ընդհանուր բնակչության թիվը բաժանենք տների քանակի վրա, ապա կստացվի, որ յուրաքանչյուր տանը ընկել է միջինը մոտ 7,8 մարդ, քաղաքներում՝ 5,2, ամբողջ նահանգում՝ 7,8: Նույն աղբյուրի տվյալներով բնակչության թվի համեմատությամբ ընտանիքի անդամների միջին խտությամբ առաջին տեղում գտնվել է Նոր Բայազետ քաղաքը (բնակչությունը՝ 5.530, տները՝ 795), քաղաքները համապատասխանաբար՝ մոտ 4,5 և 4,6 մարդ: Գավառներից ծխերի անդամների թվաքանակով դարձյալ առանձնացել է Նոր Բայազետի (բնակչությունը՝ 87.072, տները՝ 10.000)՝ 8,7 մարդ և Շարուր-Դարալագյազի (բնակչությունը՝ 51.199, տները՝ 10.964)՝ 7,9 մարդ գավառները[1]:

1886 թ. նահանգի 670.405 բնակչությունն ապրում էր 1.267 գյուղերում և հինգ քաղաքներում, որից Երևանի գավառում՝ 1 քաղաք, 205 գյուղ, Ալեքսանդրապոլի գավառում՝ 1 քաղաք, 161 գյուղ, Նախիջևանի գավառում՝ 2 քաղաք, 169 գյուղ, Նոր Բայազետի գավառում՝ 1 քաղաք, 128 գյուղ, Սուրմալուի գավառում՝ 228 գյուղ, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 161 գյուղ և Էջմիածնի գավառում՝ 215 գյուղ[2]: Ըստ 1886 թ. մարդահամարի Երևանի նահանգում 100-ից մինչև 200 ծուխ ունեցող գյուղերի թիվը եղել է 201, իսկ 200-ից ավելի՝ 43: Անշուշտ, ժամանակի համար սա վատ ցուցանիշ չէր, սակայն պետք է նկատի ունենալ, որ գերակշռում էին փոքրաթիվ ծխերից բաղկացած գյուղերը: Օրինակ, նահանգում 346 գյուղ ունե-

---

[1] Հաշվարկը կատարվել է *ОЭГ за 1886 г.*, էջակալում չունի տվյալների հիման վրա:

[2] Տե՛ս *КК на 1889 г.*, էջ 35–37: *КК на 1901 г.*, էջ 40–43:

ցել է մինչև 50 տուն, իսկ 201-ը՝ 50-ից մինչև 100 տուն[1]: Նահանգում տների քանակը նույն տարում հաշվվում էր 90.918, որից քաղաքներում՝ 10.269 կամ 11,3 %-ը: 1886 թ. վիճակագրական տվյալները ներկայացնում են ծխերի ազգային պատկանելիության պատկերը: Երևան քաղաքում՝ ռուսական՝ 88, հայկական՝ 1.481, թաթարական՝ 1.386, այլք՝ 14, Ալեքսանդրապոլում՝ ռուսական՝ 14, հունական՝ 61, հայկական՝ 3.651, թաթարական՝ 89, այլք՝ 10, Նախիջևանում՝ ռուսական՝ 9, հայկական՝ 483, թաթարական՝ 992, այլք՝ 10, Օրդուբադում՝ 854 տնից հայկական՝ 84, թաթարական՝ 769 և Նոր Բայազետում՝ 1.128 տուն, որից՝ քրդական՝ 6, հայկական՝ 1.117, այլք՝ 5[2]:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք հինգ քաղաքների հաշվով, կստանանք. Երևան՝ 2.968 ծուխ, Ալեքսանդրապոլ՝ 3.825 ծուխ, Նախիջևան՝ 1.494 ծուխ, Օրդուբադ՝ 854 ծուխ, Նոր Բայազետ՝ 1.128 ծուխ, ընդհանուր գումարով՝ 10.269 ծուխ, չհաշված այլազգի 39 ծուխը: Երևան քաղաքում յուրաքանչյուր ծուխ կազմված էր միջինը հինգ շնչից, Ալեքսանդրապոլում՝ 6,3, Նախիջևանում՝ 4,6, Օրդուբադում՝ մոտ 5, Նոր Բայազետում՝ ավելի քան 6,6 շնչից: 10.269 տներից հայերն ապրել են 6.816 տներում, որը կազմում էր ընդհանուրի 67 %-ը, թաթարների 3.235 տների (31,5 %) դիմաց[3]:

1886 թ. Երևանի նահանգի գավառների 80.649 տներից հայերը բնակվում էին 48.283-ում, որը կազմում էր ընդհանուրի մոտ 60 %-ը, թաթարների՝ 33.489 (41,5 %) տների դիմաց: Երևանի գավառում յուրաքանչյուր ծուխ կազմված է եղել միջինը 7 մարդուց, Ալեքսանդրապոլին՝ 8,5, Նախիջևանին՝ 7,3, Նոր Բայազետին՝ 8,

---

[1] Տե՛ս *КК на 1889 г.*, էջ 35–37:

[2] Հաշվարկը կատարվել է ըստ *Свод статистических данных Закавказского края*, Тифлис, 1893, էջակալում չունի տվյալների:

[3] Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:

Սուրմալուին՝ 7,3, Շարուր-Դարալագյազին՝ 7,3, Էջմիածնի գավառին՝ 7,5: Ամբողջ գավառի կտրվածքով կազմել է 8,2, իսկ նահանգին՝ 7,4 մարդ[1]:

1886 թ. մարդահամարից երեք տարի անց՝ 1889 թ. նկատելի փոփոխություններ են դիտվել նահանգի բնակավայրերի և ծխերի քանակական կազմում: Այսպես, 1889 թ. 1886 թ. համեմատությամբ նահանգում գյուղերի քանակը պակասել է 55-ով, որը կազմում էր բոլոր գյուղերի 4,3 %-ը: Երևանի գավառից պակասել է 4, Էջմիածնի գավառից՝ 52 և Նախիջևանի գավառից՝ 5 գյուղ[2]: Հատկանշական է, որ կրճատվել են հիմնականում ստվար թվով մահմեդական բնակչություն ունեցող գավառների գյուղերը: Բանն այն է, որ ինչպես ճիշտ նկատել է Հ. Սարգսյանը. «բացատրվում է այդ բնակչության շրջանում միգրացիոն բարձր արդյունքներով, կախված նրանց տնտեսական-մշակութային կացութաձևից»[3]: Ասվածին հավելենք, որ նահանգում մշտական բնակվող մահմեդական բնակչության միգրացիան ի տարբերություն քրիստոնյաների, կատարվում էր հիմնականում նահանգի ներսում:

Նշենք, որ նույն տարում նահանգի թվով 1.212 գյուղերում և հինգ քաղաքներում հաշվվում էր 9.3471 տուն, որից՝ 10.435 կամ ընդհանուրի 11,2 %-ը՝ քաղաքներում, իսկ՝ 83.036 կամ 88 %-ը՝ գավառներում: Աղբյուրը ցույց է տալիս, որ ամենախիտ բնակեցվածը եղել է Ալեքսանդրապոլի գավառը՝ միջին խտությունը մեկ քառ. վերստում կազմել է 41,3 մարդ, որից հետո գալիս է նահանգի ամենամարդաշատ Երևանի գավառը՝ 40,5 մարդ: Ամենից նոսր բնակեցված էին Նախիջևանի և Սուրմալուի գավառները համապատասխանաբար՝ 21,6 և 22,8 մարդ: Նահանգի բնակչության մի-

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն տեղում:
[2] Տե՛ս *ОЭГ за 1889 г.*, էջ 46:
[3] Տե՛ս Հ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 46–47:

ջին խտությունը մեկ քառ. վերստում կազմել է 29, որից՝ 15,6 տղամարդ և 13,4 կին[1]: Միջանկյալ նշենք, որ Անդրկովկասի երկրամասում ամենախիտ բնակեցվածը Երևանի նահանգն էր:

Այսպիսով, Երևանի նահանգի բնակչության ժողովրդագրական շարժընթացի ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների: ա) 1850–1915 թթ. նահանգի բնակչության թիվն էականորեն ավելացել է: Բնակչության սեռային կազմում գերակշռել են տղամարդիկ: 1850–1870-ական թթ. նահանգի բնակչության թվաքանակի աճի հիմնական աղբյուրը սեփական վերարտադրությունն էր: 1870-ական թթ. երկրորդ կեսերից սկսած արտերկրներից և հարևան նահանգներից հայ և այլազգի ժողովուրդների կողմից դեպի Երևանի նահանգ զանգվածային ներհոսքով պայմանավորված բնական վերարտադրությունն իր տեղը զիջեց զանգվածային տեղաշարժերին: բ) Նահանգի էթնիկ կազմը չափազանց խայտաբղետ էր: Բնակչության քանակական աճին զուգընթաց նրա էթնիկական կազմում տեղի ունեցող փոփոխություններում հայերը շարունակում էին մեծ թիվ կազմել: 1850–1916 թթ. հայ բնակչության թիվն ավելացել է, իսկ մահմեդական բնակչության թիվը կրճատվել: գ) Աճել է երիտասարդ տարիքի բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում: Այս հանգամանքը մեծապես ազդում էր բնական վերարտադրության վրա՝ էապես բարձրացնելով բնակչության ծնելիության և բնական աճի գործակիցները: դ) Բնակչության սոցիալական կազմում մեծ էր գյուղացիության բաժինը: Հատկանշական է, որ գնալով գյուղացիության տեսակարար կշիռը կրճատվում էր, իսկ սոցիալական մյուս խմբերինը՝ քաղաքային դասինը, ազնվականությանը, բարձր դասի մյուս շերտերինն ու առևտրականներինն աճել է:

---

[1] Տե՛ս *ОЭГ за 1889 г.*, էջ 46–47:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Գյուղատնտեսության, առհասարակ տնտեսության նշանակալի առաջընթացն անհրաժեշտ տնտեսական և սոցիալական պայմաններ ստեղծեց նաև արհեստների զարգացման համար: Հատկանշական է, որ պարսկական տիրապետության օրոք տնտեսության այս ճյուղը գտնվում էր, մեղմ ասած, աննախանձելի վիճակում: Արհեստավորական տեխնիկան պարզունակ էր, իշխում էր ձեռքի աշխատանքը, արտադրողականությունը շատ ցածր էր: Ի. Շոպենն իր աշխատության համապատասխան բաժնում խոսելով պարսից տիրապետության վերջին տարիներին Արևելյան Հայաստանում արհեստների մասին, նշում է. «... այստեղի արհեստավորն առանց դազգահի, գործիքների, ձեռքերով ու ոտքերով է աշխատում իր անհարմար շինվածքի վրա՝ աննկարագրելի ջանքերով...»[1]:

Ռուսական տիրապետության ներքո բարենպաստ պայմաններ են ստեղծվում արհեստագործության զարգացման համար: Կայունացող արհեստագործությունը աստիճանաբար դուրս է մղում տնայնագործությանը: Գոյություն ունեցող սակավաթիվ արհեստանոցների կողքին 1850-ական թվականների սկզբներին հիմնվում են նորերը: Արհեստագործության նկատելի առաջընթացը բնութագրվում

[1] И. Шопен, նշվ. աշխ., էջ 842:

է արհեստագործական բնույթի զբաղմունքներում բնակչության ընդգրկվածության զգալի աճով:

Ծաղկում էին արհեստի ավանդական ճյուղերից կաշեգործությունը, դարբնությունը, բրուտագործությունը, մանածագործությունը, քարեգործությունը, ջուլհակությունը, գորգագործությունը և արհեստի այլ տեսակները, այսինքն՝ արհեստի այն ճյուղերը, որոնք կենսական և առօրեական նշանակություն ունեին բնակչության սոցիալ-տնտեսական կյանքում: Ասվածին հավելենք մի ոչ անկարևոր հանգամանք ևս: Խոսքը վերաբերում է արհեստագործությամբ զբաղվելու համար տեղական հումքի առկայությանը՝ այսինքն՝ այս հանգամանքը նույնպես կողմնորոշիչ նշանակություն ուներ արհեստի այս կամ այն ճյուղով զբաղվելու համար:

Երևանի նահանգում արհեստագործությունը նկատելի առաջընթաց ապրեց հատկապես 1850–1860-ական թթ.: Ներքաշվելով շուկայական հարաբերությունների մեջ, արհեստագործությունը դառնում էր բնակչության արտադրական գործունեության կարևոր ճյուղերից մեկը: Նահանգի քաղաքներն աստիճանաբար վերածվում են արհեստագործության կենտրոնների: Տեղին ենք համարում նշել, որ նահանգի գյուղական բնակչության զբաղմունքներում արհեստագործությունը ևս շոշափելի մասնաբաժին ուներ: Գյուղական բնակչությունը զբաղվում էր տնայնագործական բնույթի արտադրությամբ: Այլ կերպ ասած՝ գյուղական բնակավայրերում արհեստի շատ ճյուղեր տակավին չէին բաժանվել գյուղատնտեսությունից: Գյուղական արհեստավորներն իրենց արհեստով զբաղվում էին ձմռանը, տարվա մյուս եղանակներին պարապում էին գյուղատնտեսությամբ[1]: Բացառություն էին կազմում գավառակների (շրջանների) վարչական կենտրոնները: Օրինակ, Էջմիածնի շրջանի վարչական կենտրոն Վաղարշապատում 1852 թ. դրությամբ

[1] Տե՛ս Մշակ, 16 մարտի, 1887:

հաշվվում էր 66 արհեստավոր, որից՝ 10՝ ջուլհակ, 7՝ կոշկակար, 6՝ դերձակ, 3՝ քարագործ, 5՝ ներկարար և այլն: Հատկանշական է, որ Վաղարշապատում գործում էին 19 գործարաններ, այդ թվում՝ 3 բուսական յուղի, 5 ներկարարական, 4 ալրաղաց, 2 կավագործական, 2 կաշվի և 1 մետաղագործական[1]:

Երևանի նահանգի արհեստագործական կենտրոնը հանդիսանում էր Ալեքսանդրապոլի գավառը, մասնավորապես նրա վարչական կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքը[2]: 1851 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում հաշվվում էր տարբեր մասնագիտությունների 220 արհեստավորներ, այդ թվում՝ 50 (22,7 %)՝ դերձակներ, 50 (22,7 %)՝ կոշկակարներ, 20 (10 %)՝ ատաղձագործներ, 25 (11,3 %)՝ դարբիններ, 15 (6,8 %)՝ ոսկնձագործներ և այլ զբաղմունքի[3]: Նույն տարում Ալեքսանդրապոլ քաղաքում կային մանր ու միջին 36 ձեռնարկություններ՝ «ֆաբրիկագործարաններ», որից 12՝ օճառի, 9՝ օղեգործական, 5՝ մանածագործական, 3՝ կաշվի, 5՝ ձիթհան, 1՝ այսուրի և 1՝ կավագործական[4]: Ինչպես կարելի է նկատել, գործարանների շարքում մեծ թիվ են կազմել օճառի և օղեգործական գործարանները: Օճառի արտադրության զարգացումը Ալեքսանդրապոլում հիմնավորված էր, քանի որ քաղաքից ոչ շատ հեռավորության վրա, Էջմիածնի գավառի սահմանի հարևանությամբ աճում էր հատուկ տեսակի խոտ, որի այրված մոխիրն օգտագործվում էր օճառի արտադրության մեջ: Հումքը պատրաստում և Ալեքսանդրապոլ էին տեղափոխում քոչվոր քրդերը՝ 150-ից մինչև 200 և ավելի հակ (մեծ պարկ) գրաստաբեռ և վաճառում արդյունաբերողներին[1]: Օճառը հիմնականում սպառվում էր ներքին շուկայում:

---

[1] Տե՛ս Н. Тавакалян, *Документы и материалы*, էջ 356:

[2] Քաղաքի շրջագիծը կազմում էր ավելի քան 20 վերստ (առանց ամրոցի՝ 7 վերստ): Տե՛ս նույն տեղում, էջ 434:

[3] Հաշվարկը կատարվել է նույն տեղում էջ 344-ի տվյալների հիման վրա:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 439

[1] Տե՛ս նույն տեղում:

Օղու արտադրության համար որպես հումք օգտագործվում էր քիշմիշը (խաղողի չամիչ), որը բերվում էր Թուրքիայից: Օղին առավելապես վաճառվում էր գավառի ներսում, իսկ որոշ մասն էլ արտահանվում էր Նոր Բայազետի գավառ: Արհեստագործության և արդյունաբերության առաջընթացը խթանում էր քաղաքի ներքին և արտաքին առևտրի զարգացմանը, ապրանքադրամական և ապրանքաշուկայական հարաբերությունների ծավալմանը: Ալեքսանդրապոլի արտաքին առևտուրը մեծամասամբ կապված էր Թիֆլիս[2], Էրզրում, Կարս և Ախալցխա քաղաքների հետ: Այդ քաղաքներ արտահանվում էր զանազան տեսակի կոշիկներ, օճառ, բազմերանգ ներկեր, աղ, պղինձ և արդյունաբերական այլ ապրանքներ: Օրինակ, միայն օճառի վաճառքից տարեկան միջինը ստացվում էր 2.500 ռ. արծաթ գումար[3]: Յուրաքանչյուր տարի Ալեքսանդրապոլ քաղաքից արտահանվում էր Ախալցխա շուրջ 10 հազ. ռ. արժողության ապրանք: Թուրքիայից, Թիֆլիսից և Ախալցխայից ներկրում էին մեաքսյա, կիսամետաքսյա և բամբակյա կտորեղեն, հագուստ, հնոտիք (քուրչ ու փալաս), ծխախոտ, անտառափայտ, փայտյա և երկաթյա զանազան ապրանքներ[4]:

Ալեքսանդրապոլ քաղաքը համակողմանի առևտրական հարաբերությունների մեջ էր եվրոպական և գաղութային երկրների հետ: 1850 թ. այդ երկրներից ներկրվել է 4311 ռ. (1849 թ. 1431 ռ. 60 կոպ. դիմաց) շաքար, ըմպելիք, սուրճ, բամբակյա և մետաքսյա կտորեղեն[1]: Ուշագրավ է, որ արտաքին առևտրի ոլորտում Ալեքսանդրապոլն ապրանքների արտահանման ծավալով ու շահութա-

---

[2] Ալեքսանդրապոլից դեպի Թիֆլիս փոստային ճանապարհով հեռավորությունը կազմում էր 265 վերստ, իսկ սայլագնա ճանապարհով՝ 200 վերստ, իսկ Կարսից՝ 80 վերստ: Տե՛ս Н. Тавакалян, *Документы и матераллы*, էջ 434:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 344–345:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 345:

բերությամբ գերազանցել է ներկրման համապատասխան ցուցանիշներին:

Այսպես, 1849 թ. արտասահմանի հետ առևտրի շրջանառությունը ներկրման գծով եղել է 151.483 ռ., իսկ 1850 թ. կազմել է 124.748 ռ., այսինքն՝ 26.735 ռ. կամ 17,6 %-ով պակաս: Նույն ժամանակամիջոցում արտահանումը կազմել է համապատասխանաբար՝ 92.955 ռ. և 111.008 ռ. 70 կոպ., ավելանալով 18.053 ռ. 70 կոպ. կամ 16,3 %-ով[2]: Դա, անշուշտ, զգալի գումար էր մանավանդ եթե նկատի ունենանք, որ քաղաքի ներքին առևտրի[3] տարեկան միջին շրջանառությունը կազմում էր 200 հազ. ռ.[4]:

Թույլ արդյունաբերություն ունեցող քաղաքների թվին կարելի է դասել նաև Երևանը[5]: Որպես նահանգի քաղաքներին բնորոշ երևույթ Երևանում նույնպես արդյունաբերական արտադրության շարժիչ ուժերը հանդիսանում էին տեխնիկապես թույլ հագեցված մի քանի տասնյակի հասնող գործարանները և արհեստագործական արհեստանոցները: Այդ են վկայում վիճակագրական տվյալները:

1851 թ. Երևան քաղաքի 12.603 (ար.՝ 6.463, իգ.՝ 6.140) բնակչից արհեստագործական արտադրության մեջ ընդգրկված էր մոտ 450 մարդ, որից՝ 40 տակառագործ, 22՝ դարբին, 20՝ կաշեգործ, 33՝ ներկարար, 10՝ փականագործ, 20՝ արծաթագործ, 30՝ գլխարկ կարող, 18՝ մետաքսագործ, 68՝ կոշկակար: Այսինքն՝ յուրաքանչյուր

---

[2] Հաշվարկը կատարվել է նույն տեղում, էջ 345 տվյալների հիման վրա:

[3] Ալեքսանդրապոլ քաղաքում բացվեց առևտրի շուկա Տրոիցկո (Երրորդություն) անունով, որը գործեց ընդամենը երկու շաբաթ: Բացի այդ քաղաքում կազմակերպվում էր ամենօրյա բաց առևտուր, որտեղ վաճառվում էին՝ կենսական նշանակության բազմատեսակ ապրանքներ՝ մթերքներ, վառելիք, աշխատանքային գործիքներ, անասուններ և այլ ապրանքներ: Տե՛ս *КК на 1852 г.*, էջ 277–280, 441, 446–447:

[4] Տե՛ս **Н. Тавакалян**, նշվ. աշխ., էջ 436:

[5] Քաղաքը բաղկացած էր 4 գլխավոր մասերից – ичарскую (հին քաղաք), тапабашинскую (վերին քաղաք), демирбулачскую և чолмакчинскую: Առաջինը գրաղեցնում էր քաղաքի հյուսիսարևելյան կողմը, երկրորդը՝ արևմտյան, երրորդը՝ հարավարևելյան և վերջինը՝ հյուսիսային: Տե՛ս **Н. Тавакалян**, նշվ. աշխ., էջ 425:

հազար բնակչից արհեստագործությամբ զբաղվում էր 35,7 մարդ[1]: Հայտնի է, որ նույն մասնագիտությամբ զբաղվող արհեստավորները ստեղծում էին իրենց հատուկ համքարությունները[2]: 1863 թ. Երևան քաղաքում հաշվվում էր հայ արհեստավորների 26 համքարություններ, ինչպես օրինակ, կաշեգործների, պղնձագործների, հացագործների, կոշկակարների, եվրոպական և ասիական հագուստների դերձակների և ուրիշ այլ համքարություններ[3], որոնցում ընդգրկված էր 2.200 մարդ, որից՝ 745 (33 %) վարպետ, 692 (31,5

---

[1] Հաշվարկը կատարվել է նույն տեղում, էջ 347–348 տվյալների հիման վրա:

[2] Արհեստագործության զարգացման գործում կարևոր նշանակություն էր տրվում արհեստագործական հատուկ համքարությունների ստեղծմանը: Այս հարցի լուծման մեծ դժվարությունը ոչ միայն նույն մասնագիտությամբ արհեստավորների սակավաթիվ լինելն էր, այլև նահանգապետից անհրաժեշտ թույլտվություն ստանալը: Բանն այն է, որ նոր համքարություն բանալու թույլտվություն տրվում էր նահանգապետի կողմից: Օրինակ, 1914 թ. փետրվարի 23-ին Ալեքսանդրապոլ քաղաքի մի խումբ քարագործներ դիմում են Երևանի նահանգապետին հետևյալ խնդրանքով. «վաղուց քաղաքում անհրաժեշտություն է զգացվում հիմնելու քարագործների արհեստագործական ընկերություն, քանի որ քաղաքում հաշվվում է 123 քարագործ»: Տե՛ս ՀԱԱ, փ. 94, ց. 1, գ. 3269, թթ. 2–4:

[3] Ուշագրավ ընթացակարգով էր կատարվում նորահատ արհեստավորներին վարպետ օրհնելու, իրենց ներքին գործերը կառավարելու համար յուզբաշի (ավագ վարպետ) ընտրելու արարողությունը: Ահա այդպիսի մի ցայտուն օրինակ: «Մեր արհեստավորների դասը,- Մեծ Ղարաքիլիսայից գրում են «Մշակ» թերթին,- հունիսյան նախօրեակի օրերում, երբ գարունը կարելի է ասել իր փառահեղությեան գագաթնակետին է հասնում, սովորություն ունի մի անգամ հավաքված դուրս գալ անտառի հրաշագեղ ծոցում, սառնորակ աղբյուրի մոտ, զուարճանալ բնության բարիքներով, խորհրդակցել իր գործերի մասին, ընկերության հաշիները տեսնել, նորահաս արհեստաւորներին օրհնել տալ և մի պարզ ճաշով համեստ տեսարանը վերջացնել: Այս սովորությունը սկսված է 70 թվից, երբ բոլոր արհեստաւորները միացած առանձին կանոնադրությամբ ընկերություն են կազմում, իրենց ներքին գործերը կառավարելու համար ուստաբաշի են ընտրում: Այս տարի ևս այդ գեղեցիկ սովորությունը կրկնեցաւ, հարիւրից ավելի արհեստաւորներ ժողոված էին մերձակա անտառում, ինչպես միշտ՝ այս անգամ ևս հրաւիրված էր և հոգևորականությունը ... ընտրվեցան վարպետացս արհեստաւորներ և ասյա սկսվեցաւ օրհնության հանդէսը: Հայր Արսենը կարևոր համարեց սկզբում մի քանի խօսք ասել արհեստի նշանակությեան մասին, յորդորեց երիտասարդ վարպետացներին անխարդախ լինել, բարեխղճությեամբ վերաբերվել դեպի իրենց արհեստը, միշտ ձգտել կատարելագործման, որից կախված է մասնաւորապէս արհեստաւորի կյանքի ապահովությունը և ընդհանրապէս հասարակության բարիքը: Հոգևոր հանդէսին յաջորդեց համեստ ճաշը դալար խոտի վրա.... Այդ բազմության մեջ հավիւ 10 շիշ գինի և 2 շիշ օղի գործածվեցաւ»: Տե՛ս Մշակ, 4 հուլիսի, 1887:

%) ենթավարպետ և 763 (34,7 %) աշակերտ: Տեղին է նշել, որ ի տարբերություն համքարություններում ընդգրկվածների կային նաև այնպիսիք, որոնք գործում էին անկախ համքարություններից: Նույն տարում, օրինակ Երևան քաղաքում արհեստագործությամբ զբաղվում էին այդպիսի 230 արհեստավորներ, այդ տվում՝ 193 (53 %)՝ վարպետ, 84 (31 %)՝ ենթավարպետ և 43 (15,9 %)՝ աշակերտ[1]:

1851 թ. Երևան քաղաքում գործում էր 93 ֆաբրիկա գործարան, այդ թվում՝ 68 ներկարարական, 12 կաշեգործական, 13 բրուտագործական և աղյուսի[2]: Հատկանշական է, որ Երևան քաղաքի բնակիչներից մեկը ծրագրել էր՝ կառուցել ապակու գործարան: Բանն է, որ ապակին ներքին և արտաքին շուկաներում ուներ մեծ պահանջարկ, բացի այդ կային հումքի մեծ պաշարներ Երևանի մերձակայքում, Զանգու գետի ժայռոտ ափերին, սակայն դրա արդյունահանումը չիրականացվեց վառելիքի թանկ լինելու պատճառով[3]:

Նորից անդրադառնալով գործարանների հարցին նշենք, որ մասնավոր սեփականություն հանդիսացող այս գործարանները մասնագիտացած էին բացառապես շինանյութերի արտադրության համար: Այս ապրանքների արտադրությունը սկզբունքային նշանակություն ուներ թե՛ ամբողջ նահանգի և թե՛ Երևան քաղաքի համար: Նախ՝ հումքը չէր ներկրվում, այսինքն՝ հենվում էին տեղական բազայի վրա, մյուս կողմից էլ այդ ապրանքների նկատմամբ մեծ հետաքրքրություն կար արտաքին շուկաներում: Կար մի հանգամանք ևս. նահանգում լայնորեն ծավալվող շինարարությունը նորանոր պահանջներ էր ներկայացնում շինանյութերի արտադրությունն ավելացնելու նկատմամբ: Այդուհանդերձ նոր կատարելագործումներ չէին իրականացվում գործարանների արտադրական գործըն-

---

[1] Տե՛ս **Н. Тавакалян**, *Документы и материалы*, էջ 438:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 346–347:
[3] Տե՛ս նույն տեղում:

թացներում: Անհրաժեշտ ներդրումներ չէին կատարվում ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցման նպատակով, որի հետևանքով դրանք, ըստ էության, տնայնագործական տեխնիկայով զինված ձեռնարկություններ էին, որոնցում մեծ էր ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը: Պարզ ասած, գործարաններում ցածր էր աշխատանքի արտադրողականությունը և արդյունավետությունը: Այդ են ցույց տալիս նաև համապատասխան վիճակագրական տվյալները:

Այսպես, 68 ներկարարական գործարանների տարեկան միջին եկամուտը կազմում էր մինչև 1290 ռ., կաշեգործականներինը՝ մինչև 3 հազ., իսկ բրուտագործականներինը՝ մինչև 2 հազ. ռ. արծաթ[1]: Մեծ ծավալներով արտադրվում էր նաև ոգելից խմիչքներ:

Հետագա տարիներին նույնպես Երևան քաղաքի գործարանային արդյունաբերությունը մնում էր չափազանց թույլ զարգացած: 12 տարի անց՝ 1863 թ., Երևան քաղաքում հաշվվում էր 85 ֆաբրիկա-գործարան, որից՝ 29՝ կաշեգործական, 46՝ ներկարարական, 3՝ գինեգործական, 3՝ աղյուսի, 3՝ ճարպահալման և 1՝ բրուտագործական[2]: Պետք է նշել, որ այս գործարանները կառուցման չափերով, շենքային հարմարություններով, տեխնիկական զինվածությամբ, աշխատուժի որակական մակարդակով, արտադրողականությամբ և արդյունավետությամբ շարունակում էին մնալ ծայրաստիճան հետամնաց վիճակում: Օրինակ, կաշվի մշակման գործարաններից յուրաքանչյուրի տարեկան միջին եկամուտը կազմում էր ընդամենը 700 ռ., իսկ քիչ ավելի պակաս եղել է կավագործականներինը[3]:

Գործարանների անվանացանկից նկատելի է, որ դրանք առավելապես սնունդ, կենցաղային ապրանքներ և շինանյութ արտադրող ձեռնարկություններ էին: Պետք է նշել, որ ինչպես արհեստագ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 346–347:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 427:

ISBN 978-9939-860-95-4